2751557-ԱՆ 2532
Printed in Turkey

# ԿՐԹՈՒԹԻՒՆ
## ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ։

Իտալէն Պարոն Անճըլէ Տէր Պետրոսեան Կոստանդնուպօլսեցւոյ՝ ՚ի լեզու աշխարհաբառ, և ծախիւք հեղինակին տպագրեալ։

՚Ի Պատրիարգութեան Կոստանդնուպօլսոյ՝ Տ՟ն Ստեփաննոսի ամենապատիւ և վեհափառ Սրբազան Աղ. եանի։

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

՚Ի վերայ ընդհանուր ախտերոյ կամ ջերմանց։

1833 — ՌՄՁԲ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

՚Ի Տպարանի Պօղոսի Արապեան Տմուշէխցւոյ։

99/8-57 1131
2004

61

ՀՍՍՀ-ССР

Printed in Turkey



# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ամէն մարդ բնականաբար կը բաղձայ աղէկ ըլլալու. եւ յայտնի է որ՝ աս աղեկութեան մէջը ա՛լ աւելի աղէկ բան մը չի կայ, քան ողջութիւն ու առողջութիւն։

Բայց Ա[illegible] մարդոյն պատուականագոյն ըլլալէն՝ եւ ցաւոտ լսած աղեկութեան դէմը երանալէն ետեւ՝ այն չերդ ցաւեր տեղերէն անոր եկաւ. ըստ որում նախահայրս Ադամ քանի որ դրախտին մէջն էր, ու հնազանդ էր ստեղծողին կամացը, առո՛ղջ էր մարմնով առանց հիւանդութեան, ու այն բնական ծերերով կը պանծար. իսկ երբոր անհնազանդ եղաւ՝ ան ատենը տեղերէն այն չերդ ցաւեր, ու մահ եկաւ։

Արդ՝ Ա[illegible]բարին ած դէպ մը բարին կամելով՝ շնորհեց մարմնաւոր ցաւերէն ազատելու համար՝ տեսակ տեսակ բոյսերուն՝ հանքերուն՝ եւ կենդանիներուն բժշկարար զօրութիւ եւ ներգործութիւններ շնորհեց՝ զմեզ բժշկելու ու առողջ պահելու համար. եւ այս ալ իմաստուն ու խոհեմ մարդոց ձեռքովը, որք թէ՛ իրենց եւ թէ՛ հասարակներուն անձին կեանքը պահպանելու՝ հանգիստ եւ երկար ընելու համար՝ շատ դուրս աղէկա-

տեղով ու երկար ատեն փորձ առնելով գտան անոնց բնական ունեցած զօրութիւնները ու օգտակարները, և գրեցին արձաններու վրայ· որոնց մէջէն առաջինը Հիփոկրատէսն է։

Թէպէտ այս արհեստը առջի եղած ատենը անկատար կերպով մըն էր · ինչու որ՝ ան ատենները անոնց աւանդած բժըշկական կանոնները մէկ տեղէ հաւաքուած ցիր և ցան եղած էր · բայց ատենները անցնելէն ետև՝ մ՚ալ խելացի բժիշկներ եղան՝ որ անոնց գրածները մէկ տեղ ժողվեցին, և բժշկական ոճեր՝ կարգեր՝ կանոններ՝ և չափեր հընարեցին ետև՝ տեսական ու գործնական բժըշկութեան արհեստ մը սահմանեցին ու առաջ բերին, որ հիմա գրեթէ յատուկ՝ ազատական և ամենահարկաւոր արհեստներուն մէկն է։

Հայաստանի բնակիչ մեր նախնիքները բնական ծանօթութիւն ունեցան բժշկական նիւթերուն վրայօք, որք առ հասարակ գործ կածէին հարկաւոր եղած ատենը · այս փոքր ՚ի շատէ տեղեկութիւններ իրենց բաւական համարելով՝ չեղան անանկ յաջողակ ատեն մը՝ որ այս հարկաւոր գիտութիւնը Հայաստանի մէջ լուսաւորվէր · և թէպէտ շատ խելացի մարդիկներ հետևեցան այս ձեռնասօգուտ մակացութիւնը՝ ինչպէս որ վարը պիտի պատ-

գմք, բայց հետագաները չէ՛ շարունակեցին· անոր համար երկար ատեն չէ՛ ծաղկեցաւ ու- մուց մնաց։

Իսկ Եւրոպիոյ ժողովուրդները այս ար- հեստին համը աղէկ առնելով՝ ու մարդու- անգին կենացը շատ հարկաւոր բան ըլլալը լաւ հասկընալով՝ իրենց ամէն քաղաքներուն մէջ գրեթէ մէկ մէկ յատուկ Համալսարան (*Ունիվէրսիթա*) ու Ճեմարան (*Ակա- տէմիա*) հաստատեցին ՚ի շատ՝ որ ատոր վրայ ալ ծաղկեցնելու ու լուսաւորելու եղեր են։

Այնչափ շատ են բժշկարաններ՝ որ թէ՛ քաղաքացիք և թէ՛ գիւղացիք գիտեն ձուր ՚ի շատէ բժշկական խնամներ ու օգտակար դեղեր. Իսկ այնչափ երևելի բժիշկները՝ վիրաբուժները՝ ծնուցիչները՝ բնալուծները՝ ու դեղագործները։

Բայց՝ ասոնց ամէնը մէկ առնլով՝ ու ՚ի վիճակ ազգիս նայելով՝ իմ ազգասիրութիւ- նէս անհանգիստ ըլլա, ջանք ըրի ու հար- կաւոր եղածին չափ իմ ազգիս մէջն ալ բը- ժշկական հանգամանքներ ու նորանոր գիւ- տեր՝ կարգեր ու ոճեր մտցնելու համար՝ չափէ դուրս աշխատեցայ. որովհետև ազգաօգուտ բան է լուսաւորելը ու ծաղկեցընելը։

Խնդրեմ և ատեն ատեն մեր ազգին մէջ

բժշիկներ ու վիրաբուժներ (ճեռահներ) եղեր են, որոնց անուններն ու վարքերնին գրելը երկան կըլլայ, որք մէկ մէկ բժշկարաններ շիներ են այնէ, անոնք ալ անկատար ու անպատօգուտ բաներ են. ինչպէս վերը ըսինք, շարունակ հեթանոսութեան կըլլալուն համար՝ մինչեւ հիմա ալ արհեստը մեր մէջը կատարելութեան չէ գտեր։

Թէպէտ ազգէս տասնևմէկ դարէ առաջ յԵգիպտոս գտնուած օրերը՝ ալ Ուռհայը ապաւինելով ձեռք զարկէ՝ երկու հատոր բժշկարան շինեցի. բայց երբոր դարձայ եկայ յիմ հայրենիքս՝ տեսայ որ անոնք գըրաբառ և կարճառօտ ըլլալուն համար՝ այնքան յարգի չեն եղեր մարդոց անոնց քովը։

Ասոր աւելի օգուտը առաջ տանելու մտքով՝ դարձեալ ձեռք զարկի այս բազմահարուստ բժշկարանները շինելու՝ պարզ ու աշխարհաբար հասկըցունելով։

Այս բանիս վրայ երկար խօսիլ հարկաւոր չէ, վասն զի կարդացողները իրենք իրենցմէ գործով աւելի կիմանան, ու իրենց գործքովը ուրիշներուն ալ յայտնի կըցուցնեն անոր պտուղը ու օգուտը։

Ասոր դիւրին (խօլայ) ըլլալու համար կարդացողին՝ տեղ տեղ ապտանիկ ցուցակով

բաժամներ տրուեցաւ, անոր համար՝ ո՛ւր որ կը տեսնաս տողերուն մէջ տեղերը փարէնթազիզի մէջ առած՝ այսպէս (*) աստղանիշ ցուցակ և վերջէնքի բաժամ, գնա՛ ցուցուցած տեղը՝ գտիր ու կարդա՛, որ տողերուն գլուխները կը գտնաս՝ միջէն սկսեալ մինչև հատորներուն վերջանալը։

Նաև ո՛ւր որ կը տեսնաս տողերուն մէջ տեղերը փոքրիկ փարէնթազիզի մէջ առած մինակ վերջէնքի բաժամ՝ առանց թէղէթթայի և աստղանիշ ցուցակի, դարձիր գտիր առաջին հատորին մէջը ներածութեան տողերուն գլուխները, որ կը ձայնէ գրաբարեղուն՝ նորագիւտ բաներու վրայ, և բըժշկութեան արհեստը սորվելու համար, միջէն սկսեալ մինչև կը 26 բաժամն։

Այլև տեղերուն չինելու կերպերը ունասխաները շատ չէ կրկնելու համար՝ ո՛ւր որ փարէնթազիզի մէջ (թէղէթթայի) հանդէպիք նէ՝ հանդերձ թիւ բաժե և վերջէնքի բաժամով, որ է ցուցակ թէրթիպի, անոնք պիտի բըռնալի խարաքանցիր հատորներուն էջքի ծայրերը, միջէն սկսեալ մինչև հատորներուն վերջանալը։

Սուսմնանէր ըշխմղներուն օգուտ և հեշտ ըշխալու համար՝ չաֆէ տուրս աշխատանօք չինեցաք բառարան մը սար կարք ձախա-

գոյն, անուանց բառից՝ խօսից՝ հանգոյ
( *մատենադթ*՝ ) հեղինակութեանց՝ և այլ բա-
ղադրեալ դեղոյ, նաև ինչ ինչ անդամոց՝
ցաւոց՝ և խոցից. և յօրանահանջեալ բառե-
րուն առջևը դրին կրեանց բնութեանցը՝
օգուտներըը՝ գործ ածելու կերպերը ու
չափերը և քանակները:

Ու աւելի հեշտ ու դիւրին ( *խօսայ* )
ըլլալու համար՝ տաճկերէն, արապերէն, և
պարսկերէն բառարանի մը ալ շինեցաք անոր
էտևը, և անանց նշանակութիւնները լատինա-
կան անուանով շինած բառարանիս ու շար-
կեցաք. որպէս զի ասոր արևելեան լեզուաց
անգէտ ըլլողները հասկընան ու սորվին՝
թէ Եւրոպացիք ինչ անուանով կըկոչեն իւ-
րաքանչիւր բժշկական ոճերը ու բառերը:

Այս բժշկարանիս նիւրածութեան մէջը
նորաձևարդ բժիշկ կըկարդայ ու կըտեսնայ
բժշկութե՛ն ուշբառնները և նախապէսթեա-
բանները. մանաւանդ ան նորագիւտ հնարք-
ները որ կատարելութե՛ն կըհասցնեն զինքը.
և թէ քանի՞ հարկաւոր բան կայ՝ որ պէտք
հարցընէ ու իմացնէ հիւանդէն, և ընտո՞ր
պէտք նայինէ նաշխը, և քանի՞ բան կայ՝ որ
կըքննայ հասկընալու նոյն նախշէն, միջեւ մի-
ջին ժեշտ՝ որ մէջ դառամը ըլլայ առաջ
ան կարդալու, ու ետքը ներքս մտնալու՝ և
բժշկութի՛ն սորվելու, մէջը մէջ:

* Պատուեա՛ զբժիշկ ՚ի պէտս անձին քո, զի և նա յԱյ ա-
րարեալ է ։ Սիրաք . ԼԸ . 1 ։

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## Ո՛ինչ է բժշկականութիւնը։

1. Բժշկականութիւնը անանկ ազատական արհեստ մըն է, որ մարդուս մարմինը, անդամները, ու ներքին տրամադրութիւնները կը քննէ. որպ̃ զի անոնց հիւանդութիւնը ու անհամաձայնութիւնը ճանչնայ, և անոր յարմար դեղեր պատրաստելով առողջցընէ հիւանդը։

2. Այս հասկընալէն ետև, գանք հիմա ամէնէն առաջ խօսինք նամըզին վրայօք, և անկից ետքը բժշկութեան վերաբերեալ բաներու վրայ։

Ի՛նչպէս է մարդուս սրտին զարկը, այնպէս է բազկին զարկն ալ (բօլըս)։ Այս պատճառաւ իմաստուն վարպետները նամըզը զննելու ու ճանչնալու համար

շատ տեսակ կանոններ կը դընեն։ Ուրեմն
այնպէս է՝ որ ամէն նորավարժները անոնց
ամէնուն կամ գոնէ երևելիներուն վրայ
փոքր ՚ի շատէ ծանօթութի՛ ունենան։

Օրինակի համար․ մաղձոտ ու արիւ-
նոտ բնութե՛ վիճակեալ մարդոց նամզը՝
միշտ սրընթաց (առ֊ք վաղօղ) կըլլան՝ քան
պըլղամոտ ու սևամաղձոտ բնութե՛ տէր
ըլլօղներէն։ Մանաւանդ՝ մանկունքնե-
րունը՝ քան երիտասարդներէն։ Իսկ ծե-
րերունը աւելի պինդ ու ծանր կը նետէ՝
քան մէկալներէն։ Բայց հասարակօրէն
խօսելով՝ չափահաս՝ ու առողջ, հան-
դիստ, և անօթի մարդոց նամզը՝ մէկ րո-
պէի (դագիգէի) մէջ կը նետէ 65 անգա-
մէն մինչև ց70։ Մանկունքներունը
80 անգամէն մինչև ց90․ կամ ց95։
Իսկ ծերոցը 50 անգամէն մինչև ց60․
կամ ց65․ և ոչ աւելի։

Ըսածներէս կը հասկըցվի որ, ինչպէս
որ առողջութե՛ ատենը տարբերութի՛ ու-
նին նէ, անանկ ալ հիւանդութե՛ ատենը։
Ասոնք ասանկ ըլլալուն համար․ շատ
դժվարութի՛ կըլլայ բժիշկներուն՝ որ

մինակ նամզը զննելովին՝ ինչ տեսակ հիւանդութ̃ի ըլլալը անսխալ ճանչնան . հապա պէ՛տք է որ՝ ասկից ետև գրելու հարցմունքները՝ որ հիւանդէն պիտի հարցըվի, աղէկ հարցընել ու իմանալէն ’ի զատ՝ ամէն տեսակ հիւանդութ̃եց նըշանները ալ ուշ դնելով քննել ու միտք առնել. ինչպէս որ պիտի կարդաս իրենց կարմիր տեղերը։

Մարդուս առողջութ̃ առենը՝ եթէ նամզը մէկ րոպէի մէջ 65 կամ 70 անգամ զարնելու ըլլայ նէ՝ ինչպէս որ վերն ալ յիշեցինք, պէտք է՝ որ հիւանդութ̃ առենը նետէ ինչվան 105 . կամ 110 անգամ։ Իսկ եթէ նոյն անձին 140 կամ 150 անգամ զարնելու ըլլայ նէ, որ է վերջին ծայր սրընթացութ̃,

ցուցա՛կ է միշտ վտանգի։

Այս երակազննութիւնը կուզեմ որ աղէ՛կ մտնայ միտքդ՝ որ հարկաւորութ̃ առենը չի խաբըվիս, պէ՛տք է որ՝ ամէն օր պարապ մնացած առենդ դուն քուկին նամզիդ՝ կամ բարեկամներուդ նամզերուն վրայ փորձառութի ընես . և նոյն

Նամզերուն տարբերութիւնները ու համրանքները մտքիդ մէջը տպաւորես, որ հա՛րկ եղած ատենը հեշտ ու շուտ ճանչնաս՝ գո՛նէ տաքութեան աստիճանները։

Ա՛լ աղէկ կընես, եթէ երակազննութեան ատենը՝ զարկախոյզ (poulsomètre), կամ ժամացոյց մը ձեռքդ ունենաս, և անոնցմով զննես։

3. Բժիշկը երկու բանէ ալ պէտք է որ շատ զգուշանայ։ Մէյ մը հիւանդին քով մտած ատենը՝ թէ որ հոգնած է նէ՝ պէտք չէ որ շուտով նամզը զննէ, կամ նայի․ և նայած ատեննալ խօսի։

Մէյմալ որ ցաւին բուն պատճառը (ա) չի հասկըցած և ինչ ցեղ հիւանդութիւն ըլլալը չի ճանչցած՝ պէտք չէ րիչէթթա գրել, կամ դեղ պատրաստել․ զի՛րա կուրօրէն բան ընելը մեծ տգիտութի, ու վտանգաւո՛ր է։

4. Ասոնք կատարելէն ետև, պէտք է նախ՝ հիւանդին տարիքը հասկընալ, ու

---

(ա) Հիփոկրատէս 'ի խրատատուութեան։ Բժիշկք ոչ ինչ կարեն օգտել հիւանդաց, եթէ զպատճառս անգիտանայցեն հիւանդութեանց։

անոր կեօրէ դեղերուն չափը յարմարցընել։

Բ. Ինչ տեսակ հիւանդութիւն ըլլայ նէ ըլլայ՝ պէտք է հիւանդանալուն ըստոյգ կամ ուղորդ պատճառը՝ հիւանդէն տեղեկանալ, հանդերձ այլովքն։

Գ. Այս ինչ հիւանդութէ բռնըվիլը, որքա՞ն ատեն ըլլալը հասկընալէն ետքը. պէտք է նաև հարցընել՝ թէ հիւանդը դեռ չի հիվըտցած՝ վատառո՞ղջ է եղեր. թէ քաջառողջ։

Դ. Հիւանդը ինքիրեն պառկած տեղէն կրնա՞յ մի ելլել կայնիլ։

Ե. Ինչպէս է սկսեր հիւանդութիւնը. և ուրիշ ատեն ալ բռնըվե՞ր է այս ինչ հիւանդութենէն, թէ ո՛չ։

Զ. Հիւանդը առտըվնէ ինչվան իրիկուն մէկ կերպ է մի, թէ փոփոխական։

Է. Հիւանդին սիրտը խառնըվե՞ր է, կամ փըսխե՞րէ նոր հիվըտցած ատենը։

Ը. Հիւանդի որկորը (պօղազը), ու նամըլի վրայի կաշին ցամա՞ք է, թէ թաց.

Թ. Այն միջոցի ատենները քըտինք ունի՞ մի հիւանդը, թէ ո՛չ. և նոյն քըտինքը ունի՞ մի հոտ, կամ շոգի, և կի՛ճ խեժ։

Ժ. Մ՚էզը կամ ցամաք ջրվաթը քի՞չ է, թէ շատ. կամ գոյնը ընտո՞ր է, և կամ տակը կինջնա՞յ մրուր (թօռթօ), թէ ոչ։

ԺԱ. Փորը լո՞յծ է, թէ պինդ (գապըզ)։

ԺԲ. Ունի՞մի ցաւ գլխոյ, կամ մէջ-քի, և կամ թուլութիւն ծնկաց։

ԺԳ. Ե՛րբ որ հիւանդը թէ շունչ առ-նել տալու ատենը, և թէ հազալու ժա-մանակը՝ ունենայ ցաւ, կամ խէթ որ-կորդ (պօղազը), կամ կուրծքի, կամ ստամոքսի, կամ կշտի, կամ լերդի, կամ փայծեղան, կամ փորի, կամ ստորին ո-րովայնի, կամ աղեաց, կամ երիկամանց, կամ փամփշտոյ, կամ արգանդի, որ է նշան բորբոքման. ան ատենը հարկ կըլլայ որ՝ բժիշկը իր ձեռքով շօշափէ, կամ՝ նայի նոյն ցաւած տեղերը. ոպ̃ զի պնդու-թի և ուռեցք ունենալը հասկընայ ու՝ անոր կեօրէ դեղ և հնարք պատրաստէ։

Եթէ հիւանդը կնիկ մարդ ըլլայ նէ, ան ատենը պէտք է որ՝ հարցընէ, թէ ընտո՞ր է անոր տեռատեսութիւնը, կամ ամսական պարտքը։

Ա. Ողի կամ ծոյվո՞ր է, թէ չէ՛, կամ

որքան ատեն է ծոցվոր ըլլալը։
Գ․ Թէ որ հիւանդը ծննդական կամ լոհուսայ ըլլայ նէ, ան ատենը պէտք է հարցընել, թէ ընտո՞ր ծնաւ մանուկը, այսինքն՝ հե՞շտ, թէ դժվար։
Դ․ Մանուկը ծնած ատենը արիւն շատ գալե՞ց, թէ քիչ։
Ե․ Կաթը շա՞տ է, թէ քիչ․ կամ տակաւին (տահաց) կաթ կուտա՞յ զաւկին, թէ վերջ ըրած է։
Զ․ Հիւանդը իր կենաց մէջ բնական ժամբայէն ամսական պարտքին տեղը՝ դեղին հիւթ կամ ջուր երթալը գիտէ՞, թէ ոչ։

Ա․ Եթէ հիւանդը մանուկ տղայ ըլլա՛յ նէ, ան ատենը ամէնէն առաջ պէտք է որ՝ մօրմէն հարցըվի, թէ ինչվան հիմա քանի՞ առղայ է բուսեր, ու բուսած առղաները հե՞շտ է բուսեր, թէ դժվար։
Բ․ Ծաղիկ կամ հարսանիթ հանե՞ր է, թէ չէ։
Գ․ Ներսէն կամ տիպէն ճճի կամ սօղ-լուճան թափած է, թէ ոչ։
Դ․ Փորը երբեմն ուռեցե՞ր է մի, կամ բերնէն շօղինք վազած ունի՞, թէ ոչ։

Է. Մանկան աղէկութե՛ ատենը՝ գիշերները ընտո՞ր է անցուցեր։

Ը. Մանուկը իր կենացը մէջ հիչ ջղացընցութի՛ (սբազմօ) բռնըվե՞ր է, թէ ո՛չ։

Այս ընդհանուր հարցմունքներս՝ որ բոլոր եւրոպիոյ բժիշկները առ հասարակ կը շարունակեն, կարծեմ թէ՝ շատ շահաւո՛ր կըլլայ, թէ հիւանդաց և թէ բժշկաց, որովհետև ամէն տեսակ հիւանդութի՛ները գրեթէ անհնա՛ր է՝ որ մինակ նամզէն հասկըցվի. հապա քիչ մը նամզէն, քիչ մի ալ աս հարցմունքներէն, ու ամէնէն աւելի այն նշաններէն՝ որոնք տեղն 'ի տեղը պիտի գրվին յայս հատորներուս մէջերը։

5. Բժշկականութի՛ը մէկ արուեստ մը ու գիտութի՛ մընէ՝ որ կատարեալ ըն-տանալու կա՛րծէ մարդուս կեանքը, մասունքները շատ ըլլալէ՛ն 'ի ղատ՝ հիւանդութի՛ներն ալ բազմատեսակ (ա). Թո-

---

(ա) Անոր համար հիմակվան իմաստուն վարպետները մանաւորաբար չորս դաս ըրին կամ բաժնեցին. որոնց ոմանք կըսվին սուր տաքութիւն

ղուլք բժիշկներուն տարբեր կարծիք-ները · տարուան օդին ազդեցութիւնը, որ ան ալ միշտ փոփոխական է։

Այս պարագաները մտածելով՝ չափէ դուրս աշխատեցայ, Թիսօթի՝ Քուլէնի՝ պուքանի՝ օտիէռի՝ Փանձակօի՝ պռով-նայի՝ գասպար ազէլլիօի՝ Թովմազինօի՝ սկովտացի բժշկի՝ միլմանի՝ վաքքայի՝ Փռանգի՝ պրունաթէլլիի՝ պռուշէի՝ ալիպէրթի՝ և այլ ուրիշ հեղինակներուն գրեանց մէջ նայելով · եւրոպացիք ինչ-պէս ամէն բանի վրայ՝ սանկ ալ բժշկա կան արհեստի վրայ շատ գրքեր ունենա լով · հոգերնին չէ ամէն բանը մէկ գրր-քին մէջ ժողվելու · որովհետև ուզողը կրնայ ուրիշ գրքերու մէջ գտնալ։

Բայց մեր ազգին համար գրեթէ մի-նակ մէկ հատիկ գիրք ըլլալով ընդհա-նուր բժշկութեան վրայ · նայեցանք որ՝ որ-չափ կարելի է բժշկութեան հարկաւոր բա-ները հոս ժողվենք · որպէս զի դուն աս

‖ բիւէսանի ‖ · ոմանք ջըլական կամ ջղային ‖ նէռվօզի կամ նէւռոզի ‖ · ոմանք ախտագնութ ‖ քաքէքսիա ‖ · և ոմանք ալ տեղական ‖ լօքալէ ‖ ։

բժշկականութիւնը կարդալով՝ հեշտ ու շուտով գտնաս , ինչ որ եւրոպացւոց գրքերուն մէջ՝ տասն և վեց վարպետի գիրքեր կարդալովդ պիտոր գտնայիր ։

6 . Ասիկայ անանկ սկզբունքներ կը սորվեցընէ , որ մտածելով կարդացողը կըլլայ կատարեալ փորձառու բժիշկ ․ անանկ մէկ լոյս մը կուտայ որ՝ բնաբանութիւն (Ֆիզիքօ) և մարդակազմութիւն (Ֆիզիօլօճիա) կարդացող բժիշկի մը պէս կը ճանչնայ ինչ տեսակ հիւանդութիւն ըլլալը , իւրաքանչիւր հիւանդութիւններու նշաններէն ։

7 . Շատ տեսակ բնական դեղեր կան , պէտք է որ՝ կատարեալ բժիշկը անոնց ամենուն , կամ գոնէ երևելիներուն գաղտնի որակութիւնը ու բնութիւնները՝ զօրութիւնները՝ ներգործութիւնները՝ չափերը՝ ու գործածելու տեղերը՝ գիտնայ , որոնց ոմանք են խթիչք , կամ գրգռիչք (էօրկէնիա) ․ և ոմանք թուլացուցիչք , կամ տկարացուցիչք (աօրկէնիա) ․ չըլլայ թէ մարդուս հիւանդութիւնը աւելցընելու տեղը՝ կենացը վնաս մը բերէ ։

Քանզի անհամար հիւանդներուն չաղեկնալնին կամ մեռնելնին կը կարդաս ու կը հասկընաս ան հատորներուս մէջը , պատճառը անանկ կը գտնաս որ՝ Սթէնիա կամ քօնթռա սթիմօլանթէ , մի՛ տկարացուցիչ դեղեր բանեցընելուտենը , էսթէնիա կամ սթիմօլանթէ դեղեր բանեցընելէն եղեր է չըռըռնալնին կամ մեռնելնին ։ Բայց ալ աւելի ուշ դնելով , կամ մըտմտալով կարդալու ըլլաս , կիմանաս որ՝ շատերուն ալ մեռնելուն պատճառը՝ հիւանդութեն բուն պատճառը կամ նշանները աղէկ չի ճանչնալն է եղեր ։

8 . Հիւանդուե̃ց սկզընական պատճառները ( * 8 ) կը ծագին յանբարեխառնութենէ օդոց , և ազգի ազգի կիրքերէն , որոնցմով ներքին բարեխառնութի̃ը ու կարգադրութի̃ը կը այլայլի ու կը առթէ տեսակ տեսակ հիւանդութիւններ , որոնց ոմանք կըլլան չափէ դուրս ուժէն՝ որ նոր բժշկական ոճով տիաթէզի սթէնիքա կըսուի . և ոմանք ալ կըլլան չափէ դուրս տկարութենէն՝ որ

կըսվի տխաթեղի ասթէնիքա․ ինչպէս որ պիտի կարդաս այս գիրքիս մէջ, բժշկութե̄ նոր գիւտերուն մէջը (4)։

Անանկ է նէ՝ ոչ ուժին շատութի̄ը օգուտ կընէ հիւանդին, և ոչ չափէն աւելի տկարութի̄ը․ բարեխառն կամ չափաւոր ուժէն աղէկը չըլլար։ Ուրեմն բոլոր բովանդակ վարպետութի̄ը բժշկութե̄ այս է՝ որ հիւանդին չափէն դուրս ելած թէ ուժը և թէ տկարութի̄ը իր տեղին չափը բերել․ ո՞չ զի զուգահաւասար ու միակշիռ ըլլան նեղքին հիւթերուն տրամադրութի̄ը, և գործարաններուն համաձայնութի̄ը, որուն դարձեալ եմ դառնայ գայ խնդրած առողջութե̄նիս։

Գտանք որ՝ այս ուզած առողջութե̄նիս չորս բանով և եթ կրնանք տի ձգել, ու կրկին վայելել։ 1․ Ամէն վնասակար կեր խումէն հեռանալով հեռանալ․ (ա)։ 2․ Վարպետ բժշկի ձեռք իյնալ։ 3․ Խարմ (Բաղէ) դեղեր տի ձգել։ 4․ Հիւանդը բժշկին ինչպէս որ պէտք է նէ հնազանդիլ։

---

(ա) Էլ հիմէթու ռէսու՝ քիւլլիւ տավայ․ այ՝ ամէն դեղերու գլուխը ժուժկալութի̄ն է ([illegible])։

9. Ամէն մէկ գլխաւոր հիւանդութի՝
որ աս բժշկարանիս մէջ կը պատմըվին՝
շատերուն հետ գրեթէ մէկ տեղ կը գըտ-
նըվին պըլըրշկօղութիը, որուն տարած-
վիլը կը կարդաս կը հասկընաս գլխաւոր
պատճառը՝ անանկ կը գտնաս որ՝ զգու-
շութի չըն՛էն է եղեր տարածվիլը կամ
շատնալը. բայց մտմըտալով կարդալու
ըլլաս, կիմանաս որ՝ չըզգուշանալուն
պատճառուն ալ կոպիտութիը եղած է եղեր։

10. Ասոնք գիտնալով՝ մի՛ սպասեր
որ դուն անձամբ փորձ առնես, եղբըր
իմանաս ու զգուշանաս. կեանքդ կարճ
է, ինչվան որ՝ անձամբ փորձ առնես
ամէն տեսակ հիւանդութիները, ու հաս-
կընաս, մեռնելդ վրայ կը հասնի, երբ
պիտոր հանգիստ կեանք վայելես. հա-
պա՝ ուրիշ ճարտար բժիշկներուն փորձը
կարդա՛ ու հասկըցի՛ր՝ որ աս բժշկակա-
նութիը քեզի կը սորվըցընէ, ուրիշնե-
րուն փորձովը ու վնասովը արհեստ սոր-
վէ՛ քու օգուտդ վնտռէ՛. ան ատենը
որչափ լաւ կըլլայ քեզի։

Յիսուն տարվան փորձառու բժիշկ

մը քսան և հինգ տարւան բժիշկէն շատ աւելի բան գիտէ , որովհետև շատ տեսակ հիւանդներ տեսեր է , և շատ փորձեր ունի միտքը ժողված . Թէ որ քու ձեռքդ ծանր հիւանդ մը ըլլայ՝ խորհուրդ հարցնել փորձառու բժշկին՝ քանի՞ խելացուն կըլլայ . անոր փորձովը՝ Թէ որ ըուըտնալու ցաւ է նէ՝ կը փակչիս ու կըուըտցընես , Թէ որ չըուըտնալու ցաւ է՝ ետ կը քաշվիս . կամ ստիպմամբ կընայիս մեռնի ալ նէ՝ քուկին անունիդ կոտրուն մը չըլլար՝ ճամբով նայվելուն համար ։

Հիմա՝ ո՞րչափ աւելի աղէկ կըլլայ չորս կամ հինգ բժիշկ մէկ տեղ գան , որոնց ձեռքերնուն շատ տեսակ հիւանդներ անցած ըլլալով՝ մեռեալ մարմիններ բանալով՝ և շատ դեղորայք փորձած ըլլալով՝ աւելի բան ու նորանոր գիւտեր գտեն . ինչպէս որ վերն ալ յիշեցի ։

Հապա՝ 10 . 16 վարպետ բժիշկներ մէկ տեղ եկածի մը պէս քեզի կը պատմեն կը հասկըցընեն տեսակ տեսակ ցաւեր հանդերձ անոնց նշաններովը . քու առջիդ կենդանի պատկերով կը ցըցընեն ինչ դեղով աղէկցան , ու ինչ դեղով

ա

մեռան․ դուն ալ թէ որ խելքով կարդաս՝ յարմար դեղերուն կը հետեւիս, ու անյարմար կամ ափեղցփեղ դեղերէն ետ կը կենաս։

11․ ԺԸ․ Դարուս մէջը Եւրոպայւոց մէջ խիստ փայլեցաւ բժշկութեան արհեստը․ շատ ծաւալեցաւ բնալուծութիւնը (քիմիաճիութիւնը), յորմէ նորանոր գիւտեր ու դեղեր գտնըւեցան, ինչպէս որ շատերուն ալ յայտնի են։ Բայց բըժըշկութիւնը անեղը՝ խորունկ ու մութ արհեստ մը ըլլալով, շատ ցաւերուն բուն պատճառները ու շատ դեղերուն բուն որակութիւնները անյայտ․ անկից կըլլայ որ՝ մէկ կողմէն քանի որ բժշկական արհեստը կը ծաւալի, մէկալ կողմէն անչափ ալ բժիշկներուն կարծիքները կը շատնան մի և նոյն հիւանդութեան ու դեղին վրայ։

Այս դարուս մէջը մէկ անգղիացի երեւելի բժիշկ մը Պրաուն անուն՝ բոլոր բժշկութեան արհեստը նոր կարգի մը դըրաւ․ ամէն հիւանդութիւններ երկու կերպ յարմարութենէ կըլլան ըսելով․ որոնց մէ-

ը

99/8-57 /131

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ ... СССР

կուն ըսաւ՝ Տիաթէզի սթէնիքա. և մէ-
կալին՝ Տիաթէզի ասթէնիքա ( 4 )։

Թէպէտ ինքը շատ առատաւոց կարծիքներ ունենալով, քիչ բժիշկ կայ՝ որ կը հետևին ասոր. բայց տիաթէզիներուն վարդապետութիւնը աղէկ քննելով՝ հարկաւոր բան ըլլալը իմացան, և ամէնքը մէկէն ընդունելէն 'ի զատ՝ շատ ալ հոգնեցան, և մինչև հիմա կը հոգնին ասոր վերաբերեալ գիւտեր գտնալու, և էփ աղէկ բան ալ գտան։

Բայց ասհա աղէկ մը կատարեալ չըլլալուն համար՝ անոնց վրայ հիչ մէկ բան մը գրել չէի ուզեր։ Բայց մէկ կողմէն ալ նայելով որ՝ ինչ որ մինչև հիմա գրանըված են՝ շատ հարկաւոր են, և լոյս կուտան բժշկական արհեստին, ալ աղէկ սեպեցի անոնց վրայ ալ քիչ մը գրել, որ լոկ ուսումնական նիւթ մը ըլլալուն համար՝ գրաբառ գրվեցաւ. զերէ ասանկ ուսումնական բաները գըրաբառ լեզուով աղէկ կընան հասկըցվիլ։

Նոր գիւտք արդի բժշկաց ՚ի վերայ բժշկութեան ընդհանրապէս ։

(1) Գասպար ազէլլիօ իտալացի · յամին 1622՝ յայտնի եցոյց զգայութի աւիշկեան անօթոց ( լինֆաթիքօ ) ՚ի մարդուն · ընդ որ յիրաւի պանծայ իտալիա · այլ յաւել զպարծանս նդ մաքանէի քաջ անդամագննին , զԹէրլին գործոց առաջնոց լցեալ ։

Հուշակաւոր են և այլքն մեծանունք · վէսլինձիօ , բէքէդ , ռօտիօ , վալէօ , յովհան վանհուն , ռուտէք , Թոմսա , պարԹօլինօ , ռուխայք , փէտէրիքօ միքէլ , որք ՚ի պէս պէս մասունս մարդոյ յայտնեցին զնոյն աւիշկեան անօթսն ։

Բայց որոյխում համբաւոյ չիցէ արժանի այր ճարտար՝ որ անխոնջ և գոգցես իմն անկարծելի աշխատութե՛ կրկնեաց ոչ միայն զառ ՚ի հնոցն փորձեալ ներարկութիս ( ինէէճիօնէ ) , այլ և գիտաց խաղացուցանել զգնութի իւր յառաջ ցնոյն խակ ցփորոտսն · յորս ոչ ոք յիշելոյն յառաջ քան զնա՝ զօրեաց Թափանցել ։

Ո՞չ արդեօք սա ինքն է՝ որ 'ի կարգ-
անօթոց հաստատեաց զաւիշկեանսն , և
զմ̃մին էած կացոյց հուպ 'ի լանջային
խողովակն ։

Համբաւն մեծ՝ զոր ստացեալ էր
Ճարտար առնս 'ի համալսարանի Պիենա
քաղաքին , դրդեաց զմեծն լեօբօլդ ըզ
դուքսն Թօսքանայ՝ կոչել զսա յաթո-
ռանիստն իւր 'ի Փլօրենցիա ․ զի առ
Ճանաչօղ առնս բարեսէր խուզարկուե̃
ոչ որք ծածկէր յարժանապատիւ իմաստ-
նոցն ․ որ և հաստատեաց զսա առաջնորդ-
զննուե̃ աւիշկեան անօթոցն , որք մինչև
ցայժմ յաւելուն զպարդ անհամեմատ
թանգարանին ․ ուրանօր բազմուե̃ յոյժ
'ի բարուք շարս դասեալ գտանին ա̃մ
ինչ՝ որ վերաբերին 'ի բնադէտ և 'ի բը-
նապարուամ մակացութիւնսն ։

Պիսա և լուսն աւիշկեան դրութե̃
ոչ եղև լոկ առ 'ի լուսն փառաւորուե̃
առն իմաստուե̃ տենչացողի ․ այլ նոյն
անդամազննին սիէնացի ուշ կալեալ 'ի
կանոնս մարդակազմուե̃ և ախտաբանու
թեան՝ բազմաշահ հետևութիւ եհան ,
մինչև այժմ դիւրաւ մեկնիլ բազմաց

յախտաւոր երևութից , որք յառաջին ժամանակս հիմնէին միայն 'ի սուտ և յանտեղի վարկածս։

(2) Եղև երբեմն , և ոչ բազմօք ինչ յառաջ քան զմեր աւուրս , զի համարեալ էին բժիշկք , եթէ հիւթքն՝ որք շրջան առնուն յանօթս մարմնոյ , դիւրափուտք իցեն . և այնչափ հաստատուն էր 'ի նոսա այս կարծիքս՝ մինչև բազմաց 'ի տենդից պատճառ դրել զփըտութիւն հիւթոց.

Ուստի գլխաւոր ջանք իմաստնոց այնր ժամանակի՝ էր գտանել դեղս զօրաւորս 'ի սանձել զփտութի̃ մարմնոյ , յորոց դարման պարապէին . և 'ի նմին իսկ ժամանակի այնչափ յաճախեալ էր ցանգ զովացուցիչ ( ԱՆԹԻՍԷՓԹԻՔ ) անուանեալ դեղորէից , մինչև ոչ ումեք յերկբայս լինել թէ՝ թէպէտ և կարի յառաջեալ իցէ փտութիւնն՝ գտանի դեղ հակառակ նմին։

Այն ինչ բազումք 'ի բժշկաց յայս միտս կային , յարեաւ 'ի նմին արուեստէ այր ոմն հանճարաւոր , զարդարեալ

բարւոք մտօք և նուրբ կշռողութբ, անուանեալ Ֆռանչէսքօ վաքքա. և եցոյց թէ անհնար է հիւթոց փոխել մինչդեռ շրջան առնուն։

Զննութիւնք և դիտողութիւնք և փորձ և պատճառաբանութիւնք հաստատուն՝ զոր ած 'ի մէջ՝ ծանուցանել զսուտութիւն վարդապետութեան փտութեան, կասեցոյց զհաւանութիւն բժշկաց ընդ նախնի վարկածն, և 'ի ժամանակէն յայնմանէ չափով վարեցան ոչ ևս պատճառս տալ տենդից զփտութիւն շրջանաւոր հիւթոց։

Այլ թէ արժանի է գովեստից՝ որ 'ի բաց բառնայ զվրիպակ կարծիս և զանհիմն դատաստան 'ի գիտութենէ իմիք, է գովելին իսկ պատճառաւ գովելի վաքքա. որ ոչ միայն քաջացաւ զհակառակն պնդել վարկածոց հանօրէն բժշկաց, այլ և արտաքս տարադրեաց 'ի կարգէ դեղորէից դեղս բազումս՝ վրիպակաւ մուծեալս յարուեստն, և առ. ոչ ինչ պիտանացու։

Գլխաւոր նպատակ էր բժշկիդ՝ ոչ փառս ժառանգել, այլ հիւանդացն բարերարել. որք բազում անգամ՝ զրկել

դատանէին յիրացն՝ զորս սաստիկ փափա-
քանօք խնդրէին . և ստիպեալ լինէին
խուկել զստամոքսն՝ եփեալ զովացուցչօք
և տաղտուկ դեղովք:

Յայնժամ տեղի եդին բժշկութ̃ն
պարզ՝ և մնոյ յանկուցիչ . և իմաստա-
սէր բժիշկն յորդոյ տրար զօգուտ ըն-
նութեանն բարերարի:

Այս առանց այնչափ խղճիւ յարելոյ
՚ի ժուժկալութ̃ի , և ՚ի խոտովք և եթ
շատանալն՝ ընծայեցաւ հիւանդաց և
կերակուր ՚ի մնոյ . և ՚ի պահանջել հար-
կին՝ երակ ևս հատանէին , և՚ի գործ ա-
ծէին զա̃մ՝ որ ինչ օգնութ̃ի մատուցա-
նէր յաւելեալ դիմադրութե̃ կենդա-
նական տեւչութեանն:

Ր.ժլ ո̃վլ արդեօք հաստատեցէ , նոյն
իսկ խոալեցէք որո̇ց համբաւ մե՛ծ էր
զայսպիսի դիւտ ընծայել բժշկի ու-
րումն՝ իւրեանց ազգայնոյ . սիրեցին մա-
նաւանդ դատել նորոգ վարդապետութե̃ս
ասել զանդղիացին Ս՝իդեմն , որպէս թէ
անմարթ ինչ իցէ երկուց արանց հան-
ճարաւորաց ՚ի միում ժամանակի ՚ի նման
մտածութիւս բերիլ , և ախոյեան կանգ-

նիւ հնոցն վրիպակ վարդապետութեան հակառակ։

Մեր հաւանեալ՝ եթէ փոքրս զառաջինն ած զմտաւ զայս տեսութի̃՝ ոչ կամիմք կորուսանել զժամանակ ՚ի խուզողու̃ս , թէ երբ և յորում տարւոջ մատենագրեցին սոքա , այլ ոչ և առնէ ֆուանդ՝ որ գրեացն յետ փոքրայի , ՚ի զննին կայ ցուք դիտողութ̃ց և ապացուցութեանց այսմ բժշկի։

Եթէ ֆուանդ չէ՛ր կալեալ իւր ոճ առանձին՝ ոչ զոք ՚ի մատենագրաց բժըշկութ̃ , կոչել յանուանէ խոստովանէր արդեօք յիւրում բժշկարանին , եթէ կամ ՚ի փոքրայէ ուսաւ զտեսութիւնս զայս , կամ յիւր իսկ ՚ի միտս եկն՝ անհաղորդ գոլով խորհրդոց նորա • որպէս դիպաւ և Սիմոնայ։

Եւ որովհետև յայսմ ժամանակի հին վարկածն գտանի միայն ՚ի բերանի սակաւուց բժշկաց՝ որք առաւել սիրեն զհնոց և զլքեալ տեսութ̃ց զհետ կըրթիլ , քան ՚ի խնդիր լինել զարգանալոյ և յառաջադիմութ̃ արուեստին՝ զոր վարեն ՚ի գործ • վասն այնորիկ չկամիմք

յոյժ 'ի քննին առնուլ զբանդ։

Տացուք միայն առ այնոսիկ պատասխանի՝ որք ասեն. թէպէտ հիւթք 'ի շրջան առնուլն ոչ փոխին, բայց մարթ է նմա փոխիլ, ունելով յարմարութիւն առ այն։

Այլ արդ՝ եթէ ոչ փոխին իրօք՝ զի՞ փոյթ է մեզ, եթէ կարիցեն փոխիլ կամ ոչ։

Այս յարմարութիւն՝ ըստ դրեցելումն 'ի վաքքայէ, ոչ է արդարև փոխումն, և ոչ իսկ պատճառ իմիք ձեռնհաս լինի, և մարթ էր ասել թէ՝ թէպէտ յարմարութիւն մեծ ունիցին հիւթք մարդոյ ուրուք 'ի փոխիլ, տակաւին յանայլայլակ առողջութեան վայելէ այն մարդ։

(3) Բազմապատիկ ազգ և տեսակք տենդից՝ զորս դրեն ֆուանդ և այլ արդի բժիշկք, բայց 'ի պարզից՝ որք յառաջնում տեսակին են, ակներև առնեն մեզ զբաղադրութիւնս խառնակ պատճառաց և երևութից՝ որք կարեն պատաղեցուցանել յանշահս զուշ նորակիրթ ուսանողին։

Օրինակ իմն 'ի բաղադրեալ ընդհատ տենդս՝ որք թուին բորբոքողական

կամ տգուրեալ ստամոքսային յաւել-ուածովք , ևն · և 'ի մաղձային տենդս՝ որք 'ի ստամոքսայնոց են · բայց ունին և սկիզբն ինչ տարափոխութե , կամ յորս բորբոքումն ինչ տեսանի , միշտ դժուարին լինի բժշկին խնդրել և որսալ ժամ դիպուկ 'ի մատակարարել զայս ինչ կամ զայն դեղ · և ստոյգ իսկ է՝ զի կամեցեալ երբեմն 'ի բաց տարադրել 'ի մարմնոյ զնիւթ տարափոխութեն կամ զստամոքսային խանգար յաւելուածսն , ևն · և 'ի նմին ժամանակի զօրացուցանել միանգամայն զհիւանդն՝ 'ի սաստիկ նըւաղմանէ՝ որ տեսանի 'ի նմին , ստիպիմք տալ դեղորէս՝ միմեանց ընդդիմամարտս ։

Բայց 'ի ստիպող առիթս միշտ յերկբայութե կամք , եթէ զի՞նչ արդեօք արժան իցէ գործել , ո՛չ կարելով վճռել՝ եթէ թափե՞լ պարտ իցէ զնիւթն վնասակարս հանդերձեալս 'ի ստամոքսն կամ յաղիս , եթէ արդեօք յետս պատրաստել զնոսին 'ի ձեռն քակտիչ և կակղիչ ( սօլվէնթէ ) ասացեալ դեղորէից ։

Առ այս հարկ էր մեզ ունել զհանճար՝ և զգործնական տեսութիւն և զերկար

ժամանակեայ բազմապատիկ փորձս մե-
ծին Փռանգայ , կամ գոնէ՝ 'ի համարի գտանիլ աշակերտաց նորին , առ ոչ վրի-պիլ 'ի դժուարին ճանապարհս յայսմիկ , զոր ինքն ցուցանէ մեզ 'ի ձեռս տեն-դեցն · որ միայն կարևորագոյն է՝ առ որս կամիցին յայս արուեստ պարապիլ։

Այս պատճառս հիմնեալ՝ խորհիմք հաճոյական ինչ առնել մերոց ընթերցո-ղաց , և յաւէտ առ այնոսիկ՝ որք 'ի բը-ժըշկութի̄ թարթափին , համառօտելով տաս զնոր վարդապետութի̄ 'ի վր̄ Տիա-թեզի անուանեալ որակութե̄ , առ որ մարթ է վերածել ընդ-հանրապէս զամ̄ մարդկային հիւանդութի̄ս ։

Այս նոր ոճ խորհրդածութե̄ 'ի վր̄ հիւանդութե̄ց՝ 'ի մէջ եմուծ պռօւն անգղիացի , և այժմ զայն ուսուցանեն բժշկապետք յոյժ ականաւոր համալսա-րանս իտալացւոց աշխարհին ։

Եւ մեկնութի̄ք և յաւելուածք՝ զորս սոքա արարին 'ի վր̄ դրութե̄ սկովտացի բժշկին , արարին զսա աւելի դիւրին , 'ի մթութե̄ նուազ , և յաւէտ իմանալի զընու̄ի սխալից , և զփարատիչ նոցին դեղոց ։

(4) Ըստ Պրօունայ՝ սկիզբն կենաց կախեալ կայ զգրգռութենէ, կամ զներգործութէ խթիչ դեղոց 'ի վր դիւրագրգռութե, և առողջութիւն զհաւասարակշռութէ երկուցուն սոցա ընդ միմեանս։

Արդ՝ յորժամ յանառողջ խթմանէ ինչ խանգարեսցի վիճակն օրինաւոր, փաղփաղակի սկսանի 'ի մարդկային մարմնում ախտաւոր ինչ գրգռութի. և այս լինի յաղագս առաւելեալ կամ պակասեալ ներգործութե գրգռութեն՝ որ պատճառի յազդեցութէ վնասակար իրաց, որք աւելի գրգռիչք են կամ տկարացուցիչք։

Սուրեմն երկու ազգ են համօրէն հիւանդութեց, զորս բժիշկք եւրոպացիք կոչեն ախտեղի Սթենիքա, և ախտեղի Ասթենիքա։

Օբառդ ախտեղի՝ զոր բժիշկք Է ժամանակս ժամանակս յայլ և այլ միաստուին, 'ի բացատրել զբազմապատիկ տեսութիս իւրեանց. այսպէս սահմանէ Պրօուն, որակութի ինչ կենդանական տեսչութե՝ յորում պատճառի հիւանդութի յառաւել կամ 'ի նուազ գըր-

գրուէ։ Գլխաւոր տարբերութիւնք համօրէն հիւանդութեանց՝ այժմ հիմնեալ են (ոչ ասացաք) ՚ի վերայ տխալթեղի որակութեան, որ են երկու․ առանց ՚ի մէջ առնլոյ զմիւս այլ գրգռութիւն՝ խուխթաթիկա ասացեալ․ զորմէ ՚ի յաջորդս խօսեսցուք։

Ըստ այժմ բանք մեր են զայնմ գրգռութեան՝ զոր կոչեն ըժիշկք էչչիդապիլիդա։

Գիտեմք արդէն՝ զի ոչ յամենայն ախտս մի և եթ աստիճան է միում կամ միւսում ՚ի սոցանէ անփոփոխ․ զի Սթէնիքա ասացեալն որքան զոր յաւելեալ՝ կարէ հասանիլ ՚ի գերագոյն աստիճան՝ զոր իբերսդէնիա կոչեն․ և Ասթէնիքայն հետզհետէ նուազեալ և պակասեալ հասանէ ՚ի վերջին ծայրն՝ որ իբօսդէնիա անուանի։

Պրօւն և հետևօղք նորա համարեցան՝ եթէ յուղղակի տկարութենէն առաւելութիւն և գոգցես շեղջակոյտ ինչ գուցէ գրգռականութեան (էչչիդամէնդօ)։

Բայց Փանձակօ չէ՛ յայս կարծիս, մանաւանդ թուի նմա՝ եթէ կենսական զօրութիւն յաւէտ անդործ և դատարկ

մնացեալ․ զի եթէ ոչ ՚ի գործ դրդեն
զնա խթիչքն, ոչ կարէ կազդուրիլ և
« ոչ զօրանալ՝ || քաղաքս մեղկունեն և
« թուլունի՝ որ պաշարեալ է զընդհա-
« նուր տեսչութիւն կենդանական․ ոչ զի՝
« ըստ որում բարուք ասէ պօէրհաւ․
« քիւրմէ իսկ գործոյ ինքնին կազդու-
« րեսցի։) ցայս վայր՝ Փանձակօ։

Բայց ՚ի Աթէնիքս հիւանդութիս հա-
կառակն պատահէ․ զի ինքնին դարման
տանի վնասուց աւթելոց ՚ի չափազանց
ներգործութէ կարողութեց խթողաց
վնասակարաց, և այն ինչ սորա նուազ
են՝ կամ բնաւ իսկ դադարեն, կենդա-
կան զօրութիւն քաջ աճէ բուռն և
անչափաւոր շարժմունս՝ ոչ տեսանի ՚ի
« սաստիկ բորբոքմունս․ || մինչև ի-
« րովք զօրութիք կործանեսցի․ և
« հաւակ քեռոյ ինքնին զինքն եղծցէ)․
որպէս ասէ նոյն Փանձակօ։

Յայտ է յայսմ ամէ՝ զոր ասացաք․
եթէ ճարտար ախտաբանդ չէ յամի հա-
մաբան ընդ Պրոմի, որ հաստատեաց
իբրև առած՝ եթէ գրգռականութիւն
(Իռռիտապիլիտաս) էակ ինչ է կրական,

զոր շարժեն 'ի գործ խթիչ կարողութ՟ին առ 'ի դիւրաւ իմացումն կենսական զօրութե՟՝ զորմէ է բան մեր • յաւելցուք առ տեղեաւս, զի զամենէ կախեալ կան դիւրազգրգռութ՟ի ( իրրիտապիլիտէ ) • դիւրազգացութ՟ի ( սէնսիպիլիտէ ) • հակագործութիւն ( քօնդրաքսիօնէ ) , որ և կծկումն , և ձաւալք կամ տարածումն ( էքսդէնսիօնէ ) :

Սորոց 'ի պէս պէս երևոյթս՝ որք տեսանին 'ի կազմութե՟ մարմնոց հիւանդաց , չէք հարկ ապաստան լինել յայլ զօրութիւնս :

Արդ՝ 'ի տենդս և յայլ ա՟մ հիւանդութիս ընդհանրապէս առաջին նպատակ բժշկին լիցի խնամով մեծաւ խոյզ և խնդիր առնել զՏիաթեզին , զի զհիւանդութ՟ին ածցէ յիւր յանդաւոր ցեղ :

Եթէ բժիշկն վրիպեսցէ 'ի գտանել զՏիաթեզին , և զայլ և այլ աստիճանս նո՟ր , վտանգ մեծ 'ի վե՟ր կայ հիւանդին , եթէ սկիզբն կենսական թափանցել՝ ա՟մ ա՟մ գործարանս կենդանականս՝ ոչ յաղթեսցէ խուռովք սեպհական զօրութեանց զախտաւոր գործն պատճառեալ 'ի ներ-

գործելոյ վճռական կարողութեանց։

Այս ամ՟ հիւանդութի՟ որ առաջի ընծայի բժշկին, թէպէտ ընդ այլում խիլք ախտի համանման իցէ, հարկաւ պատշաճի և պարունակի 'ի միում յերկուց տեսակացս, որք են հիմունք՝ յորոց վր՟ հարկ է բժշկին համբառնալ զշինուածս բժշկութ՟ն իւրում հիւանդի։

Այլ յետ վերածելոյ զախտս ամ՟ յերկուս Դիաթէզիս, մնայ ցուցանել թէ՝ ուստի՞ ծանիցէ բժիշկն զտեսակ իւրաքանչիւրոյն. և առ բարւոք վճարել զայս՝ հաստատեսցուք երկս դասակարգս հիւանդութեանց։

Յառաջնումն 'ի զննելն առցուք զյառաջընթաց պատճառս ախտին, յերկրորդումն՝ զհամընթաց նշանս կամ զարկածս ախտաւորս. և յերրորդումն՝ զներգործութիւն բուժիչ դեղորէից։

Սեռ և արբունք և եղանակ սննդեան և արհեստ հիւանդին, դիրք տեղւոյն և հանգամանք և բնութ՟ի բերոց երկրի նր՟, աշխատութ՟իք բնակչաց նր՟, խառնուածք նց՟, եղանակ տարւոյն, յանկարծ փոփոխութ՟ի օդոյ, ևն՟. անցանեն 'ի կարգ առ՟ջին։

Բանզի երիտասարդք և տղայք ան-
ձինք աւելի յարմարք են 'ի բորբոքողա-
կան հիւանդութի՝ քան զկանայս և քան
զծերս ։ Զնոյն ներգործէ ուտելն
զյարգ կերակրս սննդարարս, մանաւանդ
եթէ ոք յաճախութբ 'ի գործ ածցէ և
ըմպելիս արբեցուցիչս և ոգելիցս ։

Երկիր բազմաբեղուն լի այգեստա-
նեօք՝ ծնուցանէ զմարդիկ կայտառս դի-
մօք և բարուք, որոց դէմք գուշակ են
խրախասէր և զուարճ բնաւորութե, և
դոյն գեղոյն ծանուցանէ զազդողութի
գործարանաց ներքնոց ։

Այլ որք ստիպին կեալ 'ի խոնաւ և
'ի ճախճախուտ երկիրս անբերս, այլագ-
ունին բնաւորին զդիմացն գծագրութի.
մինչև դիւրաւ դատել, եթէ ախտքն՝
որք գան 'ի վր սոցա, ոչ համացեղք են
առաջնոցն ախտից ։ Զնոյն ասեմք և
զարոտեստից՝ յորս դեգերի այր իւրա-
քանչիւր ։

Բարեխառնութիք օդոյն և եղանակք
տարւոյն օգուտ ոչ սակաւ մատակարարեն
'ի ծանօթութի պէս պէս ախտից՝ միմեանց
հակառակաց ։ 'Ի գարնան յաւէտ յայն

երկիրս՝ յորս դիւրափոփոխ աւուրք յաճախեն, առաւել դիւրին է պատահիլ բորբոքողական հիւանդութեանց. 'Ի ձըմերան յայս ազգ հիւանդութեան մատնին յաւէտ այնոքիկ՝ որք արագ անցանեն 'ի ցրտոյ 'ի տօթ: Յամռան յաճախեն մաղձային տապցեալ ախտք, և ըստամոքսային տենդք, ևն. զորս մինչև ցայժմ տարապարտուց դասեցին 'ի կարգս ախտից կոչեցելոց Աթէնիքա. Այսպիսիկ և յայլ ևս այնչափ դժուարին է ծանօթութի Տիաթէզուոյն, մինչև երբեմն յուսակտուր լինել՝ ներհուն բժշկաց, և յայլ դիտողութիւնս ապաստանիլ. Իսկ յաշնան՝ Աթէնիքս են ախտքն սովորաբար, մանաւանդ 'ի մերում երկրիս:

'Ի հնագունից անտի ժամանակաց խիկ՝ պատկառելի ծերունին Հիպոկրատ գրեաց. եթէ հարկ է բժշկին քաջահըրմուտ լինել հիւանդութեանց յաճախ գրտելոց 'ի քաղաքին կամ 'ի տեղւոջ՝ յորում զառողջարարն արուեստ խորհի գործել:

Այս ուրեմն՝ ծանօթութի հիւանդութեանց՝ որ յաճախ գտանին յերկրի իմիք, օգուտ բազում ունի յայտնել զՏիաթէզին:

Ծանօթութիւն՝ որ յարկածից կամ ՚ի համընթաց նշանաց, չունի ապահովութիւն բաւական. զի որք ՚ի սթենիքա հիւանդութեան տեսանին, յոլովակի և ՚ի հակառակն նշմարին։ Բայց թէ՝ ոչ պարտն է՝ խնամով քննութիւն լիցի և բաղդատութիւն յերկաքանչիւր տիաթէզին. ոչ ՚ի սկզբան և եթ, այլ ընդ բոլոր ժամանակս հիւանդութեան՝ հնար է ՚ի նոցունց օգուտ քաղել։

Յորժամ զձևոց հիւանդութեանցն բանս առցուք, ցուցցուք և զայն՝ եթէ կարեն և սոքա ՚ի ծանօթութիւն սկզբանց ախտին լինել շահաւոր։ Արդ դատաւումն խնդրէ հանձար և խոհեմութիւն. զի դէպ լինի երբեմն՝ որ ոչ նախընթաց պատճառք և ոչ համընթաց արկածք տան ապահով նշանս և ցոյցս ՚ի յայտնել ըզ Տիաթէզին։

Յայսպիսիս եթէ բժիշկն ունի գործնական կրթութիւն՝ զորս բանիւ ուսուցանել յանհնարիցն է դատել, կարէ ՚ի տես աչաց իմանալ։ Յայս իսկ ասէ „ Թօմմազինի. ‖ հարկ է հաւանիլ՝ եթէ „ մինչև ցայժմ ոչ գոն սեպհական ար-

«« կամք՝ 'ի դատել և ապահովութե̃ ո-
«« րոշել զՏիաթեղին 'ի նախընթացից,
«« և որ ինչ ստուգագոյն թուիցի 'ի նմ̃ 'ի
«« կուտակուէ̃ նշանաց, երևի յաւէտ 'ի
«« փոքր աչաց՝ քան թէ յայտնի բանիւք:||

Մ.ԺԼ. որովհետև այս ձիրք բնութե̃ սակաւուց է շնորհեալ, փոքր փորձեսցէ յայնժամ բժիշկն զերեղոց, կշռակի դատել զհանգամանս ախտին յօգտակարաց կամ 'ի վնասակարաց:

Սիտենհամ երևելի բժիշկ անգղիացի՝ ըստ իւրումն իսկ խոստովանելոյ, յորժամ չկարէ՛ր իմանալ 'ի սկզբան անդ զհանգամանս ախտին, և զբնութի̃ նր̃. զպէս ոպէս բժշկական ոճոյ բուռն հարկանէր՝ գտանել զոր ինչ առաւել օգտաւէ՛տն է և շահաբեր:

Պանչէպքս վարքա 'ի ձեռն իւրում 'ի վր̃ օգտուե̃ց երակ հատանելոյ՝ ասէ. թէ յորժամ դարման տանէր տենդոտ հիւանդաց 'ի հիւանդանոցի բողա քաղաքին՝ օգուտ բազում ետես յայսմ գործողութէ̃ 'ի տենդոտս բազումս, նա և յետ յառաջադէմ լինելոյ հիւանդութե̃, յորժամ տկարուի բազում երևէր ստ

այս, և ոչ ինչ շահ գործեալ էին խաբանողքդ (ՎԷՇԷՏՕՆԸԷ)։

Ի ծաւալել հիւանդութեան՝ որ ախրեաց 'ի Ճէնօվա, յամին՝ 1799. Սաղօրի բժիշկն ոչ ինչ երկմտեաց դարման տանիլ հիւանդաց ակարացուցիչ դեղովք. Թէպէտ հանգամանք տագնապելոց քաղաքին կուրօրէն կարծիս տային, եթէ իբրօսդէնիքա կամ ծայրագոյն ասթէնիքա իցէ ծաւալական հիւանդութիւն։

Առ այս հարկեցաւ բժիշկն. տեսանել զանշահութիւն խթիչ դեղորէից՝ զորս ինքն 'ի սկզբան, և այլք ընդ ժամանակս ձիգս 'ի գործ ածին։

Ապա դատել զԴիաթէզին 'ի փորձառութեն դեղոց՝ օգուտ ոչ սակաւ. եթէ ձեռն ճարտար մատկլարեաց զայնոսիկ, և քաջ տեղեկ իցէ բնաւորութեն դարմանոցն։

Նախքան զաւարտումն կարևորագոյն ճառիս՝ յօգուտ համարիմք համբակաց՝ առ որս սիրելի է այս ազգ բանից, մերձ առնել. մի՛ փաղփաղակի թողուլ 'ի ձեռանէ զդեղն ակարացուցիչ կամ խըթիչ՝ եթէ օգուտ ինչ ոչ գործեաց, կամ յառաջնումն անդ գործածութեն վնասակար թուեցաւ։

Գործածութիւն ուսուցեալ է առ բը-
ժիշկս, զի կամ զդեղն փոխելով, (բայց
միշտ ընդ նոյնասեռ և համազօր դեղոյ.)
կամ աւելելով 'ի նմին գործածութեան՝ և ըղ
չափն միայն կրճատելով, ամ̃ անհանգըս-
տութ̃ք 'ի դերև ելանեն, և հիւանդն
գտանէ կատարած բարի։

Սովհեալ զայս առարկեն բժիշկք՝
որ ոչն կարծեն, եթէ տորան ործացու-
ցիչ (Թարթարօ էմէթիքօ) ներգործեսցէ,
ճնշելով զառաւելազանց ներգործութի
սրտի և զդիւրագրգռութի ներդիցն,
այլ միայն զօրիցէ առ ժայթքել. ուստի
թող զայն՝ զի ոչ մեծ ինչ է այս կարծիք
առ մեզ. մարթ է զայն ևս ասել, եթէ
հակառակ ինչ գործեաց՝ չափին է պատ-
ճառ այլազգ ներգործութեան, կամ թէ՝
ոչ այս՝ գտանէ եղանակ մատակարարութեան։

'Ի Աթէնիքա Տիմաթէզին սխալ գոր-
ծի և այլ ազգ, զի կարծեն ոմանք՝ եթէ
դիւրին ինչ իցէ յետ սակաւ ժամանա-
կի 'ի հակառակն փոխիլ։ Ըմպոլի բը-
«« ժիշկն ասաց. Ամ թուի ոչ սակաւ գոյ
«« 'ի վր̃ փոխակերպութե ախտից, և վրի-
«« պակք բազումք յորոշել զորպէսն և

«զե՛րբն և զընդե՞րն։ ‖ Այն այր հը-
«մուտ՝ յաւելու և զյաջորդադ. ‖ տե-
«սանել զօր ամ, զի երևոյթք նորոգ-
«ցուցեալք յախտս՝ որք տան կասկա-
«ծել, եթէ Տիաթէզին 'ի հակառակն
«փոխեալ իցէ, կամ հետևութիք են
«առաջնոյն, կամ ծնունդք տեղական
«խանգարման իրիք։ Ո՛չ այս եցոյց ինձ՝
«յորժամ հաստատուն կայցի յառաջին
«ոճ դարմանոյն անփոփոխ, և կալցի
«ելս յաջող։ Իսկ որք յախտէն մեռան՝
«յօշուածն անդամոց նց առ 'ի զննուլն,
«յայտնէ զանկարելի խանգարս գոր-
«ծարանացն։ ‖

'Ի սխալման ուրեմն են այն բժիշկք՝ որք կարծեն, թէ յետ միանգամ կամ երկիցս երակ հատանելոյ՝ վաղվաղակի Տիաթէզին յեղափոխեսցի, և որ Սթէնիքայն էր՝ Ասթէնիքայ եղիցի. յայս կարծիս բերեալ այսու միայն՝ զի զցարկ բազկին տեսանեն զիջել կմ ակարագոյն։

Որք մեծաց են և հրահանգիչ տեղեկութեց ցանկացին 'ի հմուտն երկուց Տիաթէզի որակութեց, և նշանաց որոշման նց. ընթերցցին զախտաբանական

հրահանգամն՝ զոր շարադրեալ է Գյանձա-կօ. յորս գտանեն զա̃մ՝ որ ինչ կարեւո-րագոյն ասացեալ է ՚ի վերայ նիւթոյս այսորիկ մինչեւ ցայսօր։

—

Յաղագս Ախտաբանական հանգամանաց։

(5) Յա̃մ իսկ հիւանդութիս՝ որք պատահածին յերկաքանչիւր Տիաթէզին. ՚ի Սթէնիքայն եւ յԱսթէնիքայն. գոյ ախտաւոր յառաջատուն ՚ի միում յըն-դերաց՝ կամ ՚ի կարգ ինչ մասանց մարդ-կային մարմնոյ, պատճառեալ յընտրա-կան համախլրութէ մասնակար կարողութեց, առ որս նորք անուն եդուն՝ ախտաբա-նական հանգամանս կոչել. որով ոչ կա-մին իմանալ զխանգարս գործարանացն ախտացելոց անդէն ՚ի սկզբան ախտին, այլ մանաւանդ զնոսա ինչ կամ զխան-գարումն իբրեւ դիւրաւ վերադառնալի յիւր առաջին ամբողջ վիճակ վաղ կամ անագան։

Յա̃մ բորբոքողական հիւանդութիս, որպ ՚ի Թոքաժէտութէ (περιπνευμονία), յընդերաժէտութէ (ἐντερῖτις), ՚ի

լերդախտուն (ἡπατῖτις), որոց ամ̃ցուն եդեալ են անուանք յախտաբանական հանգամանաց . բայց ՚ի յաւելեալ գոլոյ գրգռութե̃ն ընդհանրապէս՝ գոյ միւս ևս բորբոքիչ յառաջատուի̃ ՚ի Թոքսն, յընդերսն, ՚ի լեարդն, ևն̃ . որ կացուցանէ զհանգամանս նորա, և կարէ ապաքինիլ՝ եթէ ը̃ պատշաճի մատուցի դարմանն։

Ուլմ՛ որ կարծեաց, եթէ այս հանգամանք ՚ի բորբոքողական ախտս միայն գտանին։

Հասարակ են սոքա ամ̃ հիւանդութե̃ց, ժանտից և երկարատևից, ևս և ջղայնոց։

Անսան՝ զոր մ̃ասին այլ և այլ գործարանք կամ կարգք մասանց՝ յընդհանուր հիւանդութե̃ս, պատճառս ետուն նորոց ախտաբանից կարծել, եթէ մ̃ասնաւոր կարողութի̃ք այլ ազգ ներգործիցեն՝ յորժամ յառաջածեն զԴիաթէզն, զախտաբանական հանգամանս, և զձևս ախտից, տարբերս ՚ի միմեանց։

Եւ արդարև Թոյնն այն՝ որ պատճառէ զջրազարհուրն ասացեալ ախտ՝ (ὑδροφοβία), ներգործէ յորկորն և ՚ի կոկորդն . իսկ սատղկեանն ախտ (λυ-

վէնէռէ՛ա)՝ ՚ի կարգս աւիշկեանց։

Ամանք ՚ի տարափոխիկ ախտից յայտ-նին ՚ի վՐ կաշւոյ, դեղին տենդն ամե-րիկեան (Ֆէ՛վռէ ժօ՛նը)՝ ՚ի վերայ լերդային անօթոց. և Թմբրատենդն (Թի՛ֆօ)՝ ՚ի վերայ ջղաց. ևն։

Հուսկ ապա՝ անհերկելոյ երևի եթէ՝ ամ վնասակար կարողութիւք բաց յընդ-հանուր ներգործութէն, ունին միւս ևս՝ իւրաքանչիւրոյն առանձին, զոր կոչեն ընտրական համակրութի յայս ինչ կամ յայն ընդերս կամ ՚ի կարգս։ Եթէ ցայս վայր տարածէր նոյն ախտաբանութի՝ օգուտ ոչ սակաւ լինէր հիւանդաց։

Պօնափօլի բժիշկ երևելի յարդեացս, ՚ի ճառի խուռում տպեալ ՚ի պօլօնիա, ՚ի 1804, ՚ի վՐ փորձոյ՝ զոր արժան իցէ փորձել ՚ի կենդանեդեղագիտութե արուես-
„ տին, ասէ թէ. ‖ զնոյն իսկ յատկու-
„ թիւնն՝ զոր ունին վնասակարքն՝ ունին
„ և օգտակարքն համարեալք. զորս բը-
„ ժիշկք ՚ի գործ վարեն յապաքինումն
„ ախտից։ ‖

Բայց հարկ էր կրկնապատկել և յա-ճախել զդ խոռղութիւ. ոչ միայն ՚ի ցուցա-

նել, թէ ո՞րն 'ի դեղոց գրգռիչ իցէ, և ո՞րն նուաճող. այլ և զննել զմանաւոր համեմատութիւն նց ընդ այլ և այլ գործարանս կամ դիրս մասանց մարմնոյ։

Հին և նոր բժշկաց տուեալ է բազմաց 'ի դեղոց անուանս պէս պէս ըստ իւրաքանչիւրոցն ներգործութեան կոչել։ Զոմանս՝ գլխացաւ (κεφαλγία), որք ապաքինեն զցաւ գլխոյ։ Զայլսն արիւնաբերս (ἐγκανόνα), որք զկալուածդաշտանի կանանց լուծանեն։ Զկէսսն միզաբերս (φύσουρήτικα), որք մէզ յոլով տան արտաքս թորել. եւն։

Այլ տեսեալ ո՛չ հաստատուն զնոցայն օգտակարութիւն հաւանեցան յաւելուլ 'ի դասակարգ դեղոցն այլս ևս հետ զհետէ, և հուսկ ապա՝ հասին 'ի բաղադրութիւն անտեղի և ծաղրական նուախայից (ρέχερβα), որք մի՛շտ եղեն յայտն կատակմանց ուամկին, և մանաւանդ իմաստասիրաց։

Մի 'ի սոցանէ և յառաւել հռչակելեացն յիմաստասիրութեան՝ Մօնթէսքիէօ անուն. ձայն արձակէ քամահահհ բար։ ‖ Մտածեանք բժշկաց արձանա

«« գիրք տկարութ՟ բնութե՟ս՝ և անզօրութ՟
«« արուեստին ・ 'ի խօսիլն զախտից ևս
«« և զթեթևագունից՝ մօտ առ դուրս
«« ցուցեալ զմահ՝ զարհուրեցուցանէն
«« զախտակիրն ・ իսկ այն ինչ զզօրութ՟
«« դեղոցն ճառէն՝ յանդուգն առնեն
«« զընթերցօղն , իբր 'ի ձեռն զօրութ՟
«« սոցա յանմահութի՟ ճակատագրեալ
«« ցուցանելով զազգ մարդկան ։||

Այս բանք նրբին դատողութե՟ իմն թուին ընդհանուր քան զպատշաճն ・ բայց քաջ ցուցանեն թէ՝ նա և առ այնու ժամանակօք՝ յորս գրեր դաղղիացի իմաստասէրս ・ սակաւ էր՝ որ 'ի դեղսն անդ վստահութիւն , և կեղակարծ և անհաստատ՝ եղանակ ազդեցութ՟ ն՟ց։

(6) Այլ մեք 'ի մեր նպատակ դարձ արարեալ՝ համարձակիմք պայման ինչ և սահման նշանակել յսկզբանն՝ զոր 'ի վեր անդր եդաք։

Պէտ լինի երբեմն՝ զի Աբիօնն (օբ-բիօն) փոխան օգտին իւրում՝ որում անձկամք , յառաջ ածէ ժայթքումն , քնափութի՟ , արգելս միզի , անհանգստու-

թիւն, նուաղումն անպատմելի, պտոյտ գլխոյ: Եւ յուսամք օգտել դեղոյս՝ յորժամ Ըսթենիքա լիցի Տիաթեզին:

Յայսպիսում առթի հարկ է խառնել ընդ նմա դեղ ինչ տկարացուցիչ՝ զի չափաւորեսցէ զներգործութիւնն:

Պուրէնաթէլլի յիւրում ընդհա-
« նուր դեղաբանութեան գրէ. ‖ Յոլով
« անգամ հարկ լինի բժշկին չափաւո-
« րել զզօրացուցիչ կամ զտկարացուցիչ
« դեղսն կամ զլուծողսն կամ զձձեհա-
« լածսն, խառնելով ընդ նս համեմունս
« ինչ. ոչ միայն 'ի ծածկել զգարշ հոտ
« նց և զհամն բարկ և դառն, այլ և 'ի
« մեղմել զներգործութին նց՝ յորժամ
« կարի զօրութբն վնաս սաստնայ. Եշ:

Աւլ մեղ այժմ յաւէտ կարևոր է տեսանել. իցէն արդեօք դեղք՝ որ բաց յընդհանուր նուաճող կամ գրգռիչ զօրութէն՝ ունիցին և ոյժ մասնաւոր. և ո՞ր ասեն՝ ընտրական. ներգործել յաւէտ 'ի վր այսմ կամ միւսոյ յընդերաց կամ գործարանաց, որ համարեցան և հաստատեցին Պօնտիօլի և Տալլատեչիմա:

"Նախ" ի քննին առցուք 'ի տկարացուց-

չացն զայնոսիկ՝ որոց մասնաւոր և ընտրա
կան ներգործութիւն յայտնագոյն երևի։

(7) Թունաւոր խոտն անուանեալ Ադռօբա Պէլլատօննա, ուղղէ զներ-գործութի իւր առաւել 'ի յուղեղն և յաչսն։ Երկու կամ երեք ցորենաչափք 'ի թունաւոր խոտոյս մատակարարեալք առ անսովոր ոք, պատճառեն պտոյտ գլխոյ և ցնորս, և բիբ աչաց նր տարա-պայման լայնի։

Յօրագրութե բառամայի, յամին՝ 1815 · ընթեռնումք զպատմութի 150 անձանց թունաւորելոց 'ի հատապտղոց Պէլլատօննայի, զոր պատմէ Կանթիէ։

Եւ ահա արկածք թունաւորելոցն՝ ա՛ զննութե վերոգրեալ բժշկին․ լայնումն և անշարժութի 'ի բիբ աչացն, գոգցես կատարեալ անզգայութի աչաց առ գոյու-թիս արտաքինս․ կամ գոնէ՝ տեսութի մը-թագնեալ, շաղկապիչ թաղանթ աչացն լցեալ խաւարատեսիլ արեամբ․ արտաքս ցցումն աչացն, որ յոմանս տեսանի թըմ-բեալ, և յայլս աշխոյժ, և գրեթէ մը-ըգնեալ․ ցամաքութի 'ի շրթունս, 'ի

լեզուին , 'ի քիմս , և 'ի կոկորդն՝ կըլլանել դժուարին . երբեմն և արգիլեալ։

Ընախտութի (Վէրթիգօ) , Թօշնութի (Ամնէզիէ) , դժուարութի և անհնարութի 'ի կալ ուղիղ , Թեքիլ մարմնոյն միշտ յառաջկոյս , շփոթ շարժումն ձեռաց և մատանց . ցնորք զուարձ , և ծիծաղեցուցիչք . ժպտումն ընդ նմանութե կապկաց . անձայնութի , կամ խառնակ և վատակարեկ ձայնարձակութի , եւ։

Ի ճիշտ նկարագրութե արկածիցդ՝ զորս պատմէ Կլանթիւ , դիւրաւ յայտնի լինի մեզ , թէ Պելլատօննայն բաց 'ի լինելոյն ճնշող և տկարացուցիչ , ունի և մասնաւոր ներգործութի 'ի վերայ ուղղոյն , և առաւել ևս 'ի մէջ աչացն։

Վէճք մեծամեծք յարուցեալք են 'ի մէջ զօրութե միւս ևս Թունաւոր խոտոյ՝ որ Թարգմանեալ կոչի 'ի մեզ մատնախոտ ծիրանագոյն (Դիճիթալիս բուրբուրէա)։ Այլ Թուի Թէ՝ ցայժմ չէ՛ է վճիտ յանդ հասեալ։ Բայց այսօր բազմաց 'ի բժշկաց հաւանեալ է՝ եթէ բաց 'ի նուաճող և 'ի տկարացուցիչ զօրութեն ներգործէ յատկա 'ի մէջ սրտի և 'ի մէջ

անօթոց կամ ընդունարանաց հեղանիւթոցն , ընկճելով զկաւելեալ ներգործութիւն սրտին և զդիւրագրգռութիւն ներդիցն , յաճախագոյն և զմեծն ևս յաւելու · բայց պատճառ այսր երևութի է ընդհանուր ներգործութիւն նորա , քանզի նուաղեցուցեալ զարարս աւիշխեան անօթոցն՝ տեղի տայ ընկլուզման խոտորեալ ջրոյն կամ 'ի մաշկն խորշաւոր , կամ 'ի պէս պէս փորըքս մարմնոյ :

Առաւէլ զօրաւոր է տարտն ործացուցիչ , (Tartaro emetico) , քան զմատնախոտդ ասացեալ , յաղագս ընտրական կարողութեան իւրոյ 'ի վերայ արկանակալ անօթոցն : Առն պարարտի և առողջ անձին ընդ ժամս 24՝ մարթ է տալ ցորեանս 'ի միոյ մինչև ց4 կամ ց8՝ հալեալ 'ի մի կամ յերկու լիպրս ջուր եփածոյ գարւոյ՝ առանց գրգռելոյ 'ի ժայթքումն , և ոչ իսկ ժխորէ զստամոքսն :

Ա.ժլ պիտի առ այս խոհեմութիւն և զգուշութիւն մեծ , և ոչ յայսմ միայն , այլ յայլս 'ի դեղորէից , որք կարի ուժեղք են և թունաւորք · զի մի՛ անուանարկ զբժշկական կրթութիւն առնիցեն՝ որ

այժմ բազում ունի բամբասողս, և զի՛ մի՛ 'ի վտանգ արկցեն զկեանս հիւանդին և զիւրեանց համբաւն։

Արմատն որձացուցիչ՝ իպէքաքուանա ասացեալ՝ ունի մասնաւոր ներգործութի̃ 'ի փորոտիս ստորին որովայնին։ Այս արմատ միշտ օգտակար գտաւ 'ի բորբոքման որովայնամաշկի (ՊԷՐԻՏՕՆԻԹ), և 'ի տենդ ծննդականաց (ՖԷՎՐ ՊՈՒԷՐՊԷՐԱԼ), 'ի չափ դուզնաքեայ մատակարարեալ մի կամ երկու ցորենաչափ, այլ՝ տուեալ յաւուրս բազում. բայց 'ի ըսկըզբան ախտին պա՛րտ է տալ և ոչ յետ յառաջադիմութ̃։ Բազմօգուտ է նաև յայլ ախտս, որպ̃ յարիւնահոսութ̃ս, 'ի աղընդերուն̃. յերկարատև որովայնալուծութ̃, ևլն̃. բայց եթէ Տիաթէզի այս հիւանդութ̃ց իցէ՛ Աթէնիքա։

Գովեցաւ և դեղն անուանեալ ռուս ռատիքանթէ՝ 'ի միակողմանի անդամալուծութ̃ (ԷՄԻՊԼԷԺԻ). յանդամադօսութ̃ (ՊԱՐԱՊԼԷԺԻ). որոց Տիաթէզի նոյնպս Աթէնիքա́ իցէ. ուստի երևի, թէ գոյ և սորա մասնաւոր ներգործութ̃ 'ի ջիղսն՝ որք ծառայեն 'ի շարժումն մարմնոյ։

Մայրենի կատուախոտն ( Վալէրիա-նա օֆֆիչինալիս ) · ՚ի գործ ածի ՚ի ըմպե-լիքս վերնոտուէ, եթէ չիցէ՛ ՚ի միասուէ գործարանացն · և համարի ունել զօրու-թիւն ընտրական ՚ի վերայ ուղեղոյն:

Ընկոյզն ործացուցիչ՝ և դառն բակ-լայն, երկոքին պտուղք թունաւորք՝ լաւ ճնշողք են և տկարացուցիչք, ՚ի վ՟ր մկանանցն ներգործելով: Դեղքս կոչին ըստ իտալացւոց նօչէ վօմիքա, և ֆավա տի սանթ իկնացիօ:

Խոտն անուանեալ Արնիքա կամ ըստ անուանն թարգմանութ՟ե դառնաբոյս՝ ըստ զննութ՟ե Հիլտէպրանտա, ունի մասնաւոր զօրութ՟ի ներգործել յուղեղն և ՚ի մեղմել զանշնութ՟ի, զպտոյտ գլխոյ և զցնորս, ևլն:

---

Գրգռիչ ( Էչչիթանթէ ) դեղք:

(8) Ոլինչ և ասիցեն ոմանք ՚ի բժ-շկաց · մի ՚ի զօրաւոր խթիչ դեղոց է արդարև Աֆիօնն, ընդ որս պարծի բժ-շկական արուեստ: Փորձն զորս փոր-ձեցին Մուալէս և Հալլէր, ցուցանեն

թէ՝ գործածութիւն զօրաւոր դեղոյս ըզ-շրջան արեանն յաւելու , յաճախէ ըզ-ջերմութիւն և զանջատմունս աւելորդաց · զատուցանէ և զմաղձ՝ ըստ փորձառութեանց Գիօթուննիօ բժշկին : Օգուտ է նաև յարտաշնչութ : Նազմաշահ է յայն ժամ Կաթէնիքս տենդս · ընդ որս տեսանին ցնորք , պակասութ քնոյ , ցաւ գլխոյ , ջղացնցութք , և դողդոջ ձգանաց ( սու-սուլթիւ թէն թէնտինի ) :

Նաև երեւի թէ՝ բաց յիւրմէ ընդհանուր զօրութենէ , ունի և յատկութ կազդուրելոյ զկթուցեալ ոյժ ջղաց , և մեղմելոյ զայն ժամ երևոյթս՝ որ միանգամ պատճառեալքն իցեն ’ի մեասուէ տկարացուցիչ դեղոյ , որոց ներգործութի դարձեալ ’ի նոյն խակ ’ի ջիղսն է :

Օգտաւէտութ իւր ’ի յաւթէնիքս թմբրատենդն ( Լէթարգօ ) , և յայլ ժամ ախտս տկարութե կարի քաջայայտ ցուցանեն զխթիչ և զընտրական ներգործութիւն սորա :

Նայն երբեմն բժիշկք ոմանք , և գուցէ այժմ ես գտանիցին · որք ընծայեն տեխօնի՝ զօրութ մեղմիչ և ամոքիչ :

Սմանք ևս այսմ զօրութ̃ լծորդեցին և զգրգռիչն լինել։ Իսկ մեզ անիմանալի թուի, թէ՝ զիա՞րդ 'ի մի դեղ երկպատիկ գտցի զօրութի̃՝ հակառակ միմեանց։

Ու առ որս՝ որք պարզապէս մեղմիչ ասեն, ասեմ թէ՝ հարկ է նմա այնպէս լինել՝ մինչդեռ ախտն է Ասթէնիքա. և ոչ զօրաւոր ինչ է առարկու̃թին առ մեզ՝ եթէ մեծանուն կրթականք վիրաբուժութ̃ արուեստին տան զսա նախ, և յետ.քան զգործողութի̃՝ ամոքելոյ ապագաւ զվրդովմունս և զցաւ. զի կամ կիրք ակարացուցիչ.ք նախ.քան զգործադրութի̃ս գործեաց վիրաբուժին. կամ հոսումն արեան 'ի ժամու գործոյն. և յետ այնորիկ յայտնի բաւական նշանք են ախտանութ̃ դեղոյս. բայց յորժամ տացի և 'ի տենդս՝ որք 'ի վր̃ հասանեն յոլովակի յետ մեծի հատման խղխայթի իրիք. երևեցուցանէ յայնժամ զգրգռիչ զօրութի̃ իւր։

Ու զի այս Չինաթէզի 'Նոր է՝ և արուեստն ապաքինութ̃ չունի բաւական ծանօթութիս առ այս. չեմք ձեռնհաս առնել ճիշտ խուզարկութիս. բայց հնա-

բաւոր եւս է տալ , եթէ խառովեալ և ամբոխեալ վիճակ մանրաթելիցն կարիցէ թերևս արգելուլ զկայանի ներգործութ̃ե աբխօնին 'ի գրգռել . որ̃ ներգործէ 'ի Սթէնիքա և յԱսթէնիքա հիւանդութ̃ս ։

Սեղեան Ամերիկեան ( [illegible] ) ասացեալ , դասի 'ի կարգ մնայուն գրգռողաց ։ Այս դեղ օգտակա՛ր է յո̃մ ախտս ակարութե̃ . բայց մանաւանդ յայն միջահատակին տենդս՝ որոց Ասթէնիքա՛ է բնութ̃ի ։ Եթէ յայս տենդս 'ի ջի՛ղն են ախտաբանական հանգամանքն՝ որ̃ ցուցանէ ձև հիւանդութե̃ն , մա՛րթ է հետևեցուցանել՝ եթէ իբրև մասնաւոր գրգռիչ ունի զներգործութի̃ իւր 'ի ջիղսն ։

Այսմ կարծեաց ո՛չ նուազ հաստատութի̃ է նա՛և այն՝ զի այս դեղ օգտէ յո̃մ Ասթէնիքա հիւանդութ̃ս՝ ընդ որս գոյ ջղացնցութ̃ի ։ Պիւանդ ասէ . եթէ որ ինչ 'ի մարդուսն ամբոխէ զգիրս ջղացն , կարէ՛ լինել պատճառ վերադարձի հիւանդութե̃ նր̃ , եթէ յառաջնմէ ունէր տենդ ընդհատ ։

Քափուր , և մուշկ . երկոքին ևս

դրդուիչ դեղորայք են · Երկու մեծա-
համբաւ ախտաբուժքն Թեփխասօթ և Պը-
ուանդ զննեցին , զի 'ի Ջղաւենդան յայ-
նոսին` յորս տեսանի զարկ բազկին մանր
և տկար , և թոյլ · մարթի տալ քափուր
յերրորդ մասանէ դրամոյ մինչև ցկէս դրամ։

Իսկ զմուշկն` յորժամ կծկէլ է զարկն
և կարծրիկ և անկանոն , 'ի քառասուն
և ութերորդ մասանէ ունկւոյ մինչև ցը
քսաներորդ չորրորդ մասն · այս` 'ի տասն
ցորենաչափէ մինչև ցքսան։

Նզն տասցեալ ոշակոն , ( [illegible] ) · յորժամ դողդոջուն է զարկն
և անհաւասար , և ընդհատ · բայց թոյլ
և կակուղ։ 'Ի զննուէ երկուց բժշկացդ-
անուանելոց` խրատացի թուի հետևեցու-
ցանել · եթէ այս դեղք ընտրական զօրու-
թ՞ի ունին 'ի վ՞ր արինընթաց անօթոյն։

Նյն և այլ բժշկական դեղք , որպէս
որդն խարանադեղոյ ( [illegible] ) ·
մկնօխ ( [illegible] ) · սնդիկ ( [illegible] ) ·
ևն · որոց անմիջական ընտանութի՛ է ընդ-
այլ և այլ մասունս մարմնոյ։

Բայց այս համառօտ բանք կարեն
ըղձակաթս առնել զուսանողս արուես-

տիս՝ պէս պէս փորձովք և դիտողութեամբք յայտնել զընտրական զօրութիւն դեղոցն իւրաքանչիւր · բայց արդ զի և նոցայն զննութիւն մի՛ ՚ի շահօգտութեան վրիպեսցի , հարկ է նշանակել միշտ և խնամով զամ պարագայս հիւանդութեանցն · և մի՛ բաղմատեսակ դեղս տալ · զի յայնժամ անմարթ լինի գուշակել , եթէ որ ՚ի դեղոցն յայս ինչ ազգ դարմանոյ գտաւ զօրաւոր ։

—

Ձեւք հիւանդութեանց ։

(9) Ձեւս առեն հիւանդութեանց նոր ախտաբանք զայն ժամ՝ որ առաջին լինի բժշկին յայց ելանելն առ իւր հիւանդս , և յուշադրութիւն պատրաստէ զնա ։

Բաղադրութիւն և միասնութիւն և շեղջակոյտ արկածից՝ որ ընդ բուն ընդ հիւանդութեան զուգընթացք գտանին · սոքա են օգտեն ՚ի ճանօթութիւն ձևոցն ։ Բայց զսոսա քննելի է ոչ ՚ի սկզբան և եթ հիւանդութեան՝ այլ ընդ բոլոր ընթացսն , թէ առողջութեամբ փախման ունիցի հիւանդութիւնն , և թէ մահուամբ ։

Հանգամանք՝ զորս կարգաւան բը-
ժիշկք նշանակեցին առ մէն մի հիւան-
դութիւն, հարևանցիկք են, անօգուտ 'ի
գործածութեան հանել 'ի նոյնէ հետևութիւն:

Նոքա համառօտիւ և եթ ստորագրեն
զայսոսիկ, յորժամ բաժանեն զհիւան-
դութիւն 'ի դասս, 'ի կարգս, 'ի սեռս, և
'ի տեսակս. և առ իւրաքանչիւր 'ի սոցա-
նէ անկատար ծանօթութիւն և եթ յաւե-
լուն, որք ոչ բազմօք ինչ լինին ձեռն-
տու 'ի բացատրութիւն ձևոց ախտից:

Են և բժիշկք, որոց գերքան զչափն
սիրահարեալք առ 'ի վերոյ նշանակեալ
Դիաթեզի անուանեալ վարդապետութիւն՝
համարին, թէ սորա միայն ծանօթութիւն
շատ իցէ առ ապաքինումն ախտից:

Բայց մեք համարիմք ցուցանել, եթէ
ուսումն արկածից օգուտ մեծ գործէ
'ի ճանաչել և զԴիաթեզըն, և զախտաբա-
նական հանգամանսն, յորժամ չիցէ
կարելի ճանաչել զայդոսիկ ըստ եղանա-
կաց դատմանն՝ 'ի վեր անդր առաջարկելոց:

Մեր անդրէն իսկ ասացեալ է, եթէ
Ճնատակար որակք կրկնացեղ դեղոցն յա-
ւելեալ կամ պակասեցուցանել զգրգռութիւն՝

պատճառէն զԴիաթեզին Սթենիքա կմ Ասթենիքա։ Այն մասնաւոր կարողութք՝ ըստ որում ասէր Պօնտիօլի, ունին ընտրական զօրութիւն ՚ի վր մասանց ինչ մարմնոյ, ոչ զոմանց ՚ի ծանուցելոյն ցուցաւ։

Ուրեմն Դիաթեզին և հանգամանք ախտաբանական՝ զարկածն գուշակեն, և արկածքն հիմունք են ձևոց հիւանդութեանց։

Լիցի քեզ օրինակ· ՚ի Թոքաժետումն (ՓԷՐԻՓՆԷՕ-ՄՕՆԻԱ)· որ ընդհանուր հիւանդութի իմն է, ունելով Սթենիքա Դիաթեզի· մասնաւոր կարողութիւնքն բայց ՚ի հասարակ ներգործութենն՝ ունի միւս ևս մասնաւոր յառաջածիչ բորբոքման ՚ի թոքսն անդ։

Ուրեմն ախտաբանական հանգամանացն գոյ յոյժ լինել ՚ի դժուարութե անտի տուր և տալի շնչոյն· ՚ի հազալոյն, ՚ի թքանելոյն, և ՚ի ցաւոյն՝ որ ունի մերթ զմի և մերթ զմիւս կողմն լանջացն· և հոյլք արկածից միանգամայն՝ բաղկացուցանեն զձևն թոքաժետումն։ Նոյն է ասել և զուղղագարուն (ՓԼԷԿՄՕՆԷ)· զկերպախտութե (ԷՐԻՍԻՓԷԼԷ), ևն.

Արդեամբ որպէս կանխեալ ասացեալ է մեր, ուսումն և կրթութի̃ ախտաւոր երեւութից՝ կարեւորագոյն է առ ՚ի ծանօթութի̃ ախտից. և դժուարին լինէր բժշկին իմանալ զյատկութի̃ և զբնութի̃ իւրաքանչիւր ախտից՝ եթէ ՚ի Տիաթեզին միայն ուշադիր լինէր. բայց և հանգամանք և ձևք ախտից զանանէ կախեալ կան։

Պատմութիւնք հիւանդութեց՝ զորս արձանագրեաց մեզ Հիպոկրատ. ճշդնկարք են արկածից՝ որք անանջատ գըտանին ընդ իւրաքանչիւրս ախտից ՚ի սկզբնէ մինչև ցաւարտ։

Յետ բազմախնամ և նրբաքննին մատենագրիս՝ տ̃մ բժիշկք սմա հետևեցան, և յաջողեաց նց. յորս երևելի է ՚ի մէջ այժմու բժշկաց՝ Սյուանգ, որ խնամով մեծաւ ճարտար նշանագրէ զա̃մ ախտաւոր երևոյթս՝ որք ընդ հիւանդութիւն գտանին. ա̃յ ըն ՚ի սորա գրուածոցն հնարաւոր գոլ մեզ ճանաչել և զձևսն։

Բայց ինչ ճառէ զօրինաւոր պարբերական տենդից՝ պատմէ զա̃մ արկածս պարզից, զորս կոչէ Ջղային. և արդիւք

կոչեն Պաթենիքս, զբոլորոգողականացն՝ զոր Աթենիքս անուանեն, և զաստամբ-սայնոցն՝ որ կոչեն (Խուաէբուբէվա), այն է՝ գրգռականն: Ի ջղաաենդս դնէ առաջի աչաց համբակաց զպէս պէս տեսակս նր. զխուրափոփոխն (վէրաբէչէ). զապուշն (ոբուբէտա), զդանդաղն (չէն-բա), և զառ 'ի տարափոխումն պատճառեալն տենդ. և նշանագրեալ առ խուրաքանչիւրովքն զընդհանուր և զմասնաւոր նշանսն և զայլ ևս ծանօթութիւն՝ որ միանգամ ձեռնհասք լիցեն լինել գործակից 'ի տալ ճանաչել զհիմն նց. յայտնի և պայծառ ցուցանէ զբաժանումն նց յերիս տեսակս, որք են Պաթենիքս, Աթենիքս, և Խուսիթաթիվա. և թէ խտիրն՝ որ ընդ մէջ ընդհատ և շարունակ տենդից, հիմնեալ է միայն 'ի սաստիկ կամ 'ի տկար ներգործութի կարողութեցն մտաակարաց, որ միշտ համեմատութի ունի ընդ էական խտիրն՝ առ 'ի մէնջ 'ի վեր անդր նշանակեալ:

Յորոց ցայս վայր տացաք 'ի յայտնել զՏիաթէզին՝ և զախտաբանական հանգամանսն և զձևս հիւանդութեց.

կարեմք յայտնել, եթէ այս երրեակ ըն-կերընտատրերք՝ որք զհիւանդութիւն բաղկացուցանեն, անձուկ կապով միացեալք են ընդ միմեանս, մինչև յընդհանուր հիւանդութիւն անհնար է զերիս զայսոսիկ զատանել 'ի միմեանց:

Յանհնարին երևի 'ի հաստատել՝ եթէ ախտաբանական ինչ պայման և ձև հիւանդութեան կարասցէ ընդ երկաքանչիւր ինկ Տիաթեզին ծորդիլ. և արդարև եթէ զննեսցուք զպայմանն՝ որք տեսանին 'ի թոքախտէ (φθίσις-πνευμόνων), 'ի փողացաւուէ (ἀγχόνη), 'ի պխտակն ([illegible]); 'ի ծիրանադոյն խաղաւարտից տենդն ([illegible]). և 'ի հարսանիթն ([illegible]). որ չարանշանք իցեն (ἐξανθήματα). դիւրաւ իմասցուք զտարբերութիւն ընդ սոսա, և ընդ այնոսիկ՝ որ իբերրաթէնիքամ են:

'Ի փողացաւութեան յայնմիկ՝ որ չարանշան կոչի սովորաբար, չիք տեսանել ոչ այտուցս 'ի կոկորդին, ոչ ցաւ և ոչ կարմրութի, այլ 'ի Աթենեքայն տեսանի. այլ զգացումն ինչ տագնապիչ. և թէպէտ մնանք՝ որք 'ի մուտս որկորցն, թօնսիլլէ

ասացեալք, այանուն խուն ինչ, բայց 'ի մի՛ նշ երեւին արածք ապխտակք պտղա-րանձկք՝ լցեալք շարաւանման հիւթովք:

Պօւսիէօի եւ Պիւանդ ցուցանեն զտարբերութիւն՝ որ 'ի մէջ Սթենիքա եւ Ասթենիքա ախտակին:

Զնոյն մարթ է տեսնել ճշդիւ եւ ըղձեւոյն. զի եւ սոցա սկիզբն եւ արմատ Տիաթեզին է, եւ պայմանքն. եւ թէ նա զացանէ ունի զկախումն՝ ունի հարկաւ յինքեան եւ զախտ կնքոյն՝ զոր սկզբունք իւր դրոշմեցին 'ի նմին: Իսկ թէ երբեք յետ որոյ Տիաթեզին դադարեալ իցէ՝ մնացէ ձեւն. հաւանիլ կայ մեզ յայնժամ, եթէ ընդհանուր հիւանդութիւն այն փոխեալ՝ լեալ է տեղական. եւ յիշել եւս՝ եթէ մեր 'ի խնդիր լեալ է յառաջագոյն ցուցանել, եթէ ձեւն հայի յաւէտ 'ի պայմանս՝ քան 'ի Տիաթեզին:

Եթէ ձեւք հիւանդութեանց են արկածիցն հաւաքմունք, եւ եթէ սոցա սկիզբն է Տիաթեզին, իրաւացի է կարծել թէ՝ յորժամ փոխի Տիաթեզին՝ հարկաւ փոխի եւ ձեւն:

Բժիշկք տեսին եւ արդ եւս տեսանեն

հիւանդութիւն՝ որք ՚ի սկզբան անդ երևին Աթենիկըս, և յետ բազում կամ սակաւ ժամանակի զհակառակ կերպարանս առնուն։

Արդ՝ հարցանեմք, մնացեա՞լ իցեն յայն հիւանդութիւն ձևքն անփոփոխ։

Իսկ յեղումն կամ փոխակերպութիւն պայմանացն այնչափ յայտնի է, զի բժիշկք անդէն ընդ երևիլ արկածից ինչ՝ խրազէկ լինին, եթէ փոխեալ է պայմանն։

Ոչ ապաքէն ձևքն են՝ որք ճանաչել տան մեզ զպէս պէս դիմափոխութիւն բորբոքողական ախտից։

Ապա յորժամ դժուարին լիցի մեզ ճանաչել որոշակի զՏիաթեզի և զպայմանս հիւանդութեանց, կարեմք ՚ի ձևսն ապաստան լինիլ, զի միացեալ գոլով սոցա՝ և ընդ երկու առաջինսն կապեալ՝ կարեն լինիլ փորձք յորոշումն անծանօթիցն։

Այսպէս ուսուցանէ և բժշկապետն
« Թոմմազինի, յասելն. || Պէտք են հա-
« մաձայնիլ՝ եթէ կարեմք առնուլ օգ-
« տակար ցոյցս ՚ի զննութէ նշանացն և
« արկածիցն, և ՚ի բաղդատելոյ զսոսա
« ընդ նախընթաց պատճառացն և ընդ
« առաջին վտանգի հիւանդին, առ ՚ի

« յաջողել մեզ 'ի դժուարին ձեռնարկ
« ճանուցելոյ զՏիաթեզին ||: Նոյն յետոյ
« ասէ · ||օրինակ իմն , մարթ է զարկն
« բազկին և յԱսթենիքս հիւանդութիւն
« լինիլ ճօճացօղ , և հարկանել յաճախ ·
« որպէս և յիբերսթենիքայն նշմարի :
« Բայց յերկրորդում յաճախումն ոչ
« լինի այնչափ բազմաթիւ 'ի հաւասար
« միջոց վայրկենի՝ որպէս յառաջնումն :
« Նոյն ոչ յառաջինն գոյ հաստատութիւն
« ձգտումն և հաւասարութիւն բաղխմանցն
« և զօրութեան յայլ և այլ ժամանակս , և
« յայլ և այլ մասունս մարմնոյ՝ որպէս 'ի
« յետինսն նշմարի ||: Նոյն յետ այլոց
« ևս բանից յաւելու: ||Յերկաքան-
« չիւր Տիաթեզին մարթ է հիւանդաց
« ունիլ միօրինակ ջերմութիւն սաստիկ ·
« այլ յԱսթենիքայն թէպէտ և այրե-
« ցօղ իցէ տաքութիւն՝ որպէս յառաջնումն
« անդ 'ի Ասթենիքս Տիաթեզին , ոչ ինչ
« յաւելուած տեսանի կարմրութեան , ոչ
« ունի հաստատութիւն , և ոչ զայրիչ և
« զխաղաղիչ ջերմութիւնն հասուցանէ
« մինչև ցընդերսն , և ոչ հաւասար ծա-
« ւալեալ է յամենայն անդամսն՝ որպէս 'ի

«« Սթենիքա հիւանդութիւնսն տեսա-
«« նեմք . ԼԸ ։ ||

Աստի թէպէտ և նմանութի ինչ գուցէ առ երևոյթս, 'ի ձիրդ զննուէ արկածիցն՝ որ զուգընթացք գտանին ընդ իբէրսթենիքա կամ՝ իբօսթենիքա հիւանդութիս, կարեմք ճշդիւ գիտել զՏիաթեզին։

Ծանօթութիք՝ զորս տուաք 'ի վերայ Տիաթեզւոյն, ախտաբանական հան-գամանաց, և ձևոց հիւանդութեց, և կապիցն՝ որովք լծորդին սոքա ընդ մի-մեանս, ոչ են կարի ճշդրիտք, մինչև յինքեանս առարկանել զհաւանութի բժշկաց . զդոյն և մեք կամակար խոս-տովանիմք։

Բայց բացատրեցաք զայսոսիկ առ 'ի պէտս նոր ուսանողաց բժշկական ար-ուեստիս, զի զհետ լիցին քննել զՏիա-թեզին . և հաւանեալ եմք, եթէ յա-ղագս դիւրին և հեշտ գոլոյ կանոնացս՝ տուեալ դիւրին եղիցի ծանօթութին և զուարձալի։ Նաև առ լեզուագէտ հե-տամուտս բժշկուէ յանձն առնեմք ըն-թեռնուլ՝ զոր ինչ ընդարձակագոյնս

գրեցին զիրացս. Գանձակօ ՚ի հրահանգ-
ոցն ՚ի վր ախտաբանութե՛ն, Թօմմազինի
՚ի ճառն ՚ի վր դեղին տենդի (Ֆէ՛պպրէ
ճիա՛լլայէ), Պրերա յօրագրութեն լու-
րում, բժշկական օրագրութե՛ն ճեմարա-
նացն Լուսայի, և Պօնտիօլի ՚ի պէս պէս
յիշատակարանս իւր, և այլ ևս իտալա-
ցիք. զի բժիշկք այսր ազգի առաւել
քան զայլոց ազգացն ծաղկեցուցին զար-
ուեստ բժշկութեն։

(10) Թէպէտ Գուանդ ցուցանէ
զինքն հաւանեալ ՚ի ճանաչել պատճառս
բազում հիւանդութե՛ց զհաստատուն մա-
սունս մարդկայինս մարմնոյ. բայց ցու-
ցանէ բժշկաց հայիլ և ՚ի հեղուկ հիւթ-
ոցն. և արդ՛րև յաճախ յիշատակէ նա
՚ի մատենի իւրում զնիւթ յօդատութե՛
(արթրիթիտէ), յօդացաւութե՛, հարբըղ-
նի, ևն. և այն ինչ խօսի զկատարածէ
հիւանդութե՛ց՝ ասէ երբեմն, եթէ փոխ-
ճան առնուն սոքա արտաքս թափելով
զնիւթ ախտին։

Մօպաքէն ՚ի ժամանակի անդ՝ յորում
մատենագրէր մեծանուն բժիշկդ զճառ

է

իւր 'ի վ̄ր տենդից, հիւթականն անուա-նեալ ախտաբանութ̄ի․ կայր ըկուրայն հետեւողս բազումս ունէր 'ի դպրոցս․ Թէպէտ և Պակլիվի իտալացի, Սիլլիս անգղիացի, և Կօպիօ գաղղիացի՝ գո՛ւն գործէին ցուցանել, եթէ հա՛րկ էր հաս-տատուն մասանց մարմնոյ նախ վարակիլ ախտիւք։

Ապա ոչ ինչ են զարմանք, եթէ Պեր-ուանգ կամեցեալ իցէ միաբանել ընդ միմեանս զերկուս հակառակ կարծիսդ․ բայց հաւանեալ եմք, եթէ 'ի դաս ասել աշակերտաց իւրոց՝ ծանուցեալ ևս իցէ նմ̄, եթէ այս անծանօթ սկիզբն՝ զորմէ բազմիցս խօսի, և ընծայէ նմա իրաւամբք գործս մեծամեծս․ իցէ մասն այն մարմ-նոյ՝ որ յաւէտ քան զայլսն մնասեալ և տագնապեալ է 'ի մնասակար կարօղութե̄նց։

Սահմանն՝ որով սահմանէ զտենդն, թէպէտ ոչ պարունակէ ընդ իւրև զա̄մ արտաքին տեսակս նր̄․ ծանուցանէ մեզ թէ՝ որչափ ինչ զօրութ̄ի ընծայէ դա կենդանական սկզբանն։

Բայց օրըստօրէ յառաջադիմութ̄ի ախտաբանութե̄ն ա̄մ կարելի փորձովք

ցուցանէ մեզ՝ եթէ խանգարք հիւթոցն ակնոցն ունին 'ի վնասուէ և յայլափոխութէ հաստատուն մասանց մարմնոյ՝ պատճառելոյ 'ի վնասակար զօրութեց՝ որք ներգործեն 'ի կենդանի մանրաթելսն , յաւելլով կամ նուազելով զգրգռութին , կամ վրդովելով , կամ տագնապելով զնոյն իսկ զմանրաթելսն։

Նոյն իսկ Պրաունդ խօսելով զներգործութեց մաղձուն՝ որում այնչափ ախտս վերագրեն , ծանուցանէ . եթէ նաև յառողջութե պահու երբեմն յաղագս մասնաւոր պատճառաց յոլովագոյնս զեղանի արտաքս այնչափ բազմութի մաղձու , մինչև անհաւատալի կարծիլ՝ եթէ գոյր յառաջմանէ 'ի լերդին այնչափ մաղձ , կամ 'ի պարկ լեղւոյն , կամ 'ի ստամոքսն , կամ յաղիսն . յորմէ հետևեցուցանէ , թէ և 'ի հիւանդութիս ամենագունց՛ պատճառ ինչ՝ որ ունիցի մասնաւոր ներգործութի 'ի լեարդն , տալ թափել արտաքս մաղձ բազում , որ ոչ է պատճառ ախտին՝ այլ մի 'ի գործոց նորա համարի։

Այլ իտալացի զնոյն բան ասէ յա-

ղագս հիւթոյն խանգարման . զի առէ թէ՝ հարկ է, կամ բոլորովին ժխտել զկծուութի հիւթոյն, կամ առնել՝ եթէ գործք են սորա ախտաւոր զեղման։ Եթէ հարեանցի և եթ հայեսցուք, գոնէ որչափ ինչ գրեցին բժշկութեն մատենագիրք 'ի վր կծուութե հիւթոյ յաղեկիծ ախտին . տեսանեմք, զի ոչ զմի և եթ տեսակ նշանակել բաւական համարին, այլ պէս պէսս և զանազանս ցուցանեն։ Քանզի հնացեալ աղեկիծն ծովային ապաքինի 'ի սակաւ աւուրս, ոչ 'ի ձեռն հակաղեկիծ (անթիսքօռպիւթիքօ) դեղորէից հռչակելոց, այլ 'ի ձեռն այլոց իրաց՝ որք զդժն կազդուրեն, և յաւէտ 'ի ձեռն բարեկարգեալ սննդեան, և հեռի պահելով զհիւանդն յայնպիսի տեղեաց՝ յորս ախտացաւ զառաջինն . յորմէ պարտ է իմաստասիրել, եթէ հիւթք հաստատին յիւրեանց համբուն կազմութեն՝ 'ի ձեռն վերստին կարգադրելոյ զաւլորեալ գրգռութիւնսն։

Եթէ հիւթքն 'ի հիւանդութեա ոմանս՝ մասնաւորս ինչ ունէին խանգարմունս, ոչ գոյր նոցա հնար փախչիլ 'ի խնամա

վերլուծութե՟ տարրալուծից ։ Իսկ սակայն նոքա ո՛չ ինչ խառնի գտին ընդ արիւն առն առողջի և ընդ հիւանդացն . և փորձքն՝ զորս եա Տարվին 'ի վ՟ր արեան վարակելոցն պիսակ ախտիւ , ցուցանեն . եթէ ժամու հիւթ պիսակին ո՛չ էր խառնեալ ընդ արեան նմա և 'ի կարի յառաջադիմութե՟ անդ հիւանդութե՟ն ։

Բայց ասասցի թերևս , եթէ հիւթքն յոլով անգամ լինին խառնարանք աղետաբեր սերմանց ախտից , որք ընդ տուր և առ շնչոյն , կամ ընդ խախացոյն , կամ ընդ կաշին՝ որ միշտ պատրաստ է 'ի ծըծել զարտաքին հիւթսն , կամ ընդ խոցըս , կամ ընդ վիրաբերանսն 'ի ներքս մտեալ՝ ժամանեն յարիւնն ։

Առ այս տայ պատասխանի Գիանձակօ , մինչև (ասէ) խանգարե՟լ հիւթքն ո՛չ ինչ վնասեսցեն հաստատուն մասանց մարմնոյ , հիւանդութի ինչ կամ ախտ պատճառիլ ո՛չ ունին . և յայնժամ այն ախտաբեր գդուցութիք ունին զտեղի վնասակար կարողութեց ։ Ի նոյն 'ի միտս համաձայնի և Լօգիօ . զորոյ զբանսն առնու Գիանձակօ ։

Պա՛րտ է ինձ՝ մինչ դադարիլ խօսիմ, յաւելուլ. զի արտաքս Թալմունք կարծեցելոցն ախտաբեր նիւթոյ՝ որք 'ի վախճան հիւանդութեն դիպին, կարեն պահել զանուանդ Բուխզէ, միայն զի բառիւդ այդու մի՛ իմասցի եփուամն և հասութի նիւթոյդ, և զի Թափմունքդ այդոքիկ յորոշեալ աւուրս լիցին. ո՛չ տըղառնէ Պուանդ:

Յաւելուած կամ պակասութի գրգըռութե՝ ո՛չ բերէ Տխաթեզի իւրաքանչիւր հիւանդութեց, են իրաւացի պատճառք հաստատութե մասանց մարմնոյ յիւրաքանչիւր պաշտամունս, և վերադարձի հիւթոյն 'ի վիճակ իւրեանց բընական:

(11) Բառդ սեպհական (ἰδιοσυγκρασία), մուծեալ է 'ի բժշկութի առ 'ի ծանուցանել զդեղ ինչ՝ որ միշտ միակերպ բարեյաջող ներգործութիւ ցուցանէ յապաքինութի ոմանց յախտից:

Պատնիճն հնդկային (κῖνα κῖνα), համարի սեպհական դեղ միջահատական տենդից. սնդիկն՝ հեշտախտութե կոչեցել

հիւանդութե · սխմատուպայն որովայնա-
լուծութե կամ թանչից · եւ։ Իսկ մեր
ցուցեալ, եթէ 'ի հիւանդութեն՝ Տիաթէ-
զին է՝ որ ունի առաջնորդել մեզ 'ի դե-
ղոցն ընտրութի · հարկ է ասել թէ՝ պէս
պէս գոլով սոցա՝ պէտք են եւ դեղոցն
գործածելեաց այլ եւ այլ ունիլ զօրութիւ։

Քինաքինայն օգտաւէտ է 'ի միջահա-
տական տենդս՝ որք ասթէնիքա են · իսկ
յաղագս այլոցն օգուտ ինչ ոչ ունի։

Պարտ է ասել եւ զայս · զի ոչ միայն
այս դառն դեղ, այլեւ միւս եւս գրգռ-
ուիչքն կարեն փարատել զայսպիսի տեն-
դըս, վս որոյ եւ ոչ ըստ այսմ մտաց վայե-
լէ դմա սեպհականդ անուն, զի ոչ է միակ։

Սնդիկն ( Մերքուրիօ ) նմ պատրաս-
տութիւնք խուրովք դեղ բարի է ընդդէմ
հեշտախտին, եւ մեզ թուի թէ՝ սմա
միայն վայելէ անունդ սեպհական · զի
որ երբեմն թուէր, եթէ թթուածն
բորակի ( աչիտօ նիթրիքօ ) համազօր իցէ
սնդկան յայս ախտ · փորձ բժշկաց եւ
վիրաբուժից 'ի դերեւ հանեալ զանկա-
լուծին՝ ցրեաց զկարծիսդ։ Նա յայլ դե-
ղորայս չէք ինչ կոչելոյ դեղ սեպհական։

Կերպն՝ զոր մուծին նոր ախտաբանք յընտրութի դեղոց՝ զոր և մեք 'ի վեր անդր նշանակեցաք, իրաւացի թուի մեզ. իբրև այն՝ զի առաջնորդէ մեզ 'ի ճիշդ-ճանօթութի զօրութեց դեղոց։ Անխորհուրդ կիրառութի դեղոց ինչ 'ի հիւանդութե իմիք՝ չէ բարւոք ճանուցեալ զտիաթեզին և զախտաբանական հանգամանսն. յոլով անգամ լինի պատճառ 'ի բաց լքանել զդեղ ինչ օգտակար, որ թէ յայն տիաթեզին տուեալ լինէր ըստ արժանւոյն՝ ցայժմ թերևս լինէր 'ի յարգութեան։

(12) Որովհետև տենդքն միջահատք վերաբերին ոչ միայն յեռատեսակ տիաթեզիս, յԱսթենիքա, 'ի Սթենիքա, և 'ի յԻռուիթաթիվա. այլև յախտաբեր շարժմունս ինչ պատճառեալս յունակութէ նա և յետ որոյ տիաթեզին դադարէ, զոր ստանան մարդիկ յաղագս անհոգութե յերկարաձգելոյ զդարման տենդին, և՟ն. վասն այսորիկ հարկ է 'ի դարման միջահատից որոնել զտիաթեզին, և ապա ձեռնամուխ լինել յայն

ազգ դարմանոյ՝ որ առաւել յարմա՛ր է առ իւրաքանչիւրս ՚ի տեսակացն։

Յիւրիթաթիվա տենդսն անյարմա՛ր է առ զջերմնահալած կեղեւն ամերիկէն (քինաքինա) . կամ (կօրտէ́քս փէ քինքինօս)։

Եւ Պիուանդ զայսմ տենդէ խօսելով
» ասէ.|| Պատճառք տենդիս սովորաբար
» են երակախիցք կարծր պալարք (ճէ́ռ-
» ռօ), եւ խղխայթք (ռռ-չինճօ́նա) ՚ի միում
» ՚ի փորոտեաց, մանաւանդ ՚ի լեարդն
» (Ֆէչկա́րօ), եւ երբեմն յայլ եւս մա-
» սունս։ Եւ յիշատակեալ հիւան-
» դութիւնքդ մասնաւոր եւ ուրոյն դեղս
» պահանջեն. իսկ այլ երբեմն ոչ ինչ
» դեղ ընդունին։||

Աթէնիկքս միջահաւոքն՝ զոր բազումք ՚ի բժշկաց տեսին եւ քննեցին, եւ զբնութիւն իմացան. եւ այժմ չէք որ երկբայեսցի, ոչ ամերիկեան կեղեւոյն, եւ ոչ սոլֆաթօին, նա մանաւանդ՝ յաւէտ ժանտացուցանէ զնոսա ՚ի կիրառութի դեղորէից։

Կեղեւն ամերիկեան, եւ սոլֆա́թօ ալ քինինօն զաթէնիկքայսն միայն բժշկեն, եւ գրեթէ հրաշս գործեն ՚ի դարման վը-տանգաւորաց. եւ որք յունակութէ մնա-

ցեալք են՝ բուժին յոլով անգամ ՚ի ձե-ւըն ործացուցիչ դեղոց, որ յայսմ դիպուածի երեւի թէ՝ նահանջէ զախ-տաւոր շարժմունսն շարունակելը՝ զա-յունակուն պատճառելոյ, եւ վերստին հաստատէ ՚ի հիւթսն զկորուսեալ հա-ւասարակշռութիւն։

(13) Այլ ուր ունիմք ցուցանել, եթէ չէ՛ պարտ ՚ի վտանգաւոր անդս խնդրել՝ եթէ իցեն բաղադրեալք ընդ բաղում արեան, կամ ընդ ապականեալ եւ եղծեալ նիւթոյն։ Հարկն պահանջէ ՚ի գործ դնել վաղվաղակի զդեղեն անդ-դահալած կամ զօլֆաթօ ափ. քինինօն, եւ լաւ եւս է զայսունիկ տալ միակ՝ քան միացուցանել ընդ այլ դեղորէս յար-մարաւորս ՚ի դարման կարծեցեալ բա-ղադրութեանցն։

Պէտք են եւ զայս գիտել, զի աբիօնն (օբբիօն) տուեալ օգտակար եւ զօրաւոր գործէ զդեղեն եւ զօլֆաթօն ջերմա-հալածք, եւ մեր իսկ յոլովագոյն տե-սեալ է յայսմ ընդունել օգուտ զար-մանալի։

Ներգործութիւն կամ աիսթէզի գրգռիչ.
(Է——ԽԲ—ԲԽԴ—).

(14) Ախտաւոր երևոյթքն՝ որ 'ի հիւանդութիւնս, ոչ յամ ժամանակի միակերպ ցոյցս ընծայեցուցեալ աչաց հանճարաւոր բժշկին՝ որ ոչ դիւրաւ-խաբի յառ երևոյթ դիւրապատիր ցնորից, պատճառս ետ ասել. եթէ պակասաւոր է բաժանել զաիսթէզին յերկուս, զոր ասացաք 'ի վեր անդր։

Խնամով խոյզ և խնդիր արարեալ Պօնտիօլի՝ ամ մնաւիչ կարողութեանց, ետես. զի ամենք 'ի նոցանէ պատճառէին ախտս առանց յաւելլոյ կամ պակասեցուցանելոյ զբնականն գրգռութի։

Առաջին մնաւք. որք են վէրք և խախտումն կամ բեկումն ոսկերաց, եւ. փոփոխութի ինչ պատճառեն նախ 'ի մասնն մշտակի, և ապա յընդհանուր յողջոյն մարմնին։

Ստամոք որովայնի, և ապականեալ և եղծեալ նիւթք՝ որ յաղեան, տագնապ 'ի վերայ բերեն, և անհանգիստ առնեն զայն, և անընդհատ առնեն զնա յետ

բաղում կամ սակաւ ժամանակաց՝ եթէ չիցեն հանեալ արտաքս կամ ճճեհալած (անբրէլմենբրէա) դեղովք, կամ լուծողովք, կամ փոխեցուցչօք։

Յայս խարխափ հիմնեալ թուի գրգռիչ ներգործութիւն կամ պայմանն՝ զոր եդին Պօնտիօլի և Գիանձակօ։ Եւ ախաթէզլի խուխթաթիվա տալոց զնոյն՝ ներհուն բժիշկն Ռասպինի։ Կամեցեալ յաճախել 'ի զննին այսմ նորոյ ախտաւոր վիճակի կենդանի մարմնաթելից՝ պէտք էր որոշել, թէ զինչ իմանի ասելն՝ գրգռիչ ներգործութի (աչէօնէ իռռիթաթիվա). որ զի տուեալ պայծառ լիցի իմացումն երրորդի և նորոյ տեսակի հիւանդութեանց։

Պօնտիօլի յիւրումն յիշատակագրի 'ի վր գրգռիչ ներգործուե կամ պայ-
»» մանի ասէ, թէ՝ ‖ Նախիջական միտու-
»» մըն ինչ է այս 'ի խանգարել զբնական
»» ամբողջուե կենդանական մարմնաթե-
»» լեցն կամ հիւսուածոց, որում յա-
»» տուկ են շարժմունք գործարանացն
»» 'ի սմին իսկ միտողուե պատճառելք։‖

Նոյա ուրեմն՝ ըստ բանի սորա գըր-

գուիչ կարողութիւնք ներգործեն առ-
ետեղ. և որովհետև սոքա չեն քակտելիք,
որք են խթիչքն կամ տկարացուցիչք, ոչ
փաղփաղակի անցանեն ներգործութիւնք
սոցա յողջոյն մարմինն, այլ միայն հետ
զհետէ, և գրեթէ ըստ օրինաց ածման՝
բողբոջս արձակելով:

Յաւելու նոյն մատենագիր և զայ-
„ տագայ բանս: ‖ Գործուիչ կարո-
„ ղութիւնքն՝ ասէ, ներգործեն 'ի մասունս
„ կենդանի մարմնոյ յաղագս մեքենա-
„ կան յատկութեանց նց, կամ յաղագս
„ բնալուծական բնաւորութեանցն. յո-
„ րոց վաղ կամ անագան պատճառի ան-
„ կարգութեան ինչ տեղական: Յառաջինսն
„ անդ վերածին վէրք, խախտումն,
„ կամ բեկումն, կամ ոլորք, եւն. և այլ
„ գոյացութիւնք արտաքուստ մտեալք,
„ կամ 'ի ներքս 'ի մարմնի անդ ծնեալք՝
„ անքակտելիք, և որք ոչն կարեն մար-
„ սիլ 'ի զօրութենէ կազմութեան գործա-
„ րանացն, հիւթք անշարժ մնացեալք
„ յընդունարանս իւրեանց՝ կամ կըծ-
„ ուեալք յաղագս զեղելոյ 'ի խառնուչս
„ ինչ, բոտտաք որովայնի. և այն ամ՝

«որք յաղագս դիմադրութեան նիւթոյն կարեն մեքենաբար տագնապել զտեղին՝ յոր մերձ են։ Երկրորդն վերածեն թոյնք, տարափոխութեամբք ինչ, վնասակար շամանդաղք բազումք, որոց յարեալ 'ի մանրաթելս կենդանի մարմնոյ՝ քակտեն զայնոսիկ, և նոր արտադրութեամբ պատճառեալ՝ իւրեանց համաբուն տարրալոյծ զօրութեամբք ճըշգրիտ վնաս ներգործեն, որք գոնէ 'ի սկզբան տեղականք են։‖

Այն այս Պօնտիօլի ընդունի և զերրորդ տեսակ գրգռութեան, որ կայանայ յառաւելեալ շարժման նոյն իսկ գործարանաց մերոց, առանց պատճառ- այաւ լինելոյ արտաքուստ գրգռողացն։

Օրինակ իմն. յորժամ 'ի հիւանդութեան իմիք՝ որոյ տխաթեղի իցէ սթենիքա, մի յընդերացն յուզեսցի յանսովոր շարժմանց՝ առաւել քան յայլ մասունս. պատճառ ունելով զդոյացութիւն ինչ յարեալ 'ի նոյն իսկ 'ի յընդերսն, ընդ վտանգիւ է հիւսուած գործարանաց նր։ Ար թէ յերկարաձգեսցի ընդ ժամանակս յոլովս, որովհետեւ ձգտին սոքա յեղծանել

զամբողջութ͞ի մանրամթելիցն · վ͞ն այսորիկ իսկ հարկ է սոցա գրգռողական ներ-գործութ͞ի ինչ ածել ՚ի մէջ։

Յա͞մ փաղաղիչ հիւանդութ͞ս՝ ընդ որս ծծորդ է բորբոքումն միոյ ընդերաց, ո-րովհետև զարթնուն ՚ի նմա շարժմունք և խլրտմունք արտաքոյ բնական կար-գի, լինին սոքա գրգռիչ կարողութ͞ք և տեղի տան հետևութ͞եց բորբոքման։

Օրինակ իմն՝ խղխայթելոյ, կարծր պալարոյ, քաղցկեղի, և ժանտ ջրգողութ͞ե։

Ն͞յս անսովոր և խռովայոյզ խլրտմունք ՚ի միութ͞ն ընդերաց, կամ յայլ կարգա-նդամոց՝ որք ծնանին յայն հիւանդու-թ͞ս՝ որ զողջոյն մարմինն վարակեն, թէ սթէնիքա իցէ ախաթէզի ն͞չ՝ և թէ աս-թէնիքա, կազմեն զախտաբանական հան-գամանան, զորոց այլուր խօսեցաք։

Որովհետև նմանութ͞ի ինչ գոյ ՚ի մէջ գրգռիչ ներգործութ͞ե, և այնր՝ որ պատ-ճառի ՚ի խթիչ կարողութ͞եց · հարկ մեծ ՚ի վ͞ն կայր բժշկաց՝ միտ դնել ՚ի յորոշել զատոյգ նշանս աներկուանալիս, առ ՚ի կարօղ լինելոյ որոշել զսոսա ՚ի միմեանց։

Եթէ Պօնտիօլի ոչ վճարեաց զայս

լիով, համանեալ եմք ասել, զի և այնպէս երախտաւոր է այրն, զի եցոյց մեզ զճանապարհ՝ որոշել զտարբերութիւն որ ՚ի մէջ գրգռիչ և խթիչ կարողութեց։

Եւ այս տեղի էր արդարև յարմարագոյն՝ դնել առաջի ընթերցողաց մատենիս զպատուկ նշանսն՝ զորս Պօնտիօլի սեպհականս գրեաց գրգռութեան։

Բայց կամեցել մեր բացատրել և զտեսութիւն՝ զոր հրատարակեաց Սուպինի բժիշկ բաւմայեցի, որ բազում աշխատ եղև յայս կարևոր մասն ախտաբանութե, ունիմք բազում պատեհութիւս՝ պատաղել ՚ի զննութի այնոցիկ՝ յորս ոչ համաբան գնան բժշկ.քդ. երկոքին։

Մնացեալ է մեր կանխաւ, եթէ հիմն դրութե իւրոյ հաստատեաց Պօնտիօլի զայս իմս, զի ներգործութիւն գրգռողական մասնաւոր իմն միտողութի ունի յեղծանել զամբողջութի մանրաթելից. բայց Սուպինի ոչ կարաց յամ գրգռիչ գոյացութիս գտանել զայդ յատկութիւն, յորմէ ստիպեցաւ կնքել թէ։||
«Յորժամ յառաջին հիմն և որոշիչ
«նշան գրգռողական ներգործութե

«ասի լինել այնպիսի ինչ՝ որ անկայուն
«է. անհնար լինի այնուհետև գտա-
«նել զծնգրիտ հիմն վարդապետութեան:
«Ո՛չ գոյ՝ ասէ, ժխտել. եթէ չիցեն
«գոյակք գրգռիչք՝ որ միտեցին յա-
«ւեր և'ի քակտումն հիւսուածոց ման-
«րաթելից. բայց ոչ կաթիլն ջրոյ՝ և ոչ
«պատառ հացին մտեալ 'ի հագագն՝
«ունին զօրութիւն ինչ քակտող և եղծիչ.
«ուր ընդ հակառակս՝ թունական մոխ-
«րաղք ընդհանրապէս 'ի գրգռողաց
«համարին են. և այն ինչ սակաւ մի ա-
«ւելի զօրաւորք իցեն՝ կարէ քաջ եղ-
«ծանեն զհիւսուածս մանրաթելիցն:
«Զնոյն է ասել և զտաքրական հրոյ՝
«որ ասի ըստ բանագիտաց՝ քալօրիքօ,
«և է 'ի գրգռիչս յաւէտ ներգործա-
«գոյն. այլ յորժամ թանձրանայ՝ չէք
«ինչ քան զնա առաւել եղծանօղ և'ի
«քակտումն հակամէտ:

Զկնի պատճառացս այսոցիկ՝ վախ-
«ճան տայ բանիցն, կնքելով: || Եթէ
«միտողութիւն առ եղծումն ամբողջութե
«մանրաթելիցն՝ ոչ է նշան տարբերա-
«կան՝ գրգռօղ ներգործութեն. և յայս

Ղ

«« յա՛յտ է, զի և զշարժմունս իսկ գոր-
«« ծարանացն ո՛չ է մարթ ա՛յնպէս հա-
«« մարել, որք ասին պատճառեալք 'ի սր-
«« մին միտողութէ, զի և այսոքիկ՝ և
«« պատճառք սոցա հասարա՛կք են ընդ-
«« միւս տեսակի գրգռողաց՝ էջջխթան-
«« թէ անուանելոյ: ||

(15) Ո՛չ յայսմ ետեղ դադարին առարկութիւք Բոսուլինեայ: Այս մեծանուն բժիշկ ընդդէմ կարծեաց պատուայեցի բժշկին Պօնտիօլեայ հաստատէ փորձով և պատճառաւ. եթէ ներգործութին գրգռողական ո՛չ յաջորդաբար հետզհետէ ունի զծաւալումն, և ո՛չ թէ ըստ օրինաց աճման. այլ գրգռիչ կարողութիւքն ներգործեն 'ի դիւրագրգռութին, ո՛չ զգրգիռն յաւելլով կամ նուազելով, այլ անկանոն և խռովայոյզ և անհամեմատ շարժմունս պատճառելով 'ի կենդանի մանրաթելն. որ զօրէ բաղադրել ախտաւոր ինչ հանգամանս յողջոյն մարմնի, որով լինի տխաթեզի՝ սասցեալ խուխթաթիվա:

Զայս կարծիս եհան 'ի լոյս 'ի քիշա-

տակագրի ուրեք ՚ի վ՟ր բազմամիղութե՟ (տիփթէրէ), որ է ՚ի կարգի օրագիր յիշատակաց իտալական դպրութ՟ե. և ՚ի նմին ուղղեաց զվրիպակն Պրոմէի՝ որ համարէր, եթէ ՚ի տեղական ախաս ոչ ինչ վնասեալ լցէ դիւրագրգռութիւնն։

Եւ այժմ կացեալ ՚ի վ՟ր բանից իւրոց՝ հաւանեալ է, եթէ ախտք գրգռութե՟ (էօփէրացիօնէ). յորմէ հետևեցուցանէ, եթէ հարկ է սոցա զողջոյն մարմինն վարակել։

(16) Ապաքէն եթէ վնասակար գըրգռիչ կարօղութիք երկատեսակք՝ որք որոշաբար կոչին յիտալական լեզուն իռիթանիթէ, և էչչիթանիթէ. և մեք առ որոշումն՝ կոչեմք յայսմ հետէ զառաջինն՝ գրգռիչ, և զերկրորդն՝ դրդիչ. ներգործականք իցեն ՚ի վ՟ր դրդման, դժուարին լիցի մեզ իմանալ, եթէ զիա՞րդ առաջնոցն հարկ ՚ի վ՟ր գուցէ սահման ունել ներգործութե՟ց իւրեանց ցորոշել ինչ հեռաւորութի, և միւսոցն վաղվաղակի ծաւալիլ յողջոյն մարմնին։

Եւ ոչ առարկութին՝ զոր առարկեն

ոմանք, տեսելով. եթէ սոքա բնութի̃ ունին ծաւալական, իսկ գրգռիչքն առ եւեղ միայն ներգործեն՝ ունի ինչ զօրութի̃ ընդդէմ մեզ. զի հնար է առ այդ տալ պատասխանի, եթէ և խթողքն ևս 'ի սկզբան անդ տեղականք են. և սոքա ոչ զմիւսն յետ խթմանն կամ գրգռութե̃ն յործամ ծաւալին՝ ոչ ինչ նշան թողուն յառաջնում տեղւոջն:

Նու առ առաւելագոյնս ևս ապացուցանել. եթէ կարօղութիւնքն ինաստակարք, թէ՛ խթողք՝ և թէ՛ գրգռօղք հաւասար ծաւալին յողջոյն մարմինն: Գրէ Սու-
„ զինի. || Ոչ թէ աքիօնն և գլինին,
„ և հեղուկ աւշակն ( [illegible] ) կամ
„ անուշադրն, ևն. զողջոյն զմարմինն
„ դրդեն, զի զգացումն ինչ և խլրտումն
„ և տարբեր զարթուցանեն. սովին իսկ
„ պատճառաւ հնար է ընդհանուր ներ-
„ գործիչ 'ի բոլոր մարմնին համարիլ, և
„ զխիճն՝ որ 'ի փամփշտին, և զփուշն
„ յոտս, և զծովային խեցեպատեանսն
„ 'ի խախացոցին: ||

Տեսեալ է մեր երկրորդ անգամ զայր ոք՝ որ ունէր խիճ 'ի պարկ լեղւոյն, առէ

Պ. Օմմնտօլի։ Յաւ սաստիկ յաջակողման ախոնդանման ( [illegible] ) · կամ 'ի կողմանս մակորովայնին․ 'ի սակաւ ժամս գըտաւ լծորդ ընդ դալկուն և ընդ տենդի։

Իսկ ո՞չ ապաքէն այս տենդ՝ ծնունդ էր գրգռութեան, որ 'ի սակաւ ժամանակի ընդ ողջոյն մարմինն ծաւալեցաւ։

Ասիցէ ոք ո՛րդեօք․ եթէ առ համըդգայութե՛ ջղացն դիպաւ այդ։ Այլ այն ինչ գործին միջահան ( [illegible] ) մտել 'ի փամբուշտն՝ առթէ վաղվաղակի 'ի բոլոր մարմինն անտաբեր շարժմունս․ կարասցո՞ւք և յայնժամ ասել, եթէ գրգռութի՛ն յաջորդաբար տարածեցաւ՝ ըստ օրինաց անձման, կամ առ անընդհատ շարունակութե՛ մասանց, կամ զօրութե՛ համըդգայութեան։

Հոչակաւորն Մուսլինի ցուցեալ է՝
« եթէ։ || Համըդգայութիւն ( [illegible] )
« ո՛չ այլ ինչ է, բայց եթէ ծաւա-
« լումն Տիաթեղւոյն․ ուստի ըստ
« Տիաթեղւոյն բաժանման է և բա-
« ժանումն համըդգայութեանն։ ||

Յերկուս առաջին Տիաթեղին՝ տարածի դրդումն ըստ չափոյն անկանոն․

իսկ յերկրորդ Տխաթեղին՝ անկարգու-թիւնն լինի ըստ որակին։

Եւ արդարև գրգռիչքն զգրգռումն ոչ առաւելուն և ոչ նուազեն․ այլ յաղագս գրգռիչ որակութեց իւրեանց՝ պատճառեն անկարգ շարժմունս և անհամեմատս 'ի մանրաթելսն , կարի բացորոշ յայնցանէ՝ զոր պատճառեն խթիչ կարողութիւնք , որք ըստ չափոյն ներգործեն։

Թէպէտ և դժուարին իցէ յստակ տեսութի ունել զախտաւոր շարժմանցս․ բայց արդիւնք իւրացն զդոյն զոյգ հաւանեցուցանեն մեզ․ քանզի եթէ փուշ մի յոտս՝ պատճառէ ցաւ և անհանգըստութի և յածախութի զարկի բազկին , և այն ինչ 'ի բա՛ց խլեսցի՝ ցրուին այս ամ երևոյթք։

Եթէ մնանէ դոյզն ինչ աղիօն 'ի ստամոքս կնոջ ուրուք դիւրաղգածի , 'ի դոյզն ժամանակի լինի շատախօս․ այս՝ 'ի վե՛ր համանէ ժայթքումն․ այլ յետ այնորիկ ընդ ժամ բազում մնայ ներգործութի դեղոյն․ ո՛չ վնոյն ցուցանէ տաղտուկն և անձուկն 'ի հանգստեան մնալոյ , և հրաժեշտն յամ կերլեաց։

Ապա ուրեմն զերծ յամ(ենայ)ն տարակուսանաց թուի, եթէ ՚ի խթիչ և՚ի գրգռիչ դեղոց միջի տարբերութ(եա)ն գուցէ յեղանակ ներգործելոյն · թէպէտ և երկաքանչիւրոցն իսկ ներգործութ(եա)ն ուղղեալ իցէ ՚ի վ(երա)յ դրդմանն։

(18) Ո՛չ մանրամասնաբար ՚ի քըննութիւն առնումք զամ(ենայն) առարկուածսն՝ զորս առարկէ Ռուբինի, և ո՛ւշ կայցուք միւսումևս ճառի՝ զոր խոստանայ գրել ՚ի վ(երա)յ դիւրագրգռութեան · և յուսամք եթէ՝ իմաստուն և հանճարեղ բժիշկդ ձեռնհաս իցէ լուսաբանել զերրորդ զայդ տեսակ հիւանդութեանց։

Սակայն մեք որչափ ինչ գիտեմք ըզ-գրգռական Տիաթէզին՝ յարմարեսցուք զայն ՚ի տեսակս ինչ տենդից՝ զորոց խօսի Գիանդ։ Ստամոքսայինքն ընդհատք, և շարունակք, և մաղձայինք, և որք ՚ի ճճեաց որովայնի պատճառին, և ընդհանրապէս այն ամ(ենայն) տենդք՝ զորս բժիշկքըն անուանեն ապօրինաւորս, կամ անյատուկս · վերածին ՚ի կարգս գրգռական ախտից։

Ո՛չ պակասին օրինակք այսպիսի ընդ-
հատ տենդից, զորս մարթ է ընթեռնուլ
յառանձին ճառին՝ զոր գրեաց Ռուպի-
նի ընդ մակագրաւս, Յաղագս ընտիր
եղանակի. յարգելուլ զվերադարձ պար-
բերական հիւանդութե̃ց:

Յայս ա̃մ տենդս՝ ո̃չ ասէ Գյուանդ,
ջերմնահալած կեղեւն ամերիկեան ո՛չ
բուժէ զտենդն, զոր ակնարկի ի՛մն առ-
նէ վերոյիշեալ հեղինակդ, յասելն. եթէ
պէ՛տք է նախ յիւր համաքուն պարզուի̃
ածել զտենդն. ուստի հա՛րկ է յայն դե-
ղորայս լինել ապաստան, որք կարիցեն
տարագի՛ր առնել ՚ի մարմնոյ զխթիչսն
զայնոսիկ՝ յորոց տենդքն պատճառին:
Եւ նոյն հեղինակ ցուցանէ օրինակս՝
յորս ործացուցիչքն կամ լուծիչք ՚ի
միում վայրկենի զտենդն դադարեցու-
ցեալք են:

(19) Ստամոքսային տենդն միջա-
հատ, կամ որ յայլմէ իմեքէ կարի՛ գըր-
գռիչ պատճառէ ունի զծագումն,
պա՛րտ է դարմանել ըստ վերոգրեալ ե-
ղանակիդ. բայց միանգամայն ո՛ւշ

գնելի է և 'ի սաստկութիւն ախտին։

Ինչպէս Պրուանգ զայս երրորդ ազգ ախտից ոչ ճանաչէ, բայց և զիւր հաւանութիւն ցուցանէ մեզ. 'ի նշանակելն թէ՝ այն ինչ տարափոխիկ ժանտ թոյնն յարի 'ի կողմն ինչ կամ 'ի մասն կենդանական տեսչութեան, հարկ է բժշկին մանաւանդ 'ի սկզբան անդ ախտին տալ դեղ փոխեցուցիչ կամ քրտնաբեր, զի արտաքս թափեսցի տարափոխ նիւթն 'ի մարմնոյ անտի՝ 'ի ձեռն միոյ միջոցացս. և ընդ այս ևս ոչ շատացեալ՝ յաւելու, եթէ հնար է զնոյն դեղն փորձել նա և 'ի յառաջադէմն լինել ախտից, եթէ հանդամանք հիւանդին զդոյն պահանջիցեն։

Ւ. ժւ յորժամ անբնական նիւթքն արտաքս թափին՝ և հիւանդութիւն յետ այնորիկ մնասցէ, զորպիսի դեղ տալ յարմար իցէ. թուի թէ՝ բաց 'ի սակաւուց ոմանց բժշկաց ոչ երկբայի ոք, եթէ իցեն 'ի կարգ դեղորէից այնպիսիք՝ որք ունիցին կարողութիւն ներգործելոյ ընդդէմ խթմանն, և կոչին այնպիսիքն ըստ նոր բժշկական անուանակոչութեանց՝ քօնթռասթիմօլանթի։

Ապա ուրեմն գոն և դեղք՝ զորս մարթ իցէ կոչել անթիիռռիթանթի ․ զի թէ գոն հակառակք խթման, գոն և հակառակք գրգռութեան ։

Մեծ ոմն բժիշկ՝ Ջիւնթէռ անուն, այսպիսի ինչ գրէ յաղագս ներգործութեան
„ սնդկի ։ ‖ Եղծանէ՝ ասէ, զախտա-
„ ւոր ներգործութիւն կենդանի մասանց
„ մարմնոյ ՚ի հակառակ կոյս գրգռութեան
„ հեշտախտայինն թունոյ, կամ ՚ի
„ գրգռելն հակառակ ընդդէմ առաջ-
„ նոյ գրգռութեան ։ ‖

Յայսմ ներգործութեան սնդիկն մտածի իբրև անթիիռռիթանթէ ։ Ո նոյն ներգործութիւն ունի և ՚ի վերայ տարափոխիկ նիւթոց ․ զի և զնոցա ներգործութիւնս ՚ի դերև հանէ ։ Եթէ թթուքն ընդունայնացուցանեն զներգործութիւնս ոմանց ՚ի թմբրեցուցիչ դեղոց, և անուշադրն անզօր առնէ զաբիօնն ․ գոյ պատճառ կարծելոյ եթէ՝ թթուքն և անուշադրն են համագրգիռ (անթիիռռիթանթի) առ թմբրեցուցիչս և առ աբիօնն ։

՚Ի բացատրել անդ զտեսութիւն գրգռութեան՝ ինձ կամք են յօժարամիտս առնել

զլեզուագէտ ընթերցողսն հետաքննին լինել այսոցիկ ՚ի ճառս հրահանգացս ախտաբանութեն՝ զոր գրեաց Պանձակօ, և նոյնս համառօտեց Սուպինի ՚ի ճառին ՚ի վր̄ էական տարբերութեց պէս պէս տեսակաց հիւանդութեց:

Իսկ Պրէրա գրէ զայսոսիկ ՚ի բժշկական օրագիրս ՚ի 1811 թուին, յամենայնն մայիսի, և ՚ի մետասաներորդ-հատոր օրագրութեցն բառմայի · յորս գտանին պէս պէս խնդիրք իւրաքանչիւր հեղինակաց՝ առ ընթեր դրութե̄ լուծմանցն, որք ամենեքեան կարեն բացայայտ լուսաբանել զայս երրորդ տեսակ հիւանդութեց:

Բայց և զայս ինչ ազդ առնեմք · զի
«« ըստ ասելոյն Սուպինեայ՝ ‖ Տեսու̄
«« գրգռութեն տակաւին անկատարութ̄
«« բաղմաւ զգածեալ է, վրիպակս բաղ-
«« մագումարս զնուրն ունելով, որոց է
«« պատճառ նորութի իւր՝ զի անկատար
«« է · և ագիտուի կամ կուրօրէն ջա-
«« տագովութին՝ որ զնմանէ, յընդունողս
«« նր, զի բազմավրէպ է: Բայց յոյս
«« գոյ՝ եթէ ժամանակ և ճգնուք արանց

« հանձարեղաց , մանաւանդ խալա-
« ցւոց , որ եւանդեամբ և նախանձու
« և վարդապետութ֊ յառաջադէմ առ-
« նեն զսա . յորոց միջի ա̅ արժանաւոյն
« գովելի՛ է բազմիմաստն Գանձակօ .
« կարիցեն պայծառացուցանել և կա-
« տարելագործել . որում յայսքանեաց
« ժամանակաց հետէ դէտակն կալեալ
« սպասէ բժշկականդ գիտութիւն ։ ||

(20) Պրուշ ժխտեաց , եթէ Սթէ-նիքա միջահատ տենդ.ք ո՛չ գոն , և ոմք կոյր ղկուրայն յափշտակեցան զհետ կարծեաց նր՝ հաւանեցան և նոքա . եթէ ա̅մ միջահատ տենդ.ք պարունակին 'ի հակառակ ախաթէզին . այլ դիտողութ֊ ա̅մ գործադրաց բժշկական արուեստին՝ որ 'ի նորումս , ընդ երկբայութ֊ արկին զայդ վարդապետութ֊ . զոր արդիւնք իրացն ստէին զօր ա̅մ . և այժմ չիք ոք , բայց եթէ ոմանք 'ի ծանծաղամիտ բանդագուշելոց , որք զկարծիս Պրուշեայ հաստատեցին ։

Խօսեցեալ Գռանդ զպարբերական օրինաւոր միջահատ բորբոքողական տենդէ՝ ասէ թէ . այն ինչ առատութ֊

գդալեան՝ հարկ է նախ միանգամ կամ երկիցս երակ հատանել, զի տենդն բաղադրեալ՝ վերածեսցի 'ի պարզ ջղատենդ։

Արժան է ստամնօր ածել զմտաւ. զի թէ միջահատն Սթենիքա լիցէ՝ և արիւն յոլով ունիցի հիւանդն, երակ հատանելն օգուտ գործէ այնու, զի մեղմէ զյաւելեալ ներգործումն սրտին, և զգիւրագրգռումն ներդիցն, և զայլ ամ մասանց։ Իսկ թէ ոչ գուցէ արիւն բազում՝ անօգուտ է երակ հատանել. և յայնժամ տկարացուցիչ անուանեալ դեղքն յաղթել ունին զտենդն։

Նոյն եթէ բժիշկն ընդ երկար ժամանակս յաւի 'ի յոծն՝ զոր կալաւ, կամ յաճախէ յանդէպ երակահատութիւս. մարթ է յայնժամ դիպել, զի սթենիքա տիաթեզին լիցի ասթենիքա. և յայնժամ հարկ է առ 'ի բժշկել զայն՝ դիմել յամերիկեան կեղեւն տենդահալած, կամ 'ի սոլֆաթօ տի քինինօն։ Բայց այս տենդ՝ եթէ ոչ չարաչար դեղովք ջանասցէ ոք փարատել, ոչ պահանջէ ըզ դեղդ վերոգրեալ։

(21) Փտանդաւոր տենդքն ամենեքեան են 'ի դերադոյն աստիճան ասթենիքային՝ իբօսթենիքա՛ ասացեալ: Հանել արիւն և տալ լուծօղ դեղորայս՝ զորս պատուիրեն ոմանք, սպանանեն անվրէպ զհիւանդն. քանզի զօրու̃ի տան. և զայրացուցանեն զպատճառ ախտին:

Եւ որովհետև այս տենդք ընդ բազմադիմի այլ և այլ կերպարանօք երևին, և ո̃մքեան քնաքնա կեղևոյն կամ սօլֆա՛թօ տի քինինօյին բուժին. Թուի մեզ, եթէ անպատեհ է յայլ դեղս դիմել. եթէ 'ի դէպս փտանդաւորս ոչ գոյ ժամ ուշ ունելոյ 'ի բաղադրութ̃ի ախտին, և հարկ լինի փաղփաղել 'ի մատակարարութ̃ի քինաքինային. ընդէ՞ր ապա յայլ ժամանակս՝ յորս փտանդ ինչ ոչ երևի, պէ՛տք լիցին երակ հատանելոյ՝ կա՞մ զորովայնն մաքրելոյ: Եթէ փտանդաւոր տենդն (Ֆէ՛պպրէ բէռնիչիօ՛զա)՝ որ 'ի փտանդ արկանէ զկեանս հիւանդին, զի՞նչ արկած և ունիցի ընդ իւր, բուժի առանց արիւն հանելոյ, և առանց լուծօղ դեղոց. ընդէ՞ր ոչ բժշկեսցին և այլքն:

Ապաքէն տեսեալ է մեր 'ի բազում տեղիս տիրեալ տենդս միջահատս։ Գիտեցաք և զայն՝ զի առ որս յաճախ տուեալ եղէն լուծօղ դեղք, կամ հատան երակք, ա̃մքեան տագնապեցան՝ վերադարձ առնելով ախտին, և ոմանց 'ի նոցանէ կեանք անկան 'ի վտանգ՝ սաստիկս զայրանալով. յորոց պատեցան առատաձեռն մատակարարութ̃ե քինաքինային։ Փասան՝ զոր եդաք, թուի թէ՝ չընդունի ինչ պատասխանի։

Բայց եթէ ոք համարեսցի առարկել ընդդէմ մեզ՝ եթէ բազումք բժշկեցան յետ արիւն հանելոյ և լուծօղ դեղոց. տամք նց̃ պատասխանի, եթէ առատաձեռն մատակարարութ̃ի քինաքինայի, և կիրառութ̃ի գինւոյ, և այլոց ոգելից ըմպելեաց, զի զայդ պահանջէ սաստիկ տկարութ̃ի հիւանդին. է՛ աներկբայ պատճառն՝ զի ոչ մեռանին նոքա. այլ՝ ոչ̃ ասացաւ. ընդ երկար ժամանակս մնան տկարք, և դիւրաւ լինի վերադարձ հիւանդութ̃եց նց̃։

Յորոց ասացաւս՝ դիւրին է իմաստասիրել, եթէ կարի հարկաւոր է 'ի դեպ

ժամու ճանաչել զվտանգաւոր տենդն՝ առ ՚ի զառաջս առնուլ զնոր՝ ջերմնահալած կեղեւովք ։ Սովորաբար երրորդ զայրացումն ջերմին մահագուշակ է ։ Գռանդ քաջիմաստ համառօտութե ստորագրէ պայծառ զամ արկածս՝ որք զուգընթաց գտանին վտանգաւոր տենդիս ։

Համարիմք, եթէ ոճն՝ զոր յիշեալ հեղինակդ ունի, ՚ի ծանուցանել աշակերտացն իւրոց զախտն . յաւէտ դիւրիմանալի է և նուազ ձանձրացուցիչ՝ քան զորս սովորաբար ՚ի գործ ածին առ վարժապետս բժշկութե . այն է՝ ստորագրել զամ ազգ. տենդից մի ըստ միոջէ, և այնչափ բաժանմունս նշանակել ՚ի նմ՝ որք յաւէտ շփոթ ՚ի միտս արկանեն ։

Աստի ասի թէ՝ ամ արկածք պատահեալք յայլ ծանր հիւանդութիս՝ երևին և ՚ի վտանգաւոր տենդս, և զայս դիւրաւ իմանան՝ որք քաջ ճանաչեն զամ ընթացս պարբերականաց ։

Յորժամ բանք եղեն զձևոց ախտից՝ ցուցաւ, թէ որպիսի օգուտ գործէ տալ իւրաքանչիւր ախտից անուանս յատուկս ։

Ճիշդ խուզարկութե արկածից ՚ի սկըզ-

Ղ

ընէ անտի տենդին մինչև ցդադարումըն՝ կարէ բազում օգնել մեզ. Թէպէտ և կոչիցուք ՚ի հիւանդէն յետ յառաջադէմն լինելոյ ախտին։

Ստանդաւոր տենդք սովորաբար տիրեն ՚ի մեզ ՚ի խոր ամարան՝ և յաշնան, յորժամ ժամ առնուն և միւս պարբերականք. բայց մարթ է նոցա և յայլ եղանակս տարւոյն պատահել։

Յաճախ լինին յերկիր ճախճային՝ և ՚ի խոնաւ, և ըմբռնեն յաւէտ զայնպիսիս՝ որք պարտասեալք են ՚ի յոլովից աշխատութեանց, կամ ոչ զգուշանան անձանց ՚ի վնասակար շամանդաղից՝ որք բուրեն ՚ի ժանտ խոնաւութեանց։

Յուշ լինի ինձ՝ աստ Ռօմանտօլի. զի երբեմն ընկերութեան Պուանչէպօ վաքքայի մեծանուն բժշկի՝ գնացի յայցելութի ազնուականի ուրումն՝ յերկրորդումն աւուր հիւանդութեան նորա. պատմեցաւ մեզ, եթէ այն այր չունելով ինչ ցաւ նախընթաց՝ կամ անհանգստութի, յանկարծ կալաւ զնա տենդ, ցրտութի՛ ունելով յոյժ սակաւ՝ իսկ ջերմութի սաստիկ, ցաւ ժանտ ՚ի գլուխն՝ և ան-

է

հանդուրժելն , նուաղումն՝ և ստէպ ստէպ շնչառութիւն . տապցին և զայս՝ եթէ ցնորեալ էր 'ի գիշերին յայնմիկ։ 'Ի միւսում առաւօտուն թուէր հիւանդին՝ եթէ թեթևացեալ ինչ իցէ , բայց ցաւ գլխոյն մնայր տակաւին . յետ վեց ժամուց այնքան սաստկացաւ ցաւ գլխոյն՝ զի մոլեգնէր։ Հարցեալ Անաք-քսայի զպատճառ ախտիս՝ ոչ ինչ այլ կարաց գտանել , բայց զոր ինչ պատմեաց մի 'ի բարեկամացն . զի 'ի գիշերի միում կարի աշխատեցաւ 'ի կապել զորկղ՝ կառաց ինչ՝ որ բեկեալ էր 'ի ճանապարհին մօտ 'ի քաղաքն։

Այսչափ ինչ ծանօթութիւն բաւական եղև Անաքքսայի՝ յորոշել զտեսակս հիւանդութեն , և արդիւնք իւրացն արդարացուցին զկարծիս քաջահմուտ բժշկին։

Ունկի մի ընտիր քինաքինայի տուաւ հիւանդին՝ յորժամ խոնարհիլ սկսաւ սաստկութիւն տենդին . զայրուցք աւուրն երրորդի կարի մեղմացաւ , և'ի հետևեալ աւուրն կրկնեալ զդեղն ջերմնահալած՝ ոչ ևս 'ի վեր երևեցաւ ախտն։

Այս դիտողութիւն և այլք ևս՝ զորս

հնար էր ածել 'ի մէջ , ծանուցանեն . եթէ հարկ մեծ է նորայս համբակաց յաճախել 'ի հիւանդանոցս՝ առ 'ի յարմարել զտեսութիւն ուսեալս 'ի դպրոցս , 'ի գործածութիւն արուեստին . առանց որոյ բազումս դանդաղեն , ոչ ինչ կարելով որոշակի զընթացն ախտին իմաստասիրել։

(22) Գտանգ 'ի բժշկական համառօտութեան Խուրուժ ասէ . թէ ջղատենդն (Fièvre nerveuse) առնու երբեմն ընդհանդամանս բորբոքողական տենդի . որ է կոչեցեալն 'ի բժշկաց նորոց՝ Թիֆօ սթէնիքօ , յառաջ երիտասարդս և 'ի պարարտ անձինս։

Նա ապա յաւելու ասել . թէ ճարտար բժիշկքն 'ի սկզբան անդ պարտին տալ նոցա զովացուցիչ (antiphlogistiques) դեղորայս։

Ապաքէն՝ են ազգք ինչ Թիֆօ հիւանդութեանց՝ որ 'ի սկզբան անդ Սթենիքա են , բայց արագ լինին Ասթենիքա։

Խօմմազինի ճարտար ուսուցիչ բժշկութեան , 'ի ճառի ինչ Խուրուժ՝ զոր գրեաց 'ի վերայ դեղին տենդի՝ տարածելոյ

՚ի Լիվօռնօ , յամին 1804 . դնէ առաջի աչաց ընթերցողաց իւրոց զնմ յայտնի փորձս՝ առ ՚ի ցուցանել . եթէ այս ախտ ՚ի սկզբանն Աթէնիքա́ էր , և համընթաց իւր ունէր զբորբոքումն ինչ լերդի և գործարանաց նր̃ . և յորդեանց իսկ քաջայայտ երևեցուցանէ , առեալ իւր հաստատարան նա́ և զհեղինակութիս մեծանուն բժշկաց հնոց և նորոց . եթէ առացեալն մաղձայինն ախտ՝ պա́րտի համարիլ իբրև զդեղին ախտ ամերիկեան (Ֆէպպրէ ճիա́լլա) . ոչ այլ ինչ ունելով տարբերութի , բայց եթէ յաստիճանս . զի դեղին ախտն է սաստկացեալն մաղձայնոյն :

Իսկ դարման երկոցունցն ՚ի սկզբան ախտ պա́րտի լինել զովացուցիչ . և եթէ բժիշկն զանց առնիցէ զայսու ոճով , և վաղվաղակի սկսանիցի տալ դեղորէս դրդիչս , յառաջէ հիւանդութին , և յոլովակի վախճան առնու մահուամբ հիւանդին :

Գործնական հրահանգք նր̃ և օրինակքն՝ զորս պատմէ , ածեն զմեզ յոճ դարմանոյ՝ բոլորովին ընդ հակառակս

այնմ՝ զոր յանձն առնէին պաշտպանք փոխելոյ հիւթոց, և զորոց այժմ զհետ երթան հետևողք Պրունիայ։

Չէ՛ մարթ ժխտել՝ եթէ երևելի գործադրաց բժշկութե̃ ուսուցեալ է. թէ ՚ի մաղձային տենդն կարի՛ շահաւոր գտան թթու ըմպելիք, և յածախեալ կիրառութե̃ լուծող դեղոց՝ որք կարի՛ ուժեղականք են ՚ի սանձել զանդրադարձ ներգործութի̃ գործարանաց՝ ընդդէմ բարձման հիւթոց։

Բայց չէ՛ արժան կարծել՝ ասէ Թօմմազինի. եթէ ես հակամէտ իցեմ ստամոքսայինն կոչեցեալ վարդապետութե̃ (Դոտտրինէ գաստրիքա), կամ մաղձայնոյն. յայն միտս՝ զոր ընդունին յոլովագոյնք ՚ի բժշկաց՝ առ յինէն յիշատակելոց. ընկալեալ նա՛ և յորոց ՚ի մերում ժամանակի բժիշկքն են։

Նա արդարև ինքն զանջատումն յոլով մաղձի ոչ պատճառ վերագրէ, այլ գործ ախտաւոր դրդման գործարանաց մաղձին, և ՚ի յիբերսթենիքս դասել զախտ հաւանի յեղանակէ անտի և յախտաբանական հանդամանաց հիւանդու-

թեանն . քաջ գիտելով , եթէ հնար է յոլովագոյն բազմութեան մաղձի անջատիլ նա և յաթենիքա հիւանդութեան ։

Սրիպակքն՝ զորս բազում անգամ վերոյին բժիշկք համարին զՏիաթեզի ինչ այլ ազգ . քան զոր էն , յոլով անգամ անդարմանելիք են ։

Աստի մեզ հարկ է ցուցանել նորա համբակաց . եթէ զգուշութիւն բազում պիտի յորդորել զաղգ հիւանդութեան՝ նախ քան զտալն զդեղորայս դրդիչս ։

Եւ խնամով հետազօտուի նշանացն՝ առ յորոշումն Տիաթեզւոյն , կարեն զերծուցանել զնա ՚ի տարտամութեն՝ յոր յոլով անգամ պարանեալ գտանին ։

(23) Նուանքդ դրդիչ և մեղմիչ (ԷՔՍՔԻԹԱ՛ՆԹԷՍ ԷԹ ՍԷՏԱՏԻՎԷՍ)՝ զորս ՚ի գործ ածէ Պուանգ , թուին ցուցանել . եթէ տարափոխիկ շամանդաղքն ախտաբերք՝ կարեն յարել միապէս յուժեղակս և ՚ի տկարս . որք՝ զի ըստ բժըշկաց ոմանց խօսեցայց , ունին յարմարութի Աթենիքա տեսակի հիւանդութեց , և որք ունին յարմարութի յԱսթենիքայն , կամ

որք յերկաքանչիւրան խակ են անյարմարք։

Երկարագոյնս ձայնէ զայսցանէ Ռօմանածօլի 'ի բժշկարանի իւրում · ուրանօր քաջ գննէ զկարծիս երևելի բժշկաց 'ի վերայ տարափոխիկ շամանդաղից։

(24) Անօգուտ է ասնդել · եթէ ոպ է տխաթեղն հիւանդութեան՝ ըստ այնմ արժան է ընտրել զդեղն, յորժամ տարափոխութիւն յառաջ ածէ արկածս տկարութեան մեծի՝ հանքային թթուաքն և բուսականքն՝ որք տկարացուցիչք են, ոպ և զով օդն և այն ամ՝ որ կարեն տկարացուցանել զհիւանդն, կարեն և վնասել նմա։

Բայց պէտք են քաջ գննել՝ ոպ ցուցանէ Պրանդ · եթէ ընկլուզեալք իցեն զօրութիւ հիւանդին՝ և ոչ ընկճեալք · քանզի երբեմն արիւն առնլով կամ ընկճող և տկարացուցիչ դեղով կազդուրին, և կարծեցեալն տկարութիւն ցրուի։

Իսկ եթէ արդարև ընկճեալք իցեն, ոգելից ըմպելիք և սնուցիչ կերակուր և գինի ազնիւ և այլ ամ խթիչք՝ մեծապէս թեթևացուցանեն զախտն։

(25) Տենդն ստամոքսային պտրու-
նակի այժմ յերրորդ ազգ ախտից։
Սկիզբն ունի ախտդ ՚ի տեղական ինչ
բորբոքմանէ յաղիս, և այս գրգռութի
յողջոյն կազմած մարմնոյն ծաւալեալ՝
պատճառէ զԴիաթէզին խուխթաթիվս
սաստացեալ․ զորմէ խօսեցաք ՚ի վեր անդր։
Նշանակ դարմանոյն է՝ բառնալ զախ-
տին պատճառ անբաղադրելի ընդ գոր-
ծարանաց մարմնոյն՝ ՚ի ձեռն լուծող դե-
ղոց․ և ապա՝ եթէ տակաւին մնասցէ նոյն
տիաթէզին՝ պիտոյ էր տալ դեղորայս
հակադրդիւս (անթի ֆլոգիստիկէ)․ եթէ
յայտնի ճանաչէաք այնպիսի ինչ։
Դուանդ՝ յորս ՚ի գործադրութի բը-
ժշկական արժանապէս վստահիմք, բա-
տուդէ մեզ․ եթէ այս ազգ տենդից
յորին խառնեցուոց կցորդ գտանի յոլով
անգամ ընդ բորբոքողական ինչ տրա-
մադրութե՝ առաւել քան յայլ հիւսի-
սային գաւառս, յորս ինքն ընդ ժա-
մանակս բազում արար բժշկութիւ։
Օյս տարրկեայ և Դուանչէ՛պօ
վարքս՝ ՚ի բուժումն փուտ սաստցելոցն
տենդից, զոր տակաւին ոչ ընկալան

բազումք յորդի բժշկաց՝ որք պաշտպան կան վտանգաւոր կարծեաց փոխուն ․ և ոչ այնք 'ի Պրովինեանց՝ որք համարին, եթէ տմ ջերմախտք ասթենիքս լինին։

Ապաքէն՝ առաջինք յաճախ լուծողք և թթուատ դեղովք բուռն հարկանեն զոճոյ բժշկուէ՝ որ առաւել յարմար և ճահաւոր է բնութե ախտին։

Իսկ յետինքդ ևւրեանց դրդիչ (Էնշէ Բ՛ՆԲԷ) դեղովք առաւել զայրացուցանեն զպատճառ հիւանդութեն, ընդբոլոր ընթացս ախտին անխորհրդաբար զնոյն ոճ ունելով։

(26) Եթէ 'ի տարևոր տրամադրուէ օդոցն՝ կամ 'ի յառաջընթաց պատճառաց՝ կամ 'ի ձևոց հիւանդուէն անհնար իցէ իմանալ զբարս և զբնութի տենդի ինչ, մնայ յայնժամ դիտել 'ի զննուի դեղոց՝ թէ ո՞ր 'ի նմանէ օգտէ, և ո՞ր վնասէ։

'Ի սթէնիքս տենդս բազում անգամ պատահէ՝ զի խառնութիք արկածիցն 'ի կասկած արկանեն, թէ յո՞ր Տիաթեզն պարտ իցէ դասել զհիւանդուին։

Միանգամ երակ հատանելն՝ աւէ

Պուանդ, կարէ լինել ոմանց չխասակար. բայց և այլ երբեմն թուի թէ՝ զանցառութին 'ի վտանգս ծանունս մատանէ զախտակիրն:

Այլ և ոչ զայն արժան է մեզ ժըխտել. զի թէպէտ նոր վարդապետութի խուխթաթիվա Տիաթէզեայն 'ի ձեռն Պանձակօ և Պօնտիօլի և Ռուպինի բժշկաց գտաւ յառաջագէմ, բայց տակաւին հեռի է յոյժ յիւրմէ կատարելութէն. ուստի յերկբայական հարկինք 'ի փորձ դեղոցն մտչիլ՝ առնոքօք իմանալոյ զՏիաթէզին:

Որք երկուս զատակարգս դնեն դեղոց՝ հաստատեն միաբան. եթէ 'ի մատակարարութէ միում 'ի դեղոցն՝ յորժամ հակառակ իցէ Տիաթէզին՝ պատճառէ աղմուկ և վրդովք, նուաղումն, ժայթմունք, տկարուի, մանրուի զարկի բազկին. և մի կամ բազումք 'ի նշանացն ցուցանեն՝ եթէ վրէպ գտանել է Տիաթէզին:

Քահանայ ոմն յամառնային ամիս՝ 'ի նմին իսկ ժամանակի՝ յորում բազումք կային 'ի հիւանդանոցի ախտացեալք միջահատ սթենիքա տենդիւ, հարաւ 'ի

պարբերական տենդէ , որ զեռօրեայ կրկնապատիկ տենդի ունէր զնմանութի՟ ։

Յերրորդումն աւուր կոչեաց զՌօ-մանոլի , որոյ յաղագս անընդհատ գըլ-խացաւոյն՝ որ տագնապէր զնա և 'ի սուղ միջոցի հանդարտութե՟ տենդին , կարծե-ցեալ՝ եթէ մարթ է ախտին փոխիլ 'ի տենդ վտանգաւոր · յանձնեաց նմա առ-նուլ կեղև տենդահալած ընտիր՝ 'ի չափ միոյ ունկեայ , ընդ նմին և քանի մի չիթ ափիոնախառն ցքի ( [illegible] )՝ խառնեալ 'ի ջուր անանխոյ , ընդ իւրա-քանչիւր ժամանակս հանդարտութե՟ տենդին հաւասար չափով · և զայս օրի-նակ վարիլ մինչև երկու ժամու յառաջ քան զզայրանալ ախտին ։

Ռահանայն համարեցաւ · եթէ բար-ւոք ևս լինի միանգամայն առնուլ զա-մենեսեան , յուսալով՝ եթէ դիւրագոյնս բուժեսցի · այլ անդէն հասին 'ի վե՟՝ նուաղումն , ջերմութի՟ 'ի ներքս , կարմ-րութի՟ երեսաց , փայլատակիլ աչաց , կի-զող ջերմութի՟ն 'ի մարմնի , որք երկեցու-ցին զազգականս նր՟ և զայլ մերձակայս · իբր թէ 'ի վտանգի իցեն կեանք նորա ·

ուստի վերստին կոչեցին զբժիշկն։

Սորա գիտելով. եթէ պատճառ համօրէն երևութիցս է վրէպ դատումն Տիմաթէզեայն. խորհեցաւ զդէմ ունիլ յաւելեալ դրդմանն՝ տալով վեց ցորեանչափ տարտ ործացուցիչ (Tartaro emetico), լուծեալ ՚ի վեց ունկի (oncie) ջուր, յըմպել սակաւ առ սակաւ։

Այս դեղ գրեթէ հրաշիւք իմն սանձեաց զանչափաւոր խիղախումն տենդին, որ ապա տակաւ տակաւ եգիտ զկատարեալ առողջութի̃ ՚ի ձեռն ընկճող դեղորէից։

Ծանեալ է մեր և զայս. զի յաւթէնիքս Տիմաթէզին՝ տարտն ործացուցիչ, և տիճիթալէ բուրբուրեան, և այլ ևս բազումք յայսպիսի դեղոց պատճառեցին անհանգստութիս յընդհանուր մարմինն և ՚ի մասունս ինչ նր̃, ըստ ընտրական զօրութեց իւրաքանչիւրոցն՝ յորժամ յայս տիաթեզի տուան հիւանդաց։

Այլ ո՞չ զի այս հնարք յայտնել կարասցէ զՏիմաթէզին, չէ արժան հակառակ և դիմամարտ դեղորէս ընդ միմեանս խառնել. զի բառնան զզօրութի̃ միմեանց։

Ուստի այն ինչ Տիաթեղին անստոյգ է և ընդ երկբայութե̃, փոխանակ պատուէր տալոյ հիւանդին՝ երակ հատանել, որում մարթ է լինել վտանգաւոր. որովհետև անհնար է 'ի սուղ ժամանակի վերստին ստանալ զկորուսեալն. ապահովագոյն է դեղ ինչ տալ նմա, և 'ի նր̃ ներգործութենէ ճանաչել զտեսակ ախտին։

# ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ
# ԿԱՐԳ ԱՌԱՋԻՆ

Ընդհանուր տենդերուն վրայ, որ խառնացիք ( փէ՛պպրէ ին ճէնէրա՛լէ ) կըսեն.

## Յօդուած. Ա։

### Տենդին անունը։

* . 1 . Տենդ անունը թէպէտ և հայերէ՛ն է՝ որ այս բըժշկարանիս մէջը պիտի բանեցընենք. բայց այս անունը հին բժշկարաններուն մէջ կըսեն և ջերմ, կամ ջերմախտ. որուն լատիներէն՝ ֆէ՛պրուէս ըսւեցաւ. յունարէն՝ բիրուէս. իտալէ՛՛՝ ֆէ՛պպրէ։ Ալ այս անուն գրէ՛թէ ամէն Եւրոպացիք մէկ օրինակ մօտաւոր հնչմամբ ֆէ՛պպրէ կանուանեն։ Արը՛՛՝ սուխունի. իսկ տաճ՛՛ հիւմմա կըսեն։

Տենդը շատ տեսակ հիւանդութիւններուն մէկ անունն է. բիւրէդօլօճիա կըսվի

այն ճառը՝ որ տենդին ինչ ըլլալը կը քննէ , և երբոր ճանչցըվի նէ տենդը՝ կը սորվեցընէ անոր պատճառները հասկընալ , որոշել , հոգ տանիլ , ու դեղերով առաջքը առնել։

—

## Տենդին բնութիւնը։

* · 2 · Ի՛նչ տեսակ խառնուածք որ ունենայ մարդ , թէ՛ երիկմարդ և թէ՛ կնիկմարդ , և քանի՛ տարու որ ըլլայ նէ ըլլայ , անխտիր կը բռնըվի տենդէն · ուժով մարդոց վերայ սաստիկ կու գայ տենդը , և տկարներուն վը̃ անզօր։

Երբեմն մինակ կըլլայ , երբեմն մէկ ուրիշ հիւանդութէ̃ մը առաջ՝ կամ հետը՝ կամ վերջը կը պատահի։

—

## Տենդին սահմանը։

* · 3 · Տենդին ինչ ըլլալը իմացընելը՝ և անոր յայտնի ու յատուկ և հարկաւոր որպիսութիւնը հասկըցընելը կարելի չէ՛։

Իրաւ շատ են տենդին հետը գտնը-

վող ու անոր ներկայութիւնը յայտնող նշանները․ բայց այս նշաններուն շատը մէկուն մը չըգտնըւի՛ն նէ ալ՝ տենդ չի կայ չէ՛մք կրնար ըսել։

Տենդը առաւել ուրիշ քանի մը հիւանդութիւններուն պատճա՛ռ է , քան թէ հիւանդութիւն։

Կան անանկ բժիշկներ՝ որ կըսեն , թէ տենդը բնութեան մէկ գործիքն է՝ որ անով գէշ նիւթերը աղեկներէն կը զատվին․ կամ կենաց մէկ հնա՛րքն է՝ որ մահը հեռացունելու կը ջանայ․ բայց անոնք ալ առաւել տենդէն առաջ եկածները կը յայտնեն՝ քան թէ անոր ինչ ըլլալը։

Ինչպէս և կենդանեաց ու բուսոց մէջ կայ անանկ մէկ անծանօթ զօրութիւն մը՝ որ կորած մասունքները կառողջացընէ , կոտրածները և խախտածները կը միաւորէ , և վնասակարները կը հեռացընէ , կարգիլէ , կը զատէ , և դուրս կը հանէ։

Այս զօրութիւնը՝ որ ջիղերուն գրգռողական մանրաթելից և զգայական ոգիներուն մէջը կը գտնըւի՝ գրգռիչ պատճառներով կաճի , և աւելի սաստիկ կը ներգործէ շատ տենդերուն ատենը ,

է

քան թէ ուրիշ հնացած հիւանդութիւնե-րուն ժամանակը · բայց երբեմն ալ ինքն իր մահուան պատճառ կըլլայ ։

Այս զօրութիւնը կը խափանի ու բոլո-րովին կը տկարանայ աւրուած նիւթե-րով, անցնդական օդով, թիւնով (շէհէ-րով), ապականութիւն, տրտմութիւն, կամ ուրիշ սաստիկ կիրքերով, և կամ պէ՛տք եղած կերակուրին պակասութիւնը ։

Բայց շատ աղէկ է ամէն բանին տար-բերութիւնները հասկընալ՝ քան թէ անուն-ներուն վրայ կռիւ ընել ։

Շատ տենդերու մէջ հիւանդութեան պատճառը կենաց զօրութենէն սաստիկ է, այն ժամանակը բնութեան փոխադարձ ներ-գործութիւնը աւելի ձգանք ներգործութեան կընայ բռնել՝ քան թէ ներգործութիւն ։

—

## Տենդին նշանները ։

* · 4 · Տենդին նշանները կամ ա-ռաջ կերևին՝ ու անոր պատահիլը կիմա-ցունեն, որոնք՝ նախընթաց կըսուին · կամ մէկ տեղ գալով տենդ կը պատճա-ռեն, որոնք՝ բաղկացուցիչ կըսուին ։

Մուաջիննները երբեմն չե՛ն գտնըվիր· մեկալները մէկ տեղ որ գա՛ն նէ՝ տենդ կը պատճառեն , բաժնըվի՛ն նէ՝ իրենց զօրութիը կը կորսնցունեն , կամ գո՛նէ ա՛ն նշաններուն չի գտնըվելովը աղէկ մը չե՛նք կրնար հասկընալ թէ՝ տենդ կայ ։

—

## Նախընթաց նշանները.

*·5· Տենդին նախընթաց նշանները՝ (4) պատահակա՛ն են . և ասո՛նք են , սրտնեղութի , ձանձրութի , թմրութի , զայրացկոտութի , ջղերուն գրգռմունք , ծանրութի մարմնոյ՝ մանաւանդ գլխոյ , զգայութիններուն փոփոխութի՝ և այլայլութի , մարմնոյ և յօդուածոց (Ջէնախնէրուն) ծանրութի , թոյլ ցաւ մը , ծուլութի , հոգնութի , յօրանջումն (Էսնէմէք) , ձըգտումն (Կէրինմէք) , բերնի չորութի , ծարաւութի , ձգտումնք (Կէշէրմէք) , սիրտ խառնըվիլ , փսխել , ցամքութի , մորթին (Տէրիսին) քաշվիլը , և մէկ թեթև ցուրտ մը՝ որ կռնակին ոսկորէն կը ծագի , և ուսը (Օմուզը) ելլալով և մէջքը իջնալով՝ կուրծքը կը նեղէ խոտորնակի ,

հետն ալ մէկ փոփոխական գեղեցիկ գոյն մը կուննենայ, խոցերու չորութի ու կապուտութի, երեսի դեղնութի, անսովոր կարմրութի, և ամէն կերպով մեծ փոփոխութի, աչքի փայլունութի քիչ կամ շատ, զարհուրելի միջոց միջոց և անհանգիստ քուն, կամ քնհատութի, մշտնջենաւոր քնափութի որ ուժէ կը ձգէ, և ընական աղբը պինտ՝ չոր՝ ու խառնակ։

—

## Բողկացուցիչ նշաններ։

* 6. Բողկացուցիչ նշանները հոգնութիւնէն առջի ըսված (* 5.) նշաններուն շարունակելը ու էվելնալը։

Ասոր երևան կելլայ մէկ մեծ հոգնութի մը և անհանգստութի մը. երբեմն ուժը կը շատնայ խենդութե՝ և կատղութե, երբեմն կը պատահի դողալ, մէկ գործի վրը հաստատ չի կենալ, չափէ դուրս ուժ մը՝ անկանոն շարժմունքներով և վնասակար գործքերով։

## Վերջուքն։

Ասոր որ մնալը, դողալը, ու ցըրտութիւնը երևան կելլան, մորթը (մաշկն)

կը դեղնի, կը քաշվի, կը ցամքի, կը թօռմի, ու կը պինդնայ, եղունգները (Թըռնախները) կը ճերմկին ու կը կապուտնան, շօշափողական կարողութիւնը կը քիչնայ՝ կը կորսուի, խելքը կը ցնդի, մկանունքները (Խօռօճլէ) կը դողան ու կը ցնցին, մարմնոյն վրայի կողմի անօթները կը ցածնան, ու անյայտ կըլլան, ծակտիքները կը գոցվին, շնչառութիւնը անհանգիստ՝ անհաւասար՝ ու դժուար կըլլայ, թեթեւ հազ մի ալ հետը կուննենայ, փորը քամիով կը լեցվի, ու սիրտ խառնըվելու եւ փսխելու անհանգստութիւն կը նեղվի. բերնին մէջն ու լեզուն կը ցամքին, եւ անհամութիւն մը կամ լեղիութիւն մը կուննենան. հիւանդը ծարաւութիւն մը կխմնայ, ու ջրոտ խմելիքներու կը փափաքի, որ ետքը ստամոքսին (Փօք) մէջը կը ծանրանայ, ու նեղութիւն կուտան. ջերմութը շատկեկ կըլլայ, դեղին ու ջրոտ. զարկ բազկին (Նապզ) կարկամ, մանր ու շուտ շուտ կը զարնէ, կամ ընական կարգէն էվել կամաց ու շատ անհաւասար։

Երբեմն ցրտութիւնը խրուցնէ կըլլայ՝

որ ջերմաչափ (Թէռմօմէթրօ) ըսուած գոր-
ծիքով ալ կը հաստատուի · երբեմն ալ
միայն հիւանդը կիմանայ ցրտութիւն մը՝
բայց մարմնոյն տաքութիւնը բնական կար-
գովը կամ աւելօք կը գտնուի։

Երբեմն բոլոր մարմինը՝ երբեմն մէկ
դին կամ մէկ ալ դին կըլլայ մինը · ցրը-
տութեան պատահելուն ու շարունակելուն
կարգը զանազան կերպով կըլլայ։

Երբեմն՝ երբ որ տաքութիւնը սկսեր ու
աւելնալու է՝ ան ատենը վրայ կուգայ
ցրտութիւն · և տենդ կայ՝ որ թող տալու
ատենը ցրտութիւն կը պատահի · կայ որ՝
ամենևին ցրտութիւն չունենար · կայ որ՝
սկզբէն մինչև ցվերջը կունենայ, որ ան
ատենը իրեն ազդու ներգործութիւն կեն-
սական ջերմութիւնը կը վերցունէ։

Պատճառ։

Այս ամէն ըսածներէս յայտնի կե-
րևայ՝ թէ ցրտութիւնը տենդերին հարկաւոր
մէկ նշանը, ու տաքութեան գլխաւոր պատ-
ճառը չէ · տաքութեան պատճառը թէպէտ
յայտնի չէ՝ բայց կերևի թէ ջղերէն ՚ի
զատ՝ ուրիշ պատճառ չի կրնար ըլլալ։

## Ցրտութեան առաջ եկածները։

Ցրտութեան առաջ կուգան անհաւասարութի, տկարութի, հեղուկ նիւթերուն շրջանին թոյլ շարժումը. գլխուն՝ թոքին (աքճիյէրին)՝ սրտին ու մեծ անօթներուն լեցունութիը, պինդ նիւթերուն ուժէ իյնալը, աւիշկեան անօթներուն տկարութիը, ծուլութիը, հեղուկներուն որպիսութիը փոխվիլը, մարմնոյ ծակտիքներէն ու խորշերէն հիւթերուն դուրս թափիլը ու նորէն ժողվըվիլը, մանրքներուն աղիքներուն և աղբի ճամբաներուն գոցվիլը, ու ատոնց հետ ջիղերուն մէկ փոփոխութի մը։

Տենդին բռնած ատենները երբեմն կը պատահի բորբոքման խղխայթում (իրինճէթ), քաղցկեղ (եէր եարաշ), և մահ։

## Տաքութիւն։

Երբեմն ճշմարիտ է, և երբեմն մինակ հիւանդը կիմանայ այն տաքութիը՝ որ ցրտութեան ետքը կամ առաջ կամ հետը կը պատահի։

Այս տաքութիւնը կրնայ ըլլալ ընդ-հանուր, մասնաւոր, ներքին, արտաքին. երբեմն ալ չի գտնըվիր, բայց բնական տաքութենէն աւելի՝ 16 աստիճանէն անդին չի կրնար ըլլալ՝ Փարէնիդ վարպետին ջերմաչափովը:

Սկիզբը մեղմ է, և անհաւասար. բայց շուտ մը կէվէլնայ, կը չորնայ, եռքը կը խոնաւանայ (Նէմլէնիր), աղդու կըլլայ, և ձեռվընները կըդգայ:

Այս նշաններուն հետ զարկ բազկին ալ շուտ շուտ կը զարնէ, խիստ հաւասար, և խիստ աղատ. երբեմն քիչ կը տարբերին բնական զարկէն. բայց երբեմն թրթռուն են՝ ուժեղ և ամուր՝ մարմնոյն մէկ քանի կողմերը. ինչպէս՝ վիզը, ականջաց քունքը (Գուլաք Դիպի), ու բորբոքում եղած տեղերը:

Գլուխը կը տաքնայ, և կը ցաւի. խելքը կը պղտորի, ներքին զգայութիւնները իրենց կորուսած ուժը կըստանան. մանաւանդ առջինէն աւելի զօրաւոր կըլլան, շատ անգամ ալ ներգործութիւնին կը փոխեն:

Երեսները խիստ կը կարմրին, և աչ-

քերը կըլլան կը կըտրին · ծարաւութիւնը կ՚աւելնայ՝ որ պաղեցուցիչ խըմելիքներով կը քիչնայ · շնչառութիւնը երագ (շու-տով) և դժուար կըլլայ՝ եթէ կուրծքը տեղական հիւանդութիւն մը չունենայ նէ ։

Յաճախ մորթը տժգոյն կարմիր՝ խիստ ծանրացած · երբեմն պղտոր կըլլայ , երբեմն ալ ձիու մորթի կը նմանի · սիրտ խառնվիլը ու փսխելը կը շարունակէ կ՚աւելնայ , բայց շատ հեղ ալ կը դադրի ցրտութէ ։

Պատճառ ։

Առողջութեան ու հիւանդութեան տաքութեան պատճառները շատ յայտնի չեն , և անկէց պատճառեալ գործքերը զարմանալի են · շատ անգամ իրարու հակառակ են՝ ու դժուար կը յայտնուին ։

Հիւանդութեան ճշմարիտ տաքութեան պատճառը՝ առողջութեան տաքութեան պատճառներուն աւելնալէն յառաջ կուգայ , կամ չափէ դուրս շնչառութենէն , կամ սրտին շնչերակին ու ջղային զօրութեանց անդրադարձ ներգործութենէն , և տեղական ջղացնցութենէն · երբեմն պարզ է

և անխառն, երբեմն հրային և կծանօղ։

Օդայութե վրայի տաքութիւնը բոլորովին կը հաստատէ թէ՝ ջղերը (ններները) վհատացեր են, ու պատճառը մէկ ապականեալ ստամոքսային տարափոխիկ ազդու և էզանթեմական կրծուուն մի է։

## Տաքութէն պատճառները։

Առողջ կենդանիի մը կենսական տաքութենէն կը պատճառին հիւթերուն ջրոտութիւնը, շրջանը, կատարելութիւնը, և զատվիլը, անօթներուն ազատութիւնը, և վերջապէս իւրաքանչիւր մասին յատուկ եղած գործողական և զգայական զօրութեանց շարժումը և պահպանութիւնը։

Հիւանդութե պարզ կամ՝ անխառն տաքութէն կը պատճառին մածուցիկ և կըպչուն նիւթերուն լուծումը, ազատ շրջանին պատրաստութիւնը և փոփոխութիւնը․ ապագայ կղկղանոց պատրաստութիւնը և հասունութիւնը, խղխայթմունք, տեղափոխութի ախտաբեր հիւթոց, և ընութե ճգանք՝ որ հիւանդութե առենը կըրնան պատահիլ։

Այս պատճառաւ՝ շատ ընդհատ (Փեջոյ

չէ փըլէօզ) և սուր տենդեր կան՝ որ մէկ հատիկ զօրութի մը ունին, մեղմ խցանքները բանալու, և հինցած հիւանդութիւնները բուժելու, չհասած և խիստ ամուր ուռեցքները կակուղ՝ ու տեն ատեն բռնող տենդ մը փոխելու. որովհետև ախտաբեր նիւթերը կը պատրաստուելին տեղ մը մնալու, որ ետքը մարմինէն դուրս ելլան. հին վարպետները ընութեն այս գործողութենը՝ եփումն (ֆօչէօնէ) ըսին։

Հիւանդոտ նիւթերը եփելու, պատրաստելու, հասունցունելու, և վերջապէս մարմինէն դուրս հանելու համար ուրիշ տեսակ տաքութի մը պէ՛տք կըլլայ՝ խիստ մեղմ և սաստիկ, կարճ և խիստ երկար։

Ասոր օրինակը կը տեսնանք ծաղիկ հիւանդութե խոցերուն և պալարներուն վերայ, և խզամուխին. որ ատեն մը տաքութե կը կարօտին՝ հասուննալու համար։ Խիստ սաստիկ տաքութիը՝ ալիշկը թանձրացունել չի կրնալով՝ կը փոխէ և կը շփոթէ զատուցման կարգերը, և նոր կարգեր կը պատճառէ. կէվէլցունէ

կամ կը խափանէ բնական աւիշները , կայլայէ՝ կը բաժանէ՝ և կաւրէ հեղուկներուն խառնութիւնը , և ծակտիքներէն դուրս կը հանէ խիտ հեղուկ մասունքները։

Իսկ իրենց կարգէն դուրս մնացած և դադարած նիւթերը կապականէ՝ որ քիչ կամ շատ յարմարութիւն ունին ապականուելու։ Որջան ունեցող հիւթերը թէպէտ չե՛ն փտտիր , բայց փտտելու յարմարութիւն մը կունենան։

Այն տաքութիւնը երևան կը հանէ և կը զօրացընէ և կը մարէ գրգռիչ զօրութիւնը · չափէ դուրս կարձակէ կը ձգտէ (չէ—դէ+) , և կը պատռէ անօթները · ուսկից կը պատճառի հոսումն արեան։

Եթէ տաքութիւնը էվելցընօղ պատճառներուն հետ գրգռիչ պատճառ մի ալ գտնուի , կամ պահված ըլլալով երևան գայ , կամ մարմնոյն մէջը գոյանայ նէ · ան ատենը անկէց կը պատճառէ շատ տեսակ անկանոն որպիսութիւնները՝ որ տաքութէն աւելի դժուար կիմացուին , կը ծնանէն մասանցը , և բոլոր մարմնոյն։

Օգալի տաքութիւնը՝ որ կրակի ներքին ,

տրտաքին , կծանող և խայթող , իրեն պատճառներուն յարմար բաներ յառաջ կը բերէ . ասկից առաջ եկածները այնչափ շատ և զօրաւոր կըլլան՝ որչափ որ արտին և ջիղերուն զօրութիւնը քիչ կը ջանայ մարսելու փախելու և դուրս հանելու հիւանդոտ նիւթերը ։

Ասկից կը պատճառի որ պլըշկող ջղային և դանդաղ տենդերուն առենը՝ վատառողջ մարդիկ կամ մարսողութիւն չեն ունենար՝ կամ ուշ կը մարսեն , կամ դէշ , և կամ ոչ ինչ ։

Ան առենները կը պատճառեն դէշ ըմբռնումներ տենդի , յաճախ տեղափոխութիւն ախտաբեր հիւթոց՝ որ շատ անգամ անօգուտ են , քաղցկեղներ (Եէքէր Եարա)՝ որ սովորաբար մահաբեր են . անդամալուծութիւներ , աղիքներու խճողումն , մղարդելութիւն , վատուժութիւն և ապականութիւն ։

Օրէ Եաղձին տենդի ժամանակը ։

Օրկ բաղկին ընակմանէն եվել շուտ շուտ կը դարնէ , թէ՛ տենդին ցըրտութեան առենը՝ և թէ՛ մնացեալ տաքութեան ժամանակը ։

Երբեմն շնչերակները աւելի երագ (բէկ) են քան թէ սովոր . բայց շատ անգամ չէ թէ մինակ սաստիկ՝ ջղային՝ և տարափոխիկ տենդի ժամանակը , այլ և խելագարութեան և թոքախտութեան ատենն ալ զարկ բազկին հանդարտ է , և բնականէն շատ տարբեր չէ՞ շուտ զարնելու կողմանէ , մանաւանդ շատ անգամ ալ բնականէն կամաց կըլլայ ։

Սուր տենդին և վնասակար ընդհատ տենդին ատենը շատ անգամ զարկ բազկին՝ տենդի նշան մը չունենար . անանկ որ՝ բժիշկը մինակ զարկին հաւատալու չէ , որովհետև ասիկայ խիստ խաբող մէկ նշան մի է ։

Բայց վերի ըսածներուս չափ էական չեն տենդերուն հետ գտնըված ուրիշ նշանները . ինչ՝ ծարաւութիւն , սրտնեղութիւն , զառանցանք (սայըխլամաք) , քնհատութիւն , թմրութիւն , ցնցումն (տիթրէմէ) , ցաւ , փորի պնդութիւն , կամ լուծումն , հոսումն արեան , քրտինք , և էզանթեմաներ . որոնց մէկ քանին վերը յիշեցինք , մէկ քանին ալ պիտի խօսինք իրենց տեսակին յատուկ ճառին մէջը ։

## Հեռաւոր պատճառները։

* • 7 • Հեռաւոր պատճառները՝ որ տենդերը կը գոյացընեն և կը պատճառեն, շատ տեսակ են և շատ անգամ ո՛րչափ որ պէտք է նէ յայտնի չեն • և կարելի չէ՛ որ բժիշկը որոշէ։

Ո՛չ անօթներուն չափազանց ընդդիմութիւնը և հիւթերուն դանդաղութիւնը մերձաւոր պատճառն են տենդերուն, ո՛չ հասարակ զգայարանքին գրգռումը, ո՛չ անոր զօրութենը տկարութիւնը, կամ տաքցած երևակայութենէ ուրիշ զառանցանքները • տարափոխութիւնը և ապականութիւն ալ իսկական պատճառ չէ՛ն ընդհանուր տենդերուն • կամ գո՛նէ ուրիշ պատճառներ ալ կը գտնըվին ասոնց հետը։

Ախտաւոր նիւթն ալ աղէկ մը չե՛նք կրնար ճանչնալ • վ՟զի տենդն՝ որ պատահի նէ, յանցանքը միշտ հեղուկներուն տալու չէ՛, մեր անօթները ախտաւոր նիւթը չե՛ն քըշեր տանիր, ինչպէս որ հեղեղը (սէլը) քարերը կը գլորէ, և կարելի՛ է հաստատել թէ՝ զանազան տեղեր առողջարար թոլուսմն (աքնաք) որ

կըլլայ նէ՝ միշտ տենդի նիւթերէն չի՛ պատճառիր, որովհետեւ կըրնայ ըլլալ որ՝ այս ախտաւոր նիւթը հիւանդութենէն կը պատճառի. կամ գո՛նէ բժշկին յայտնի չըլլա՛ր միշտ ։

—

Շարունակութիւնը ։

* · 8 · Տենդերին մեր ճանչցած պատճառները (* · 7 ·) ասո՛նք են ։ Նախ՝ արտաքին, որ մարմնոյն կը յարին կամ ստամոքսին մէջը կը մտնան ։ Երկրորդ՝ ներքին, որ մարմնոյն մէջը կը պատահին և կը գոյանան ։ Երրորդ՝ բաղկացեալ, որ այն երկու տեսակ պատճառներէն մէ՛կ կըլլան ։

Առաջին կարգէ՛ն են մեր շրջապատը եղած մթնոլորտին ցրտութիւնը, տաքութիւնը, չորութիւնը, չափազանց խոնաւութիւնը, ախտաւոր արտաշնչութիւնը, և մասնաւոր ապականութիւնները, որ թէ՛ հիւանդ մարդէն կելլան, և թէ՛ ուրիշ տեսակ հիւանդ կենդանիէ մը, որ և քի՛չ կը պատահի ։

Ասոնք չափաւոր հեռաւորութիւն մը կը տարածուին օդին մէջը՝ որ թէպէտ ըստ

Ինքեանց վնաս չե՛ն տար , բայց քանի մը մէջի անծանօթ պարագաներով կօգնեն այս ապականութեանց ներգործութեանը . որոնք երբեմն մորթիին արտաքին կամ՝ ներքին ծակտիքներէն ներս թափանցելով՝ խոցէ մը և երբեմն մէկ ուրիշ տեսակ ճամբէ մը , կը հաղորդին այն մարդիկներուն՝ որ վախով , տրտմութեամբ , անօթիութեամբ , տկարութեամբ , կամ ինչ և իցէ կերպով յարմարութիւն մը ունեցեր են :

Ուրիշ զանազան արտաքին վնասները սա՛նք են . մարմնոյն ճմլիլը՝ և նեղվիլը , ոսկորներուն խախտիլը՝ և կոտրիլը , միսին սըկըրդվիլը՝ և պատառուիլը , խոցվիլը , էրիլը , ձգտիլը , ոլորմըլվիլը , կերակրոց շատութիւնը , վիժումը , դժուարածնութիւնը , պլաշէնդի բռնած նիւթին կամ՝ արունի մանկարդին տանիլը չեկած դուրս ելլալը , կամ՝ երկար ատեն արդանդին մէջը մնալը , նախ տացեալ փորոտիքին կամ՝ աղիքին տկարութիւնը , և փոշմանկութիւնը , եւն . բարկ և թունաւոր բաները , ականջէն քիթէն և նստոյ տեղէն ներս մտած որդերը , չորցած խոցերը , մորթին մանրիկ և խիտ պալարնե-

րուն զարնըվիլը , փտած և գրգռիչ բան մը պատահիլը , ստամոքսին մէջը մնած նիւթերը՝ ինչպէս են չափէ դուրս և տեսակ տեսակ ուտելիք և խմելիքնե-րը . մանաւանդ թիւները , մարմնոյն սաս-տիկ և շարունակ աշխատութիւնը , բաղնիք շատ երթալու և արևուն զարնելը :

Այն խակ հեղուկ ([illegible]) կամ պինդ-գոյացութիւնները կը պատճառեն բոլոր մարմնոյն ավըրվելուն նիւթը , ասոնց շինած թոյնին պէս սաստիկ թոյն մը տա-հա ընալըծները ([illegible]) չէն կըր-ցեր հնարել :

Թոքը ([illegible])՝ ապականեալ օդ մը դուրս կուտայ , մորթը՝ վնասակար գո-լորշի ([illegible]) մը՝ որուն բնութիւնը տակաւին ([illegible]) անծանօթ է , երիկամունքը՝ ([illegible]) մոխրաջրեայ նիւթ մը կը տա-րածեն , լերդը՝ թանձր ու կպչուն մաղձ մը՝ որ շուտ մը կապականի , և խիճերուն նիւթն ալ մանաւորապէս ոսկորներուն գոյացութեան առնուած է :

Արիւնի շինուկը , շողերը , արցուն-քը , ստամոքսի հիւթը , աւիշը , սերմի խոնաւութիւնը , խժային հիւթը , ոսկորնե-

Թ

րուն ծուծը, և պարարտութիւնը, որոնք էվէլըք կը պատճառուին պինդ գոյացութիւններուն փոխադարձ ներգործութենէն . որ ան գոյացութիւններէն կը պատրաստըվին, և անոնց մէջը կը պահվին ։

Այս ամէն հիւթերը եթէ իրենք իրենց մնան, կամ քանի մը պարագաներու պատահելու ըլլան նէ, իրենց յարմար եղած փոփոխութիւնցը տակը կիյնան . այս փոփոխութիւնները թէպէտ օր աւուր վրայ եղած քննութիւններով աղէկ հասկըցված են . բայց կարելի չէ վճիռ կարել ատոնց համար թէ՝ թթուութեանց տեսակներն են ։

Բայց նոյն խակ հեղուկները բաժնող գործարանները՝ մասնաւոր նեխութիւն և ապականութիւն պատճառով մը կը փոխվին . և ընականէն տարբեր գրգռիչ ու գէշ ընութեան հիւթ մը կը բաժնեն ։

Հիւանդութեանց առաջին սերմը՝ որ հիւանդ կենդանիի մը վրայ ինքն իրենց կամին, ուրիշ կենդանիներուն կամ բուսերուն ունեցածներէն տարբեր չեն ։

Բայց միայն գրգռումը և բորբոքումը կը փոխեն հարկաւոր անօթներուն ներ-

գործուն̃ը , և կենդանւոյն ունեցած են աւելի տաքութ̃ մը՝ կամ սաստիկ թուլ-ութ̃ մը՝ կամ ընական զօրութ̃ մը՝ և օդին դպչելովը խողովակներուն ծայրի կամ քովի աւիշը կը թանձրացունեն , և մէկ ամուր և նեխած նիւթ մը կը-նեն · վերջապէս երբ որ այն ախտաւոր բաժանումը կ'երեւնայ նէ՝ աւիշը կը դառնայ կըլլայ գարշահոտ և փտաղիչ (Եաւըրճէ) շիճուկ արեան ։

Եթէ թարախին կամ շիճկային նիւթին նորէն իր խողովակին մէջը մննալը , և թէ մէկ կողմէ մը շիճուկը կամ երկար ատեն դադարեալ ապականեալ աւիշի կաթելը , երկուքն ալ միակերպ վնասակար են ։

Ուրեմն ամողջ կենդանիին մէջն ալ ինք իրեն փոփոխութ̃ մը կը պատահի հիւթերուն տարբեր որպիսութեն՝ որ ոչ ճաշակելեօք կիմացուի , ոչ լսելեօք , և ոչ քիմիական գործողութ̃ կը հասկըցուի · թէպէտ և հեղուկներուն ընութ̃ը բարկ և գրգռիչ կըլլայ · այսպէս՝ ախտաւոր բաժանման ներգործունէը ժամանակը , առաւել կամ նուազ կամ

փոփոխեալ զգայականութիւն անձանօթ կարգերով երևան կելլան և կը գտնուին զանազան տենդի պատճառներ։

Նաև այն ամէն պատճառները՝ որ կարգիլէ մարմինէն դուրս ելլալու այն նիւթերը՝ որ կամ իրենց որպիսութիւնը կամ որքանութիւնը վնասակար են , կամ այն պատճառները՝ որ բնութեան մէկ կարգովը , ինչ՝ սովորութիւնը , պէտք է որ դուրս հանուին , կամ անոնք՝ որ հիւթերուն մէջը եղած նորոգութիւնը և բաժանումն կուշացունեն . կամ կայլայլեն հեղուկներուն ներգործութիւնը պինդերուն վրայ , կամ պինդերունը հեղուկներուն վրայ , այս ամէնն ալ կավրեն հաւասարակշռութիւնը՝ կամ մանաւորապէս կամ ընդհանրապէս ։

Այս պատճառներն են հոգւոյն գըրգռիչ և նեղացունող կիրքերը . քնհատութիւն , անդադար աշխատանք , դժուարամարսութիւն առաջին և երկրորդ ճամբուն մէջը , սնընդական նիւթին պակսիլը . ևն ։

Ասոնցմէ կը գտնուին շատ տեսակ պատճառներ՝ շատ հիւանդութիւններու , բայց մանաւանդ սուր և դանդաղ տենդերու ։

առնողները կը բաժանեն · տենդ գան-դաղ, ծիւրական (էթի՛քա), և վատա-ռողջ · և սուր, պարզ, սաստիկ, և ամենասաստիկ:

Երկրորդ՝ տենդին պատահած գըլ-խաւոր տեղը և ուրիշներուն պըլըշկիլը նկատողները կը բաժնեն · տարափոխիկ, սբօռատի՛քա, էնտէմի՛քա, դադարա-կան, և ինթէռքուռէ՛նդէ:

Երրորդ՝ տենդին նոր սկսած ատենը նայողները կը բաժնեն · գարնանային, ամառնային, աշնանային, և ձմեռնային:

Չորրորդ՝ շրջաններուն կարգին և աւելնալուն նայողները կը բաժնեն · միջոց տըվող (ռէմիթթէ՛նթէ), միջոց չի տըվող (քօնթի՛նուէ՛նթէ):

Հինգերորդ՝ գլխաւոր նշանները նը-կատողները՝ այնչափ տեսակի կը բաժնեն տենդը, որչափ որ նշաններ կան հետը:

Վեցերորդ՝ անսովոր կամ հասարակ նշաններուն և տենդին հետը եղած վը-տանգներուն միտք դնողները կը բաժ-նեն · բարի՝ կամ լաւ (պէնի՛նեօ)՝ մաքրո-ղական, և չար կամ մահաբեր (մալի՛նեօ):

Եօթներորդ և վերջապէս՝ տենդին

պատճառը մեծ բանի տեղ դնողները կը բաժնեն . նախնական՝ կամ էական , երկրորդական՝ կամ արկածեան ։

Թէև որ լաւ մը նկատենք նէ՝ կը հասկընանք , որ այս բաժանումներուն առջինը միայն դանդաղ և սուր տենդերուն մէջի եղած տարբերութիւնը կը ճանչցունէ , և երագութիւնը տենդին վերջանալու ատենը միայն կը պատահի . ասանկով՝ այս բաժանումը ամենևին չօգներ հիւանդութիւնը ճանչնալու ։

Երկրորդ բաժանումը շատ օգուտ կընէ արհեստը գործածելու . վասն զի անով կրնանք ճանչնալ դադարական հիւանդութիւններուն աղդեցութիւնը՝ որոնք կը ներգործեն ուրիշներուն վրայ (ինտէռքուռռէնտէ) . բայց այս ալ հերիք չէ՛ տենդերուն բնութիւնը և տարբերութիւնները յայտնելու ։

Նոյն բանը կրնայ ըսուիլ երրորդ բաժանման համար ալ . այս բաժանման մէջը գլխաւորապէս տարիին եղանակները կը նայուին՝ գիշերահաւասարներէն սկըսելով . բայց անկէց ալ չի՛ կրնար ըլլալ տենդերուն մէկ անխախտ և հաստատուն որոշումը ։

Չորրորդ բաժանումը՝ որ շատ հին էր, հեշտ և օգտակար ըլլալովը հաւնելու բանն է․ բայց անալ խիստ շիտակ չըլլալով՝ չի՛ կրնար զատել տեղերուն զանազան կարգերը, որ շատ անգամ կը շփոթին իրարու հետ՝ շրջաններուն (Պ.բէ—ռաուոյէ) և Թուընալու կողմանէ։

Մէկ միջոց չտրուող տեղ մը՝ երբեմն միջոց տրուող տեղին տեսակէն է, երբեմն ալ միջոց տրուող երևցող տեղը՝ դանդաղ տեղերուն կարգէն է, որ բժիշկները անընդհատ կամ միջոց չտրուող կը սեպեն։

Քօնդինէնդէ տեղ չի՛ կայ՝ որ բոլորովին տարբերի միջոց չի տրուողէն, թէ որ առօրեայ կամ պարզ կամ շարունակ տեղը վերցունենք նէ։

Հինգերորդ բաժանումը՝ որ նախնեաց մէջը համարում ունէր, առաւել նշաններուն կը վերաբերի՝ քան թէ նոյն իսկ տեղին, և ամենևին կարելի չէ նշաններուն վրայօքը յարմարել բժշկու կերպը․ բայց հիմակու ատենը այն նշանները ճանչնալը կերպ կերպ օգտակար տեղեր զատելու համար պէտք կըլլայ։

## Տենդէն յառաջեկեր ըլլալը։

Վեցերորդ բաժանումը՝ աղէկ և գէշ կամ մահաբեր, ոչ միայն շիտակ չէ՛. այլ և շատ վտանգաւոր է արհեստը գործածելու ատենը. մինչև որ բժիշկները աղէկ մը չի հասկընան մալինեօ, թէ՝ չարատենդ բառին անորոշ նշանակութիւնը։

Ապա զի ոչ դժուար և շատ նշաններ ունեցող տենդը, ոչ դեղերով թեթևութիւն մը չիմացող տենդը, ոչ թեթև նշաններով գաղտնի պահած վտանգը չիմացունող տենդը, և ոչ կենսական զօրութեանց անսովոր տկարութիւն մը հետը ունեցող տենդը շուտ մը չէ՛ն կրնար ըսվիլ ֆէպպրէ մալինեօ, այսինքն՝ չար տենդ (ֆեպրա մալինա)։

Նշաններուն նորութիւնը և ինք իրեն ծանր եղած տենդին թեթև երևնալը՝ առաւել բժիշկին տգիտութիւնը կամ արհեստին անկատարութիւնը կը ցուցնէ, քան թէ հիւանդութեան մահաբեր ըլլալը։

Միանգամայն բարի և մահաբեր չեն կրնար ըլլալ մէկ հիւանդութիւնը՝ որ մէկ փորձառու բժիշկի մը նոր կերևայ. բայց

կարելի՛ է որ աւելի փորձառու բժիշկ մը ուրիշ անգամ ալ տեսած ըլլայ։

Շատ կը պատահի որ՝ մինակ մէկ փըս-խողականով մը կամ արիւն առնըլով մը՝ մուխի պէս կը ցրուի մեծ հիւանդութիւն մը։

Բայց շաղակրատ բժիշկներուն փուճ կարծիքներուն վրայ՝ և մարդոց մէջ վախ մը ձգելու համար հնարուած հիւանդութեան անուններուն վրայ երկար խօսելով՝ մի թէ կրնամք համարձակիլ և ըսել թէ՝ այս մահաբերութիւնը ախտութենէ և վախէ կը պատճառի, անունը կայ՝ ինքը չի՛կայ։

Կրնանք թէ այս մահաբերութիւնը ու-րանալով՝ հիւանդին անկողինէն հեռա-ցունելը կարելի՛ ըլլար։

Իրաւցունէ չի՛կայ անանկ տենդ՝ որ յատկապէս չար (մալինեօ)՝ մահաբեր ըսուի, և թէ որ այս դրութեան վրայ հաստատուելով բժիշկներուն մէջէն ոմանք պնդեն՝ թէ աղէկ մը պատճառը չի՛ ճանչցած՝ միայն դեղթափ գործածելու է այս տեն-դերուն դէմ. ես մահաբեր բառը կը ձգեմ, և այս տենդերուն անունը՝ հաղուա-գիւտ, անսովոր, խաբէական, և վտան-գաւոր կընդունիմ. բայց ո՛չ մահաբեր։

Մալինեօ, ֆ՝ մանչաբեր բառին տեղը՝ բեսդիլենցիալէ, նօզօքօ միալէ, քասդռէնսէ, նավալէ, քառչէռառիա, բուդռիդա, և նէռվօզա ըսողներն ալ խիստ արժանահաւատ չեն։

Չենք սխալիր, թէ որ ըսենք՝ թէ մանչաբեր տենդը անանկ տենդ մի է՝ որով ջիղերը կը վարակին (ՆԸ ՊԸՍԸՎԻՆ) անյայտ պատճառներով, անանկ որ՝ սկիզբէն կերևայ կենսական և կենդանական զօրութիւններուն մեծ ու հաստատ տկարութի մը՝ որ ոչ արեան և հիւթերուն շատութէն, հապա՝ մէկ բարակ պատճառէ մը՝ որ շատ անգամ տարափոխիկ է, բայց յայտնապէս հիւանդութեը ժամանակին, կամ յայտնի եղած պատճառներուն, կամ հասարակ հիւանդութեց մէջ ծանրութիւն նշանակող ուրիշ նշաններուն յարմար չեն գար վտանգները։

Ուրեմն օրինաւոր է այս բաժանումը. ‖ մանչաբեր և ոչ մանչաբեր ‖. թէ որ միշտ մի և նոյն կերպ բժշկութե գործածելու չի պնդինք նէ, որովհետև մէկ տեսակ չէ մանչաբեր տենդը։

Եօթներորդ բաժանումէն ինչ որ

իմանալ պէտք է նէ՝ առաջուց խօսե-
ցանք. շիտակ է՝ որ պատճառներուն
աղէկ մտածութիւը, և անոնց մէկ մէկու-
նման ըլլալուն վրայօք խոհական մէկ
կարգը՝ թէ որ համեմատվին շրջաններուն
և աբխուէսախային վերաբերին պատճառ-
ներուն հետ, մեղի օրինաւոր կերպ մը
կը սորվեցունեն, որով տենդերը կը-
նանք բաժանել։

Այս միջով կը սահմանենք հետևեալ
կարգը. չէ թէ բոլորովին կատարեալ սե-
պելով՝ ինչպէս որ կը փափաքինք, հապա՝
բնականին առաւել մօտ կարծելով։

—

## Տենդին կարգերուն վրայ։

* . 10. Տենդի կարգերուն վրայ
խօսելէն առաջ, հօս խօսինք ճգանաց
վրայօք, որ խտալացիք յունարէնէն
առեալ՝ կըսեն Ռուիզի. արաբացիք՝
Սէպուհ. լատինք Սուրթաթիօ. իսկ
տաճկերէն՝ Գօհրան կըսվի։

Մարդկային բնութիւը այնքը՝ ժրաջան
(հաճարար) ու հոգ տանող է՝ որ մարդուս
մարմինին մէջ հնարուած (բէյդահ էղած)

հիւանդութին շինօղ նիւթերը (* · 3 ·) դուրս նետելու համար անդադար կաշխատի ։

Հիմա հոս ալ յայտնի կերեւայ, թէ նոյն բնութիը որչափ պիտի կրնայ՝ ջանայ ու աշխատի նոյն մնաս տըվօղ նիւթերուն դէմ, որ են եօթը յաղթէ կամ յաղթըվի, և կամ ուրիշ կերպ հիւանդութի մը դարձընէ կամ փոխարկէ ։

Նախ՝ եթէ նոյն դրդուիչ կամ հիւանդուտի շինօղ նիւթերը դեռ ([illegible]) հում ըլլան՝ և մէկ զմէկէ զատված չըլլան նէ՝ ան ատենը հում ձգանք ([illegible]) կըսվի ։

Երկրորդ՝ եթէ նոյն նիւթերը եփած կամ հասած և մէկ զմէկէ զատված ըլլայ նէ՝ ան ատենը՝ հասած ձգանք ([illegible]) կըսվի ։

Երրորդ՝ եթէ նոյն նիւթերուն կէսը կամ երեք մասը դուրս ելլէ, և մնացեալ մասը երկան ատեն ներսը մնալու ըլլայ նէ, ան ատենը ձգանք կիսկատար ([illegible]) կըսվի ։

Չորրորդ՝ եթէ նոյն նիւթերը ամէնը մէկէն քակվին նէ, ան ատենը ձգանք ([illegible]) կըսվի ։

Հինգերորդ՝ եթէ նոյն նիւթերը յարմար ճամբաներէն քակուին նէ՝ զոր օրինակ ցամաք ջրվաթէն քրտինքէն և ուրիշ յարմարաւոր տեղերէն, ան ատենը՝ ձգանք հասարակ (կրիզի սէմփլիչէ) կըսեն.

Վեցերորդ՝ եթէ նոյն նիւթերը տարբեր և անյարմար ճամբաներէն մորթ անցնելու ըլլայ նէ, ան ատենը ձգանք յարակցեալ (կրիզի քօմփլիքաթա) կըսվի.

Իսկ եօթներորդ՝ եթէ նոյն նիւթերը ամէնը մէկէն քակուին ու շիտակ դուրս ելլելու ըլլան նէ, ան ատենը կատարեալ ձգանք (կրիզի բէռֆէթթա) կըսվի.

—

## Ո՛րչափ տևելու օրերը, ու բժիշկներուն երեւցածները.

* • 11 • Տենդատին ետքի օրերը հիւանդուն՝ կերևի մասնաւոր նշաններ. որոց ոմանք կըլլան գէշ, և ոմանք աղէկ. բստ որուն բացարձակ յայտնի կըլլայ հիւանդին վճիռը որ կողմը կըտրվիլը. այ՝ թէ դէպ 'ի յառողջութի՞, կամ թէ դէպ 'ի մահ, որոնց վերայ շատ քիչերու

տարբեր բաներ կան , որոնք կարգա-պխտի տեսնես անկից ետքը · (* · 12 ·)։

Ցենդեր՝ կամ ուրիշ տեսակ հիւանդութիւններ շինօղ նիւթեր՝ որ սովորաբար առաջ հում կըլլան , ետքէն քիչ քիչ կեփին , ու էն ետքը կը քըքըրվին՝ ու մէկ ըմէկէ կը զատվին , ու դուրս կը նետվին · (* · 10 ·)։

Ո՛րչափ հիւանդին կենդանական ուժը կամ կարօղութիւնը պակաս ըլլայ նէ , ա՛նչափ ալ ճգանքը դժվար կըլլայ · և ո՛րչափ ալ տար հակառակը ըլլայ նէ՝ ա՛նչափ ալ ճգանքը հեշտ ու շուտ կըլլայ։

Թէպէտ հիփոքրատէս և այլ ուրիշ հին վարպետներ՝ որ շատ վկայութիւններով կը հաստատէին թէ · ա՛ն օրերը՝ յորս սովո՛ր է գալ ճգանքը (կռիզէ)՝ է չորրորդ , կամ եօթներորդ , կամ իններորդ , կամ մետասաներորդ , կամ երեքտասաներորդ , կամ չորեքտասաներորդ , կամ 17 · կամ 21 · կամ 28 · և կամ քառասուն երորդ օրը միջոց չը տըվող տենդին։

Բայց նոր փորձառու բժիշկները՝ հին բժիշկներուն կարծիքները գրեթէ բոլորովին ջրեցին։

Իրաւ որ ինձի ալ աւելի հաւանական կերեւնայ նորերուն կարծիքները՝ քան հիներէն. քանզի ընտո՞ր կարող ենք չիտկէ չիտակ անսըխալ հասկնալ հիւանդին խառնուածքը, ընութը, օդին ազդեցութը, ու տարվան եղանակը. եւլն.

Հին ատենները՝ եւ ինչուան հիմա ալ կը գտնըվին վարպետներ, որոնք հարկաւոր եղած դեղերը իր ատենին չեն բանեցըներ, ինչվան որ ճգանաց օրերը լըման չըլլան նէ.

Գանք որ. Երբոր ասոնք ուղածիդ-պէս կըստանաս՝ ինչ հարկ է այնուհետեւ քուկին լեղի ու դժուարախըմելի դեղերդ տանել կամ խըմելը:

Այն ատենն ալ աւելի շահաւոր կը տեսնըվի ինծի՝ ցուրտ ու թաց օդէն պահպանվիլը, վ̃նասակար կերխումէն ու ազգի ազգի կիրքերէն զգուշանալը. վ̃ զի ան միջոցի ատենը յայտնի կիմացվի հիւանդին կենդանական ուժը չիպակսիլը, եւ վ̃նասակար նիւթերուն յարմար ճամբաներէն դուրս թափվիլը.

Ասոնք ասանկ ըլլայ նէ՝ դուն ալ ու հիւանդդ ալ շատ բախտաւոր կը սեպվիք.

Հապա՝ ուղածիդ ներհակը կատարելու ըլլայ նէ. զոր օրինակ՝ ձգանքը յորմար ճամբաներէն մոլորելու ըլլայ, կամ կենսական ուժը չափէ դուրս տկարացեր է նէ, արդեօք ան ատենը քուկին կարծիքը պարապ չըլլար մի, կամ անբանօրէն համբերելովդ՝ հիւանդիդ մահուանը պատճառ չե՞ս մի ըլլար.

Ուրեմն միշտ ջանալու է (խոչքենընելու է) որ՝ ատեն չի տրվի՛ նոյն միասակար նիւթերուն արուներնուս մէջ մնալու, ու տարածուելու. որոնցմէ կը հետեւին անմիջապէս տենդեր, բորբոքումներ, ջղերու գրգռմունքներ, ու այլ և այլ սոսկալի ծանր նշաններ.

Իսկ եթէ նոյն միասակար նիւթերը արուններուն մէջը տարածուեր են, նայէ՛ որ՝ ափէդ եկածին չափ ժամ մը յառաջ արհեստիդ հնարքովը դուրս նետես, որ նոյն նիւթերը անեփ կամ կիսակատար մնալով՝ հիւանդութը ընտոր որ պէտք է նէ չի տիրէ՛.

Նաև եթէ հարկ ըլլայ տկարացընել կամ զօրացընել, արա՛ այնպէս՝ որ բնութը կուզէ, առանց ձգանաց օրերը համբերելոյ.

## Ձկանաց նշանները։

* . 12 . Նշանք ձկանաց՝ որ կըսենք, կիմացվի հիւանդութե ետքի օրերը գալու նշանները . որ ամէն բժիշկ.քս մեծ փափաքով կըսպասենք ։

Ուստի ասոնցմով ալ աւելի յայտնի կըլլայ բորբոքողական ցաւերը՝ քան ուրիշ տեսակ հիւանդութիւններ ։

Այն քրտինքը ձկանք չի սեպվիր՝ որ սովորաբար կուգայ մէջոց տըվօղ տենդը հեռանալու ժամանակը, և ոչ անոնք՝ որոնք թեթևապէս կուգան նոյն տենդի մէջոցի ատենները . հապա երբ կըսեպվի կատարեալ ձկանք կըսեն նէ . երբոր մէջոց չի տըվօղ տենդերուն (հըմմանէրուն) ետքի օրերը՝ առատ կամ շատ քրտինք, կամ մէզ (ցաւօք Չըրվալը), կամ լուծմունք ըլլայ նէ, կամ քթէն և կամ վարէն թանչի (ծօյաւըլէ) արուն կը փըչին նէ ։

Թէպէտ և նոյն հիւմմաներուն ետքի օրերը եկած փըսխունքը և շատ շողինք գալն ալ ձկանք կըսեպվին, բայց ասոնք ալ շատ սէյրէկ կը պատահին ։

Ձկանքէն առաջ՝ հիւանդը կիմանայ

թեթեւ գող , տաքութիւն , աչքի մթութիւն , պտոյտ գլխոյ , ցնորմունք (սայըգլամաք) , ծարաւութիւն , թմրութիւն , քնախութիւն , անհաւասարութիւն նամղի , ու երբեմն ալ՝ մարելիք :

Ասոնք ըլլալէն ետեւ՝ հիւանդը կըսկըսէ շատ և հոտած քրտինք թափել , և անմիջապէս ցամաք ջրվաթն ալ պղտորիլ ու շատնալ :

Երբեմն ալ կըլլայ թքով կամ շողլնքով և կամ պալղամով , որոնք կը քակվին շատ և հեշտ :

Ասոնց մէկին մէկը կըլլայ , ու քանի մը օրէն ետեւ կանցնի կերթայ · երբեմն ալ կը քըշէ կերթայ՝ մինչվան որ հիւանդը կատարեալ առողջութիւն ստանայ : Ահա այս է քուլիղի ընէուֆէ՛թթա ըսված ձգանքը :

Այս միջոցի մէջերը նամղը կընետէ ալէծածան (ծնգօշէ) , թոյլ , ու լայնարձակ · որ բժշկական ոճով՝ դատողական բազկերակ (բօլու ժուէրէ՛նէ) կըսվի :

Քրտինքը շատ ու շոգիաւոր ըլլալուն համար , բազկին կաշին թաց ու կակուղ ըլլալէն 'ի զատ՝ փորն ալ պինդ-

(խապղ) կըլլայ, ու ցամաք ջրվաթն ալ քիչ։

Եթէ ցամաք ջրվաթը յորդառատ կամ շատ քաշվելու ըլլայ նէ՝ որ կըսվի միզարդատ (օռինա ժուէրիէժօ), ան ատենը քրտինքը կը քիչնայ, փորը կը պինդնայ, և ցամաք ջրվաթին տակը նստած մրրուրը (ֆօչյան) ճերմկնալէն ՚ի զատ՝ թեթև ալ կըլլայ, և երկան ատեն ալ կը քըշէ կերթայ։

Մաղձային կամ ստամոքսային (Ճէպ- պուէ չաւընուէժէ) տենդերին ձգանքը շատ անգամ փորքըշուքով ըլլալուն համար՝ փորին մէջը գտնըված քամիները գոռալով՝ ու ճըղմըղ ձայներ հանելով, թեթև ցաւեր պատճառելով՝ վերեն կամ վարեն դուրս ելլելու համար անդադար կը պըտըտին։

Այս միջոցի մէջերը նապզը կը նետէ շատ ուժով, բայց անհաւասար, ու երբեմն ալ միջոց տալով։

Անոնցմէ ետև կըսկսէ փորը քըշել, ու դուրս նետել այն նիւթերը՝ որոնք որ պատրաստ էին ուրիշ ճամբաներէն դուրս ելլելու։

Գուշակութիւն Ելից Ճգնաժամաց։

* . 13 . Այն նշանները մեզի շատ վախ կամ յուսահատութիւն չեն բերեր, որոնք որ սուր տենդերուն սկիզբները երևան կելլեն՝ ու ետքը աներևոյթ կըլլան։

Հապա երբ կը վախնանք կամ կը յուսահատինք կըսես նէ, երբոր աս նշանները երկըննալէն ՚ի զատ՝ որ օրէ ալ՝ ա՛լ աւելի գէշ գէշ նշաններ կը յաջորդեն։

Որ օրինակ՝ կենսական ուժին պակսութիւնը, անդամներու տկարութիւնը, անհանգստութիւնը, թմրութիւնը, քնափութիւնը, ցաւերուն սաստկութիւնը, աչքերուն կարմրութիւնը, արցունքին շատութիւնը, խենթումէնթ երազատեսութիւնը, ցնորումը, լեզուին չորութիւնը ու սևութիւնը, և դողդողալը, դժուար շունչ առնել տալը, կաշին ցամաքութիւնը (Փրիէօ-ֆեսիօն), հևալը, կանաչ կամ սև փսխելը, ստամոքսին բան մը չընդունելը, յօդուածներուն ցրտութիւնը, քրտինքին կըպչոտութիւնը ու ցրտութիւնը, աղբին ու ցամաք ջրվաթին ակամայ երթալը, փորին կերկերմունքը, գէշ ու հոտած հիւթեր

փորէն ելլալը , ջղացնցութիւնը , կաշիին վրայօք կապուտ կամ սև գեղերը , որ է նշան փտախտի կամ կերցաւի ( կանկրէ-նա ) , հեծկլտանքը , Թանչացաւը ( ծոյա-ռէլը ) , ձգանքներուն գաղտնի շարժ-մունքները ( սու-սու-լթիս թէն-տի-նում ) , մկանունքներուն ակամայ շարժիլը ( քօն-վու-լսիօնէ ) , անկողինէն վար սահիլը , ծածկոցին պըղըքտելը , շունչին ցրտու-թիւնը , մանաւանդ անոնց՝ որոնց ընու-թիւննին փափուկ կըլլայ , կամ ջղի , կամ նորածին ( լօհու-սայ ) , կամ ծեր , կամ կազմուածքնին անյարմար , կամ զգացո-ղական զօրութիւննին շատ , և կամ խառ-նուածքնին տարբեր կըլլան ։

Թէպէտ և երբոր աս նշաններուն մէկ կամ երկու մասը՝ մէկ հիւանդի մը վրայ տեսնալու ըլլանք , հիւանդը շատ փորձանքի մէջ ինկած կըսեպվի ․ բայց տակաւին ( թահա ) յոյսը պիտի չի կտրես ․ վ՞ն զի շատ անգամ պատահած կայ որ՝ ըսած նշաններուս երեք մասը ամբողջ երևնալէն ետև՝ հիւանդը կենէ ողէկցեր է ։

Բայց երբոր աս զարհուրելի նշաննե

րուն ամէնը մէկ տեղ՝ կամ մէկ զմէկու ետեւէ յաջորդելու ըլլանն է՝ ան ատենը յոյսդ կտրէ ան հիւանդէն ։

—

Դուրսման փանելու հան ըուըույլնելու հերդը։

* ·14· Սատարեալ բժիշկը՝ ամէնէն առաջ պէ՛տք է՝ որ տենդերուն գըլխաւոր պատճառները (*8·) աղէկ մը քննէ ու տեղեկանայ, որ անոնցմէ շուտով մը ետ քաշկեցընել տայ։

Ետքը՝ հիւանդին տարիքը, բնութ̃ը, խառնուածքը, վրայէն անցած գացածցաւերը, ու ժառանգական ախտ ունենալը հարձափորձով աղէկ մը պիտի հասկընայ, ու էն ետքը անոր բնութ̃ը յարմար հնարքներ ու դեղեր պատրաստէ։

Ամենահարկաւոր հնարք ու դեղ տենդերուն և ուրիշ տեսակ ախտերուն դէմ՝ է՛ բարեխառնութ̃ը, որ է ըսել չափաւորութ̃ի, ու կանոնաւոր գործածութ̃ի դեղորէից։

Չափէն հարկաւոր բան չիկայ ամէն բանի մէջ․ ասոր նման հասկըցիր ամէն բանին վրայ՝ որ իրենց չափ ունին։

Ուրեմն հնարք և դեղ գործ ածելն ալ իրենց չափէն դուրս պիտի չըլլան · չէ՛ նէ՝ աղէկ ընելու տեղը՝ գէշ կընենք , օգուտ ընելու տեղը՝ զէն կընենք ։

Օրինակի համար · եթէ տենդ ծնօղ նիւթերը արունի մէջէն կամ ուրիշ անդամներուն մէջէն չի հասած կամ դուրս չի նետուած՝ գրգռիչ (էքսիթանթ) դեղեր տրվին նէ · որպիսի են՝ սէրբէնթարիա վիրճինիանան , վալէրիանան , քինաքինան , հին գինին , միսկը , քափուրը , եւն , եւն · կըլլայ բարեխառնութե̃ տեղը՝ մէտասախառնութի̃ , տաքութի̃ը մարելու տեղը՝ կըլլայ բորբոքողականութիւն , ջղերուն կամ մկանունքներուն գրգռումունքները խաղաղցընելու տեղը՝ կըլլայ ա՛լ աւելի գրգռմունքներ , կենդանական ուժը զօրացընելու տեղը՝ կըլլայ ա՛լ աւելի տկարութի̃ կամ անզօրութի̃ , որով ներսի կարգադրութի̃ը ու զուգահաւասարութիւնն ալ ինչպէս որ պէ՛տք է նէ կաւրըվին ։

Քանզի ինչպէս որ մսեղէն կամ ուրիշ իւղալի ու անուշ կերակուրները հիւանդին փոխանակ ուժ տալու տեղը՝

ա՛լաւելն կը պակսեցընեն ու կը վնասեն, և շատ անգամ ալ բոլորովին կը հատցընեն մարդուս կեանքը. Նմանապէս՝ ուժ ըլող դեղերը անանկ տաքուն՛ առենը՝ գործածելու ըլլովին նէ՝ շատ կերպով կը վնասեն հիւանդին կեանքին.

Անոր համար՝ երբոր կը տեսնանք որ՝ հիւանդին նամը կըլլայ լեցուն՝ արագ, երբեմն ևս կարկամ՝ մանր, գլխին մէջ-կին ու յօդուածներուն ցաւերը շատ, տաքութ՟ը չափէ դուրս, սիրտնեղութիւն, ևն. այն առենը՝ լոկ ապուրը (ապաճէ չօրպան) ևս կը կարճեցընենք. հիւանդին պառկած խուցին օդը ստէպ ստէպ կը նորոգենք, եթէ քրտնած ըլլայ նէ՝ հագուստները շուտով մը կը փոխենք, խիտիղային կեօրէ չափաւոր արուն ալ կը հանենք, ու տղրուկ ալ կը փակցընենք, փըսխողական լուծողական ու քրտնաբեր դեղեր կը բանեցընենք, հասարակ ջրի տեղ՝ հովացուցիչ ու միզաբեր արմատներու ջրեր կը խըմցընենք, ամէն իրիկուն կակղցընօղ ու հովացընօղ դեղերով գրէխ (հոգնայ) ընել կուտանք, չորս չորս ժամ միջոց տալով՝ ոտքերուն

տակը հաստատ լաթատի (սէնաբիզմօ) դը-
նել կուտանք, խիստ հարկաւորութե-
անը՝ քանի մը տեղ խարանաղել (վէ-
շիքաթօրիօ) բանալ կուտանք, և ամէն
տեսակ կիրքերէն՝ ու ցուրտ և խոնաւ
օդերէն հեռու պահել կուտանք։

Ա՛յս է այս քօնդրաստիմօլանթէ
կամ տէպօլիթանթէ ըսածը, որուն
մեք մեր լեզուով տկարացուցիչ կամ
թուլացուցիչ կըսենք։

Գանք որ՝ երբոր ատոնցմով, կամ
ատոնց նման թուլացուցիչ ու հովացու-
ցիչ հնարքներ, ու դեղեր երկան ատեն
կամ չափէ դուրս բանեցընելով հիւան-
դը ուժէն խիստ ինկնալու ըլլայ նէ՝ որ
կը պատահի շատ անգամ, ան ատենը
պէտք է որ՝ վերը ըսած ուժ տըւող (ռինֆ-
ֆօրցանթէ) դեղերը գործ ածվին, ինչպէս
են՝ սէրբէնթարիա վիրճինիանա, հին
գինին, քինաքինան, միսկը. եւն։

—

Ջղանաց նշանները չափաւորելու վրայ։

* · 15 · Մենք շինօղ նիւթերուն
արդիւնքներէն շատ անգամ տենդերուն

պէս՝ որ օրէ կաճին իրենց նշաններն ալ, և շատ հեղ ալ նոր ձևերով երևան կելլեն, անանկ որ՝ ինչվան փորձառու բժիշկները ևս կը զարմանան.

Ասոր նման հասկըցիր նաև ուրիշ տեսակ հիւանդութեանց նշաններուն վրայ, որ շատ հարկաւոր է ամենէն առաջ անոնց գլխաւոր պատճառներուն վրայօք աղէկ քննութի մտանել, ու ետքէն երևելի նշաններուն դեղ պատրաստել չափաւորելու համար՝ որ ստուգապէս կատարելութի ըլլի. չէ՛ նէ՝ մէկ ճամբան կամ մէկ պարագայն պակաս եղածին պէս՝ անկատարութի կըլլի, և ո՛չ կատարելութի. այս է փիլիսոփային ըսածը ‖ *.
« կատարելութին ամէն լինի յամբողջ
« պատճառէ. իսկ անկատարութին
« յի՛նչ և իցէ պակասութէ ‖.

---

## Ախտաբեր նիւթերուն դուրս ելլելու պատրաստութիւնները.

* . 16 . Պենդ չինող նիւթերուն պատրաստութիւնը անանկ զարմանալի բան մընէ՝ որ մէյ մը մարդուս առողջ

հիւթերուն մէջէն զատուելու ըլլայ նէ , այնուհետեւ մէյ մը նալ չեն կրնար խառնըլիլ մէկ զմէկու հետ ։

Բայց բնութիւնին ուժովը , և դեղերուն զօրութիւնովը միայն կրնան տեղերնին փոխել , որ և բժշկական ոճով մէթասթասի կըսվի , կամ ուրիշ ճամբաներէն դուրս ելլեր , որ կըսեն՝ քրիզի , որ է նշան ախտաբեր նիւթերուն ետքի բարև տալը ։

—

## Սոր բժշկըճրճներուն դարմանը ։

※ · 17 · Սոր ըռըռթօղ հիւանդը ան միջոցի մէջերը պէտք է որ՝ ամէն վը-նասակար կերխումէն , ցուրտ ու թաց օդերէն ու հովերէն , և տեսակ տեսակ կիրքերէն զգուշանալ ։

Տեղն մը օդափոխութե համար գըտ-նըված երկրին ազարակը կամ գեղը երթայ , ուր որ օդը և ջուրը թեթև և առողջարար է ։

Հիւանդը՝ զուարճախօս ընկերներու հետ ատ ժամանակ մի պիտի նստի ելլէ , և օրը քանի մը անգամ կէս կամ մէկ

ժամու չափ պարտէզներու մէջ կամ դաշտավայր տեղեր պիտի պըտըտին , անանկ կամաց որ՝ հիւանդը չի հոգնի ամենեւին ։

Հիւանդին կերակուրը առէն մը պիտի ըլլայ սքոռբլիտ կամ Թէքիր կամ ըզմարիտ կամ կարմրախայտ (ալա պալըգը) ձուկերուն խաշածը կամ ըսկառան , և անոնք ալ քիչ քիչ և ստէպ ստէպ պիտի ուտէ՝ որ հեշտեաւ մարսէ ։

Օգտակար է նաև հին ու աղնիւ գինին , եթէ մասնաչափ՝ կերակուրի առէնը խմելու ըլլայ նէ , որով քիչ քիչ ստամոքսը երթայ զօրանայ ։

—

## Տենդին կարգերը կամ տեսակները ։

* · 18 · Նշանքները ծանուցանելէն ետքը , գանք հիմա տեղն 'ի տեղը հասկըցընելու՝ թէ քանի՞ կարգ կամ տեսակ տենդ կայ , որոնց ոմանք են՝ ընդհատ կամ միջոց տըվող ( ֆէպրէ-ինթէրմիթթէնթէ ) · և ոմանք են անընդհատ կամ միջոց չըտըվօղ ( ֆէպպրէ քօնթինուա ) ։

Ասոնցմով , և այլ ուրիշ ինչ որ ասկից

երբոր 'ի մասնաւորի պիտի գրենք , կի-
մանաս տենդին պէսպէսութիւնը , և փո-
փոխականութիւնը , և անով ալ կիմանաս՝
թէ երբեմն սկիզբները ինչպէս թեթև
և անվնաս նշաններով կըսկըսեն , ու-
երբոր ընտիր անուներ ցուեր կը դառ-
նան կըլլան ։

# ԿԱՐԳ ԱՌԱՋԻՆ

Պարբերական միջոց ունեցող օրինաւոր տենդի վրայ · որուն տաճկերէն գանուն խուզէ նէօ-պէթլի ըսըտմա կըսուի:

## Յօդուած · Է ·

### Սահմանը ·

* · 19 · Այս տեսակ տենդի հետ մէկ տեղ շատ բառօսխումներ կըլլայ, որ կը դառնան որոշեալ ատենի և միջոցի մը մէջ՝ քիչ կամ շատ ժամանակ ազատ թողլով: Անոր համար ասոր պարբերական միջոց ունեցող օրինաւոր տենդ ըսուեցաւ:

Աս բառօսխումները անցնելէն ետքը՝ խիստ ուժով եղած տաքութիւնը թէպէտ կանցնի · բայց տկարութիւնը, նամըլին բարակ տաքութիւնը, անախորժութիւնը ([illegible]) անպակաս կը մնայ:

Ամէն բժիշկ թէպէտ միջոց ունեցող տենդը հեշտ կը ճանչնայ, քան միջոց չը

տըվօղ տենդէ · բայց շատ տեսակ պարբերական տենդոտ ( * ·6· ) հիւանդութիւններ ըլլալուն համար՝ դժվար կըրնայ հասկընալ ասալ, որովհետեւ ասոր հետ մէկ տեղ չեն գտնըվիր լման ան նշանները՝ որոնք որ յիշեցինք ( * ·3· ) Թուանշանի մէջ։

Գանք որ՝ երբոր միջոց տըվօղ տենդի առջի պատճառը անցաւերուն մէկին մէկը ըլլայ, որոնք որ պիտի գրվի ( * ·76· ) Թուանշանին մէջ · ան ատենը՝ օրինաւոր անհարազատ կամ երկրորդական միջոց տըվօղ տենդ կըսենք։

Նոր մէկ ուրիշ տեսակն ալ կայ, որ միջոց չը տըվօղ տենդերուն պէս ինչվան հիւանդութեան ետքը՝ տաքութիւնը միջոց չի տար, կամ տալու ըլլայ ալ նէ՝ քիչ մը ատեն անցնելէն ետեւ՝ նորէն կը դառնայ կու գայ տաքութիւնը ( Բառ[illegible]- [illegible] ) · անոր համար աս ալ կը դըրվի միջոց տըվօղ տենդերուն կարգը, ըստ որում ասոր դեղն ալ՝ անոնց դեղերուն պէս է։

## Նշանները։

* · 20 · Այս միջոց տըվող պարբերական օրինաւոր տենդը՝ երբեմն կը ճանչցըվի ( * · 3 · ) նշաններէն, և երբեմն ալ յանկարծօրէն վրայ գալէն, թէ որ լա՛ռվա ըսված տենդն ալ ասոր հետ մէկ տեղ չըլլայնէ։

Այ՛ն որ՝ սովորաբար առաջ ցրտութիը կուգայ, ու ետքը տաքութիը, ու էն ետքը քրտինքը · որով կը լըմննայ պառօքսիզմն։

Այ՛ն որ՝ ասոր ներհակը կըլլայ · օր՝ տաքութիը առաջ կուգայ, ու ետքէն ցրտութիւնը · ևն։

Ասոր ասանկ ըլլալուն պատճառը ուրիշ բան չէ՛ · բայց եթէ այն՝ որ հիւանդին խառնուածքը միւս հիւանդներուն պէս չէ՛, հապա՝ տարբեր է։

Այ՛ն ալ որ՝ ամէնևին ցրտութի չեկած՝ տաքութիը կըսկսէ, որ է՛ նշան ուրիշ տեսակ տենդի։

Ասոնք ասանկ ըլլալուն համար՝ ասոնց որն որ ըլլայնէ ըլլայ, օր՝ թէ ըմրտամ և թէ հիւմնիայ, մէկ անգամմը

բռնելով շատ դժվար կըլլայ ճանչնա-
լը , մանաւանդ էֆէմէրայ (* • 84 •)
ըսուած տենդը ։

Ուրեմն խելացիութիւն չէ առջի ան-
գամ բռնածին պէս դեղ գործածել․
հապա՝ պէտք է սպասել ինչվան երկ-
րորդ կամ երրորդ անգամին , և անկից
ետև դեղ տալ ըսկսել , որով ըլլաս ա-
պահով և անկասկած ։

Այս տենդերուն մէկ երևելի նշանն
ալ ցամաք ջրվաթը ըլլալը անկից յայտ-
նի է որ՝ երբոր հիւանդութեն առենը՝
ցրտութիւնը երկան առեն կամ տաքութիւնը
կարճ կամ քիչ առեն քըշելու ըլլայ նէ ,
ան միջոցի առենը նոյն ջրվաթի տակը
խել մը աղիւսագոյն (Բու–ըլտօյէ ֆոյն) մը-
րուրներ կը նստի , որ է նշան ճգնանաց
կամ առողջութեն ։

—

## Ծանօթութիւնը ։

* • 21 • Երբոր տենդոտը ջղերու
հիւանդութի , կամ արունի ապակա-
նութի , կամ յօդուածացաւութի , կամ
որքիուն (Բէճէքէ) շինօղ հիւթեր շատ

ունենայ․ Երբոր տենդոտը խըցանքներ, կամ աղիքներուն կամ ուրիշ ընդերքներուն պինդ ուռեցքներ, կամ արգանդի ախտեր, կամ գրգռմունքներ, կամ ախոնդանք (սեւտայ), կամ փտուն շինող նիւթեր ունենալու ըլլայնէ, անկարելի՛ կըլլայ որ՝ քնաքնան կամ սօլֆաթօ տի քինինօն կարող ըլլայ կտրելու կամ առողջացընելու ։

Անոր համար սաստիկ ախտախառն տենդերը կըզանազանին միջոց տըւող տենդերէն ։

Վասն զի անոնք՝ որոնք լոկ կամ՝ անխա՛ռն տենդ կըսեպլին, մինակ քնաքնայով կըռըտնան կատարելապէս ։

Իսկ անոնք՝ որոնք որ ախտախա՛ռն են, չե՛ն ըռըտնար ․ ինչվան որ իրենց առջի ցաւերը կարգով չըռըտնաննէ ։

Ասոնց վրայ շա՛տ քիչելու բաներ ալ կան, որոնք կարգաւ պիտի գրուին իրենց տեղերը ։

### Պատճառները։

※ · 22 · Պարբերական միջոց ըլլօղ օրինաւոր տենդի պատճառները գրեթէ մի և նոյն են (※ · 7 ·)։

Բայց բուն պատճառները՝ գարնան ու աշնան եղանակները են, տաք ու դէշ կամ թաց կլիմաները, թաց ու ծանր օդը, ճահիճներուն (չէօլէրուն) արտաշնչութիւնը կամ շոգիները, անձին տկարութիւնը, տարաժամ (վագըթսըզ) լուծօղ դեղ գործածելը կամ արիւն հանելը, հիւանդութենէն աղէկ մը չըռըլցած ափեղցփեղ կերխումը, չափէ դուրս հոգնիլը, ամսական պարտքեր չվճարելը, վերջապէս այն ամ կիրքերը՝ որոնք որ կը գրգռեն ջղերնուս դիրքերը։

—

### Բաժանումը։

※ · 23 · Միջոց ըլլօղ տենդերին շատ տեսակները ըլլալուն համար՝ վարպետները զանոնք զատ զատ բաժնելէն՚ի զատ՝ ամենուն ալ յատուկ անուններ դրին որ՝ կարդացողը հեշտ ու շուտ հասկընայ։

Թէպէտ ասոնց մէջէն ոմանք են օրինաւոր կամ կանոնաւոր, ոմանք՝ անկանոն, ոմանք՝ մոլորած, ոմանք՝ հասարակ, և ոմանք ալ ուրիշ ախտի հետ մէկտեղ խառնուած. բայց ընդհանրապէս երկու տեսակ են բաժնուած, որոնց առջի տեսակին մէջ ըլլօղները կըսվին՝ ամէնօրեայ (քուօթիտիա՛նէ կամ քօթիտիա՛նէ). երեքօրեայ՝ (թէռցիա՛նէ). չորեքօրեայ՝ (քուարթա՛նէ), հինգօրեայ՝ (քուինթա՛նէ)։

Դարձեալ՝ ամէնօրեայ կրկնապատիկ՝ (քուօթիտիա՛նէ դուպլէ՛քս). երեքօրեայ կրկնապատիկ՝ (թէռցիա՛նէ դուպլէ՛քս). չորսօրեայ կրկնապատիկ՝ (քուարթա՛նէ դուպլէ՛քս). հինգօրեայ կրկնապատիկ՝ (քուինթա՛նէ դուպլէ՛քս)։

Դարձեալ՝ ամէնօրեայ եռապատիկ՝ (քուօթիտիա՛նէ տրիպլիքա՛թէ). երեքօրեայ եռապատիկ՝ (թէռցիա՛նէ տրիպլիքա՛թէ). չորսօրեայ եռապատիկ՝ (քուարթա՛նէ տրիպլիքա՛թէ). հինգօրեայ եռապատիկ՝ (քուինթա՛նէ տրիպլիքա՛թէ)։

Երկրորդ՝ տեսակին մէջ ըլլօղ տենդերը կըսվին՝ ամառնային (վէռնա՛լէ).

աշնանային՝ ([illegible]) · տարեկան՝ ([illegible]) · պարզիչ՝ ([illegible]) · ապականիչ՝ ([illegible]) · վտանգաւոր՝ ([illegible]) · բարեգոյն՝ ([illegible]) ։

Այս երկրորդ տեսակին կը վերաբերին նաև տեղական՝ ([illegible]) · ազգային ([illegible]) · աղտեղային ([illegible]) ։

Այս երկու տեսակ տենդը մէկ տեղ բերինք, ինչու որ՝ երկու տեսակին դեղն ալ մէկ է, այսինքն՝ քինաքինան կամ սուլֆաթը տը քինինօն. և ասոնց տաքութիւնը և ուրիշ երևոյթներն ալ մէկ զմէկէ քիչ տարբերութիւն ունին, որ հիմա մէկիկ մէկիկ կարդալով հասկընանք պիտոր։

Մենօրեայ տենդը՝ անանկ երևելի հիւանդութիւն մը նէ որ՝ բաւօսսիզմին կամ տաքութիւնը կըսկսէ, և ինչվան իրիկուն մէկ տիւղիւէ կը քըշէ կերթայ։

Նու այս ան տենդն է՝ որ միշտ կը պըտըտի բարակ տենդերուն ([illegible]) և Թոքախտի ([illegible]) հետ։

Այս տենդը շատ անգամ ալ կը տարբերի միջոց տըվօղ օրինաւոր տենդէն, և կը յարմարի երեքօրեայ կըրկնապա-

տիկ տենդի հետ։

Իրաւ որ՝ աս տենդը անանկ մէկ խաւըն ցաւ մ՚ընէ, որ խելացի բժիշկները եւ շատ անգամ կը տարակուսին թէ՝ ո՞ր տենդի տակը պէտք է դնել․ մի՞՝ ամէնօրվանի՞ն, թէ կրկնապատիկ երեքօրվանին․

Անոր համար աս տենդը կրկնապատիկ երեքօրեայ տենդէն՝ ուրիշ բանիւ չէս կրնար զատել, եթէ ո՛չ՝ տաքութ̃իը գալու ատենէն․ որովհետեւ կրկնապատիկ երեքօրվանին տաքութ̃իը ( բառօքսիզմ ) միշտ կէս օրվան ատենը, կամ իրիկվան դէմ կըսկսէ գալ։ Իսկ ամէնօրվանը կուգայ առտըները, ինչպէս որ՝ վերն ալ ծանուցինք։

Երեքօրեայ տենդը ան է որ՝ օր մը կը բռնէ, ու օր մը միջոց կուտայ․ անոր համար՝ հիւանդը օր մը աղէ՛կ կըլլայ, ու օր մը գէշ։

Բայց երբեմն ալ տեսայ որ՝ առտըվանց բռնեց՝ ու քըշեց ինչվան 8 կամ 10 ժամ անդադար։

Աս տենդը՝ ամէն տեսակ միջոց տըվող տենդերէն շատ կը պատահի, որ սովորաբար կէս օրէն ետեւ կըսկսէ․

որուն տաքութիւնը՝ երբեմն թեթև կըլլայ , ու երբեմն ծանր։

Այս տենդը ամէն տեսակ միջոց տուվօղ տենդերէն հեշտ կը դառնայ կըլլայ բէւնիչեօղա ինթէրմիթթէնթէ , կամ էբիտէմիքա . և ինք իրմէն ալ յայտնի է թէ՝ ինչպիսի դիւրադարձ և անկայուն ախտ է .

Չորսօրեայ տենդը ան է որ՝ ընդհանրապէս չորս օրը անգամ մը կը բըռնէ , և ան ալ իրիկվան դէմ. մանաւանդ աշնան ատենը . որուն ցրտութիւնը ու դողը շատ ուժով ըլլալէն 'ի զատ՝ շատ ալ երկան կը քըշէ , նմանապէս տաքութիւնն ալ՝որ սովոր է գալ ցրտուէն ետև։

Ասոր տրմարը ընդերքներուն մէջէն ըլլալուն համար , բառօսակիրմօն հեռանայ ալ նէ՝ տակաւին չի հանգիստանար հիւանդը։

Աստանկ կը քըշէ կերթայ , ինչվան որ՝ հիւանդը ըստանայ կատարեալ առողջութիւն։

Հինգօրեայ կըսվի ան տենդը՝ որ հինգ օրը անգամ մը կը դառնայ կուգայ՝ երեք օր միջոց տալէն ետև։

Այս հաշիւին (հէսապէն) ամէն մարդ չի կրնար աղէկ մը տեղեկանալ, երբոր տեղեկութիւն չունենար սա տենդին գընացքէն. անոր համար մեծ վարպետները ևս շատ անգամ կը խաբուին։

Այս տենդը շատ ցանցառակի (սէյրէկ) երևնալուն համար, ես իմ կենացս մէջ չորս անգամ և եթ տեսած եմ։

Ամէնօրեայ կրկնապատիկ կըսուի ան տենդը՝ որ ամէն օր առաւօտները կանուխ երկու անգամ կուգայ՝ մէկզմէկէ բաւական միջոց տալով։

Այս ալ կենացս մէջ երեք անգամ և եթ տեսեր եմ, ու չափէ դուրս քինա քինայով աղէկցուցեր եմ։

Երեքօրեայ կրկնապատիկ կըսուի ան տենդը որ՝ առտըվանց կըսկսէ՝ և ինչվան իրիկուն կը քըշէ կերթայ. առջի բառօքսիզմօն՝ երկրորդին, և երրորդը՝ չորրորդին յարմարելով։

Այս տեսակ տենդը՝ թէպէտ ամէն ժամանակ անպակաս կըլլայ. բայց աշնան առենը խիստ կը շատնայ։

Երեքօրեայ եռապատիկ կըսուի ան տենդը՝ որ բառօքսիզմօն երկու օրը մէկ

մը գալու տեղը՝ երկու անգամ կուգայ մէկ զմէկէ .քիչ ատեն միջոց տալով․ որով հիւանդը չէ՛ թէ միայն չափէ դուրս կը չարչարուի․ հապա՝ շա՛տ ատեն ալ կը հետեւի բարակ տենդի , որ այն ինքն է ինճէ հաստալըք։

Այս տար մէկ ուրիշ տեսակն ալ, որ բառօսմիզմօն վերինին պէս երկու օրը մէկ անգամմը կուգայ․ բայց առջի ու երրորդ օրը երկերկու հեղ կուգայ բառօսմիզմօն մէկ զմէկու ետեւէ․ իսկ երկրորդ և չորրորդ անգամին մէկ մէկ հեղ և եթ․ որուն իտալացիք իրենց լեզուով կըսեն Թէռձանա Թուփլիքաթա․ մե՛ր տենդ երեքօրեայ եռապատիկ։

Չորսօրեայ կրկնապատիկ կըսուի այն տենդը որ՝ բառօսմիզմօն ամէն չորս օրը երկու անգամ կը դառնայ կուգայ մէկզմէկու ետեւէ․ և առջի տենդին գալը կը յարմարի չորրորդ անգամին․ իսկ երկրորդն ալ հինգերորդին։

Գտանք հիմա չորսօրեայ եռապատիկ տենդին․ տար ընտրո՞ր գալը ու երթալը՝ աչքով չի տեսնելուս համար՝ չե՛մ կըրնար բան մը գրել։

Բայց երկու անգամ պատահեցաւ ինծի վերին Եգիպտոս տեսակ մը տենդ՝ որ ամէն վեց օրը անգամ մը կը բռնէր, և ամէն բռնած օրը՝ երեք անգամ կու գար բառօսսիզմօն մէկ զմէկու ետևէ շատ ուժով, և երկան ատեն քըշելով։ Ան ետքը աֆիօնախառն սօլֆաթօ տի քինինօյով բուբոցաւ կատարելապէս։

Գարնանային կըսվի ան տենդը՝ որ կը տարբերի աշնանային տենդէն, և կը հաղորդակցի միջոց չտըվօղ տենդի հետ։ Ասոր բորբոքումը թեթև ու գաղտուկ ըլլալուն համար՝ ուժ տըվօղ կամ գրգռիչ դեղեր տըվելու ըլլըվինէ՝ հիւանդը անմիջապէս կելնի կերպ կերպ գէշ հիւանդութիւններու մէջ. մանաւանդ՝ քնաքնա տըրվինէ։

Ասոր շահաւոր դեղերը՝ հովացուցիչ, բացողական, խիստ թեթև լուծողականներն են. մանաւանդ խմորիղային կեօրէ առուն հանելն է։

Ասոնք ամէնը ընելէն ետև՝ կենէ տենդը գալու ըլլայ նէ. ան ատենը կրնաս գործ ածել սօլֆաթօ տի.քինինօն կամ քնաքնան։

Աս տենդը՝ աւելի վնաս կրնայ հասցընել անոնց՝ որոնց խառնուածքնին ընդունակութի ունին նուրբ կամ բարակ տենդի, կամ Թոքացաւութե (ճիյէր բօզուգլուղու)։

Աս սովորաբար կըսկսի փետրվարէն կամ մարտէն՝ ու կը քըշէ ինչվան 'ի յունիս, եթէ յարմար դեղեր չափով ու ատենով չի տըրվին նէ։

Աշնանային կըլլայ այն տենդը՝ որ սովորաբար կըսկսի յուլիսէն, և կը քըշէ կերթայ ինչվան 'ի յունվար. որուն շատը չորսօրեայ կամ երեքօրեայ տենդի ցեղէն է։

Ասանկ ատենվայ տենդերուն շատը փոխադրական (պուլաշըգ) ըլլալնուն՝ շուտով ու դիւրաւ կը փոխվին մարդիկ. մանաւանդ անոնք՝ որոնք որ բնութը մաղձոտ են և կրակոտ։

Երբեմն ասանկ բնութե տէր ըլլող մարդոց շատե՛րն ալ կը փոխվին կըլլան արունախառն փորըքըշուք (գանլը իչ սիւրմէ) հիւմմայ, փտախտ, վտանգաւոր տենդ (քէօթիւ սըթմա), և այլ ուրիշ ծանր հիւանդութիւններ։

Մերջանկէս ծանր ու մանձաւներ կըլ-լայ աս ատենվայ տենդերը, երբոր տեն-դոտը քնափութի, անդամագօսութի, շնչարգելութի, մաղձօթափութի, ջղա-ցնցութի կունենայ:

Նոյնք սաստիկ ըլլան նէ, հապա՝ ըն-տո՞ր կըլլայ ան տենդոտը՝ որ կը բնակի տաք ու լճոտ (պալուգլըը) երկիրները:

Նոյնցմէ 'ի զատ՝ կայ նաև լաուվաթէ ինթէռմիթթէնթէ, թօռլիքէ, և այլ ուրիշ ազգ. տենդեր, որոնք՝ 3 · 5 · 6 · 7 · 8 · ամիսը և տարին անգամմը կը բռնէ, և երկան ատեն ալ կը քըշէ · բայց սաստկ-ները խիստ ցանցառակի երևան կելլեն, և կը գտանին միջոց տըվօղ տենդերուն կարգը · որոնց թէ կառավարութիները, և թէ դեղերը անոնց հետ մէկ են:

Նզգային տենդը՝ կը գտանայ կըլլայ միջոց տըվօղ տենդ, երբոր տենդոտը կը բնակի թաց՝ տաք՝ լճոտ, ու ծանր կլիմայոտ երկիրներ:

Նոյնց շատն ալ կը դառնան կըլլան փոխադրական ու աղտոտ ցաւեր, ոպի են՝ ծաղիկը փորքըշուքը, և սոնց նման ուրիշ տեսակ ցաւեր, որոնց էն ետքը

կ՚ընէ կը դառնան կըլլան կամ չորսօրեայ կամ երեքօրեայ և կամ կրկնապատիկ երեքօրեայ տենդեր, որոնց բառօսախղմօներն ալ շատ երկան ատեն կը քըշեն, և էն եաքըն ալ լոկ քինաքինան կամ սօլֆաթօ տիքինինօն շատ գործածելով կաղատին:

—

## Պաուշակուէ ելէց դէջոյ տըվօղ տենդէց:

* · 24 · Ստաարակօրէն մէջոց տըվօղ տենդերուն երկննալը կամ հիննալը՝ պատճառ կըլլան ախտադնութեան (ժաժէրբէօ), մարսողական և կենսական ուժին պակասութե․ որոնցմէ կը ծագի խըցանքներ (օպըստրուցիօնէ), մանաւանդ լերդի, մանաց, փայծեղան, և որովայնի:

Ասոնցմէ կը յառաջանայ նաև ջրգողութի, էտէմա ըսված ուռեցքը, շնչարգելութի, դալուկն (իքթէրօ), ջղային հիւանդութիւններ, անդամալուծութի, զգայական երանկներուն թուլութիւն, թէլլա չէլլուլարէ ըսված գործիքներուն ավրելութի, բարակ տաքութի,

կասկածոտ հազ, յօդուածներուն դող-դողմունք ու ցաւ, ջղացնցութի՛ւն, մի-զարգելութի՛ւն, փքախտութի՛ւն, երբեմն ալ խլութի՛ւն կամ կուրութի՛ւն:

Երբեմն բերնին մէջը կամ պըռ-կունքներուն վրայ փոքրիկ փամփուշտ-ներ կամ խոցեր դուրս կուտան. ան-տենը աղէկ կը հասկըցուի որ՝ տենդը պիտի դադրի:

Ամառնային՝ ու աշնանային միջոց ըլ-լօղ տենդերը՝ ա՛յնքան վտանգաւոր հի-ւանդութիւններ չե՛ն պատճառեր՝ ո՛րքան գարնանայինները, մանաւանդ՝ ատենով ու չափով ալ քինաքինա կամ սօլֆաթօ տի-քինինօ գործածուի նէ:

Քանզի որովհետեւ առնիլ սօլֆաթօ տի-քինինօ՛ն կամ քինաքինա՛ն վերի յիշած ցաւերը պատճառօղ կամ շինօղ տաք ու կծու հիւթերը կը փըճացընէ:

Աս տասնկ ըլլալէն ետեւ՝ ո՛ւրկից կըր-նայ դըպչնալ յիշած հիւանդութիւնները կամ ցաւերը:

Չոր ու տաք եղած երկիրները՝ ե-րեքօրեայ եռապատիկ, կամ չորսօրեայ տենդ՝ որ սովորաբար երկան ատեն կը

քըշէն , և կը հիննան , հասարակօրէն կըլլան առաջնորդ ֆէպպուէ բէռնիշիօզայի , ֆէպպուէ կասթռիքէլի , և ֆէպպուէ ինֆլամմաթօռուէլի , որք են՝ տնաւեր կամ մահաբեր տենդեր։

Եւրոպիոյ բժիշկներուն շատերը կըսեն թէ՝ փափկամորմին աղջիկները և մանկունքները աս տենդերուն բառօսիզմօին առենը եղած կայ որ՝ մեռեր են անմիջապէս։

Բայց երկար ժամանակէայ փորձառութեան մէջ՝ պատահեցաւ անգամ մը ինծի որ՝ տասը մէկ տարուան աղջիկ մը մեռաւ յանկարծակի բառօսիզմօն եկած առենը , և ան ալ ջղայնցութիւն ( ռբաշիօ ) ունէր։

Աս կերևի թէ՝ կամ ջղերուն դիւրբերէն , կամ կլիմայէն կամ լճերէն եղած շոգիներէն և կամ օդին ծանրուէն կըլլայ։

—

## Ընդհանուր տեղ դեղոյ որէօղ տենդերուն տէ՛ր։

* · 25 · Ասոնցմէ բռնըվողներուն՝ պէտք չէ՛ մնան նայիլ առենը · հապա ժա

պէտք է հասկընալ նաև տարիքը, բնութիւնը, խառնուածքը, կազմուածքը, վրայէն անցած գացած ցաւերը:

Ասոնցմէ 'ի զատ՝ տենդերուն առջի բռնած անգամը՝ շուտով քնաքնա կամ սօլֆաթօ տիքինինօ գործ ածելը՝ չէ այնքան խոհեմութի՛ . որովհետև մէկ անգամ մը գալով ինչ տեսակ տենդ ըլլալը քիչ մը դժուար է հասկընալը:

Անոր համար բառօսիզմօն եկածին պէս, պէտք է ամէնէն առաջ խմցընել հիւանդին քանի մը գաւաթ լիմօնի կեղևով եփած աղած մուրկէրին ջուրը (Արբա-սու), և անկից ետև պէտք է հիւանդին երթալ յանկողին, և ծածկըվիլ թեթև ինչ ծածկարանով:

Եւ այսու օրինակաւ պէտք է ըսպասել ինչվան որ՝ դողը անցնի, ու տաքութիւնը գայ:

Երբոր տաքութիւնը խիստ ըլլայ՝ ու նաբզը ուժով արագ ու պինդ. երբոր գլխին ցաւը սաստիկ, աչքերը կարմիր, որկորը (պօղազը) ցամաք, և ցնորմունք (սայըգլամա) ունենայ նէ՛ . ան ատենը հարկ է քանի մը գաւաթ արուն հանել,

կամ տղրուկ փակցընել նստոյ տեղը։

Ան միջոցի մէջը պէ՛տք է հիւանդը անձնապահ ըլլայ ամէն վնասակար բաներէն. զոր օրինակ, ցուրտ ու թաց օդէն, արևները պտըտելէն՝ կամ պառկելէն, բարկանալէն, մըտմըտուքէն, բաղնիք երթալէն, վնասակար կերխումէն, և ամէն տեսակ ոգիաւոր խմելիքներէն։

Երկրորդ օրը՝ պէ՛տք է աղէկ մը հարցընել և իմանալ, եթէ հիւանդին ըստամոքսը (փորը) կծու ու տախպ նիւթերով բեռնաւորեալ է նէ՛, որուն նշանը լեզուին դեղնութիւնը, բերնին չորութիւնը, ու անհամութիւնը, մանաւանդ լեղիութիւնը, երբեմն ևս փսխելը, կուրծքին անհանգստութիւնը, կամ նեղութիւնը. ան ատենը պէ՛տք է գործածել օգտակար փսխեցուցիչ դեղեր. որոնց մէջը ամէնէն աղէկը ու օգտակարը թարթառօ էմէթիքօն է, ու իբեքաքուանան (7).

Ասոնց շինելու ու գործածելու կերպերը, և չափերը կրնաս գտնալ աս գիրքին ետքի ծայրը. տե՛ս (ԲԺՇԿՐԲ., ՄԻ. 1. Յա. 2.)։

Բայց նայելով հիւանդին հասակը, կամ տարիքը, և խառնուածքը, կրնաս ասոնց չափը երբեմն աւելցընել, և երբեմն ալ պակսեցընել։

Ե՛րբոր հիւանդը սկսէ փսխելնէ՝ ա՛ն ատենը վերջ ըրէ, և խմցուր ստէպ ստէպ (ԲԷՂ ԲԷՂ) գաղջ (ԸԼԸԽ) ջուր, այնքան՝ մինչև որ փսխէ երեք կամ չորս անգամ։ Փսխելը ժամ մը կամ ժամու կէս անցնելէն ետքը՝ կրնաս կերցընել սոսկ ջրով եփած ապուր, և ա՛ն ալ առանց հացի ու պղպեղի։

Աս ալ գիտնալ պէ՛տք է որ՝ երեքօրեայ տենդ ունեցողներուն՝ աս փրսխեցուցիչ դեղերուն ո՞րն որ ըլլայ նէ՝ պէ՛տք է խմցընել երկու կամ երեք ժամ յառաջ քան զդառնալն տենդին։

Ամէնօրեայ տենդին՝ յերկրորդ օրը խմցընել կը վայլէ։ Իսկ չորսօրեայ տենդին՝ երեք օրէն ետև։ Աս փրսխողական դեղը՝ չորսօրեայ տենդին համար ինտո՞ր գործ կածվի նէ, անանկ ալ պիտի գործ ածվի գարնանային՝ ու աշնանային տենդերուն դէմ։

Երբեմն հա՛րկ կըլլայ որ՝ տենդին

չեկած (աբէրչէառնա) օրը, ութ կամ ինն ժամ յառաջ քան զդառնալ բառօս-սիզմօին՝ լուծող դեղեր գործածել։

Եւ երբեմն ալ թէ միջոց տրվող՝ և թէ միջոց չի տրվող տենդերուն վերջի օրերը շատ անգամ ցաւերուն սերմը, ու արուննէն զատված ապականութիւնը կիջնան աղիքներուն մէջը, ու հոն կը ժողվվին. որոնցմէ կը պատճառին վերի յիշած հիւանդութիւնները. ան միջոցի մէջերն ալ խիստ կը վայլէ թեթև ու մեղմ լուծող դեղեր գործածելը (րէչէբէրա, բէ․ 2․ 3․)։

Երբեմն կը բորբոքի արունը, որուն նշանը՝ կշտին, կամ փորին, կամ այլ ուրիշ ընդերքներուն ցաւն է, ու չափէ դուրս տաքութիւնը. ան ատենը պէտք է որ՝ 7․ 9․ 11 խահվէի գաւաթով արիւն առնըվի, կամ 20․ 30 տղրուկ դրվի ցաւած տեղերուն վրայ։

Աս ըսած ցաւերս ամէնն ալ անցնելէն ետև անպատճառ պէտք է գործածել քինաքինա կամ սօլֆաթօ տի քինինօ, այսու կերպով կամ օրինակաւ։

Աղնիւ կամ աղէկ քինաքինան (9)

եթէ փոշի (թօզ) գործ ածելու ըլլաս նէ՝ օրը ութ տրամ բաւական է, և եթէ եփելու ըլլաս նէ՝ օրը 16 տրամ ըլլայ։

Մէնօրեայ տենդ ունեցողին՝ ամէն երկու ժամը՝ մէկ տրամ պաղ ջրով խառնէ խմցուր։ Երեքօրեայ տենդ ունեցողին՝ ամէն 3 ժամը՝ մէկ տրամ խըմցուր։ Իսկ չորս կամ հինգօրեայ տենդունեցողին՝ ամէն չորս կամ հինգ ժամը՝ մէկ տրամ խմցուր։

Բայց բառօքսիզմօին եկած տենը՝ տղէկ նայէ որ՝ չի խմցընես նոյն քինաքինան կամ սօլֆաթօ տիքինինօն. վ՟նզի ասկից շատ կերպ անհանգստութ՟ի, կամ սիրտնեղութ՟իներ կրնայ գալ։

Քինաքինային խաշուն՝ որ և կըսվի արգանակ (տէքօքթօ), որ ամէն կերպէն հեշտ կը խըմվի. շատկեկ պիտոր եփվի, որ ջուրը ուժով ըլլայ, մէկ ժամը բաւական է, ու աւելի մի՛ եփեր. չըլլայ թէ շատ եփելով քինաքինային զօրութ՟ը տկարանայ։

Օշարը՝ որ և կըսվի էսութ՟ի (էսէնծիա). չորս տրամը՝ լիպրա մը [illegible] 100 տրամ ջրի մէջ խառնելէն ետև՝ լա-

շիրօպ մը ալ հետը խառնէ՛ , և անկից ամէն մէկ ժամը՝ մէկ մէկ խահվէի գաւաթ խմցո՛ւր ․ կամ աւելի՝ թէ որ հարկաւոր տեսնաս նէ ․ քանզի վարպետին ձեռքնէ աս կշառքները եփեցընելը ու պակսեցընելը վտանգաւոր ատենը ։

Շա՛տ մեծ վարպետութիւն կընես՝ թէ որ տենդոտը առողջանալէն ետև՝ 10 կամ 12 օր ալ շարունակես աս քնաքնան ․ վասնզի ասանկ առանց վախի կըլլայ , որ մէյ մըն ալ չի՛ գար տենդը ։

Աս միջոցները կըրնաս յարմար դեղերով խըցանքները ( «Բուռ-ցէճնէ» ) քակել , արունի շըջանները ազա՛տ ընել ․ ջըվաթի ձամբան բաց պահել , աղերով ու ուրիշ յարմար դեղերով ․ որոնք փըտտած հիւթերը քիչ քիչ պարպեն , ու տենդերուն գլխաւոր պատճառները վերցընեն ։

Նոյն ատեն՝ կերպ կերպ դեղեր գըտան աս տեսակ տենդերու դէմ ․ որոնց խառնացէք իրենց լեզուով Փէպրի Փուկի կըսեն ․ այսինքն՝ տենդահալածք ․ ո՛րն են՝ սքօ՛րցա տի քասթանեօ , սքօ՛րցա տի սալիչէ՛օ պիանքօ , ռատիչէ տի ռանիքա ,

կրացիօլա , սալէ տի սըլիքօ սալվաթիքօ , սալ արմօնիաքօ . Լէօ , Լէօ ։

Բայց քնաքնան գըտնըվելէն ետև . մանաւանդ՝ սօլֆաթօ տի քինինօն՝ անոնք ամէնը գրէթէ խափանվեցան ։

Զանազան կերպ գործ կածեն աս սօլֆաթօն միջահաստական տենդերու դէմ . բայց աս կերպը ( ՌԻՉԷԹԹԱ , ՆՕ . 7 . ) ամէնէն պատուական է և շատ օգտակար .

Սոր կշռուքը՝ վարպետ բժիշկին ձեռքն է՝ 6 . 8 . 10 . 12 ցորենէն՝ մինչվան 18 ցորեն կուտան օրը . երկու ժամը անգամ մը՝ երկու ցորեն՝ այլ և այլ դեղերով հարկին պահանջմանը կեօրէ . մէկ խօսքով՝ բառօսսիզմօն որչափ ուժով ըլլայ նէ , անչափ ալ աւելի պիտի ըլլայ աս նորագիւտ դեղը . ես ջամառոտ ( ԷՆԱՓՃԷ ) տենդերու դէմ տըվեր եմ 24 կամ 30 ցորենէ՝ մինչվան 36 . ու շատ չէ՝ աս կշռուքը կամ չափը , մանաւանդ վտանգաւոր տենդի ( ՓԷՌՆԻՉԻՕԶԱ ) դէմ ։

# ՍԵՌ ԱՌԱՋԻՆ

Պարբերական միջոց տուող օրինաւոր ջղային տենդի վրայ․ որուն տաճկերէն գանուն խըզէ մինիրի նէօպէթլի ըսըտմա կըսեն։

## Յօդուած․ Գ․

### Սահմանը։

* ․26․ Այս տեսակ պարբերական տենդը՝ որ ջիղերուն (ռէ-նէր) մէկ մասնաւոր ախտաւորութենէն կը ծագի, և շատ անգամ ալ նոյն ջղերուն վերայ կարձակի․ մանաւանդ անոնց՝ որոնց ջղերուն դիրքերը շատ զգայնութի ունին, կամ խառնուածքները ընդունակութի ունին։

Ասոր ասանկ անուն դնելու մէկ պատճառն ալ այն է որ՝ թէպէտ ասոր գնացքը երկան կը քըշէ․ բայց վտանգ մը չունենալէ՛ն ՚ի զատ՝ վախնալու նշան մը ալ չի՛ ցուցուներ։

Ասոր համար կըսեն նաև միջոց տու-

վօղ ջրային պարզ կամ բարի տենդ. (Ֆէպպրէ ինթէռմիթթէ՛նթէ նէռվօ՛զա • կամ սէ՛մբլիչէ պէնի՛նա)։

---

## Մէջոյ թըռչօղ տենդ՝ խառն ընդ ջրային տենդի։

* • 27 • Սա ալ ան տենդերուն մէկ ուրիշ տեսակն է, որուն պատճառը թէպէտ և նոյն է, բայց ասոր նշաններուն հետ միշտ մէկ տեղ կը պըտըտին նաև ջրային տենդի նշաններն ալ, որ կը ծագին ախտաւոր նիւթերուն ուշ եփելէն • որուն դեղն ալ հասարակ ջրային տենդի դեղերուն պէս ըլլալուն համար՝ կազատի շուտով։

---

## Զարաշար տենդը մէջոյ թըռչօղ տենդի հետ մէկ տեղ ըլլալը։

* • 28 • Երբեմն աս տենդը՝ թէ խառնուածքներուն անբարեխառնութենէն, թէ մթնոլորտէն (աթմօսֆէրա), թէ տաք ու թաց և ճմոտ երկիրներէն, թէ ծանր և վնասակար օդէն, և թէ

այլ ուրիշ պարագաներէն՝ կը խռովէ մարդուն ուղեղը, և կաւրուի ջղերուն դիրքերը, որով կը դառնայ կըլլայ՝ չար միջոց տեղւոյ (ԻՆՐԷ-ԴՐՐԷ՛ՆՐԷ ՍԱՒԷՆ-ԷԱ), և կամ վտանգաւոր միջոց տեղւոյ տենդ (ԻՆՐԷ-ԴՐՐԷ՛ՆՐԷ ԲԷ-ՆԻՉԷՕ՛ՉԱ)· որոնցմով թէ՛ յայտնապէս և թէ՛ գաղտնապէս կըլլայ հիւանդին կեանքը վտանգի մէջ։

—

### ԻՆՐԷ-ԴՐՐԷ՛ՆՐԷ ԼԱ-ՎՈ՛ՐՏԱ։

✻ · 29 · Այս լաւվարդա անունով պարբերական ախտ մըն ալ (✻ · 20 ·) որ տենդի սովորական նշան մը չունի, թէ և ունի ալ նէ՝ քիչ մը հասարակ ջղային տենդի նշաններու հետ (✻ · 26 · 28 ·) նմանութիւն ունենալուն համար՝ ին-թէռմիթթէ՛նթի լաւվա՛րդա ըսվեցաւ, որ թարգմանի՝ պատրուակ միջահատական տենդի։

### ԻՆՐԷ-ԴՐՐԷ՛ՆՐԷ ԱԱ-ՍՍՕՆՐԷՆԱ-Է։

—

✻ · 30 · [illegible]յաքան տենդեր՝ (✻ · 26 · 27 · 28 · 29 ·) որոնց վրայ խնչվան հիմա

խօսեցանք · երբեմն միջոց տառերնին յայտնի է , և երբեմն ալ չէ յայտնի · ինչու որ՝ ասոր առջունը գրէթէ քիչ ու շատ անպակաս կըլլայ հիւանդին վրայէն։

Անոր համար ըսվեցաւ ինթեռմիթթէնթէ սուքքօնթինուէ · այ՝ տենդ ընդհատ անընդհատ · կամ պէնինէ (* · 26 ·) · այ՝ տենդ բարի · և կամ՝ բէռնիչիօզէ (* · 28 ·) · այ՝ տենդ վտանգաւոր ։

—

### Պարզ ջըլական բարէնշան տէնդ։

* · 31 · Պարզ ջըլական բարենշան տենդը (տէմբլիչէ նէռվօզա պէնինէ)՝ չունի կաննաւոր պարբերական տենդերուն պէս միջահատական երևոյթներ կամ նշաններ · եթէ ոչ՝ անոր , որուն վրայ (* · 20 ·) խօսեցանք ։

—

### Ջըլական վտանգաւոր (բէռնիչիօզա) տէնդի նշանները։

* · 32 · Ջըլական (նէռվօզա) վըտանգաւոր (բէռնիչիօզա) տենդի նըշանները՝ թէպէտ շատ տարբեր են ջը-

կան տենդի ու վտանգաւոր տենդի նը-շաններէն. բայց կրնամ ըսել թէ՝ չէ՛ թէ մինակ աս երկու տեսակ տենդից նը-շանները մէկ տեղ կըլլան. հապա՝ ամէ՛ն տեսակ սուր ու ծանր հիւանդութեանց նշաններն ալ՝ աս տենդի նշաններուն հետ սովորաբար մէկ տեղ կը գտնըվին. մանաւանդ բառօսիզմօին ատենը. որ է երեւոյթ սոսկալի:

Երեւելի նշաններն են՝ գլխի սաստիկ ցաւը՝ ծանրութիւնը՝ ու պըտըտիլը, թըմ-րութիւնը, աչքին մթութիւնը, ու շուտ շուտ մարիլը, փսխելը, փորքշուքը, նստոյ տեղին խստուկը (Տէնէզմօ), քնափու-թիւնը, ջղացնցութիւնը, մկանունքներուն կծկտիլը (Սուբսուլթուս տէնտինում), սրտին շուտ շուտ զարնելը. ցամաք ջըր-վաթին ջրայնութիւնը՝ կարմրութիւնը՝ գար-շահոտութիւնը, ու տակը օտարոտի նիւ-թերով լեցվիլը (Սէտիմէնթօ), միզար-գելութիւնը, երեսներուն յայտնի փոփո-խութիւնը, նաբզին մանրութիւնը՝ բարա-կութիւնը՝ ու անհաւասարութիւնը:

Աւելի կը վախցըվի աս նշաններէն, երբոր հիւանդը կըլլայ ծեր, վատառողջ,

ծննդական կնիկ, մատաղ մանկունք, ակարակազմ, և փափկամարմին:

Ամենէ՛ն աւելի կը վախցըլլի ան ատենը, երբոր հիւանդին գտնըված երկրին օդը ծանր՝ տաք՝ ու թաց կըլլայ, մանաւանդ՝ լճոտ ու շոգիաւոր կըլլայ. և կերակուրնին ալ դժուարամարս, ու քիչ սնուցիչ կըլլայ:

Կանք որ՝ անոնք այնքան չեն վախնար աս սոսկալի տենդէն, որոնք՝ որ ունին ախտք ախոնդանաց (Իբօքօնդրիա), կամ արգանդացաւութի (Իսթէրիքէ), ինչո՞ւ որ՝ աս երկու տեսակ ախտ ունեցողները՝ քիչ մը բանով շատ աւըրվելուն համար՝ զմեզ միշտ կը վախցընեն:

Ա՛ս տեսակ տենդին՝ վարպետները պէս պէս անուն դրին որ՝ կարդացողը հեշտ ու շուտ հասկընայ:

Օրինակի համար. ան տենդը՝ որ ունի ամէնօրեայ տենդի գնացք՝ շատ անգամ կը նմանի սուբքօնթինուա ըսված տենդին. և շատ անգամալ կը ձևանայ եռօրեայ (Թէրցիանա). և երբեմն ալ քառօրեայ տենդի կը նմանի գնացքը:

Փորձանաւոր տեսակներուն նշաննե-

րէն կառնեն իրենց անունները ու վը-տանգաւոր տենդերը։

Ասոնց վրայօք շատ բաներ կար խօսելու. բայց ես ամէն բանը ետևէ եկող նըշաններէն ու անոնցմէ առնըւած անուններէն բովանդակ կիմացվի կըսեմ։

Արդ՝ յայտ է՝ թէ աս տեսակ սօսկալի տենդեր շինօղ նիւթերը՝ թէ օդին ծանրութէն, թէ մթնոլորտին (աթմօս-ֆէրա) գէշութէն, և թէ խառնուածքներուն անբարեխառնութէն թոյն (զէհէր) կըդառնան կըլլան, որոնք երբեմն կըդպչին հիւանդին ուղեղին, յորմէ կըպատճառի թմրութի ու քնափութի. որուն իտալացիք իրենց լեզուով կըսեն ֆռէնիչիօզա քօմաթօսա, կամ լեթառճիքա, և կամ քօռօթիքա։

Երբեմն կըլլայ սրտի նուաղում, կամ անդամալոյծ, որուն կըսեն՝ էմիբլէճիա, կամ ամառուռօթիքօ, և կամ սինքօբալէ։

Երբեմն կըդպչին մկանունքներուն կամ ձգանաց թելերուն, յորմէ կըծագի ջղացնցումի (սբասմօտիքօ, կամ թէթանիքօ, կամ փառալիթթիքօ, և կամ էբիլէթթիքօ)։

Երբեմն աս տենդին հետ մէկ տեղ կըլլայ նաև ցաւ ինչ սաստիկ . որուն կըսեն՝ արթրիթիքա քաթառալիքա, ըռ-եումաթիքա, չէֆալէքա, քօլիքա, տիսէնթերիքա:

Երբեմն կը դպչի լերդին կամ մաղձին, յորմէ կը յառաջանայ փըսխողութիւն (էբաթիքա), կամ մաղձաթափութիւն (խօլէրիքա):

Երբեմն կը դառնայ կըլլայ հարբուղուխ կամ շնչարգել (քաթառալէ, կամ աս-թմաթիքա):

Երբեմն կը ձևանան՝ ալձիտա, լեթիւիա, տիաֆօռեթիքա, սքօռպութիքա, բեթեքիալէ:

Երբեմն ալ նոյն նիւթերը կը դպչին տեսարանին գործիքներուն . որով հիւանդը բառօքսիզմօին ատենը խելքն կը կորանայ . բայց աբիրէսսիաի ատենը՝ անմիջապէս կը բացվի աչքերը . աս տեսակ տենդին բեռնիչիօզա չիէքա տէլ մօռպնատի կըսեն:

Մ՛էջոց տըպօղ (լաւմփա) փէնտի դաբէրանը։

* · 33 · Մ՛իջոց տըպօղ լաւմփա տէնդը (* · 20 · 29 ·) ուրիշ բանով չի զատվիր (բէռնէյնէօճա) վաանդաւոր տէնդէն, եթէ ոչ՝ երկայթներուն թեթևութենէն և փորձանքին քիչութէն։ Նոր անունն ալ մեկալներուն պէս իր նշաններէն առնըված է։

—

Ս անֆաւոր (բէռնէյնէօճա) փէնտի պաշանները։

* · 34 · Մ՛ենք ասոր ուրիշ գաղտնի պատճառները չենք գիտեր · բայց այն որ՝ որչափ տարբեր են մարդուս կազմուածքները, խառնուածքները, կերխումերը, մանաւանդ աշխարքի կողմերը, տարուան եղանակները ու կլիմաները, անչափ ալ տարբեր են ասոր պատճառները · որչափ տարբեր են ասոր պատճառները, անչափ ալ տարբեր են ասոր նշանները։

Նոյն տենդին երկրորդական պատճառները։

* · 35 · Մէն տեսակ միջոց տըվօղ կանոնաւոր տենդերը, մանաւանդ վըտանգաւոր (բէ-նէկչէօըլ) տենդը՝ շատ անգամ այնքան յամառոտ (ինատճի) կըլլան որ՝ ինչվան սօլֆաթօ տի.քինինօյին կամ.քինա.քինային եւս դէմ կըդնեն։

Ասոնց տեսակ ըլլալնուն պատճառը ուրիշ բան չէ՛. բայց եթէ զատված մաղձին շատութիւնը, և այլ ազգի ազգի ցաւերէն մնացած փտտասբար նիւթերը, որ հնուցմէ անոնի արուներուն մէջը, կամ աղէքներուն, և կամ ուրիշ գործարաններուն մէջ տարածված կըգտնըվին։

Ասոնցմէ վար չե՛ն մնար մայասըլն արունը՝ ոտքի ձեռ.քի.քրտինքը, ու սերական անդամին վաղօղ հիւթերը դեղով կըտրելը։

Ասոնք չէ՛ թէ մինակ սօլֆաթօ տի.քինինօյին կամ.քնա.քնային դէմ կըդնեն. հապա՝ տենդերը եւս աւելի կըկատղեցընեն. անանկ որ՝ կանոնաւոր միջոց տըվօղ տենդը՝ կանցնի 'ի կարգ վտանգաւոր (բէ-նէկչէօըլ) տենդի. և վտան-

գաւորը կանգնի 'ի կարգ չար (մաժէնէ-էա) տենդի։

Ասոնցմէ կը հետևի թէ՝ բժիշկին ինչպէս հարկաւոր է որ՝ իր հիւանդէն ամենէն առաջ աղէկ մը հարցափորձէ՝ և տեղեկանայ, թէ՛ տենդին և թէ՛ ուրիշ ցաւերուն բուն պատճառները. և այնպէս սկսէ գործածել հարկաւոր եղած դեղերը. որով և մեծ դիւրութի կամ հեշտութի կունենայ թէ՛ արուեստին, և թէ՛ հիւանդաց օգտութենը։

Ասանկ դիպուածներուն իտալացիք իրենց լեզուով՝ քաուզօ սէքօնտարիա կըսեն. որուն մենք մեր լեզուով երկրորդական պատճառ կըսենք։

—

Ս՝ էջոց տրվօղ ջղաչան տէնդէն դէմ դեղեր.

* · 36 · Տենդը՝ երկու կամ երեք անգամ բռնելէն ետքը՝ աղէկ կը հասկցուի միջոց տրվող տենդերուն (* 27 · 29 · 33 ·) որ տեսակ ըլլալը, կամ չար տենդի (մաժէնէա) հետ հաղորդակցութի ունենալը, կամ փոխանգաւոր (բէ-նէչէ-ճօ) տենդի (* · 28 · 34 ·) հետ մէկ

տեղ ըլլալը․ կամ ուրիշ տեսակ հին հի-ւանդութիւններու ազքութի (* . 19 . 24 .) չըլլալը։

Այս պարագաները աղէկ մը քննել ու հասկընալէն ետքը՝ կընաս անտարակոյս յարմար դեղեր բանեցընել, և նոյն դեղերը՝ որքան որ կարելի է նէ՝ շուտով գործածելու է, որ չըլլայ թէ տենդը երկննալով՝ երթայ ուրիշ կերպ դէշ հիւանդութիւն մը դառնայ, մանաւանդ եթէ հիւանդն ալ աղէկկիծութի (ուժօրու-թիւ) ունենալու ըլլայ նէ։

—

Քինա քինա կամ աօլքաբը տէ քինինօյին գործածելու ժամանակը․

* . 37 . Ընդաքնան շատ տարի ամէն տեղ գործածելէն ետև, այր գիտցութենը մէջ փայտային գիտցուելը (ասպառանջա ըէնէօ՛ըա) ձուխ կամ էփելօք ըլլալը նորպիդ բնալուծները (քինինա) վերահասու եղան որ՝ վերը պատմած խցանքները (օպ-ա-ա-ցէօ՛նէ) այր փայտային մասէն առաջանալը։

Անոր համար ասկից 13 տարի առաջ՝

նոյն ընալուծները աչիտօ սօլֆօրիքօի ուժով մ՛ն փայտային ճմասալեր մասըթըուցուցին, և նոյն քնաքնային կարմրաշորթ գոյնն ալ ձիւնի պէս ձերմկցուցին, և անունն ալ՝ սօլֆա՛թօ տիքինինօ, կամ սօլֆա՛թօ տիքուինինօ, և կամ սօլֆա՛թօ տի չինքօնինա կոչեցին։

Գանք որ՝ մէկ տրամ քնաքնայէն՝ ցորեն մը կամ ցորեն ու կէս սօլֆա՛թօ տիքինինօ կելլէ։

Սանկ ուժով ու աղնիւ դեղ ըլլալուն համար՝ շա՛տ օգտակար և շահաւոր կը համարուի ամէն տեսակ միջոց աըլօղ տենդերուն, և այլ ուրիշ տկարութենէ առաջ եկած հիւանդութիւններու դէմ։

Սակայ չէ՛ թէ մինակ շահաւորութիւնը համար գովելի է եղեր ամենեցուն. հապա՝ նաև հեշտ առնըւելուն համար ալ։

Քանզի գտնըւածին պէս՝ քնաքնան գրեթէ բոլորովին երեսէ ձգեցին. և մեծ ու պզտիկ ասկից գործածել ըսկսեցին. որուն կշառքը կամ չափը (*25.) փորձառու բժիշկին ձեռքն է։

Խիստ աղէկ կընես ըստ Գուուշէի, եթէ տենդին բառօսիզմն եկածինպա՝

եթէ հարկը պահանջէ՞նէ , երկու կամ երեք խահվէի գաւաթ ջրուն հանես , կամ 10 • 12 հատ տզրուկ փակցընես նըստոյ տեղը ։

Անկից ետև՝ պաղչկեցընօղ (ռէֆրէժ-րանթէս) դեղեր գործածես . և էն ետքը՝ սոլֆա՛թօ տի.քինինօն սկսես տալ , որուն գործածելու կերպը և չափը (* • 25 •) կըրնաս գտնել ։ Նո՛յնպէս և սուլ քնաքնային գործածելու կերպը ։

Բայց դժվար կըլլայ ան ատէնը որ՝ երբոր սոլֆա՛թօ տի.քինինօէն կամ քնաքնայէն գրգռումունք կը յառաջանայ . մանաւանդ անոնց՝ որոնց ջղերնին և ստամոքսնին շատ զգալի ու դիւրագըրգիռ կըլլան ։

Կանք որ՝ աս ըսած գրգռումունքները պատահելու ըլլայնէ . ան ատէնը՝ թէ սոլֆաթօն , և թէ քնաքնան վերջ ընելու է . և անոնց տեղը՝ սկսելու է գործածել քիչ մը թաուչին , կամ ուրիշ ո՛ և իցէ համեմատուոր դեղեր ։

## Մէջոց տըղոց տենդերուն գլխաւոր դա- րմանները։

* ․ 38 ․ Ամէն տեսակ միջոց տըղոց կանոնաւոր տենդերը քննելու՝ ու կըշռելու համար՝ երկու գլխաւոր ատեն ունինք․ որոնց մէկն է՝ տենդին բռնելու (բարօսսիզմօ կամ աչչէսսօ) ատենը․ որ այսինքն ատեն ուրիշ բան մը չենք կրնար ընել․ բայց եթէ պաղըշկեցընօղ, ուցամաք ջըվալթ բացօղ դեղերով մեղմել, և տենդին նշանները չափաւորել։

Իսկ մէկալն է՝ տենդին խաղաղ ու հանդարտ ատենը (աբիրէսսիա), որ է յարմար ատեն՝ տենդահալած դեղեր գործ ածելու, և տենդին գլուխը ջախջախելու։

Ասոնց հարկաւոր խրատները են անոնք, որոնք որ քեզի առաջուց (* ․ 25 ․) սորվեցուցի․ ոչի են՝ քինաքինայի կամ սոլֆաթօ տի քինինօի գործ ածելու օրինաւոր կամ պատշաճաւոր ատենները․ որոնց քինաքինայէն՝ 4 ․ 6 ․ 8 տրամ օրը․ և սոլֆաթօէն՝ 4 ․ 6 ․ 8 ցորեն օրը։

Այսանկ ճամբով քանի մը օր հետըզհետէ

կը շարունակեսնէ՝ կըլլաս միշտ քաղ-
թող. բայց եթէ՝ աս չափերը քիչ ըլլալ-
նուն բաւական չե՛ն ըլլար քամուոտ
(Խնապծի) տունկերը քաղթելու, մանա-
ւանդ բեւնիչխօղա ըսված տունկը նէ.
ան ատենը պէ՛տք է որ՝ կրկնապատիկ
կամ եռապատիկ չափը եփեցընես տուն-
կահալած դեղերուն՝ որ օգտեն կամ
բուսցընեն կատարելապէս:

Անոնց որ՝ աս տնկահալած դեղերը
(9) գործողիչք (ԷՆՉԻՐՈՆԸԷ) ըլլալնուն,
կամ երկան ատեն գործ ածելէն չափէ-
դուրս ուժ տալով՝ կը տկարանայ տուն-
կուն կենսական ուժը, կը խափանէ
արտաշնչութիը, կը պրնդնայ ստամոքը
ու աղիքները, ու կէվէնայ սրտի նեղու-
թիւնները. որոնցմով կը գրգռին մկա-
նունքները, ու ձգանքները:

Նոնք ա՛լ աւելի քայանի կըլլան ան
ատենը՝ երբոր տունկը նորէն վրայ գա-
լու կըլլայ. կամ տունկոտ կանայք իրենց
ամսական պարտքերնին տեսնալու ըլլան
նէ: Ինչպէս որ շա՛տ անգամ ես տեսեր
եմ. տունկէն նոր աղատված կանայք՝
իրենց ամսական պարտքերնին (ԴԱՇՐԱՆ)

գալու օրը՝ կամ քանի մը օր առաջ՝ և կամ քանի մը օր ետքը , նոյն տենդը նորէն դարձաւ եկաւ առաջիննէն կըրկնապատիկ ուժով։

Սանկ ցանցաւորի ( ՔԻՆԱՔԻՆ ) դիպուածներն ալ՝ ուրիշ բանով կամ դեղով չեն աղէկնար , եթէ ոչ՝ առջի ըսած տենդահալած դեղերով։

---

## Ուրիշ տեսակ դեղեր։

* ·39· Թէպէտ և քինաքինան , մանաւանդ սուլֆաթօ տի քինինօն՝ ամէն տեսակ միջոց տուող տենդերուն դէմ դեղ են · բայց մարդկային խառնուածքը անչափ տարբեր են մէկ մէկէ որ՝ շատ անգամ աֆիօնը ալ աւելի յարմար կուգայ , քան թէ քինաքինան կամ սուլֆաթօ տի քինինօն։ Սանկներուն՝ ալ աղէկ է գործածել աս կերպ համ՝ ( ԴԵՂԱԳԻՐ , ԹԻՒ 7 · ) · քան սոսկ աֆիօնը։

Նոյնպէս կը գտնուին պաղի մարդիկ ալ՝ որ քիչ մը թաւթափօ էմէթիքօյի , կամ իբեքաքուանայով կըսրտնան։ Անանկներուն ալ՝ որ սոսկ պահեցողութե

և օդափոխութիւնը՝ կըստանան կատարեալ առողջութիւն։

---

## Երկրորդական տենդի դէմ դեղեր։

* · 40 · Երկրորդական տենդ կըսուի անիկայ, երբոր ուրիշ տեսակ հիւանդութիւն մը անոր հետ մէկ տեղ կըլլան․ կամ տենդոտը՝ հետեւեալ ցաւերուն մէկը հնուցմէ կունենայ։

Աս տանկ ըլլալուն համար՝ տենդն ալ կըլլայ յամառող (ինատճը)․ անանկ որ՝ ինչվան քնաքնային կամ սուլֆաթօ տիքինինօին ալ դէմ կըդնէ․ ինչպէս որ (* · 27 · 35 ·) լեովին հասկըցուցի։

Բայց քանի մը հարկաւոր բաներ ալ դուրսը մնալուն համար՝ հիմա հոս տեղը հարկաւոր եղաւ մեզի անոնք ալ ծանուցանել։

Աս յամառեալ տենդին մնասակարութիւնը յայտնի է շատ երկննալէն՝ որ բնութիւնը ավեր է անհոգ ըլլողներուն․ ասկից չըլլա՞ր մի ջրգողութիւն, ախտադըրնութիւն (տալագլըգ)․ ասկից չեն մեռնիր անհամար մարդիկ ամէն ատեն, որ 'ի

բժշկական գրոց և՛ի պատմութեանց լսուած է · շատն ալ աչքով տեսնուած է ։

Ասանկ է նէ՝ ամէնէն առաջ պէտք է որ՝ տենդին հետ գտնուող ախտերը կամ ցաւերը իրենց յարմար ըլլող դեղերով բուրոցընել, ու էն ետքն ալ տենդահալած (*·37·) դեղեր գործ ածել։

—

**Միջոց տըվօղ տէնտէն հէտ մէկ տէղ ըլլօղ ցաւր տէնտէ տէ՛ տէղէր։**

*·41· Նորոր մեծ վարպետութիւնով մը կրնանք ճանչնալ թէ՝ ատենդի (*·28·) հետ չար տենդ կամ ուրիշ տեսակ ախտ կամ ցաւ մը խառնըված է նէ, ան ատենը պէտք է որ՝ ամէնէն առաջ մէկ տեղ եղած ցաւերը բուրոցնենք յարմար դեղերով · ու անկից ետքը տենդահալած (*·37·38·39·) դեղեր գործ ածենք։

—

**Սանդառակ (քինաքինա) տէնտէ տէ՛ տէղէր։**

*·42· Միջոց տըվօղ հասարակ վատնդաւոր (քինաքինա) տենդին

(* ·32·35·) կարգը ու շրջանը գրեթէ մէկ է՝ մէկ ալ միջոց տըւօղ տենդերուն կարգին և շրջաններուն հետ՝ բայց ՚ի բարենշան (* ·31·37·38·) տենդէն։

Ինչպէս սար կարգը ու շրջանը մէկ է միջոց տըւօղ տենդերուն հետ, բայց բառօսախտմոն շատ տարբեր է՝ և սաստիկ, և շատ անգամ ալ մահաբեր։

Ասոր համար՝ բժշկական արհեստին մեծ նպատ ([illegible]) ըլլալէն ՚ի զատ, հիւանդին ալ շատ օգուտ կըլլայ, եթէ բառօսախտմօին եկած ատենը՝ բժիշկը հիւանդին մօտը գտնըվելու ըլլայ նէ։

Ասոր երկու բանի համար. մէյ մը որ՝ ինչ տեսակ տենդ ըլլայ՝ քաջ բժիշկը նշաններէն շուտով մը կը ճանչնայ։ Մէյմալ որ՝ ատեն չանցուցած կըրնայ գործածել առատօրէն (պօլչէչ) քինա քինա կամ սօլֆաթօ տիքինինօ՝ թէ և բառօսախտմոն մէկ անգամ մը և եթ եկած ալ է նէ, որոնց թէ ատենը, և թէ չափը (* ·25·38·) լըման հասկըցուցեր եմ։

Շատ հեղ տեսեր եմ որ՝ շատերը փախեր են առած տենդահալած դեղերնին, ու օգուտ մը չեն գտեր. ուստի

տնանկներուն առած դեղերուն մէջը քիչ մը կամ ցորենի մը չափ աֆիոն խառնել պէ՛տք է որ՝ առած դեղերնին ետ չի գայ ։

Ասոնցմէ 'ի զատ՝ աս տեսակ սոսկալի տենդի համար՝ ա՛լ աղէկ զգուշութիւն պիտի ընեն բժիշկները՝ ու ձեռվընուն եկածին չափ ալ պիտի աշխատին հիւան-դին կեանքը պահպանելու համար ։

Հասարակօրէն՝ ա՛լ աղէկ վարպետու-թիւն կընեն, եթէ բառօսմիզմօն անց-նելուն պէս՝ անմիջապէս գործածեն տենդահալած դեղերը ։

Պարզեալ՝ ա՛լ աղէկ կընեն, եթէ հի-ւանդը ան միջոցի մէջերը քառորդ ժա-մու չափ հառատալով եփած ջրի մէջ նըս-տեցնենն նէ ․ և օրը երկու անգամ, թ՝ տաստու խլիկուն քնաքնայով և փափա-թեալի ջրով հոգնայ ընենն նէ ։

—

## Սխտախտան վտանգաւոր (Բէռնիչեօ՛զա) տենդի դէ՛մ դեղեր ։

*· 43 · Այս՝ սաստիկ բառօսմիզմ մը եկածին պէս՝ վտանգաւոր (Բէռնի-չեօ՛զա) տենդ (*· 9 · 23 ·) է, կամ

անոր ցեղէ՛ն է ըսել՝ ու կտրել նետելու չէ՛ . ինչպէս որ անոր ամէն նշանները աղէկ մը չի յայտնըվի՛ն ։

Անոր համար՝ երբոր կը ճանչնայ բը-ժիշկը որ՝ աս տենդին հետ ուրիշ հի-ւանդութիւն ալ խառնըվեր է . երբոր ող-նական շնչերակներուն՝ կամ կուրծքին՝ և կամ ստորին որովայնի մէջը լեցված կըլլայ արունով . ան ատենը արուն հա-նելը կամ տղրուկ փակցնելը ա՛լ աւելի կը վայլէ՝ քան սոսկ բեռնիկիծղա տեն-դին դեղերէն ։ Ասոնք ամէնը ընել կա-տարելէն ետև՝ տենդահալած դեղերը գործածելու է ։

Երբոր՝ տենդոտին ստամոքսը կծու ու տախպ մաղձով և փտտած ապականել նիւթերով բեռնաւորած ըլլա՛յնէ . ան ատենը՝ թեթև փսխողական , երբեմն ալ լուծողական դեղերով մաքրելու է ա-ռաջ . և անկից ետքը՝ տենդահալած դեղեր բանեցնելու է որ՝ օգտէ ։

Աւելի սոսկալի կըլլայ աս տենդը՝ երբոր ասոր հետ մէկ տեղ կըլլայ չոր (Խուլինեա) տենդը . որուն դէմ ա՛լ աղէկ դեղ չի կայ , բայց եթէ սօլֆա՛թօ տի-

քինինօն՝ կամ քնաքնան, որ պիտի առատօրէն կամ շատկէկ տըրվի, վն̃ զի աս տենդը՝ եթէ երկու կամ երեք անգամ մէկ զմէկու ետեւէ գալու ըլլայ նէ՝ անմիջապէս կը մահացնէ հիւանդը։

Մէ՛կ խօսքով՝ աս տենդի բառօսսիզմօն ո՛րքան սաստիկ կամ ուժով ըլլայ նէ, սօլֆա՛թօ տի քինինօյին կըշառքն ալ ա՛յնքան էվել պիտի ըլլայ։ Ես ինքս՝ ասանկ տենդերու դէմ՝ ինչվան 30. 35. 40 ցորէն (* . 25 . 38 .) տըվէր եմ չորս կամ հինգ ցորէնը՝ երկու ժամը անգամ մը խմցընելով։

Երբեմն ասանկ սաստիկ տենդեր քաշողներուն ուժը՝ չափէ դուրս կը պակսի, որոնց յարմար դեղերն են համեմները (պահարները), մանաւանդ հին ու ազնիւ գինին։

---

## Սքիօնին տուրծ ածելու ատենը։

* . 44 . Ըսածներէս կը հասկընաս՝ որ շա՛տ վախնալու ցաւ է վտանգաւոր (բէռնիչիօ՛զա) տենդը. անունը ևս չի քաշուիր, հի՛չ մէկ բժիշկ մը չուզէր

վրան առնել ըստացընելու համար։

Անոնց գէշը՝ բառօքսիզմօն մէկ մէ-կու ետեւէ գալն է։ Եթէ սանկ բէռ-նիչիօզա տենդին բառօքսիզմօն մէկ մէկու ետեւէ գալը գէշ է նէ, հապա՝ ախտախառն բէռնիչիօզա տենդի բա-ռօքսիզմօյին մէկ մէկու ետեւէ շարու-նակելը որչափ գէշ է, և մահաբեր. Ա-պահէ սանկ խուճապարօղ (ԱԼԷՒԼԱ-ՃԷԼԷ) հիւանդութէ։

Ասանկ եղածին պէս՝ հարկ կըլլայ որ՝ միջոց տարէն գտածիդ պէս՝ առաջ մէկ կամ մէկ ու կէս ցորէն աֆիօն (ՕՓ-ԻՕ) կըլեցընես, ու ետքը տարէն կամ ժամանակ գտնաս նէ՝ սօլֆաթօ տիքի-նինօն գործածես։

Աղէկ կընես՝ եթէ սանկ աֆիօնին տեղը՝ սօլֆաթօյախառն աֆիօն (ԹԻՆՉԷՐ-ԹԱ, ԹԻՒ. 7.) գործածես նէ։

—

## Սպանդաւոր (ԲԷՌՆԻՉԷՕԶԱ) տենդէն ըր-ռններուն դէմ դեղեր։

* . 45 . Որչափ կըխմներ ու խառ-նուածքներ կըրնան ըլլալ նէ, անչափ

ալ սա տենդի տեսակները կան, ու ամէ՛ն մէկ տեսակին շատ կերպ նշանները կըրնան ըլլալ. և իւրաքանչիւր նշաններուն ալ մասնաւոր դեղը կայ։

Ա՛ն դեղերն որ՝ ամէ՛ն վտանգաւոր (բէ–նէշէօ՛ւ–) տենդերուն դէմ գրեցինք նէ, անոնց և ասոր նշաններուն ալ դեղն են։

Ա՛նոնց որ՝ հիմա մէկ քանի՛ դեղեր կան բուն նշաններուն դէմ պատրաստած նոր հռչակաւոր բժիշկներէն. ասոնք որ բանեցնես նէ՝ նշաններէն ազատելով՝ տենդերէն ալ ազատած կըլլաս։

Օր օրինակ. աֆիօնը կանցընէ կամ կը նուազեցընէ գլխին սաստիկ ցաւը ու փսխելը. նաև կը թուլցընէ բէռնիչի-օզա տենդ շինող նիւթերուն ուժերը, եթէ չափով ու ատենով բանեցնես նէ։

Կտաւի կտորը՝ խիստ ցուրտ ջրով թրջես՝ ու շուտ շուտ գլխին վրայ դընես նէ՝ ուղեղին մէջը եղած արունին բռնկիլը կը մարէ։

Սբիրիթօ քանֆօրաթօն ([illegible]), կամ էթէրէ վիթրիօլիքօն ([illegible]). կամ ալ քալի վօլաթիլէն

(ուչուճու ճալէայ ռուհու), կը նստեցընէ ստամոքսի և կուրծքի ցաւերը (ճառափէ-աչէմ), եթէ յարմար չափով գործ ածես նէ: Նմանց ուժը ունի նաև հին գինին:

Նոյն զօրութիւնները ունին ամէն ոգիաւոր հեղանիւթները եթէ տաք տաք քսես ստամոքսի վրայօք ու չփես ձեռքով. կամ կտաւի կտոր մը թրջես նոյն հեղանիւթերով՝ ու դնես տաք տաք կուրծքին վրայօք:

Խարանադեղը (վէզիքաթօրիօ) ու հարտալ լափասին (սինափիզմօ) կարթընցընէ թմրած մարմինները, ու կենսական ուժը՝ նաև կը նըստեցընէ յօդուածներուն ցաւերը:

Մշկը (8), ափիօնը, ֆօմէնթիները, ու հոգնաները՝ կը խափանեն ջղացնցութիւնը, մկանունքներուն ակամայ շարժմունքները, ու ցաւերը, եթէ յարմար դեղերով շինես, ու ատենով բանեցնես նէ:

Մերսինի տերևը՝ տէվէ թիքէնին՝ ու բալթլըճանին կոթը՝ ջրով խաշես, ու հիւանդը նստեցնես անոնց շոգիին վրան նէ՝ նստոյ տեղւոյն ցաւերը կամ խօսու-

ժը

տունկները ( Բէնէ՛լչիօ ) կը փարատէ։

Այն զօրութիւնը ունի նաև աֆիոնի ուսհը ու քաքավօի եղը, եթէ խառնես մէկ զմէկու հետ՝ և նստոյ տեղին բոլորտիքը քսես նէ։

Աչէ՛թօ քօնչէթուա՛թօն՝ կը բոցնէ քնաբեր ցաւերը ու թմրութիւնը, եթէ շուտ շուտ հոտըրտայ հիւանդը։

—

## Լուծօ՛ղա ըսված տէնտէ տէ՛ տէղէր։

* ·46· Ներածօղա լուծօ՛ղա ըսված տէնդրին ( * · 29 · ) դեղերը՝ թէ սուկ ըլլայ և թէ՛ ջղայի՛ն՝ չունի՛ տարբերութի՛ միջոց ալըվօղ տէնդերուն ( * · 36 · 37 · 38 · 39 · ) դեղերէն։

—

## Բէռնիչիօ՛զա չիէ՛ռքա ըսված տէնտէ տէ՛ տէղէր։

* · 47 · Փէ՛պպրէ բէռնիչիօզա չի-էրքա տէլ մօռա՛նտի ( * ·32· ) ըսված տէնդի դեղերին են՝ արուն հանելը, փորը լուծ-պահելը, փէհլիվան եախըրի փակցնելը՝ և ամէնէն ետքը՝ քնաքնա կամ սօլֆաթօ տի քինինօ ( * · 37 · 38 · ) գործ ածելը,

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Գործնական միջոց տըվող օրինաւոր ստամոքս-ային տէնդի վրայ․ որուն տաճկերէն իրենց լեզուով կըսվի ղանուն խուզըն նէօպէթլի սիտմէ ըըլըտմասը։

## Յօդուած․ Ա․

### Սահմանը․

* ․48․ Միջոց տըվող ստամոքսական տէնդը՝ որև կըսվի մաղձային ընդհատ օրինաւոր տէնդ, հիւանդութի մընէ, որ կըպատճառի աղիքներուն ավրած և ապականեալ նիւթերէն․ որոնցմով կըգրգռի սիրտը՝ շնչերակը՝ և ջղերուն դիրքերը․ քըրմէ երբեմն կըդառնայ կըլլայ տեղական ըստամոքսային տէնդ ( [illegible] )։

Բայց երբոր կըճանչնայ բժիշկը որ՝ այս տէնդը՝ տեղական ստամոքսային տէնդ է․ ան ատենը փոխողական կամ լուծօ-

ղոկան դեղերը ա՛լ աղէկ կը վայլէ (15)՝ քան ղանդահալած դեղերն։

—

## Մ. Հրամ ՆԷ-ԲԵՐԸ ԴԷՉԷՐԷ ԽԱՆԸՄԷԼԷՆ ԾԱՂԻԿԸ։

* · 49 · Ուրեմն աս տենդը կը ծագի՝ կծու մաղձը պղտորիլը ու այլ ուրիշ տակի գիրտերը մէկ զմէկ խառնըվելէն․ որոնք սովորաբար կը գտանան դժվարամարս ու աղեղ ցփեղ ուտելիքներէն, և գրգռիչ ոգևոր խմելիքներէն։

Աս տեսակ տենդը՝ շատ կըլլայ․ երբոր ատենը գարուն կըլլայ․ երբոր տհաս մրգերով ու կաթնեղէն կերակուրներով ստամոքսը շատ բեռնավորած կըլլայ․ երբոր մէկը հիւանդութէ նոր ելած կըլլայ։

—

## Դարմանը։

* · 50 · Աս երկուքն ալ (* · 48 · 49 · ) մէկ տեսակ տենդ է, որոնց կըսեն՝ պարբերական ընդհատ օրինաւոր ստամոքսային տենդ (ՖԷՊՐԱԷ ԻՆԹԷՐՄԻ-

ԲԷՆԲԷ ՉԷՉԷԿԼԷՐԻՆ ՏԱՄԲԱՍԻ) ․ որ մինակ ատորին որովայնին մէջի աւելորդ մնա-ցակը նիւթերուն պարբերական գըր-գռումնքներէն կը պատճառի ․ մանա-ւանդ՝ ճճիներէն (ՍՕՂԼՈՒՃԱՆ) , ու լը-տամոքսի տկարութէնէ ։

—

## Օրէնաւոր ընդհատ բորբոքողական ։

* ․ 51 ․ Այն գրգռիչ նիւթերուն շատութէն երբեմն բորբոքումն ալ կըր-նայ ընկեր ըլլալ աս տենդին հետ ․ մա-նաւանդ՝ տենդոտին բնութիւնը արտունոտ ու դիւրագրգիռ ըլլայ նէ , կամ փորին երակներուն (ՏԱՄԱՐ) մէջ չափէ դուրս արուն ժողվըված ըլլայ նէ ։

Աս տենդին պառօքսիզմօն շատ ու-ժով կըլլայ ․ մանաւանդ քայնժամ՝ յոր-ժամ գարնան ատեն ըլլայ նէ ։

Աս պատճառաւ ալ , ֆ՝ բորբոքումը ասոր հետ մէկ տեղ գտնըվելուն հա-մար , տենդին անունը խալէրէն ըսվե-ցաւ՝ քօմբլիքաթօ ինֆլամմաթօրիա ։

## Օրէնաւոր ընդհատ ձայնքն։

* . 52 . Երբոր կծու մաղձը՝ պըղ-պամը՝ ձձինները՝ ու ուրիշ գրգռող նիւ-թերը չափէ դուրս ապականած կըլլան. երբոր տենդին գալու ատենը ամառ կամ աշուն կըլլայ, երբոր տենդոտին ջղե-րուն դիրքերը՝ աւելի ընդունակութի և զգողութի (Հաշղաղլըգը) կունենան. ան ա-տենը՝ աս տենդը հէշտ կը դառնայ կըլլայ ջղական ու փոխադրական տենդ. որուն Իտալացիք իրենց լեզուով կըսեն՝ քօմբ-լիքա՛թօ քօն լա կասթուլքա նեռվօզա։

Աս տենդը՝ ոչ միայն ծանր նիւթե-րէն կը պատճառի. հապա՝ ուրիշ գրգը-ռում մի ալ կունենայ՝ որ երբեմն բոր-բոքական (* . 51 .) կըլլայ. և երբեմն ալ ջղական կամ ջղային։

—

## Պարզերական օրէնաւոր ստամոքսային տենդի նշանները։

* . 53 . Պարզերական միջոց տըվօղ օրէնաւոր ստամոքսական տենդի (* . 48 . 49 .) նշանները են՝ անախորժութի կե-րակրոյ (Իշտահսըզլըգ), բերնի անհա-

մութիւնը` ու լեղխութիւնը , շունչին հաստա-
ծութիւնը , լեզուին վրայօք դեղին ու-
փակչոտ մոր կապելը , կերած կերակու-
րը լեղի լեղի վեր տալը , բերնին ջրոտի-
լը , ու միշտ թուքնելը , վերի պռկուն-
քին դողդողալը , գլխին ցաւը` ծան-
րութիւնը` ու պտըտիլը , աչքերուն դեղ-
նութիւնը , սրտին խառնըվիլը` նեղութիւնը`
ու փսխելը , ծարաւութիւնը , ու անդա-
դար թթու խմելիքներ ուզելը , խիստ
հոտած փորքըշուքը` ու որդեր թափի-
լը , ցամաք ջրվաթին երբեմն կարմիր ու
երբեմն դեղին ըլլալը , ստամոքսին վերի
ծայրը երիլը , ու ցաւիլը . և աս ետքի
նշանը մինակ բառօսախի́զմօին ատենը կըլ-
լայ , որ բառօսախի́զմօն անցածին պէս` ան
ալ մէկ տեղ կանցնի կերթայ .

—

## Մէջոց ըրվօղ բորբոքուոր ստամոքսական տենդէ նշանները ։

* . 54 . Միջոց ըրվօղ բորբոքուոր ստամոքսական տենդ ( * . 51 . ) կըսվի ան ատենը , երբոր ( * . 51 . 67 . ) մէջերը գրված նշանները երևնալու ըլլանն ։

Ասանկ տենդերը շատ կերպով ան-հաստատ ըլլալնուն համար, բնութիւնս երբեմն ջրական տենդ կը ձեւացունէ. և երբեմն ալ բորբոքողական։

Թէպէտ և պարզ ստամոքսային տեն-դը՝ ամէն ժամանակ հեշտ կը դառնայ կըլլայ բորբոքաւոր կամ ջղային տենդ. բայց ա՛լ աւելի հեշտեաւ կըրնայ ըլլալ գարնան ատենը. մանաւանդ՝ ան եր-կիրները՝ որոնց օդը տաք թաց ու ծանր կըլլայ.

—

## Մէջոց փըխօղ ջղային ստամոքսական տենդի նշանները։

* · 55 · Այս տենդը՝ աւելի ուժով ու փորձանքաւոր կըլլայ ան ատենը՝ եր-բոր ստամոքսի ու աղեաց մէջը ժողվը-ված մաղձը, կամ ուրիշ ավըրված նիւ-թերը կամ դիրտերը ա՛լ աւելի մնալով՝ հոտած ու փտտած կըլլան։

Ասոնք ասանկ եղածին պէս՝ թէ՛ բա-ւօասխիղմն, և թէ՛ ուրիշ նշանները ան-տարբեր կըլլան մէջոց չի տըվող ջղային ստամոքսական տենդի (* · 10 ·) նշան-ներուն ու բաւօասխիղմին հետ։

## Պատճառները։

* · 56 · Այս տենդերուն (* · 48 · 49 · ) պատճառները՝ գրեթէ չունին տարբերութիւն՝ անկից եւ գրելու (* · 104 · 105 · ) տենդերուն պատճառներէն ։

Երբեմն սա տենդը կը ծագի ուրիշ անյայտ պատճառներէն, որոնք որ՝ քիչ մը կը նմանին միջոց տըվօղ տենդին (* · 7 ·) պատճառներուն ։

—

## Անոնց դէմ դեղեր։

* · 57 · Այն դեղերն որ՝ լաւվադա ըսված տենդի (* · 46 · ) դէմ գրեցինք նէ, անոնց ալ դե՛ղն են ։ Անոնց որ՝ մէկ քանի թեթեւ լուծօղ ու հովացընօղ դեղեր կան՝ ան վնասաւոր նիւթերուն դէմ, որոնք լեցվերէն աղիքներուն ու ստամոքսին մէջ․ որոնցմով կը խափանվին տենդահալած դեղերուն ներգործութիւնները․ անոնք որ գործածեսնէ՝ նոյն վնասաւոր նիւթերէն խալըսելով տենդէն ալ հեշտեաւ կը խալըսիս ։

Ապի՛ են՝ տէքօ՛թթօ րիսօլվէ՛նթէն (Ռէ-չէթթա՛, Թիւ. 12.), լիմօնաթան, գըրըմ-թարթարով կտրած կաթին շիճուկը (Սէ-րուբէյ), կամ բօ՛լբա տի թամարինտոին, կամ հինտիպային մըթպուխը, կամ սա՛լի մէ՛տի։

Եթէ ստամոքսը չընդունէ՛ այս դե-ղերը՝ ու խըմածը ետ տալու ըլլայ նէ․ ան ատենը ասոնց տեղը՝ գործ ածելու է՝ բօլվէ՛րէ րիսօլվէ՛նթէն (Ռէչէթթա՛, Թիւ. 8.), կամ պէվա՛նտա սալի՛նա (Ռէ չէթթա՛, Թիւ. 9.)։

---

## Դեղեր գործ ածելու ատենը։

* 58. Ե՛րբոր ստամոքսի կամ խըլա-ջափողի մէջերը․ կամ լերդին մօտիկ տե-ղերը վերը յիշած վնասարար նիւթերը, զոր՝ խժոռ պըլղամներ և կծու մաղձեր ժողվըված ըլլան նէ, որ հեշտեաւ կը հասկըցվի լեզուին վըրայէն դեղին մար կապելէն, և բերնի լեղիութենէն, և սրտին անհանգստութենէն, կամ սիրտ խառնըվելէն, ու կերածը վեր տալէն, կամ փորըշուքէն․ ան ատենը ինծի աւելի

մօտ ճամբայ կերևի՝ փսխողականը ( ՉԷ-ՉԷԲԲա՛, ԲԷ. 1.)՝ քան լուծողական դեղերն։

Երբեմն նոյն նիւթերը որ՝ կըգտնըվին ստամոքսի մէջ՝ շատ խժոռ ու թանձըր ըլլալնուն՝ փսխողական դեղը մէկ անգամ և եթ խմցընելով՝ չե՛ն կրնար ուզածիդ պէս քակել. ան ատենը՝ պէ՛տք է կրկնել կամ երկրորդել նոյն փըսխողական դեղը, որ աղէ՛կ մը պարպէն և մաքրեն ստամոքսը. բայց աս՝ երկու օր միջոց տալէն ետև կրնաս կրկնել ապահովապէս, եթէ հիւանդին կուրծքն ալ տկար չէ՛ նէ։

Գիտնաք որ՝ եթէ հիւանդը փորքըշուք ունի նէ, ան ատենը՝ ա՛լ աղէկ կընես, եթէ 20 կամ 30 ցորենաչափ իբէքաքուանա խառն ընդ թարթա՛րօ էմէթի՛քօի ( ՉԷ-ՉԷԲԲա՛, ԲԷ. 10.) գործածես նէ։

Աս դեղերուն ո՛րն որ ըլլայ նէ ըլլայ. տենդին բառօսիզմին գալէն քիչ մը առաջ պի՛տի խմցընես որ՝ բառօսիզմին գալու պատրա՛ստ է նէ՝ ետ մնայ։

Իսկ եթէ հիւանդը զօրեղ կամ ուժով ըլլայ նէ, ան ատենը թարթա՛րօ

էմէթիքօին տեղը՝ տուր էմէթիքօ քաթարթիքօ (ՌԷՉԷԹԹԱ, ԹԻՒ. 11.)։

Կան վարպետներ, որոնք աս տեսակ տենդի դէմ փոխելու դեղ չեն բանեցըներ՝ ինչվան քանի մը օր առաջ չի պատրաստեն հիւանդը բարակցընող դեղերով, և պլղամը ու մաղձը ևս փարատող աղերով։

Եթէ աս կրնան ըստանալ ճշմարտապէս, ինչ պէտք է ան ատենը փոխել տալը։ Ինծի աւելի շահաւոր կերևի լուծողական դեղերը. վասզի նոյն նիւթերը պատրաստ է, և այլ հեշտ կը պարպըվին ան ճամբէն։

Նաև եթէ ան միջոցը՝ անմիջապէս հարկաւոր է փոխել տալը, կարծեմ թէ՝ պարապ կաշխատին, և ատեն անցընելով կարօղ են վնաս մը տալ հիւանդին։

—

### ՓՈՐՁԸՆԷԼՈՒ ԴԵՂԵՐ ՉՈՐԾ ԱԾԵԼՈՒ ԱՏԵՆԸ։

* 59. Փոխողական դեղերը բանեցընելէն ետև. երբեմն նոյն վնասակար նիւթերը կամ ցաւին սերմը, և արտունէն զատված ապականութիւնը կիջ-

նան աղիքներուն մէջ, և հոն կը ժողվը-վին. և տենդին հաստատութե՛ կամ ետ դառնալուն պատճառ կըլլան, կամ նե-ղութիւն ու խոստուկ և ջղացնցութի՛ (հէվըճէ) բերելու առիթ կըլլան:

Ա՛ն միջոցի տեսնները՝ շատ աղէկ կը-նես, եթէ՝ կէս տրամ շիառաբըմին ծեծածը և 20 ցորեն թարթարօ վէթ-րիօլաթօն, կամ 2 տրամ՝ քուէմօր տի թառթառօն՝ գաղջ ջրով խառնես ու խմցընեսնէ:

Նոյնպէս լուծօղ է, եթէ 12 տրամ՝ ինկլիզ թուզին (սալ՛ ինկլիզէրրա), և 8 տրամ՝ քութրէթ հէլվասին (մաննա), և 40 տրամ գաղջ ջրով խառնես ու խմցընես:

Նոյնպէս լուծօղ է (բէնէբբա, բէ-. 2.)՝ եթէ մէկալներուն պէս գործածեսնէ:

Ա՛ս ալ մանր պէս լուծօղ է (բէհէբբա, բէ-. 23.)՝ եթէ անոնց պէս գործա-ծեսնէ: Որոնցմով նոյն ժամանակը նու-թերը ալ աղէկ կը պարպըվին:

Այն մարդիկ, որոնց փոխողական կամ լուծօղական դեղերէն՝ ստամոքսնին կամ աղիքնին չափէ դուրս կը տկարա-

նան. մանկներուն պէ՛տք է որ՝ ատեն մը իբէքաքուա՛նա (ՌԻՉԷԹԹԱ, ԹԻՒ. 13.) գործածես, որ երթայ ստամոքսը ու աղիքները՝ զօրանայ, ու տենդին ալ դէմ դնէ։

Կան ա՛լ մարդիկ, որոնց տենդը յամառոտ (ԻՆԱՓՃԷ) կըլլայ. և աս կըլլայ ան ատենը, ե՛րբոր տենդոտին խըցանքները (ՕՍԹՌՈՒՑԻՕ՛ՆԷ) շատ հինցած կըլլան, և ցաւին վճիռը կը կըտրուի դէպ ՚ի ջրգողութիւն։

Մանկներուն համար ալ պէ՛տք է գործածել իբէքաքուա՛նա ըրած արմատը. սկսելով օրը մէկ կամ երկու ցորենէն, և ամէն օր մէյ մէկ ցորեն աւելցընելով ինչվան ըլլայ օրը 20 ցորեն ամբողջ, եթէ տանի հիւանդին ստամոքսը.

Ե՛րբոր տենդոտին փորը լոյծ պահել հարկ ըլլայ, ե՛րբոր հիւանդը աղքատ ըլլայ նէ. ան ատենը՝ թէ աս արմատին և թէ քինաքինային տեղը՝ պէտք է գործածել թարթա՛րօ էմէթի՛քօն (ՌԻՉԷԹԹԱ, ԹԻՒ. 14.), որ փորը լոյծ պահելէն ՚ի զատ՝ շա՛տ հեղ ալ տենդին դէմ կը դընէ խցանքները քակելով։

### Բորբոքաւոր ստամոքսական տենդի դէմ դե-ղեր։

*·60· Երբոր միջոց տրվօղ ստա-մըքսական տենդի հետ բորբոքումալ ըլլայնէ, որ դիւրաւ կը ճանչցըվի նը-շաններէն (*·54·)· ան ատենը՝ պէ՛տք է՝ ամէնէն առաջ՝ արուն հանել, կամ տզրուկ փակցընել (*·67·), և այն ըստ կարգի։ Անկից ետքը՝ միջոց տրվօղ ստամըքսական տենդի դէմ գրված դե-ղերը (*·57·58·59·) գործածելու է։

—

### Ջղային ստամոքսական տենդի դէմ դեղեր։

*·61· Երբոր միջոց տրվօղ ստա-մըքսական տենդին հետ ջղային տենդի նշաններն ալ (*·55·) մէկ տեղ ըլլա-լէն 'ի զատ՝ բաւօսախըլմըն ալ խիստ սաս-տիկ կուգայ, և ջղերուն գրգռմունք-ներն ալ չափէ դուրս կըլլան· որուն ամէնէն յարմար ու օգտակար դեղն է փոխողականը (ԷԻՂԷՐՐԱ՛, ՐԻՒ·1·)· և անկից ետև՝ հովացուցիչ կամ պաղըշկե-ցուցիչ դեղեր (*·57·) պէ՛տք է գործ-ածել։

Օգտակա՛ր են նաև սիւրիւթկայա-խառն թամար ինտիին թամբը (Բօլբա-տի Բամարինտի) . և հասուն պտուղնե-րուն հիւթերը, ո՛րք են՝ փորթուգալին, նարինջին, կամ թուռունձն, լիմոն աթան, ևն։

Ո՛չ աղէկ կըլլայ, եթէ տենդին նը-շաններուն առաջնորդութիւնը աս դեղե-րը գործածվինէ։

—

Մ՝ինայ ճնա ճնան էրէ տէնտը չի՛կրնայ ջաղ-րէրնէ՝ ան ատէնը ընտա՞ր տէղէր խառնէ-լու է որ՝ տէնտը ջաղրըճէ։

* . 62 . Քինաքինան կամ սօլֆա՛թօ տի քինինօն, որոնք ինչվան հիմա գրե-ցինք իրենց յարմար տեղերը (* . 37 .)՝ տենդերը յաղթելու կամ հալածելու համար . մանաւանդ ամառվան տենդե-րուն դէմ։

Ասոնք եթէ մինակ չի ներգործեն նէ . ան ատենը պէ՛տք է որ՝ քնաքնային տեղը՝ երկան ատեն գո՛րծածենք նշա-տըրով այլ ուրիշ յարմար դեղեր (Րէ-չէՐՐա, Րէ- . 5 . 6 . 7 .)։

Նոր ըւըտցած հիւանդներուն համար խորագ։

* ·63· Նոր ըւըտցող հիւանդը պէ՛տք է որ՝ զգուշանայ ամէն կերպ վընաս տըւող կեր խումէն · ցուրտ ու թայ օդերէն (հաւաներէն), կորսնցուցած ուժը աղէկ մը տեղը չեկած՝ ամէն դուրս ելլալէն, բարկանալէն, մտմտուքէն, սիրտ նեղութէն, և այլ ուրիշ կիրքերէն։

Հասարակօրէն կերակուրը պիտի ըլլայ՝ ալա պալըղին, կամ ըսքօւբիթ, կամ խաւեայ, և կամ ըղմորիտ ձուկերը · որոնք պիտի եփվին սոսկ ջրով, կամ կասկարայ (ըզկարայ) պիտի ըլլան · և ասոնք ալ չափէ դուրս պիտի չուտվին · հապա՝ քիչ քիչ ու սըխ սըխ, որ նորէն չավըրվի։

Ոտքէն ձուտ (ֆէլէմ), ու անոր ջրով եփված ապուր, և ռատիքեայ (հէնտէպա), և սալաթա՝ եթէ գտնըվինէ։

Բայց մէկէն 'ի մէկ՝ ձուտը պիտի չուտէ · հապա՝ ուրիշ կամ երկրորդ օրը՝ պիտի ուտէ անոր ջրով եփած ապուրը, և ան ալ առանց հացի և պղպեղի · և անկից ետև՝ նոյն ձուտին մէկ թևը, մտանաչափ հացով։ Երկրորդ օրը՝ մէկ թևը ու-

ժե

մէկ ոտքը։ Երրորդ օրը՝ ձուտին կէս մասը։ Չորրորդ օրը՝ երեք մասը, այլ և՛ս ըստ կարգին։ Վեց կամ ութ օրէն ետքը՝ խըլխձըխ մըսի ջրով եփած ապուր։ Քանի մը օրէն ետև՝ նոյն մըսի խաշուն (խաշլամա)։ Տասն օրէն ետքը՝ խորոված (ղավուրմա), հանդերձ հին ու ազնիւ գինիով. բայց ջրախառն և երկու մատնաչափ։

Ա՛ս միջոցի ատենները՝ հիւանդը պէ՛տք է երթալ ան գիւղերը կամ ագարակները, ուր որ օդը ու ջուրը (աբ ու հավա) աւելի թեթև՛ են, և առողջարար։

Ա՛ս միջոցի մէջերը՝ չինթիանոյի խիւլասայով շինած նանէի ջուրը (չէշմէ-նա, նէ. 15. 16.) գործածելու է որ՝ կամաց կամաց երթայ զօրանայ հիւանդին ստամոքսը. տես և (* 17.)։

# ՍԵՌ ԵՐՐՈՐԴ

Պարբերական բորբոքատոր տենդի վրայ, որուն տաճկերէն իրենց լեզւով Իւֆիւնէթլի նէօպէթ ըլըտմալը կըսեն։

## Յօդուած Ժ.

### Սահմանը։

* 64. Ընդհատ օրինաւոր բորբոքողական կըսվի այն տենդը՝ որ մինակ սրտին չափէ դուրս ներգործութենէն առաջ կուգայ. և շնչերակներուն պարբերական գրգռմանէն՝ մէկ ընդհանուր կամ տեղական ախտաւորութիւն մը նեղելով։

Այս տենդը հասարակօրէն կը պատահի այն երիտասարդներուն՝ որոնց բնութիւննին ցամքոտ (Խըլտըլը) ու դիւրագրգիռ են, և միշտ կը պարապին ոգելից խմիչքներու, և չափէ դուրս կաշխատին կամ կը հոգնին. առանցմէ 'ի զատ՝ դժվարամարս կերակուրներով կապրին,

ցուրտ ու թաց տեղեր կը նստին՝ կամ կը պառկին. որոնցմով կը ծածկի սրտի ու շնչերակներու ( ... ) գրգռումունքներ , անոր համար պարբերական միջոց տըվօղ բորբոքաւոր տենդ ( Ի ) ըսվեցաւ :

—

## Աշնաները.

* . 65 . Հիւանդը ամենէն առաջ կիմանայ սաստիկ դող մը՝ ու ցրտութի . Անկից ետքը՝ խիստ տաքութի մը՝ ու ցաւ գլխոյ . որով կը կարմրին երեսները , աչքերը , ու բոլոր անդամներուն կաշիները . անկից 'ի զատ՝ նոյն կարմրած անդամներին ալ ատէն ատէն ( ... ) կը թրթռան :

Կը ձգտին ( ... ) ան երակները , որոնք որ՝ արուննիս կը հասցընեն ուղեղնուս մէջը . յորմէ կը հետեւին թմրութի ( ... ) , քնափութի , ու ցնորմունք ( ... ) :

Նորեն կուգայ ծարաւութի սաստիկ , ու քնհատութի . ցամաք ջրվաթը խիստ կը ներկըվի ու երեւալ ելլալէն 'ի

ղատ՝ փոխն ալ պինդ ( ժաղըէ ) կըլլայ։

Ասոնք ամէնը ըլլալէն ետքը՝ հիւան-դը կըսկսի չափէ դուրս քրտնիլ։ Քիչ մը ատենէն ետքը՝ աս ամէն նշան-ները՝ բաց 'ի նամզին արագուէն՝ լեցու-նութէն՝ գլխին ծանրութէն՝ ու ծարա-ւութէն, աներևոյթ կըլլան կերթան։

Ասով կը հասկցուի որ՝ տենդը՝ դեռ չէ աղէկցեր . հապա ներսը պահուած է եղեր որ՝ բժշկական ոճով Աբիրէք-սիա կըսուի.

Անկից ետև՝ նորէն կը դառնայ կու-գայ նոյն տենդին բառօքսիզմօն՝ հան-դերձ միւս նշաններովը, որոնք կուգան երբեմն սաստիկ կամ աւելի . ու երբեմն քիչ կամ թեթև։

Եթէ աս տենդը՝ առջինին պէս, կամ առջինէն քիչ մը էվելօք գալու ըլ-լայ նէ, ան ատենը՝ կրկնապատիկ երեք-օրեայ տենդի նման կուգայ՝ որ բոլոր օրը ամենևին չի զատվիր հիւանդէն։

Աս տենդը՝ շատ անգամ ալ կամ հի-ւանդը աղէկ պահեցողութի չունենա-լէն, և կամ ափեղ ցփեղ դեղեր առնե-լէն՝ կը դառնայ կըլլայ միջոց չի տըվող

Ջրական տենդ, կամ միջոց չի՛ տըվօղ բոր-
բորոքական տենդ (* · 111 ·)։

—

## Պատճառները։

* · 66 · Այն պատճառները՝ որ ա-
սոր սահմանին մէջը յիշեցինք՝ կընան
ըլլալ բաւական պատճառ աս տեսակ
տենդ չինելու։

Կանք որ՝ հարբուղխ (շէ-ջէ-ա՛)
(* · 509 ·) ու յօդուածացաւ չինօղ
նիւթերն ալ քիչ մը քիչ պատճառ չեն
սեպվիր աս տենդը չինելու · ըստ որուն
եփելոք կըգըրգուեն ջղերը և շնչական
երակները։

—

## Դարմանը։

* · 67 · Ամենէն առաջ պէ՛տք է որ՝
հիւանդը հեռանայ ամէն կերպ կերխու-
մէն, մանաւանդ թաց ու պաղ հովէն։

Անկից ետև՝ տաքութի՛ եկած գիշե-
րը՝ հիւանդին ոտքերը տաք ջրի մէջ դը-
նելէն 'ի զատ՝ մուրվերի ծաղիկն ալ չայի
պէս պխտի եփէ՛ս, և քիչ մը շաքար խառ-

նես, ու տաք տաք խմցընես, որ երթայ աղէկ մը քրտընի։

Ասոնք ընելէն ետքը՝ եթէ (※ · 65 ·) նշանները աներևոյթ չըլլան նէ, ան ատենը եօթը կամ ինն խաշվէի դաւաթ լեցուն արուն հանելու է. և հասարակ ջրի տեղ ալ հովացուցիչ, ու ցամաք ջըր-վաթ բացօղ դեղեր գործ ածելու է. որոնք են՝ լիմօնաթան, թամարինտի ջուրն, այրըխի ջուրը, ևն.

Եթէ սառնցմով ալ օգուտ մը չըլլայ նէ, ան ատենը՝ հիւանդին տաքութիւնը անցնելէն ետև՝ կըրնաս բանեցընել ասի (ՔԻՆԷՐԲՐԱ՛Ն, ՔԻՒ · 1 ·)։

Ե՛րբոր աս տենդին սկիզբը հարբուղխով (※ · 509 ·), կամ յօդուածացաւով սկսեր է նէ, ան ատենը՝ ա՛լ աւելի պէ՛տք է արուն հանել, և վերի գըրված պաղըշկեցընող դեղերը գործ ածելէն 'ի զատ՝ էպէմկէօմէձխով, և այլ ուրիշ կակըղցնող դեղերով հոգնայ ընելու է.

Ե՛րբոր սառնցմով ալ շահ մը չըլլայ նէ. ան ատենը՝ պէ՛տք է գործ ածել ա՛լ աւելի հովացընող դեղեր. ինչպէս են՝ կիւվէրչինէն՝ քէ՛ռմօռ տի թարթա՛րօն

( Ընչէբբա՛ , Բե. 22. ) . կամ՝ պէ·լա՛նտա տի սալինան ( Ընչէբբա՛ , Բե. 9. ).

Աս միջոցի տունկերը՝ հիւանդին խուցին օդը, ու անկողինը, ծածկարանը, շապիկը ու ուրիշ հագուստները՝ շատ մաքուր պահելու է, որ չըլլայ թէ անոնց ապականութենէն երթայ դառնայ հասարակ ջղային տենդ ( * 27. ) . որոնց դեղն է՝ ( * 38. 39. 40. 41. ).

Շատ անգամ ալ աս տենդ շինող նիւթերը՝ բէռնիչիօզա տենդ շինող նիւթերուն պէս կերթայ դիւրամնաս գործիքներուն կըփակչի, որով կըլլայ ալ աւելի փորձանքաւոր գրգռմունքներ, ու սոսկալի նշաններ.

Անոր համար՝ բժիշկը պարտական կըլլայ՝ արուն հանելէն ետքը՝ խել մը տանն ալ սօլֆաթօ տիքինինօ գործ ածել ( * 25. ).

—

Արուն հանելու ափէնը.

* 68. Աս ալ գիտնալը շատ հարկաւոր է որ՝ Պռուշէ հեղինակը՝ աս տենդին համար ըսեր է՝ թէ խեղճացի ու

շատգէտ բժշկին աջ ձեռքը նշտրակը (Նէշթէր), ու ուրիշ հովացուցիչ ու ցամաք ջրվաթ բացող դեղերը պիտի պատրաստ ըլլան, և ձախ ձեռքը քնաքնան կամ սօլֆա՛թօ տիքինինօն։

Աս ըսվածքին իմաստը աս է․ Նշտրակ աջ ձեռքը ըլլալը կիմացընէ որ՝ ատանկ տենդերուն, կամ ուրիշ բորբոքաւոր հիւանդութիւններուն, ամէնէն առաջ պիտի արիւն առնըվի, ու ետքը՝ հովացուցիչ դեղեր պիտի գործածըվի։

Ձախ ձեռքը՝ քնաքնա կամ սօլֆա՛թօ տիքինինօ ըլլալը, կընշանակէ որ՝ բորբոքումը անցնելէն ետքը՝ պիտի գործածըվի քնաքնան, չէ՛ թէ արիւն հանելէն առաջ, ինչպէս որ վերն ալ ծանուցի (* ․60․)։

—

## Խառն տենդերուն դէմ դեղեր․

* ․69․ Երբոր աս տենդը պարբերական՝ բորբոքաւոր՝ ստամոքսային տենդի նման (* ․54․) գալու ըլլայ նէ․ ան ատենը՝ ամէնէն առաջ արիւն առնըլու է սրտին ջղերուն ու ուրիշ

գործիքներուն գրգռմունքներուն կեօրէ · անկից ետև՝ զովացուցիչ կամ հովացուցիչ դեղեր ( * · 67 · ) գործածելու է։

Եթէ սա տենդը՝ միջոց տըվօղ ջղական սատմըքսային տենդի պէս սկսելու ըլլայ նէ · ան ատենը ջղային սատմըքսական տենդի դեղերը ( * · 55 · 61 · ) գործածելու է։

# ԿԱՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Անընդհատ կամ միջոց չի տրուող տենդի վրայ, որուն տաճկերէն հիւմմայ կըսուի։

## Յօդուած. Է։

### Գաղափարը։

* . 70 . Բժիշկները անընդհատ կամ միջոց չըտուող կըսեն ան տենդին, որ սկսելու ըլլայ նէ՝ բնաւ ազատ չի՛ թողուր հիւանդը. և տաք գնացքը սուրհանդակի պէս գիշեր ցորեկ միջոց չի տալով կը քըշէ կերթայ, ինչվան որ՝ հիւանդը կամ առողջնայ կամ մեռնի, և կամ ուրիշ կերպ հիւանդութիւն մը դարձընէ։

—

### Պատճառները։

* . 71 . Մենք որ աս տենդին սովորաբար կըսենք անընդհատ կամ միջոց չըտուող, չըլլայ թէ ամէն տենդին ու-

ժը կամ աստիճանը զուգահաւասար կարծելով, և աղէկ մը քննութիւն չընելով՝ դեղ տալ սկսէք։

Քանզի՝ ինչ տեսակ տենդ ըլլայնէ ըլլայ՝ առջի բռնած օրը անոնց ամէն նշանները մէկէն չեն երևան ելլեր. հապա՝ օր օրէ երևան ելլելով, և քիչ քիչ շատնալով՝ կերթան կը հասնին բարձր աստիճանը. որոնց ոմանք կըլլան թեթև, ոմանք միջակ, և ոմանք ալ ծանր ու վըտանգաւոր։

Անոր համար՝ բժիշկը հիւանդի մը մօտ գացած ատենը՝ ինչ տեսակ տենդ ըլլալը հասկընալէն 'ի զատ՝ անոնց նշաններուն աստիճաններին ալ աղէկ մը քըննելու է որ՝ չըլլայ թէ թեթև նշաններուն դէմ գործ ածելու դեղերը՝ միջակ նշաններ ունեցող տենդոտին տրվին։ Նմանապէս՝ միջակ նշաններուն դէմ տալու դեղերը՝ ծանր նշաններ ունեցողին տրվին։

Ասոնք ասանկ ըլլանէ, կարծեմ թէ՝ շատ շահաւոր կըլլայ հիւանդին։

Օրինակի համար. թեթև կամ միջակ նշաններ ունեցող հիւանդին՝ չի գիտ-

նալով՝ միջակ կամ ծանր նշաններուն դեղերը գործածելու ըլլային նէ, և նոյն նշաններին ալ օր օրէ շատնալու ըլլան նէ, ան ատենը՝ ընտո՞ր կամ ո՞չ դեղեր գործածելու է որ՝ ան նշանները կամ ցաւը յաղթենք։

—

## ԳՐԳՌՄՈՒՆՔՆԵՐԸ ԹՈՂ ՏԱԼԸ։

* · 72 · Ի՛նչպէս որ միջոց տըւող պարբերական տենդերուն թող տալու ատենին՝ հանգստութե՛ն կամ ազատութե՛ն (Ափիրէ՛քսիա) ատեն կըսվի · ասա՛նկ ալ անընդհատ կամ միջոց չըտըւո՛ղ տենդերուն գրգռմունքները թող տալու ատենին՝ արձակման կամ թուլութե՛ն (Ռէմիս-սիօնէ) ատեն կըսվի։

—

## ԻՆՏԵՐՄԻՏԵՆՏ ԸՍՎԱԾ ՏԵՆԴԻ ՎՐԱՅ։

* · 73 · Հոս տեղը ինծի աւելորդ երևցաւ՝ ուրիշ ընդհատ տենդերուն արձակումը կամ թող տալը մէջ բերել, և անոնց նշաններին ալ մէկիկ մէկիկ գրելը չէ՛ նէ կրկնաբանութի՞ կըլլար · ինծի ալ

կարդացողին ալ ձանձրութիւն կը բերէր։

Միայն թէ՝ որովհետև փորձը կը ցը-ցընէ որ՝ րեմիթթէնթի անուանով տենդ-մը կայ աս տենդերուն մէջ, որ բժիշկ-ները և դժվարաւ կընան որոշել կամ զատել թէ՝ ո՞ր տեսակէն է, այ՝ ընդհա-տէ՞ն կամ միջոց տըվօղէ՞ն. թէ՝ անընդ-հատէն կամ միջոց չըտըվօղէն։

Նման տենդերուն մէկ քանիին հար-կաւոր կերևնայ հոս յիշել, որ անոնց-մով նմաններն ալ հասկցվին։

—

## ՎՐԺՕՆՐԻԷՆՈՒԷ ՐԷԴՐԻՐԷՆՐԷ։

* . 74 . Առաջինը՝ Թուլական տենդ-անընդհատ ( ՎՐԺՕՆՐԻԷՆՈՒԷ ՐԷԴՐԻՐԷՆՐԷ ) ա-նուանով հիւանդութիւն մ՚ընէ . որ կուտայ յայտնապէս թուլութիւն տաքութենը, որով կըլլայ հիւանդը՝ երբեմն աղէկ, ու երբեմն ալ գէշ։ Իսկ երկրորդը՝ ա-նոր մօտիկ սոսկ միջոց չըտըվօղ տենդ մը նէ ( ԽԷՄԻԼԷՉԷԴՆՐԷ ՎՐԺՕՆՐԻԷՆՈՒԷ )։

Որոնց թէպէտ երկուքն ալ միջոց չը-տըվօղ տենդերն, կամ երեքօրեայ կրկնա-պատիկ բորբոքաւոր տենդերն ցեղէն են,

բայց բաց 'ի տաքութենէն՝ ուրիշ ամէն նը-
շանները միջոց չըտըվօղ տենդին նշան-
ներուն պէս (* ·65·) ըլլալուն համար,
թէ քնաքնա և թէ ուրիշ տենդահալած-
դեղեր գործ ածելու ըլլանք նէ՝ գրգըռ-
մունքները կըվերնան անմիջապէս, ու-
տենդն ալ կըկտրի, ինչպէս որ՝ փորձն
ալ մեզի կըսորվեցունէ ։

Աս տեսակ տենդին դեղը ա՛ն է որ՝
հիւանդը աղէկ նայիլ, մաքուր պահել,
հարկին պահանջողութեն կէօրէ քանի մը
անգամ արուն առնելը, և հովացուցիչ
ու ցամաք ջըվալթ բացօղ դեղեր գործ
ածելն. ևն ։

—

Պարբերական րէմիթթէնթէ տենդերն անշըն-
նաւորուածները ու ծածկուածները.

* ·75· Մէկ տենդէն մէկալ տենդ-
փոխվելուն պատճառները չըլլար մի ըստ
միօջէ 'ի մէջ բերել. հապա՝ այսքան մի-
այն կրնանք հասկցընել որ՝ որչափ մըթ-
նոլորտ կամ կլիմայ և խառնուածք կըռ-
նան ըլլալ նէ, անչափ ալ տենդ (3) կըռ-
նայ ըլլալ. և ամէն մէկ տենդն ալ կրնայ

դառնալ ու ըլլալ ուրիշ տեսակ տենդ, ինչպէս որ՝ ինծի ալ շատ անգամ պատահած կայ։

Օրինակի համար. պարբերական տենդի նշաններով (* 20.) սկսեր է տենդ մը. և երբոր դարձեր եղեր է միջոց չըտըվօղ տենդ։ Երբեմն միջոց տըվօղ տենդի մը պէս սկսեր է, ու երբոր դարձեր եղեր է ըէմիթթէնթի ըսված տենդը։ Նմանապէս՝ շատ անգամալ տեսեր եմ որ՝ ըէմիթթէնթիի պէս սկսեր է, ու երբոր փոխվեր եղեր է սուպինթուանթի կամ սուքքօնթինուէ (* 30.)։

Ասոնցմով հասկցիր որ՝ ամէն ընդհատ տենդերը՝ կրնան դառնալ ու ըլլալ անընդհատ տենդ, որ է նշան գէշ կամ ախթ երկննալու։ Նմանապէս՝ անընդհատ տենդերն ալ՝ կրնան դառնալ ու ըլլալ ընդհատ տենդ, որ է ցուցակ բարի։

—

## Տեաչները։

* 76. Միջոց չի տըվօղ ըէմիթթէնթի տենդը (* 74. 75.) երբեմն օրինաւոր կըլլայ, և երբեմն ալ անհարաժե

զատ ( ἐφήμερος ) ․ որոնց ետքինը մասնաւոր ըլլալուն , ու գործուածքներին ալ ամէն օր անպակաս ըլլալուն համար՝ ամէնօրեայ ( ἀμφημερινὴ ) ըսուեցաւ ։

Կայ տաք մէկ ուրիշ տեսակն ալ որ՝ օր մը կուգայ , և օր մը չի գար , կամ գայ ալնէ՝ շատ թեթև կուգայ , ուստի երեքօրեայ ( τριταῖος ) կըսուի ։

Կայ տաք ուրիշ երկրորդ տեսակն ալ որ՝ ամէն օր տաքութիը անպակաս կըլլայ՝ ամէն պարագայիւք հանդերձ ․ ուստի կըսուի՝ էմիթուիթէօ , վասն զի տաք առջի բառօսխմօն՝ կը յարմարի երկրորդին , և երկրորդ բառօսխմօին գալն ալ՝ կը յարմարի չորրորդին ։

Կայ ալ որ՝ չորս օրը անգամ մը կուգայ բառօսխմօն ու կը կառղի գործըռմունքը , ուստի կըսուի՝ քառօրեայ ( τεταρταῖος ) ։

---

## Տաքի այլ պատճառները ։

* ․77․ Ընդհանուր թուլական ( ἀσθενικὴ ) տենդերուն պատճառները կրնանք միայն ճանչնալ առջևնիս եղած

ժգ

նշաններէն · մանաւանդ հիւանդին վըրայէն անցած գացած ախտերէն՝ ու խոցերէն։

Անոր համար՝ կատարեալ բժիշկը՝ երբոր կը տեսնայ սանկ տենդոտ մը՝ մինակ նամզը տեսնալը բաւական չէ համարիր, և ոչ նշանները · հապա՝ երկան ատէն ալ կը քննէ, որ͞պ զի հիւանդին վրայէն ատենօք անցած գացած ախտերը՝ խոցերը հասկնայ, և անոր կէօրէ դեղ պատրաստէ։

Քանզի շատերուն շատ անգամ եղած կայ որ՝ հին ու դժվար աղէկնալու ախտերէն կամ խոցերէն թէպէտ և ըուրացեր են · բայց ախտ կամ խոց չինօղ նիւթերուն՝ գո՛նէ չորս մասին մէկ մասը արուններուն կամ դիւրադրգիռ գործիքներուն և կամ ընդերքներուն մէջերը ատենօք տարածվեր ու պահվեր են։

Ուրեմն ատենները անցնելէն ետև՝ նոյն նիւթերը կրնան պատճառ ըլլալ՝ արուն բորբոքելու կամ մաղձ խռովցընելու, որոնցմէ կը ծագի ջղային գրգռումունքներ և ազգի ազգի տենդեր, մանաւանդ՝ անընդհատ տենդ րէմիթթէնթէ։

Այսու նմանութիւն կըսուի 'ի գիրս՝ բժշկաց թէ || * Մ՚էջ հատէ՛ջ է ծննդեան դուռը · էօյ չուհուանը հայար ||: Բանը ան է որ՝ ինչ տեսակ տենդ կամ հիւանդութիւն ըլլալը աղէկ ճանչնալէն 'ի զատ՝ անոնց թէ գաղտուկ և թէ յայտնի պատճառներն ալ հասկնանք, որ յայտնիները մէկ չէ՛ (* ·7· ) քառասունէն աւելի է·

—

## Նորջան բարբաջ փէնտէրը:

* ·78· Խօսք հոս տեղըս քիչմալ պէտք է խօսիլ նաև ան երկան բարակ կամ խղխայթաւոր տենդերուն (ճէ՛պպաէ ժաէբրբէ՛ժէ, կամ աաաբբաաաաբրօ՛աէէ) վըրայ · որոնք որ՝ կընան խաբել զմեզ ռէմիթթէ՛նթէ տենդ ձևանալով:

Բայց աս տենդը՝ յայտնապէս կը տարբերի ռէմիթթէ՛նթէ տենդէն քանի մը կերպով · վասն զի ասոնք՝ ասոր պէս յայտնի նշան մը չունին, թէ՛ առաջի ճամբային անհանգստութիւնը կողմանէ, և թէ՛ ստամոքսի կամ աղեաց մէջը գըտ-

նըված նիւթերուն ապականութեանը կողմանէ։

Ասոնց նման կըլայ նաև բորբոքողական տենդը որ՝ երբեմն կուգայ պարբերական տենդի նման, ու երբեմն ալ գրգռումունքով․ բայց առանց վերի յիշած նշաններս յայտնի ընելու։

# ՍԵՌՒ ԲՈՒՐԳԻՆ

Ընդհանուր կամ միջոց չըտըվող ջըական տենդի վրայ · որուն տաճկերէն սիթմա հիւմմասը կամ քառա հիւմմա և կամ աղըւ հաստալըգ կըսեն ·

## Յօդուած · Է ·

### Պատճառը։

* ·79· Միջոց չըտըվող տենդ ջըղային կամ ջըական, ջըղերուն փոխված զգայականութէն պատճառած ախտ մը նէ · որ յայտնի եղած պատճառներուն յարմար չէ, և իր գնացքը կըլլայ առանց կարգի և խառըողական նշաններով։

Անոր համար՝ նոր վարպետները՝ ասոր ջըղային տենդ կոչեցին · որոն և հիները՝ չար տենդ (Ֆէպրիս մալինեա), որ և կըսվի վար ցաւ կամ տխրացաւ։

Այս պատճառաւ ալ, ժանտամահին նշաններուն շատերը ասոր հետ մէկ տեղ գտնըվելուն համար՝ լատիներէն ըսվեցաւ բէսթիլէնցիալէ, որ թարգմանի՝

կին ժամանամահու, որուն արտաքսցէք ի-
րենց լեզուով՝ նուշա իլ ռատիէ կըսեն։

—

## Տեսակները։

※. 80. Սա տենդը՝ երբեմն կըլլայ թեթեւ եւ անվնաս՝ երբեմն փոխադրական, այս՝ մէկէ ՚ի մէկալը անցնող. եւ երբեմն ծանր ու մահաբեր։

Մահաբեր կըլլայ ան տենը՝ երբոր ժամանախտին սարսափելի նշանները ասոր հետ մէկ տեղ կըլլան։

Իրաւ շատ բախտաւոր կըլլան անոնք, որոնք որ՝ ասանկ վար ցաւէ բռնըվող հիւանդին չէն դպչիր. քանզի սա երբեմն այնքան թիւնալի եւ մէկէ ՚ի մէկալը անցնող ցաւ կըլլայ, որ մէկ կամ երկու օրվայ մէջ կը զրկէ քաջառողջ մարդը իր անգին կեանքէն, որուն նոր բժիշկները՝ չարագոյն առօրեայ տենդ (էֆէմե՛րա մալեարի՛օ) կըսեն։

Երբեմն ալ վտանգաւոր տենդ (բէռնիչիօ՛զա) (※. 32.) կը դառնայ կըլլայ սա տենդը, երբոր նշանները՝ մանաւանդ տաքութիւնը միջահատական կըլլայ։

Շատ հեղալ փտախտ (Ֆէ՛պրիս փուտրի՛տա) կըլլայ աս տենդըներէ՛ն որ տը-կար կամ Տիաթէզի ասթէնիքա (4) կըլ-լայ հիւանդութիւնը:

Երբեմն սաստիկ կծու ու տաքիկ նիւ-թերը կը միաբանին մաղձի ու արիւնի հետ, ան ատենը կավըրվին ջղերուն հիւ-թերը· յորմէ կը յառաջանան պէս պէս գրգռմունքներ:

Աւրէմն գրգռմունք ըսելով՝ կիմա-նամք հոս տեղս ան չարութիւնը, որ ջղե-րը՝ կամ նոյն ջղերուն մանրաթելերը անդադար կը գրգռեն կամ կը մշտեն վար-ցաւ կամ ջղային տենդ շինելու համար· Ձար կամ դեղ ընելու ատենը՝ անհոգու-թիւնով անցուցինք նէ, տենդը շինեց կատարեց · ատեն չի տըվինք՝ ձար կամ դեղ ըրինքնէ, յաղթեցինք վատըկե-ցանք:

Ասկից վար չէ՛ն մնար նա՛և նավա՛լէ՝ քարչէրա՛լէ՝ քասթրէ՛նսէ՝ նօսօքօմիա՛լէ ըսված տենդերը, որոնք որ անպակաս կըլլան հիւանդանոցները, բանակները, բանտերը ու նաւերուն մէջերը,

* . 81 . Ամէն տնկեր Թէպէտ և Թշնամի են մարդկային կենացը, բայց ամէնէն աւելի այս ջրային տնկը. ինչու որ՝ ասոր տեսակը շատ ըլլալէն 'ի զատ՝ խիստ շուտով ալ կը խանգարէ կամ կավ-րէ զգայութիւնները՝ ջրերուն դիրքերը ու հիւթերը, և խառնուածքներուն զուգահաւասարութիւնը։

Այս տեսակ տնկերէն այրք և կանայք՝ ծերք և տղայք անխտիր բռնըվելէն 'ի զատ՝ շատ անգամ ալ շուներն ու այլ ուրիշ կենդանիները ևս կը բռնըվին, ու չարաչար կը մեռնին. մանաւանդ՝ ան տեղները, երբոր փոխադրականութիւն կամ պլշըկողութիւնը ասոնց հետ մէկ տեղ կը գտնըվին։

Այս ցաւը՝ չէ՛ Թէ մէկ տեսակ տնկի նշաններով կը զարդարեն հիւանդը. հապա՝ ամէն տեսակ տնկերու նշաններովը։

Այս պատճառաւ բժիշկները ևս կը տարակուսին՝ Թէ ո՞ր տեսակ տնկի տակը պէ՛տք է դնել, ու դեղ պատրաստել։

Անոր համար՝ ասանկ տարափոխիկ

տենդերէն բժիշկները ևս խիստ կը զգուշանան, որ իրենք ալ չի պըլըշկին, մանաւանդ՝ հիւանդը կամ հիւանդին տէրը խօսք հասկըցող չըլլա՛ննէ։

—

## Ժանտախտի Վրայ։

* · 82 · Ժանտախտը՝ որ և կըսվի ժանտամահ, իտալերէն՝ Բէ՛սթէ, յունարէն՝ Բանուքըլա, արապերէն՝ Թաւուն կամ Վ՛էպա և կամ Գուպպէ, տաճկերէն՝ Յումրուճաք · ջղային տենդերուն ցեղէն հիւանդութի՛ մընէ, որ չի՛ գիտեր խընայել կամ ողորմիլ։

Կընանք նմանցնել կատղած շան պատառօղուներ ու պըլըշկօղուներ կողմանէ · քանզի ինչպէս որ կատղած շունը՝ իր դէմ ելլօղը չարաչար կը գիշատէ ու կը պատառէ, որուն խածնելը պատճառ կըլլայ որ՝ խածնըվօղն ալ կատղի իրեն պէս · ասոր պէս ալ ժանտախտը իմացի՛ր։

Ընդհանրապէս երկու երևելի տեսակ ժանտախտ կայ, որոնց մէկին կըսենք՝ փուտ ժանտախտ ( Բէ՛ռբէ Բու-Բուռէ՛փա ). և մէկալին՝ ժանտախտ բոցա-

կեղ ( ֆէ՛պրէ ինֆիամմաթօրիա ):

Սուրջինը որ՝ սովորաբար կը ծագի 'ի փառւթէ, կըսուի՝ Տիաթէզի ասթէնիքա. իսկ եռքինը՝ որ կը ծագի 'ի պէս պէս գրգռմունքէ, կըսուի Տիաթէզի իբօսթէնիքա ( 4 ):

Սա եռքինը չէ՛ ճշմարիտ առիթ ժամատախտի, եթէ ոչ՝ առջինը. անոր համար՝ քանի մը նշաններով և եթ կը տարբերի առջինէն, ոչ և առջինին դեղերը՝ եռքինին դեղերէն:

Փուտ ըսած ժամատախտը՝ հասարակէն միայն ատով կը զատուի, որ ատոր նամզը կըլլայ թոյլ՝ դատարկ՝ ցած՝ բարակ՝ և կամնցուկ, կենսական ուժը կը պակսի, ձեռքը ու ոտքը կը թուլնայ. հիւանդին բոլոր մարմինը կը ցամքի, ու կը դողդողայ, շունչը խիստ դէշ կը հոտի ու կանաչագոյն կը փսխէ, փորըշուք ըլլալէն 'ի զատ՝ գլուխն ալ խիստ կը ցաւի ու կը ծանրանայ. սիրտը անհանգիստ կըլլայ ու քունն ալ կը փախչի. ժամատահարին բոլոր մարմինը կը զարգարուի խաղաւարտօք, որոնց ոմանք կըլլան կարմիր, ոմանք կապուտ, և ոմանք ալ սև:

Երբեմն ժանտահարը կը կատղի ու կը խենդենայ. մէջքը ու ոսկորները կը ցաւին, թմրութիւնը, գլխին ծանրութիւնը ու պտըտըտուքը կը շատնայ։

Պալարակսկիծը կամ եռունդը (ֆու-րուն), որ է բուն նշան ժանտախտի, երբեմն առջի օրը երեւան կելլէ, երբեմն մէկ քանի օրէն ետեւ, ու երբեմն ալ բընաւ երեւան չելլեր, որոնց խտալացիք պուպօնէ բէսթիլէնցիալէ կըսեն. շատ բունկօղ ու սաստկակսկիծ պալար կամ ուռեցք մընէ, որ երբեմն կելլէ ականջներուն ետին, երբեմն կոկորդին (պօղա-զըն) տակը, երբեմն անթատակը (խօլ-թուխը), ու երբեմն ալ երանքներուն քունջերը (խասըխները)։

Երբեմն աս եռունդը հիւանդին բախտաւորութենէն քիչ քիչ մէջի արիւնը թարախ դառնալով կը հասնի, ու կը ծակի, որով հիւանդը կազատի։

Բայց շատ անգամ ալ նոյն եռունդը քաղցկեղ կը դառնայ կըլլայ, յորմէ հիւանդը անմիջապէս կը մեռնի։

Ասկից 'ի զատ՝ եռունդ մընալ կայ, որ խտալացիք անթռաչէ կամ քարպօնչէլլօ

բեսթիլէնցիալէ կըսեն, որուն մէջը լեցուն է դեղնախառն կարմիր թիւնալի հիւթով. շատ անգամ ալ կըլլայ կապտագոյն կամ սեւ հիւթով։

Աս հիւթը որչափ սեւագոյն ըլլայնէ, անչափ ալ թունաւոր կըլլայ. որով իր տակը եղած միսերը քիչ քիչ ուտելով կը հատցունէ, ու էն եաքըն ալ կը մեռցունէ։

Կայ ուրիշ տեսակ կարծր ու կարմըրագոյն խոյլ մը ալ, որ սովորաբար կըլլայ ականջին ետեւը։

Աս տեսակը ջիրաւի շատ քիչ կը տեսնըվի, ես իմ կենացս մէջը միայն մարդմը տեսայ աս ուռեցքով ժանտախտի ատենը, որուն մէջը լեցուն էր թարախով, բայց վերինին չափ ցաւ չունէր. եաքը բացուեցաւ, ու շատ օր բանելէն ետեւ՝ քաղցկեղ դարձաւ։

Աս անելունդն է որ՝ կըսվի խոյլ ժանտախտաւոր (Բուբօնիէօզ բէսթիլէնցիալէ)։

Ան նշանները, որոնք որ ինչվան հիմա գրեցինք, երբեմն երեւան կելլեն հիւանդութիլը սկսածին պէս, երբեմն քանի մը օրէն ետեւ, ու երբեմն ալ էն եաքէն, յը՝ քոխըլին ատենը. մանաւանդ ան նշան-

ները, որոնք որ՝ յատուկ են ժանտախ-տին. զոր օրինակ՝ ելունդը, մարը, ու խոյլը։

Բայց շատ անգամալ շատ երկիրներ կըլլան նաև առանց ասոնց, որ անոնք ալ մեկալներուն պես կավրեն ջղերուն հիւ-թերը ու դիրքերը, և խառնուածքնե-րուն զուգահաւասարութիւնը. որոնցմով կը մեռնի հիւանդը։

Ափրիկայի և եւրոպայի մէջէն անպա-կաս եղող ժանտախտները որ Աթենիկեանի կըսվին, որոնք որ կըլնան միւսաններուն պես սպանանել զմարդ. միշտ կըլլան առանց ելունդի կամ պալարի, և առանց բառօ-թիտէի. բայց են երբը քաղցկեղ կըլնեն ներսէն, ու կը մեռցնեն անմիջապէս։

—

### Ժանտախտաւոր տենդ։

* . 83 . Ժանտախտաւոր կամ կից ժանտամահու (* . 79 .) ըսելուն պատ-ճառը ան պիտի ըլլայ. որ ինչպէս ասիկայ շատ նմանութի ունի ուրիշ տեսակ ջղային տենդերուն (* . 85 . 86 .) հետ. անանկ ալ նմանութի ունի ժանտախտին հետ։

Ասկից 'ի զատ՝ ասոնց դեղերն ալ մէկ զմէկէ շատ տարբերութիւն չունենալնուն համար՝ ժամանախտաւոր տենդ (Ֆէպպրէ բէռնիչիէնդզիօ՛զէ) ըսվեցաւ։

Ասոր գնացքը ու նշանները ա՛լ աւելի ծանր ու փորձանքաւոր կըլլան քան մէկալներէն։

—

Առօրէայ չարագոյն տենդ։

* · 84 · Առօրեայ չարագոյն (Ֆէպէ-դի՛ա-ա մալինեօ՛զա) տենդ ըսածնիս՝ ժամանախտաւոր տենդին (* · 79 ·) մէկ ուրիշ տեսա՛կն է։

Ասկից երեք տարի առաջ Եւրոպիոյ կողմերը չափէ շա՛տ դուրս ջարդըլածքներ ըրաւ՝ մանաւանդ անգղիայի կողմերը, ու շատ ալ տներ գոցեց. անոր համար ժամանախտ Եւրոպիոյ ալ ըսվեցաւ։ Բատորում ատոր հետ անպակաս կըլլայ թէ՛ պալարը և թէ՛ ելունդը։

Ասոնցմէ 'ի զատ՝ կը թափէ նա՛և խիստ շատ քրտինք, որ է՛ ցուրտ, և հոտած. սաստիկ ցրտուծ ու դող մը գալէն 'ի զատ՝ քաղցրաշունչ հոլի նման բան մը ալ կու-

գայ կանցնի հիւանդին առնի անդամէն ։

Անկից ետեւ՝ կուգայ խիստ շատ տաքութիւն, թուլութիւն, անհանգստութիւն, սրտանեղութիւն, վախկոտութիւն, յուսահատութիւն, մարելիք, սաստիկ գլխացաւութիւն՝ ու գլխոյ պտոյտուք, թմրութիւն, ջղացնցութիւն (հէզեան), բաբախումն սրտի (պալպիտասիօն), նուաղի մանրութիւն՝ շուտութիւն և անհաւասարութիւն ։

Այս անուեր ցաւը՝ շատ անգամ մէկ օրվան մէջ կառնէ կուտայ, այն՝ կամ կազատի և կամ կը մեռնի հիւանդը ․ երբեմն ալ կը քաշէ մինչեւ 5 կամ 7 օր, և ոչ աւելի ։

—

## Պոխուրադարձ ջղային տենդ ։

* ․ 85 ․ Պոխուրադարձ ջղային տենդ (Ֆէպպրէ նէռվօզա վէռսաթիլէ) ըստ ծնիս՝ ջլային տենդին (* ․ 79 ․) մէկ զատ տեսակն է ։

Այս հիւանդութեան բռնուելու մարդը՝ հիւանդութենէն քանի մը օր առաջ անհանգիստ և վատառողջ կըլլայ, և անկից ետեւ՝ հիւանդութիւնը օր օրէ կը սկսէ շատ-

նալ . որով տենդոտին սիրտը անմիջապէս կը թուլնայ , շունչը դժուարաւ կառնէ կուտայ , ձանձրութիւնը՝ նեղութիւնը՝ և արցունք թափելը չափէ դուրս կըլլայ ։

Կան մարդիկ , որք բռնըւածնուն պէս կերգեն՝ կը խաղան ու կը խնդան ։

Կան ոմանք ալ , որոնք կը բռնըւին ասկից , և շատ օր ալ ոտքի վրայ քաշըլէն ետքը՝ կիյնան յանկողին ։

Բայց կը գտնըւին՝ ոմանք ալ որ՝ բըռնըւածնուն պէս գլուխնին բարցէն չեն կրնար վերցնել ։

Ասոնցմով կուզեմ հասկցընել թէ՝ աս չորս կերպ ըսկըսվածքին՝ և ոչ մէկին հաւատալու է . վ̄զի ասոնց չորս կերպն ալ շատ հեղ աչքովնիս տեսանք որ՝ էն ետքը կամ մեռան , և կամ ձորով ազատեցան ։

Այսչափ հասկնալէն ետև ասոր ըսկըսվածքները , գանք հիմա մնացեալ նըշանները նայինք ։

Առջի պատմած նշաններէն 'ի զատ՝ հիւանդին կենդանական ուժը ա՛լ աւելի կը պակսի , դուրսի ցրտութիւնը՝ ու ներսի տաքութիւնը կը շատնայ , գլխին՝ մէջքին՝

ու յօդուածներուն ցաւերը կը սաստկանան . Թմրութիւնը , գլխին պտըտուքը , սիրտ խառնըվիլը , փսխելը , գիշերվան քրտինքը կը շատնան ։

Անոնք ըլլալէն ետեւ՝ կենսական ուժը այն աստիճան կը պակսի որ՝ ինչվան հիւանդը ոտքի վրայ չի կրնար կանգնիլ , և եթէ կանգնելու համար աշխատելու ըլլայ ալ նէ՝ անտարակոյս մարելիք կուգայ ։

Երբեմն հիւանդը կը ցնորի ու կը կատղի , և երբեմն ալ տաքութիւնը չափէ շատ դուրս կըլլայ . յորմէ կը հետեւի տեսութեան նուաղութիւն , քնհատութիւն , աչքերուն կարմրութիւն , և խիստ փայլունութիւն . հիւանդը մէկ բանի մը վրայ անդադար կընայի , և աչքին ծայրերն ալ կը ցաւին , ձեռքերը դողալէն 'ի զատ՝ ուրիշ անդամներն ալ թեթեւօրէն կըսկսեն շարժիլ , ձայնը կը բարակնայ՝ ու կը կերկերի . լեզուն կը ձերմկի՝ կը ցամքի՝ ու կը դողդողայ . ծարաւութիւնը կը շատնայ , ոտ և փրփուրոտ թուքը . ցամաք ջրվաթը կը ձերմկի , բայց կըլլայ պղտոր ու առատ . մեծ ջրվաթը երբեմն ուշ ուշ կըլլայ , ու երբեմն ալ շուտ շուտ , բայց միշտ մրու-

րոտ՝ ու ցամաքին հետ մէկ տեղ կըլլայ․ երբեմն հիւանդին փորը շատ կը ցաւի, յորմէ կը հետևի միզարգելութիւն՝ արունոտ փորքըշուք՝ և հեծկլտանք, որ է նշան քաղցկեղի (կանկրենա)․ հիւանդին ականջները՝ երբեմն կըլլան սուր, ու երբեմն ալ ծանր․ նամկը ու շնչերակները ախտին գնացքին պէս տարբեր կըլլան։

Օրինակի համար․ երբեմն կընետէ լեցուն ու անհաւասար, երբեմն միջոց տալով՝ մանր՝ և դողդողալով, և երբեմն ալ այնքան մանր ու կորուսմամբ կը զարնէ որ՝ շատ անգամ նոյն զարկը բժիշկին մատներուն տակէն անյայտ կըլլայ։

Այս միջոցի ատենները՝ տենդի առջի օրվան պէս՝ հիւանդը կիմանայ չափաւոր տաքութիւն մը, ու ետքէն առատ կամ ձոխ քրտինք մը կը թափէ, յորմէ կը հետևին ցամաքութիւն մորթոյ՝ կամ կաշիի, խաղաւարտներ ու կորեկի նման մանր բիծեր (չէ÷է) երևալ մորթին կամ կաշիին վրայօք։

Երբեմն տենդոտին կամ քթէն՝ կամ նստոյ տեղէն՝ կամ ցամաք ջրվաթի ձամբայէն՝ կամ արգանդէն թանչի (հոյա-

ԸԼԷ) արուն մը կը փրչի, որ է՛ ցուցակ փորձանքի։

Երբեմն երանքները (ԴԸՆ-ՆԸ), կամ անթատակը (ԽՕՎԸՐ-ԽԸ), և կամ ականջներուն ետևները ելունդ կամ պալար երևան կելլէ՝ հանդերձ աֆթէ՛ ըսված բերնի խոցերով։

Երբեմն ալ հիւանդին մէկ կող մը յանկարծօրէն սուր և սաստիկ ցաւ մը կուգայ, որ քանի մը ժամէն ետքը՝ նոյն ցաւած տեղը առաջ կը կարմրի, ետքէն կը կապուտնայ, և է՛ն ետքը կերցաւ կամ քաղցկեղ կը դառնայ կըլլայ, որով հիւանդն ալ կը մեռնի։

Ընդհանրապէս չորս կամ եօթն օր անցնելէն ետև՝ բոլորովին կիյնայ ուժէն հիւանդը, յորմէ կը հետևի ջղացնցութիւն՝ ջղաքաշութի՛ և բոլոր անդամներուն կարկամութի։

Ասոնք ասանկ ըլլալէն ետև՝ ողորմելի հիւանդը ա՛լ աւելի դժվար շունչ առնել տալով, պաղ ու մածուցիկ քրտինք թափելով, կերպարանքը մեռելատիպ դառնալով՝ կը փոխվի 'ի կենաց աստի։

Իսկ ան առենը դէպ 'ի լաւ կող մը կը

դառնայ հիւանդը․ երբոր մարմնոյ արտաշնչութիւնը կը բացուի, և քրտինքը շոգիաւոր կըլլայ․ երբոր անդամներուն՝ մանաւանդ բազկին կաշիները կը կակուղնան․ երբոր բերանը կը ջրոտի, ու հանգիստ կը քնանայ։

Թէպէտ հիւանդութիւնը շատ կերկըննայ․ բայց օր օրէ կորսնցուցած ուժը ետ կը դառնայ՝ կուգայ իր տեղը։

—

## Թմրեցուցիչ Ջղային Տենդ։

* · 86 · Թմրեցուցիչ Ջղային տենդը՝ որ իտալերէն կըսուի Փէ՛պպրէ նեռվո՛զա սթուբիտա, տաճկերէն՝ ույուշուքլու սինիր հումմասը։

Հիւանդութիւն մ՚ըն է՝ շարժառթիչ գործարանաց, ու Ջղային մանրաթելից․ որով հիւանդը չափէ շատ դուրս ուժէ կիյնայ, սիրտը կընեղանայ՝ ու կը սխմըվի, բերանը շատ կը ցամքի, Թուքը մածուցիկ կըլլայ, սիրտը կը խառնըվի՝ ու կը փսխէ, աչքերը կը մթնէ՝ կը թմրի՝ և կոպերն ալ կը ցուի․ անդամները՝ մանաւանդ գլուխը կը պաղի, և երբեմն ալ կը տաքնայ։

Երբեմն կը պատահի որ՝ աս ըսած նշաններս ամէնն ալ երևան կելլան · բայց հիւանդը տակաւին ( փահա ) ոտքի վրայ կը պտըտի։

Եւ քանի մը օրէն ետքը՝ հիւանդութիւնը կը սկսի կատղիլ, նամզերը այնքան լեցուն ու շուտ կը զարնէ որ՝ ինչվան բժիշկը ևս բորբոքում՝, կամ յոդուածացաւ, կամ հարբուխ կարծելով կը խաբուի · բայց մէկալ օրը կը թուլնայ նամզին սաստկութիւնը, ձեռքերը կը դողան, և ձգանքներուն գաղտնի շարժմունքները երևան կելլեն · որոնցմով առաջ կը կարմրի հիւանդին երեսները, ու ետքէն կը կապուտնան։

Աս տեսակ տենդին յատուկ բնութին է որ՝ խռռունկ քուն՝ թմրութի՝ ցնորմունք կը բերէ։

Երբեմն անպակաս կըլլայ մածուցիկ ու չափաւոր հոտով քրտինքը, որով կը կակղնան բոլոր մարմնին կաշիները · կը քերուին՝ ու կը դրդուի քիթը, և դուրս կը զարնէ խաղաւարտները ( հապա ) · ակռաներուն վրայօք մածուցիկ ու մութ դոյն մը կապելէն 'ի զատ՝ պղտկունքնե-

րուն վրայէն ալ փրփուրը անպակաս կըլ-լայ ․ լեզուն երբեմն կըլլայ թաց ու կա-կուղ, և երբեմն ալ չոր մնի նման ըլլալէն 'ի զատ՝ բերնին մէջէն ալ դժուար դուրս կելլէ դողդողալով, և անոր վրայէն ալ դեղին աղտ մը անպակաս կըլլայ ։

Ծարաւութիւնը՝ երբեմն շատ կըլ-լայ, ու երբեմն ալ ջուրի տեղ գինի կուզէ խմել ։

Աղիներուն ցամքութիւնը որչափ աւելի ըլլայ նէ, անչափ ալ աւելի կըլլայ փորքըշուքը ։

Փամփշտին ( խալաֆուշէն) կարգադ-րութիւնը ավըրվելուն համար՝ ցամք ջրվաթն ալ անկանոն կըլլայ ։

Օրինակի համար ․ երբեմն հում, ճերմակ, ու ջրային կըլլայ ․ երբեմն կար-միր ու պարզ կըլլայ ․ երբեմն թանձր ու մութ գոյն կըլլայ ․ և երբեմն ալ սև և խիստ գարշահոտ կըլլայ ։

Անոր համար՝ նոյն ջրվաթի ճամբան՝ երբեմն կը գոցվի, ու երբեմն ալ շատ կը բացվի ․ երբեմն հիւանդին ոտքին մէկը կը պինդնայ ու կը ծանրանայ, ականջները կը ղողանջեն՝ ու շատ անգամ ալ կը խլանան ։

Աս տենդին նշանները օր մը երևան կելլեն և օր մըն ալ աներևոյթ կըլլան կըրկնապատիկ երեքօրեայ տենդի նման. և շատ անգամ ալ գիշերվան դէմ կը սաստկանան։

Հիւանդին կերպարանքը կը գեշնայ, կը դեղնի, անանկ որ՝ տեսնողը կը վախնայ, և կը զարհուրի. ինքիրեն շատ աւտաւոց բաներ կը խօսի, և ճանճի նման երևոյթներ բռնելու համար՝ ձեռքերը միշտ օդին (հաւա) մէջը կը պըտըտցունէ. աչքերը թարթիչներուն տակէն անանկ գէշ կերպով մը ասդին անդին նայելու համար կը դարձընէ կամ կը պտըտցընէ, որ տեսնողները կը սասանին։

Աս միջոցի մէջերը՝ քթին ծայրը քիչ մը կը ծուի, ու ականջներն ալ կը պաղին. ո՛րչափ աս նշանները սաստիկ ըլլան նէ, անչափ ալ կենսական ուժը կը պակսի. որ է՛ նշան գէշ կամ աղէտալի։

Ասոցմէ ետև՝ թմրութի՛ւնը, ցնորմունքը, շատնալէն 'ի զատ՝ քըտինքն ալ խիստ մածուցիկ ու հոտած կըլլայ։

Նմանապէս աղըն ալ կըսկսէ խիստ գէշ հոտիլ, ու շուտ շուտ դուրս ելլել. որոնցմէ կը հետևի հեծկլտանք, և հապաններուն սևութիւն։

Երբեմն հիւանդին մէկ կողմը կը սկսի սեւնալ, և երբեմն ալ քթէն կամ այլ յարմար տեղէն շատ արուն փչել: Այն ատենները կը նետէ նամը խիստ մանր ու անհաստատ. շունչն ալ էվելօք դժուար կառնէ կուտայ, կը սկսեն մկանունքներուն ակամայ շարժմունքները, ու ջղացնցութիւնները, սոսկալի մարելեք-ները, և ետքի մնելքը կամ դողը. որ է նշան քաղցկեղի, և հոգեվարութեան:

Իսկ ան ատենը դէպ՚ի լաւ կողմը կը դառնայ հիւանդը. երբոր մարմնին արտաշնչութիւնը կը բացուի, ու շոգիաւոր քրտինք կը սկսի գալ. երբոր մորթը՝ կոկորդը (պօղազը)՝ բերանը՝ և լեզուն կը սկսին թրջիլ ու կակղնալ. երբոր ականջ-ներուն խլշրտոցը կը կտրի, և նամըն ալ ուժով ու հաստատ կըլլայ. երբոր թեթև ու անուշ քուն կուգայ, և ախորժակն (իշթահն) ալ կը բացուի, և օր օրէ ալ կը սկսի կորսնցուցած ուժը վրան գալ, ու առողջութիւն ստանալ. բայց աղէկ զգուշութիւն պիտի ընէ՝ ու բժիշկին պատուէրը պահէ որ, չըլլայ որ հիւանդութիւնը նորոգի ու կրկին վտանգի մէջ իյնայ:

### փտտած նիւթերը՝ անընդհատ ջրային տեն-դէ հետ մէկ տեղ ըլլալը:

*.87. Շատ անգամ կըլլայ որ՝ փորային փտտած ու ապականած նիւթերը՝ միջոց չորլօղ ջրային տենդի հետ մէկ տեղ կըգտնուին, որոնց նշանները (*.55.) ալ աւելի ուժով կըլլան՝ քան անընդհատ ջրային տենդի (*.79.) նշաններէն:

Անոց որ՝ հիմա պէտք էր խօսիլ նաև տար ան պատճառներուն վրայ. որոնք որ պատրաստ կըլլան թէ՛ փորային՝ և թէ՛ ստամոքսային նիւթերը փտտեցնել ու գէշ գէշ տեսակ հիւանդութիւններ առաջ բերել:

Բայց ինծի ալ աղէկ թուեցաւ որ՝ հոս խօսելիքս (*.10.) թուանըշանին մէջը խօսիմ:

—

### Բորբոքուածը անընդհատ ջրային տենդէ հետ մէկ տեղ ըլլալը:

*.88. Բորբոքաւոր անընդհատ ջրային տենդ ըսածնիս՝ անընդհատ ջրա-

կան տենդին մէկ զատ տեսակն է։

Աս տեսակը իրաւ՛ն շատ քիչ կը պատահի երիտասարդներուն, և ան ալ անոնց՝ որոնց մարմիննին ուժով է, և բընութիւննին արիւնոտ։

Թէպէտ և աս տեղը մեզի այնքան պէ՛տք չէ աղէկ հասկնալու միտքով՝ ետևէն ելնիլ, բայց միայն այսքան գիտնալ կը վայլէ որ՝ ամէն տեսակ տենդերուն կամ ժամանակներուն հետ մէկ տեղ չեն գտնուիր բորբոքման նշանները, ինչպէս որ վերն ալ յիշեցինք։

Ասիկայ աղէկցնելու՝ են առաջ հետը եղած նշանները նայելու ու հասկընալու է. անկից ետքը բորբոքման պատճառը, տեղական հիւանդութիւնը, ո՞ր՝ ան հիւանդութիւնը՝ որ ան օրերը ան երկրին մէջը շատ կը գտնուի, և հիւանդին տարիքը ու խառնուածքը. անկից ետքը՝ թէ որ բորբոքման նշանները՝ ասոր հետ մէկ տեղ գտնուելու ըլլան նէ, ան ատենը քիչ մը արիւն առնելու է. և ան ալ՝ շատ զգուշութեամբ։

Սովորական դարմանն է՝ հովացուցիչ (անթիֆլօժիսթիք) դեղերը (10)։

Անընդհատ ջղական տենդերէն բըռնըւօղները՝ ան ատենը շատ վտանգի մէջ կըլլան, երբոր ասոր հետ մէկ տեղ կըլլան ֆլէմմօնօզայի կամ օձիկի երեւոյթները կամ նշանները։

Երբեմն ունի նմանութիւն նաեւ բորբոքման ուղեղի, կոկորդի, թոքի, լերդի, աղեաց, և արգանդի. այլ և ծաղկի, ու արիւնախառն փորքըլշուքի։

Անոնցմէ են նաեւ անոնք՝ որ շատ կըլլան հիւանդանոցները, բանտերը, բանակները, նաւերը, շատ մարդ մէկ տեղ բնակըւած տեղերը։

Յայտնի է որ՝ խելացի բժիշկը ասանկ տնաւեր ցաւերը աղէկ հասկնալու համար շատ կը հարցափորձէ. բայց կան ալ որ՝ կը խաբւին, էն խելացին ալ երբեմն կը սխալի արտորանքով կամ անհոգութիւնով նայելէն։

Երբեմն ալ եղած կայ որ՝ մէկին գըլուխը սաստիկ ցաւ մը կամ ցնորմունք մը եկածին պէս՝ խաբւելով կարծեր են, թէ ուղեղի բորբոքմունք է, կամ թիֆօ, կամ բառաֆրէնիթիսէ, կամ էբիսլէ, և կամ սասօտէ է, էն ետքը տեսեր են

որ՝ իրենց կարծիքներուն և հիչ մէկն ալ չէ՛ . հապա՝ անընդհատ ջրական տենդերուն մէկ տեսակն է եղեր։

---

### Յուշիկ կամ յամր ջրական տենդ։

*. 89. Աս տենդը՝ որու կըսուի դանդաղ, իտալերէն ֆէպպրէ լէնթա նեռվօզա, արապերէն՝ սու խունի րուֆայի իլ ասապ, տաճկերէն՝ ինձէ սինիր հումմասը։

Ուրիշ տեսակ ջղային տենդ մըն է, որ ընաւ չի գիտեր արտորալ . քանզի ասոր նշաններուն գնացքը սովորաբար խիստ կամաց ըլլալուն համար՝ աս անունը (*. 80.) դրին ասոր։

Տեղական (նշանք) կըլլայ աս տենդը, երբոր հիւանդին եղած տեղին օդը ծանր ու թաց կըլլայ, և ջուրն ալ գէշ ու ծանր կըլլայ . երբոր հիւանդին խուցը, կամ անկողինը, կամ ծածկարանը, և կամ ուրիշ լաթերը մաքուր չըլլար։

Աս տեսակ տենդէն շատ ատեն կը բռնուին անոնք, որոնք որ կարդալու՝ գրելու՝ և այլ ուրիշ բարակ գիտութիներու ետևէ խիստ շատ կը հետևին,

դժվարամարս ու սակաւասնունդ ուտե-լիքներով կապրին, մերկ կամ բաց ոտքով կը քալեն, թաց լաթերով հովին դէմ շատ կը կենան, լճերուն շոգիները շատ առնելէն 'ի զատ՝ ջրէն ալ անպակաս կը խմեն, թաց գետնի ու պաղ քարերուն վրայ կը նստին կամ կը պառկին՝ մանաւանդ հոգնած ու քրտնած ատեննին. չափէ շատ դուրս արուն կը հանեն, ու լուծողական դեղեր կը խմեն, շատ կը մրտմրտան, և խիստ վախ կը քաշեն, սաստիկ կը բարկանան և կը տրտմին, չափէ շատ դուրս կը սիրահարին, և սերմերնին միշտ կը պակսեցընեն:

Անոնք ամէնը՝ որոնք որ կրնան գըրգռել ջղերուն դիրքերը, կը պատճառեն աս տենդը:

Աս տենդէն բռնըվողը՝ ամէնէն առաջ կիմանայ դժվարամարսութի, ըստամոքսի կծվութի, և էրիկ մը. ետքէն՝ բերնէն դուրս կարտաքսէ թթու՝ կծու՝ և տախիպ հիւթ մը. փորը առաջ կալուածք (խապըզ) կըլլայ, և ետքէն կը քըշէ, հանդերձ սուր և սաստիկ ցաւով մը. Ջղերը սաստիկ կը թուլնան և ինքն ալ

վատառողջ կըլլայ · գլուխը կը պըտըտի , և աչքերուն վրայօք ալ ցաւ մը կիմանայ · յօնքերուն մէջ տեղօքը խիստ կը սխմըվի · քիչ մը դժվար շունչ կառնէ կուտայ · սիրտը կը տկարանայ և շուտ շուտ կը զարնէ ։

Տըսնցմէ ետև՝ հիւանդը կը սկսէ հառաչել , արցունք թափել , հևալ , յուսահատիլ , մինաւորութիւն ուզել , ջղերուն գրգռմունքները սկսել ։

Երբեմն երեսները կը տաքնան ու կը կարմրին , և երբեմն ալ կը պաղին ու կը դեղնին · ատեն ատեն ափերուն մէջը կամ ուրիշ կողմերը կրակի պէս կերին , բայց շուտով մը կանցնին · Նամզերը երբեմն կը զարնեն անհաւասար , երբեմն թոյլ , երբեմն շուտ շուտ , երբեմն դողդողալով՝ և միջոց տալով , և երբեմն ալ պինդ և կարկամ ։

Հիւանդը՝ աս նշաններուն ամէնն ալ գրեթէ երկու շաբաթի չափ ոտքի վրայ կը քաշէ , և անկից ետև կիյնայ յանկողին ( տէօշէկ ) · ըստ որում ան ատենները թէ ոտքերը , թէ ծնկները , և թէ ձեռքերը ընտոր որ պէտք է նէ կը

տըկարանան կամ կը թուլնան ․ և շատ հեղ ալ կիյնայ կը մարի ։

Աս նշաններուն մէջէն՝ թէ՛ տաքութիւնը, թէ՛ դժվարաշնչութիւնը, թէ՛ նաբըզին շուտութիւնը, և թէ՛ քնհատութիւնը սովորաբար գիշերները կը կատղին, ու ցերեկները քիչ ու շատ կը թեթևանան ։

Յօդուածքներուն և կշտին ցաւերը՝ այնքան կաճին ու կը սաստկանան, ինչվան բժիշկներն ալ կը տարակուսին որ՝ չըլլա՛յ թէ՝ տենդոտը կամ յօդուածացաւէն կամ կշտացաւէն ալ բռնըված ըլլայ ։

Յամաք ջրվաթը դեղնագոյն ըլլալէն 'ի զատ՝ անոր երեսօքն ալ ալիւրի նման փոշիներ կը լողան ։

Ասոնք ամէնը երևան ելլալէն ետև՝ նորէն սաստիկ ցրտութի կուգայ հիւանդին վրայ ․ յորմէ կը հետևի սրտխառնութիւնը, փսխողութիւնը, հանդերձ սաստիկ դողով ։

Ան ատենները՝ նաբըզը կը նետէ երբեմն շուտ շուտ, և երբեմն ալ թոյլ կամ կամաց ․ լեզուին կէսը չոր կըլլայ, ու կէսն ալ թաց, բերանը թէպէտ բոլորովին չոր կըլլայ, բայց ծարաւութիւնը

քիչ. ականջները շատ կը խօսին, աչքերը կը տկարանան և դէպ 'ի լոյսը շատ չեն կրնար նայիլ. խելքը կը ցընորի, կը վախնայ, և խենդի պէս ափեղցփեղ բաներ շատ կընէ:

Օր օրինակ. բերանը կը ծռմըռկէ, քթին տակէն կը մռմըռայ, մատներուն կամ սաւանին և կամ ծածկարանին հետ շատ կը խաղայ. ճանճ բռնելու մտքով՝ ձեռքերը օդին մէջը շատ կը պտըտցունէ:

Ան միջոցները՝ նամզը չափէ դուրս կը փոխուի, քունը կը փախչի բոլորովին, աչքին կէսը բաց կը մրափէ, և շատ հեղ ալ կռնըկի վրայ կը պառկի. Ջղացըն-ցումը ու մկանանց ակամայ շարժմունքը անդադար կըլլայ, ձեռքերը խիստ կը թուլնան կամ կը քաշուին:

Ասոնցմէ ետև՝ ճոխ քրտինք ու փոր-քըշուք կուգայ, որոնցմով շատ կը տը-կարանայ կենսական ուժը, և բերնին մէջն ալ աֆթէ ըսւած խոցը դուրս կելլայ:

Ան տաենը՝ նամզը կը նետէ շուտ շուտ, բայց տկար ու անզօր:

Աչքերուն գոյնը կը փոխուին, կամ

ժէ

կը պղպջին · աչքին եղջերեայ թաղանթը խիստ կը ճերմկի , և երբեմն ալ կը տափակնայ · երեսը մեռելատիպ՝ ու մոխրագոյն կըլլայ , ակռաջները կը խըլանան · քրտինքը պաղ ու մածուցիկ կըլլայ , սիրտ նեղութիւն՝ դժվարաշնչութիւն՝ թմրութիւնը՝ և քնհատութիւն կը շատնայ · լեզուն կը դողդողայ , ու շուտ շուտ կը հեծկլտայ · որք են նշանք հոգեվարուե̃ ։

Իս տենդը՝ շատ անգամ ալ կը դառնայ կըլլայ բարակ ցաւ ( Թիշիք ) , կամ նուրբ տենդ ( Վէպպուէ լէնթա ) · որոնց աղէկնալը շատ դժվար կըլլայ ։

Իսկ ան ատենը դէպ ՚ի աղէկ կողմը կը դառնայ հիւանդը , երբոր անուշ քուն մը կուգայ՝ հանդերձ շոգխաւոր քրտինքով · երբոր մարմնոյ կաշիները կը թրջին ու կը կակուղնան , և բերնին թացութիւնը կը շատնայ՝ ու համն ալ տեղը կուգայ · երբոր ախորժակը ( Իշտահը ) կը բացվի , ու նամըն ալ կը դառնայ իր բընական զօրկուածքը · բայց աս եաքի ըսած առողջութեան նշաններս երևան չեն ելլեր , եթէ ոչ՝ 20 կամ 25 օրեն ետև ։

## Գեղջկան տենդի պատճառները։

* ·90· Ընդհատ ջղական տենդին պէս պէս տեսակները հասկցընելէն ետքը՝ հիմա պէտք է խօսիլ աս տնաւէր ջղական տենդի ( * · 79 · 82 · 89 · ) պատճառներուն վրայ, որ շատ անգամ մահաբեր է։

Բայց որովհետև ասոր պատճառները գիտնալը մեծ բաղձանք մըն է, որուն թէ բժիշկները՝ և թէ ուրիշ խելացի մարդիկները միշտ կը ջանան տեղեկանալու համար։

Իրաւ որ՝ շատ դժուար է հասկընալը ասոր բուն պատճառը. մանաւանդ անոնք, որոնք տեղեկութիւն չունին Փիզիգայէն։

Աս տնաւէր տենդի պըլըշտըկվելն ալ ծաղիկին ու խըզամուխին նման է. քանզի երեքն ալ կը չարչարեն ու կը գրգռեն ջղերուն դիրքերը, և կաւրեն անոր ազնիւ հիւթերը ու կարգադրութիւնները։

Կերպ կերպ պատճառներէն՝ մանաւանդ անշարժ լըճերէն ելած շոգիներէն, կամ փտտած բուսերուն դէշ հոտերէն, կամ հիւանդ անասուններուն

ընակած տեղերէն ելած շոգիներէն , կամ դիերուն և փտտած արուններուն հոտերէն, և կամ ալքալեան ( [illegible] ) հանքերուն թիւնաւոր շոգիներէն կըրնայ յառաջ գալ անանկ մէկ ախտ կամ ցաւ մը որ՝ ջլական տենդէն շատ տարբերութի չունենար · ասիկայ մէկ ըռըօ-րատիքա ( [illegible] ) հիւանդութի մը կը պատահի ջրերուն վրայ , որ ուրիշ տեղեր դժուար կը տարածուի :

Ն. ԺԼ տեղական անընդհատ ջղային տենդը ( * ·79· ) յայտնի ըլըշոըկօղ-ցաւ մընէ , որ չէ՛նք կըրնար ուրանալ :

Նա տարափոխելու ( [illegible] ) նիւթը՝ ինք իրեն աղէկ կամ գէշ ընութի մը չունի · այլ ինչպէս որ հասարակ մարդոց խառնըվածքը շատ անգամ տեղական ( [illegible] ) հիւանդութենը օգնութ կընէ · ասոր պէ՛ս է աս ալ , որ պէս պէս խառնուածքներուն կեօրէ՝ պէս պէս տենդեր կը բռնէ · որով հիւանդութիը կըրլայ բարի կամ չար :

Ինչ թթու կծու տաքալ հիւթեր՝ որ մարմնոյն մէջ մնան՝ դուրս չելլան , ինչպէս աղէկլիծ ( [illegible] ) , յօդուած ա-

ցաւ (ὑποχονδρίασις) , որքին կամ Թէմ-րէի (ἴκτερος) ըսված ախտերուն պատ-ճառ եղող հիւթերը՝ որ մէկ մեծ բոր-բոքումմը չէ՛ն կրնար ընել , ջլական տենդ կը պատճառեն · բայց աս տենդին մէկ գլխաւոր պատճառն ալ՝ առջի ճամ-բաներն են ։

Ծանրի Թէպէտ շատ անգամ կը սը-խալին բժիշկները՝ ստամոքսի հիւան-դութի (καρδιαλγία) կարծելով ասիկայ · անոր համար որ՝ հետը կը գտնուին բեր-նի լեղիութի , ստամոքսի խառնուիլ , կանիլ , դեղին ու կանաչ փսխել , կամ հիւանդին գոյնը դեղին կըլլայ · բայց շատ հեղ պատճառն ալ իր գործին հետը կը խառնուի , և աս կը ցուցնէ բժշկե-րու եղանակն ալ՝ որ մաղձը դուրս կը հանեմք · ասով կիմանամք որ՝ շատ կար-գէ դուրս բան չէ՛ կարծիքը՝ թէ ըս-տամոքսն և փորըն աս ցաւոյս պատճառ կրնան ըլլալ ։

Խելքը ու փորձը վկայութի կուտան որ՝ ասոր պատճառին շատը մաղձն է , որ առաջին ճամբաները կը գտնուի , և որ-դերը կամ ճըճիները , և աղէքներուն

մէջ գտնըւած փտտած հիւթերը •

Բայց աս ալ զուրցելու է որ՝ սաանկ անուներ հիւանդութե՝ պարզապէս մէկ քանի պատճառ տալ չըլլար։

Մարմնոյ վրայի ախտերը՝ որ ստորին որովայնի հիւանդութէ առաջ կուգան, և մարմնոյ հիւանդութէ առաջ եկած ներսի հիւանդութիւնները կը ցըցընեն որ՝ մարդոյս ներսի և դրսի մասունքները մէկզմէկու հետ կապակցութի ունին, և այն հիւթերը՝ որ մարմնոյն վրայի ջիղե-րը կը գրգռեն դրսէն • շատ անգամ մի-այն կապակցութե ուժովը ստամոքսային հիւանդութե նշանները կը ցըցընեն։

Անոր համար լաւ պիտի իմանայ բը-ժիշկը որ՝ ջղերն ալ կրնան տենդի պատ-ճառ ըլլալ։

Ասկից է որ՝ երբեմն անցնդական գոց մնացած օդըն ալ՝ որ հասարակ ջրածին օդին հետ միաբանութի չունի, պատճառ կըլլայ ասոր։

Ասկից է որ՝ երբեմն աղէկիծն ալ ([illegible]) պատճառ կըլլայ ասոր • կամ ալ աղէկ ըսեմ, աս աղէկիծի կծու աղը որ՝ ընդերքներուն մէջը գտնըւած տաք ու-

թաց և փտտած հիւթերէն կը բարակ-նայ, ու կերթայ ջղերուն պատուական հիւթերը ու դիրքերը կավրէ անմիջապէս. որով կարծեք կըլլայ որ՝ աս տենդը երբեմն ասկից ալ կըլլայ։

Ուստի՝ ուր շատ կըլլայ աղէկին, ան տեղը գրեթէ անպակաս կըլլան աս որ-նաւեր տենդերը։

Երբեմն օձիկըն ալ (ըէօէբօ՛լը) աս տենդին հետ մէկ տեղ կըլլայ, որ ա՛ւ-ելի ջղերը կը դրդուին, և տենդն ալ սաստիկ կըլլայ։

Երբեմն մեռեալ ծովէն ելած մշուշն ալ պատճառ կըլլայ ասոր. և երբեմն անանկ բաներ՝ որ պաղի մարդու առանձին բնութ̃ը կեօրէ վնաս կուտան. ինչպէս են պարարտ միսերը, ու ձուկերը, ավրըված կծու հիւթերը, և սուր մաղձը։

Ասկէ որ կերևի՝ որ փոխեցընող դեղերը շատ աղէկ են աս հիւանդութ̃ն, որով կարծեք կըլլայ՝ որ ստորին որովայնին մէջ ժողվըված վնասակար հիւթերէն կամ մաղձէն կըլլան, ասոր համար պէտք չէ կարծել թէ՝ աս փոխեցընող դեղերը մարդուս ստամոքսը պարպելով շահ կընեն,

հապա՝ որովհետև աս դեղը ջղերուն կը դըպչի , և անոնց վրան ալ կը ներգործէ . անկից է աղէկ շատ ընելը։

Լու ասոր փորձը ան է որ՝ Թարթարօ էմէթիքօ լուծած դեղը քիչ քիչ տալով՝ թեպէտ ոչ փսխել կուտայ , և ոչ լուծմունք կը բերէ . բայց շատ անգամ մեծ օգուտներ կընէ ջղերուն վրայ ներգործելուն համար։

Շատ անգամ ալ հիւանդութեն կը պատահի որ՝ մաղձը (սաֆրան) մէկ տեղ մը ժողվըված ըլլալով՝ ետքը կը տարտըղնի , բայց չի ըսվիր թէ ան հիւանդութիւնը մաղձէն եղաւ . քանզի մաղձը հիւանդութենէն եղաւ։

Կերևի որ պաղի մարդոց ալ խառնըւածքը աւելի յարմար կըլլայ ջլական տենդ չինելոյ , որ երբեմն կըլլայ դըրդիչ , և երբեմն մեղմիչ (23)։

Մէկ հասարակ կամ պարզ տենդ մը՝ թէ որ ժամանակին կեօրէ շուտով կամ վարպետութեամբ չի նայվի նէ , էն ետքը յոյս տնաւեր տենդ կը դարձընէ , ու անանկ կը մեռցընէ։

## Տարափոխութիւն։

Հին և նոր բժիշկները՝ զանազան պատճառներ կը դնեն տարափոխութե̄ սկզբնաւորութե̄ը համար․ ինչպէս որ վերն ալ փոքր ՚ի շատէ հասկըցուցինք․ ասոնցմէ մէկ գլխաւոր պատճառն ալ ալքալեան կծու հիւթերուն ապականութե̄ն է․ նոյն է ըսել՝ ալքալեան և փտտած , որ կը միաբանի անցնդական կամ՝ անբարեխառն օդին հետ ՚ի հալմանէ․ յորմէ կըլլան ալ աւելի վնասակար և մահաբեր։

Աս բանիս համար բնալոյծներն ալ կը վկայեն՝ թէ ալքալեան մի՛ է փտտած , և ամէն փտտած է՛ ալքալեան։

Քանզի ասանկ ալքալեաններ որ՝ ամէն տեղ շատ կը գտնըվին , մէկ զմէկ կը խառնըվին , և ասոնց ցնդական և թեթև մասերը օդը կը ցնդին , և ուրիշ վնասակար շոգիներուն հետ միաբանելով՝ մշուշի պէս կը ձևանան․ որոնցմէ կըլլան անհամար կոտորումն։

Աս պատճառաւ ըսի թէ՝ անբարեխառն օդին հալելէն ու անպատուական

մասանց 'ի պատուական մասունս ձգե-
լէն կըլլայ․

Խրըզըրատէս, Սէլիկնա, Սըդինգ-
տօն, և այլ ուրիշ փիլիսոփայ բժիշկնե-
րըն ալ կը յիշէն՝ աս բանը ըսելով. թէ՝ ||
«Գինեբէն՝ արուններէն՝ ալքալեան կը-
«ծու մասերէն՝ տարափոխիկ ու ախ-
«տաբեր շամանդաղներէն առաջ եկած
«թիւնաւոր մասերը կամ շոգիները՝
«լեցուն են փոխադրական սուր նիւ-
«թերով, որ որոշեալ տեղն ունին.
«Երբոր ասոնք գրգռուելու ըլլան՝ մէկ
«բարակ մշուշ մը կը հանեն իրենց վը-
«րայի մթնոլորտը, և գրեթէ՝ օդին
«մեծ մասը կըապականեն։

Աս գուցէ՝ ան ամենամանր և թիւ-
նալի միջատն ալ, որ երբեմն դիերուն և
արուններուն հոտերէն կամ շոգիներէն
կը ծնանին. ան առենը անմիջապէս կը
պըրշկին ան մարդիկները և անասուննե-
րը, որոնք որ յանկաւոր (ուղուն) խառնու-
ածք ունին։

Աս որովհետեւ ասանկ անուեր ցա-
ւեր՝ 20. 25. 27. 30. 35 տարուան
մէջ կըլլան. անոր համար մօտափ միջոց-

ներուն մէջը կը լսեմք որ՝ տարափոխիկ (ՊԸՀԸՀՅՕՂ) ցաւերը խիստ կը կատղին կամ Եւրոպիոյ կամ Ասիայի քաղաքներուն մէջ, ո՛ր կողմը որ անզգուշութի գըտնան նէ․ ետքը ան քաղաքներէն մ'ալ ուրիշ տեղեր կը փոխադրուին պըշկելու համար։

Շատ անգամ գէշ տէնդ կամ ժանտախտ եղած տեղը՝ շատի վրայ կըլլայ, մանաւանդ երիտասարդներուն վրայ․ բայց ոչ մեծի կը նայի՝ ոչ պզտիկի, ոչ ուժովի՝ ոչ տկարի․ և շատը ժանտախտէն կը բռնուին, չէ՛ թէ միայն իրենց բնութիւնովը՝ այլև անզգոյշ ըլլալով ու պըշկելով ալ։

Երբեմն օդին անանկ մէկ ներգործութիւնէն՝ որ մեղի ծանօթ չէ, սկիզբը պըշտըկողութիւնը քիչ կըլլայ, և քանի մը հոգի մեռցընելէն ետքը՝ ուժը կը շատնայ։

Նաւամանորդ քաղաքները՝ ուր որ դըրսեցի մարդիկ շատ կը գտնուին, գրեթէ՝ միշտ պըլըշտըկողութիւնը հանրկաց վրայ կըլլայ։

Աս անուեր ցաւերուն շատը՝ երբեմն գարնան ատենը կը սկսի, ամառը՝ շատ և

սաստիկ կըլլայ · աշնան օրերը հասածին պէս՝ կը տկարանայ , և ձմեռվան խիստ ցուրտ օրերը՝ բոլորովին կը մարի ։

Բայց աս կանոնը շատ հաստատ չէ՛ , նոր եղած ժամանակը շատ մարդ կը խաբէ · քիչ մը ժամանակ անցնելնէ՝ հանդա՛րտ կերևայ , բայց քանի՛ հիննայ՝ ա՛յնքան կը կատղի ։

Երբեմն շա՛տ տարի սար սերմը կը պահվի անցնդական օդի մէջ , կամ՝ բըրդեղէն և կամ՝ բամբակեղէն բաներու մէջ՝ որ ամենևին չերևնար · բայց ջրածին օդ առած ժամանակը՝ անանկ սաստիկ կըլլայ որ՝ առաջկուց չի՛ մեռցուցածները՝ ամէնը մէկէն կը տանի , և քաղաքներ կը պարպէ ։

Ի՛նչպէս որ հիներէն կը գրէ Կարդանոս · Թէ բաբիլոնի եղած ապողոնի տաճարին մէջ տուփ մը գտնըվեր է , որուն վրայէն շա՛տ տարիներ անցնելէն ետև՝ բացեր են , մէջէն անանկ գէշ հոտ մը նէ ելեր որ՝ բացողները անմիջապէս բռնըվեր են , ու 24 ժամէն ետև ամէնն ալ մեռնելէն 'ի զատ՝ բոլոր քաղաքն ալ պըլըշտըկեր է ։

Ուրեմն փոխադրականութիւնը նոր բան չէ․ հապա՝ ծերացե՛ր է աս ծեր աշխարհիս հետ։

Աւելի հրաշալի բան մը կը պատմէ Բագլիվոս բժիշկը․ թէ քաջառողջ մարդ մը ժանտահարի մը դըպաւ, նոյն օրը բռնըվեցաւ՝ ու միւս օրը մեռաւ։

Ասոր նման Խոլմաս անունով բժիշկին մէկը կը գրէ․ թէ ես տեսայ աչքովս, որ երիտասարդ բժիշկին մէկը՝ վար ցաւէն բռնըվողին նաբզը և եթ բռնելով, նոյն օրը հիւանդացաւ՝ և 24 ժամէն ետև գերեզման մտաւ։

Ասոնցմէ աւելի հրաշալի բան մըալ տակից ու թ տարի առաջ ես իմքնս աչքովս տեսայ Յէգիպտոս․ որ 50 տարուայ մէջ ժանտախտէն հազարաւոր մեռնողները վերցող այլազգիին մէկը՝ խիստ թեթև ժանտամահին տակը բռնըվեցաւ, ու երկու օրէն ետքը մեռնելէն 'ի զատ՝ բոլոր տանը մէջ բնակողներն ալ առաւ հետը տարաւ։

Ասոնց պէս՝ Մալդեսկմիդ, Փեռնէլիս, Սէնէրտոս՝ գերմանացի հեղինակներն ալ յայտնի կը վկայեն․ թէ ո՞վ որ ասանկ

փոխադրական ցաւերու , ինչ՝ ջղային տենդի , վար ցաւի , շան ցաւի , ծաղկի , կատղած շան խածուածքի , մանաւանդ ժանտախտի մէջ մտան . կամ մեռան , և կամ շատ ժամանակ քաշելէն ետքը՝ ձորմով ազատեցան ։

Բամծներէս մէկէն կը հասկընաս , որ ամէն մարդու բնութիւնները կամ խառնուածքները մէկ կերպ չըլլալէն՝ ի զատ՝ առջի պատմած մահաբեր շոգիներուն ալ մէկ տեսակ նիւթերէն չի ծագելնուն համար՝ հարկիւ տարբեր յատկութի ու ներգործութիւններ պիտի ունենան ։

Օրինակի համար . նոյն մահաբեր շոգիները կըրնան անմիջապէս անցնիլ մարմիններնուս մէջը և տարածվիլ . երբոր խառնուածքներնուս մէջ յանկաւոր հիւթեր գտնըվելու ըլլանք , որով կը ապականին ջղերնուս պատուական հիւթերը , կը գրգռին անոնց մանրաթելերը . որոնցմէ կը ծագին եռանդ , պալար , բորբոքում , ցաւ սաստկակսկիծ , խաղաւարա ( հապաղ ) . եւն , եւն ։

Շատ պատահած կայ . որ շատ մարդ չէ պըրծեր սաստիկ անաւեր ցաւերէն ,

թէև բռնըլվօղին հետ մէկ տեղ պառկեր-էն ալ նէ․ որով կիմանամք, թէ անանկ-ներուն խառնուածքները ժանկաւոր պատրաստութի չունին նոյն թիւնաւոր շոգիներուն հետ։

Անոր համար՝ հաստ ու բարակ մար-դիկ միշտ երկբայութի և վէճ ընելու պատճառ կունենան։

Շաղիկէն շատ անանկ մէկ պըլըշըր-կօղ հիւանդութիւն մըն ալ չիկայ, որ ժանտախտի չափ խորունկ արմատ ձը-գած ըլլայ մեր երկիրները։

Մեղի յայտնապէս կերևի թէ՝ ժան-տախտին կամ վար ցաւին պատճառը պը-լըշկե՛ն է, որ յարմար մարդ մը ուրիշի ժանտախտէ կը բռնըվի, կամ օդըյն ու-ժովը՝ կամ մէկ բանով մը՝ որուն վրայ տար թոյնը պըլըշկած ըլլայ, կամ դըպ-չելով․ բայց օդըյն ուժը անանկ բան մը իմանալու է, որ նէ՛ տաքէն կավըրվի՝ նէ՛ պաղէն։

Հա՛րկ է որ՝ էն առջի ժանտախտ հա-նողը՝ որ ուրիշէ մը պըլըշկած չէ՛, ինք-իրմէ ունենայ տար մէկ յարմարութի մը․ ինչպէս են նաև ուրիշ ամէն տարափո-

խիկ հիւանդութիւնները։

Բայց ասոնց մէկ տեղ գտնըվելը՝ որ ուրիշ պըլըշըկօղ ցաւերու ալ կըլլայ, իսկ ժանտախտինը կամ վար ցաւինը՝ գրեթէ կարգէ դուրս բան մը կըլլայ. որով հիմա ալ կերեւնայ, որ եւրոպացիք շատ զգուշ ըլլալնուն, եւ իրենց քաղաքները աղէկ պահպանելնուն, եւ ասանց Նաղարեդի (Կ——անդինուպօլ) հիչ մէկ բանը քաղաքէն ներս չի խօթելնուն համար՝ ամենեւին ժանտախտ ըլլալը լըսուած չէ, եթէ ոչ՝ պատահմամբ։

Որովհետեւ շատ անգամ լսեր ենք, եւ երբեմն ալ տեսեր ենք, որ սաստիկ ժանտախտ շլինօղ սերմերը՝ թէ բամբակեղէն, թէ բրդեղէն բաներով եւ թէ ուրիշ յարմար նիւթերով քաղաքէ քաղաք, եւ աշխարհէ աշխարհ գացեր են, եւ գացած տեղերնին ալ պըլըշկեր են անմիջապէս։

Ուրեմն ժանտախտը աներեւոյթ կատաղած շուն մըն է, ինչպէս որ վերն ալ յիշեցի. որ անկից փախչիլը՝ ասոր յաղթել է. ու յաղթելն ալ՝ փախչիլն է։

Կատաղած շունն տեսար՝ կամ լսեցիր, փախիր, որ չի խածնըվիս. անիկայ աս

դեղը կուզէ՝ որ ազատիս · մի՛ փախչիլ կամ զգուշանալ պէ՛տք է առաջմանէ (ա)։

Այսչափ օրինակներէն չե՞ս տեսներ նէ, գո՛նէ՝ էն մեծ ծառաներէն խրատ առ · մի՛ շուարիր ( շաշըրմա ), գընա կարդա՛ մը գիրքերուն խրատը · ||* զի որ գնէ զանձն ՚ի վտանգ՝ անկցի ||·

Ժամանակին փոխադրական ըլլալը՝ և անկից փախչիլը հա՛րկ ըլլալը՝ խապար կուտայ ու կը յորդորէ շնորհալի սուրբ վարդապետն Սարգիս՝ ասանկ խօսելով · ||* մի՛ գարշիր ՚ի մեղաւորէն · · · · · զի ո՛չ եթէ ժամանակս ինչ է մեղք նո՛ր՝ որ ՚ի քեզ անցանէ · յաււաջէն ըղըօյն պէտ-րոսէ՝ վէյէրօրէ ձաւէ յօրէօրաչէն ||·

Ուժով կը գրէ սաղմոսը · ||* յաթոռս ժանտից ո՛չ նստաւ ||· ետևէն՝ ա՛լ աւելի ուժով կը գրէ · ||* փախիր և թաքիր առ ժամանակ մի · Սիր ||·

Զարմանալի է նաև հագարացւոց առաջին օրէնսդրին խօսքն ալ որ աս ձևով

(ա) Զարմանալի՛ է հիպոկրատեսին խօսքն ալ · ||* Թէ շահաւետագո՛յն էս և ճշգրտագոյն զգուշութի ՚ի ժամանամահէ՝ է փախուստն ||·

կը զգուշացընէր իր ազգը ժանտամահէն.
‖ * Ուր տեղ էք նէ՝ հո՛ն կեցէք ‖։
Այս ձեւին շիտակ իմաստը աս է։
Ուր տեղ էք նէ՝ հո՛ն կեցէք, ըսելովը. յայտ
նապէս կիմացընէր որ, եթէ մաքուր ես
նէ, մի՛ երթար ժանտահարի մը քով՝ որ
դուն ալ չի՛ պըլըշկըվիս. իսկ եթէ պը-
լըշկըված ես նէ՝ եղած տեղէդ դուրս մի՛
ելլեր, որ ուրիշներն ալ չի պըլըշկըվին
անոր դըպչելովդ.
Հասկըցա՞ր ո՛վ եղբայր սիրելի, ա-
սանկ անաւեր ցաւերը մէկէ 'ի մէկալը
կանցնի կամ կը փոխվի տէր հագարաց-
ւոց օրէնադիրն ալ կը վըկայէ կոր.
Ապա ո՞ւր թողունք այսքան Աֆա-
բաններուն՝ ու գերիմաստ բժիշկներուն
վկայութիւնները։
Անանկ է նէ՝ աչքերնիս բանանք, և
խոր թմրութէն արթըննանք. քանզի ա-
սանկ կամակոր մարդիկ քիչ չեն մեր մէ-
ջը, որ ժանտախտին տարափոխիկ ըլլալը
աղէկ գիտեն, բայց զգուշանալ չեն ու-
զեր. անկից 'ի զատ՝ իրենց տանը մէջ ին-
կած ըլլայ ալ նէ՝ չեն ուզեր որ ուրիշ-
ներն ալ իմանան, ու զգուշանան. յորմէ

ժթ

կըլլայ անձնատպանութե՛ն, ու մարդասպանութե՛ն. որով կուգայ իրենց վրայ այն վա՛յը, որ կըգրէ Ներսէս Շնորհալին. || * Վա՜յ ախտացելումն յախտէ, որ խոցի՝ և ո՛չ ընդոստնու ||։

Ե՛ս ալ ըսեմ ու վերջ ընեմ. մենք մեզի բունութիւն պիտի ընենք, մենք մեր անձը ձեռուընուս եկածին չափ պիտի պահպանենք, մենք մեր անգին կեանքը պիտի խընայենք՝ զգուշ կենալով, (ա) որ ա՛ծ ալ զմեզ պահէ։

Աս ինծի ընկածը զուրցեցի, կարգացողն ալ թո՛ղ իրեն ընկածը նայի. || * Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ||։

—

Գուշակութի՛ւն ելից ախտից։

* . 91 . Ընդհատ ջլական տենդին վրայ գրած խօսքերէն (* . 80 . 82 . 83 . 84 . 85 . 86 .) հե՛շտ կիմացվի թէ՝ ինչէ՞ն հասկընալու է հիւանդութեան ելքը ինչպէս ըլլալը։

---

(ա) Թ․ Եսայիրաէ նօքսան խախուղ՝ մուքաւթարերի պախտան ինձմէ։

Հիւանդութեանը բնութեանը կէօրէ՝ և հետը գտնըված նշաններուն և տենդին կէօրէ՝ գուշակութիւններն ալ կերպ կերպ կըլլան.

Պէ՛տք է գուշակութեան կանոններ տալ՝ նշաններուն պատճառներն ալ քննելով։

Պէ՛տք չէ աս տեղս զուրցել, թէ ջըղական տենդին հետ օձիկ՝ կամ ժանտախտ ըլլայ նէ՝ ինչ կը ցըցընէ. քանզի ճգանաց գուշակութեան վրայ գրածներուս (* . 13 .) աս ալ կիմացվի։

Բայց օձիկն ([illegible]) ալ թէ որ շատ ուժով վրայ գայ, մանաւանդ թէ որ սկիզբները հոգ չըլըլվի՝ քիչ վտանգներ չունի, և հիւանդութեան երրորդ աստիճանը հասածին պէս, կամ մինակ կը մեռցընէ աս տենդէն բռնըվօղը, կամ ժանտախտի հետ կը խառնըվի, և ան ատենն ալ՝ ա՛լ աւելի վտանգի մէջ կիյնի։

Փորձանքաւոր կըլլայ աս տենդը. ե՛րբոր հիւանդը բռնըվածին պէս՝ ուժէ կիյնայ, ու երեսին գոյնն ալ ուրիշ կերպ կը փոխվի. ե՛րբոր ծանր ու սոսկալի նըշանները շուտով երևան կելլան. ե՛րբոր ջըվաթներուն ճամբաները կամ գործիք-

ները կը թուլնան · Երբոր հիւանդին ձեռքը ու ոտքը և այլ ուրիշ անդամները պաղ կըլլան՝ ու ներսի դին կըրակի-պէս տաք կըլլայ · Երբոր նամքը մանր ու բարակ ըլլալէն 'ի զատ՝ լեզուն ալ չոր՝ պինդ՝ սև՝ և դողդողուն կըլլայ · Երբոր ձայնը կը բարակնայ, ու երբեմն ալ մարածի պէս կըլլայ · Երբոր ցնորմունքը խիստ շատ ըլլալէն 'ի զատ՝ ջուրը կամ դեղն ալ ձորմլ կուլ կուտայ · Երբոր անդամներուն կաշիները պինդ ու ցամաք կըլլան ։

Ալ աւելի փորձանքաւոր կըլլայ ան ատենը · Երբոր հեծկլտուքը կը շատնայ՝ ու շունչը կը պաղի · Երբոր բերնին մէջերը աֆթէ ըսուած խոցը կելլայ, ու ցուրտ քրտինք մըն ալ կը թափէ · Երբոր ջղացնցութի (սբազմօ) կուգայ, ու փորն ալ վար կը զարնէ · Երբոր ցաւերը յանկարծօրէն կը դադրին՝ ու կերպարանքն ալ մեռելատիպ կը դառնայ · Երբոր ետքի ցրտութիւնը տիրապետելէն 'ի զատ՝ անկողինէն ալ վար կը սըկըթըլլի, լուսէն երեսը կը դարձընէ, և ծածկարանն ալ կը պըղըկտէ ։

Բայց պատմած նշաններուս՝ որքան ներհակը ըլլայնէ, այնքան ցաւը թեթեւ ու անվտանգ կըլլայ. ինչպէս են չափաւոր ու շոգխաւոր քրտինքը, կաշիին ու բերնին քիչ ցամքութիւնը, քունին քիչ պակսութիւնը, ոտք և ուժին. եւն, եւն։

Բայց աս տեսակ տենդը՝ թէ՛ ծանր ըլլայ և թէ՛ թեթեւ. թէ որ հետի նշանները ժանտախտային ըլլան նէ, աղէկնայ ալ նէ՝ քիչ ատենի մէջ հիւանդին խելքը գլուխը չի՛ գար։

—

Ընդհանրապէս ասոնց դէմ դեղեր։

※ ·92· Փորձը՝ որ բժիշկներուն վարպետն ու ճամբայ ցըցընողն է, կը սորվեցընէ բժիշկներուն. որ ամէնէն առաջ հարցընեն հիւանդին, թէ առաջմանէ ուրիշ տեսակ հիւանդութիւ քաշե՞ր է մի, խորունկ գիտութիւններու հետեւե՞ր է մի, աղեկէծ (սօսապնը)՝ սերմնակաթութիւն՝ կամ գաղղիական ախտ քաշե՞ր է մի։

Ասոնցմէ 'ի զատ՝ բոր կամ քոս կամ որքին (Ուէօրէէ) կամ թանչ (Տօյսաէլ)

երկան ատեն քաշելով՝ աղիքները վնասե՞ր է մի, կամ ատենօք սերմը չափէ դուրս պակսեցուցե՞ր է մի, թէ ոչ։

Որովհետեւ սանկ ու սանց նման կաշիի ախտեր քաշող մարդիկը՝ ջղային տենդերէն՝ մանաւանդ ժանտախտէն բռնըվելու ըլլան նէ, խիստ փորձանքնե-րու մէջ կիյնան, ու էն եաքն ալ՝ կամ կը մեռնին, և կամ ձորով կազատին։

Բժիշկը՝ սանկ ամէնը զուարթ ե-րեսով, ու մխիթարական խօսքերով կա-տարելէն ետեւ. պէտք է քացախով թըր-ջած մառաներով զըննել նամղը, անանկ որ՝ եթէ հնա՞ր է նէ՝ լաթերուն եւ պի-տի չի՛ դըպչի, չի՛ պըլըշկըվելու համար. քանզի սա անաւեր տենդերը անանկ մէկէ 'ի մէկալը կանցնին՝ որ սոսկ դըպչելովնին անմիջապէս կը պըլըշկին, ինչպէս որ շատ անգամալ յիշեցի։

Խմա հոս տեղը մեզի ամէն բանէն աւելի՝ երկու բանի վրայ շատ մտածել ու զգուշանալ կը վայլէ։

Մէկ մը՝ հիւանդին կենսական ու-ժը չի պակսեցընել։ Մէկ մի ալ՝ թէ որ հիւանդը չափէն աւելի ինկած ըլլայ,

և ջղային տենդի նշանները (* · 79 · 81 · 82 · 83 · 85 · 86 · 89 · ) երևնան՝ շուտ մը հիւանդութիւնը սկսածին պէս · ան ատենը նա՛ և խիստ քիչ արուն առնելը՝ անանկ մեծ վնաս կը բերէ հիւանդին, որ դէմը չառնըվիր, և աս հակառակութիւնը՝ որ կայ աս տենդերուն ու քացկեղին մէջ, ուրիշ տեղ ալ պիտի պատմենք (* · 134 · 272 · ):

Ա՛ս հարկաւոր պարագայները աղէկ մտածելէն ետև, պէ՛տք է անանկ ճարմար փոխողական կամ քրտնաբեր դեղերով դուրս հանել տարափոխիկ նիւթերը կամ սերմը, որ կենսական ուժին ամենևին վնաս մը չի տըրվի:

—

### Կենսական ուժը:

Կենսական ուժը՝ որ և կըսվի կենսատու, իտալերէն՝ Ֆօրցէ վիթա՛լէ, արապերէն՝ Քույեթի Հավու տանէ · մշուշաձև ոգի մընէ, որ բնական տաքութիւնին զօրութիւնովը կիջնայ ուղեղէն ջղերուն մէջը, և անկից ալ կը տարածվի բոլոր անդամներուն մէջը · քոմէ կը

պատճառաւ արունի շրջանը, շունչ առնել տալը, շարժողութիւնը, ու գալերը. ևն, ևն ։

Ասիկայ մինակ մենք չունինք. հապա՝ ամէն անբան կենդանիներն ալ ունին ։

Ու երբեմն ներսի գտնըված աղտով ու թթու նիւթերէն, և երբեմն ալ դըրսի առիթներէն, մանաւանդ՝ տարափոխիկ ու թունաւոր շոգիներէն, կըլլայ ուժատըվութեան տեղը՝ թոյլատըվութիւն, որով կը դըրդըվի ջըղերուն դիրքերը, կը խըռովըտին զգայութիւնները, կավըրվի խառնուածքներուն ուղղահաւասարութիւնը, որով և կըլլայ վտանգի մէջ կեանքերնիս ։

—

## Փոխողական դեղ ։

Աս տեսակ անաւեր տենդերը աղէկցընելու առջի ճամբան՝ է մաքրութիւնը. քանզի ամէն ցաւերուն շատերը գրեթէ մէյ մէկ կերպ անմաքրութենէ առաջ կուգան ։

Երբեմն ամէնէն առաջ հիւանդին ըստամոքսը պէտք է մաքրել փոխողականաւ, և ոչ լուծողականաւ ։

Որովհետեւ փոխողական դեղերը՝ ըս-տամոքսի մէջ ժողվըւած վնասակար նիւ-թերը՝ թթու ու կծու դիրտերը պար-պելէն 'ի զատ՝ բոլոր մարմինն ալ կը թոթ-վէն, գոց մղնիքներն ալ կը բանան, քըր-տինք ալ կը բերեն, երեսին գոյնն ալ տեղը կը բերեն, և ջղերուն ալ մեծ օ-գուտ կընեն (※ · 90 ·)։

Անանկ օգտակար ներգործութիւններ լուծողին դեղերը չունենալնուն 'ի զատ՝ թուլացուցիչ ներգործութիւն մըն ալ ու-նին, որ յիրաւի խիստ շատ ներհակ են ասանկ փոխադրական ջղային ցաւերուն։

Ուստի՝ թէ որ փոխողական դեղը աս կերպ (ՐԷՆՉԷՐԸՐՍ, ՐԷՍ · 1 ·) բանեցուցիր նէ՝ հիւանդին մեծ օգուտ ընելէն ետեւ, մեծ վարպետութիւն ալ ըրած կըլլաս։

Բայց կը կրկնեմ որ՝ միշտ աս կերպը բանեցընես ջղային տենդերուն դէմ, այլ՝ քիչ քիչ խմցընես, և փոխել ըսկը-սածին պէս՝ վերջ ընես դեղը, և շուտ շուտ գաղջ ջուր տալ ըսկսես. և անանկ ըրէ. կուզէ դեղը տկար ըլլայ, կուզէ ուժով. միշտ կշառքը կամ չափը քու-ձեռքդ է. և երբոր կամիս՝ կը վերջացը-

նես • որ աս կերպիս բժշկական ոճով կըսենք՝ բէուխէկքուաթիքամէնթէ , կամ բէուխէկքուածղիմ։

Եթէ հիւանդը լուծմունք կամ փոր-քըշուք ունենայնէ , ան ատենը տուր ասոր տեղը իբէքաքուանա • որուն կը-շռուքը ըլլայ 16 ցորենէ՝ մինչև ց 30 , կամ՝ ց 40 • և կարծեմ թէ՝ ան աղէկ կը-նես շատ տալդ , քան թէ քիչ • որ չի չարչարես հիւանդը։

Տղայոց՝ տարիքներուն կեօրէ՛ յար-մարէ , կըշռուքը ըլլայ 6 ցորենէ՝ մինչև ց 12 • նայելով ուժը , ու կազմուածքը , և տարիքը։

—

## Պուրղանդէր դեղէր։

Երկրորդ ճամբան է՛ քըրալինքը՝ որ շատ պիտանաւոր բան է ասանկ տարափո-խիկ ցաւերուն դէմ • մանաւանդ հիւան-դութեան առջի ու ետքի օրերը։

Ինչպէս որ հետաղօտ բժիշկները կը-պատմեն • թէ մէկ չափահաս մարդոյ մար-մինէն 24 ժամուն մէջը՝ իբր օխայ մը , կամ ըստ ոմանց 500 տրամ շոգի կամ

քրտինք դուրս կելլեն՝ և օդը կը ցըն-դին․ որոնց երեք մասը կելլեն մորթիէն, ու մէկ մասը շունչէն։

Իրաւի՛ որքան որ քրտընինք նէ, այն-քան թեթև ու առողջ կըլլայ մարմին-նիս․ իսկ որքան քիչ քրտընինք նէ, այն-քան ծանր և վատառողջ կըլլայ։

Առողջներուն այսքան օգուտ ըլլա-լէն ետև․ հապա՝ որքան շահաւոր պիտի ըլլայ վերի պատմած տնաւեր ցաւերուն դէմ, որ ժամ մը առաջ տալ դուրս կը նետուին ցաւ շինող նիւթերը ու տարա-փոխիկ շոգիները։

Միայն նայէ՛, որ չաւելցընես տա-քութիւնը ու արունին շրջանը՝ տաք բը-նութիւն ունող դեղեր բանեցընելով․ հապա՝ ըլլա՛յ դեղերդ միշտ հովացուցիչ, և քրտնաբեր բնութ․ որ են՝ գինիով շինած կաթին շիճուկը՝ ([illegible], ԹԻՒ․ 17․), աղած մուրվէրի ծաղկին ջուրը, չինու չայն, կիտրոնի կուտը, սքօւտիօ ([illegible]) ըսուած խոտին ջուրը։

Երբոր ասոնցմով ու ասոնց նման դե-ղերով ուժէ ինկնալու ըլլայ նէ․ ան ա-տենը կըրնաս խմցընել քիչ մը գաղջ գի-

նի , որ օգնէ ջղերուն թուլութիւնը և կենսական զօրութիւնը։

Ա՛ն միջոցի տաենները՝ գինիին թէ օգտակար և թէ վնասակար ըլլալը՝ նըշաններուն թեթևնալէն՝ կամ կատղելէն աղէկ կը հասկըցվի · պէ՛տք եղած տաենը՝ գինիին հինըու ազնիւը տուր , որ ուժ տալէն 'ի զատ՝ փտտութեան ալ դէմ դնէ։

Կը գտնվին քանի մը տեսակ ուժ տուօղ և քրտնաբեր դեղեր ալ՝ որ գրեթէ մասնաւորապէս ստեղծըվեր են ջղային տենդերուն համար · ինչի՛ են՝ սէրբէնթարիա վիրճինիանային և խինէ ռաթօրիա արմատոյն թրջոցները ( ԸնկէԲԲ. , ԲԷ. · 18 · )։

Ասոնցմէ 'ի զատ՝ կան քանի մը տեսակ դեղեր ալ , որ ա՛լ շուտով քրտինք կը բերեն՝ քան առջի գըրվածներէն · ինչի՛ են՝ պէվա՛նտա սալի՛նան , աչէ՛թօ քան ֆօրա՛թօն ( ԸնկէԲԲ. , ԲԷ. · 9 · 19 · ) , էթէ՛րէ սօլֆօւրի՛քօն , սբիրի՛թօ տի մէլի՛սսէն · որոնց չափերը պէտի գրենք աս բժշկարաններուս բառարանին մէջը։

Նո՛յնպէս՝ օգտակա՛ր են նաև սա՛լէ վօլաթի՛լէ ալքալի՛նօն , մուրիաթի՛քօն , կամ աչէթօ՛զան։

Եռօրեայ Ջրային տենդի (* • 84 •) դեղերուն վրայ կարճ կը խօսինք • ինչու որ՝ յայտնի է անոր քրտնցընօղ դեղերուն երբ օգուտ ընելը, և երբ վնաս ընելը ։

Օգուտ կընեն ան ատենը, երբոր նշանները թեթև կըլլան • երբոր դեղը ողվացուցիչ ու քրտնարեր կըլլայ, ինչպէս է աղած մուրվերիին եփած ջուրը • երբոր պառկած խուցին օդը բարեխառըն և մաքուր կըլլայ • երբոր մարմինը տաք չուխայով ատեպ ատեպ շփելով կըտրած քրտինքը նորէն գալու կըլլայ ։

Իսկ վնաս կամ գէշ կընեն նոյն դեղերը, երբոր նշանները ծանր կըլլան • երբոր ատեն անցած կըլլայ՝ ու քրտինքն ալ չափէ շատ դուրս կըլլայ ։

Աֆեմէրա պրիթանիքան բժշկելուուրիշ բան ըսել պէտք չէ • միայն կօգտէ ինչ որ գրվեցաւ Եռօրեայ Ջրային տենդը բժշկելու համար, որև կըսվի Եռօրեայ չարագոյն տենդ (* • 84 •)։

Երբեմն կընանք հիւանդը գաղջ ջուրի մէջ մտցընել, եթէ մորթային ջըղացնցութի («բաղնիս») ունի նէ ։

Երբեմն ալ՝ թէ որ մաղձային նխ-

թերուն նշաններ կաննէ՝ թեթև լու-
ծող դեղեր • ինչպէս են ռաւէնտը ,
թամր հինտին , ևն • օգտակար են նաև
թեթև իհտալքանները։

Բայց աս ալ չի մոռնամք , որ ուրիշ
տեղ ալ զուրցեր եմք , որոյ նշանները շատ
մարդ կը խաբեն • զգուշանալու է , որ ան
տկարութը՝ որ կը պատճառի աղեքներու
մէջի եղած մաղձերէն՝ կամ փորու ճը-
ճիներէն , ճշմարիտ տկարութն տեղ չի
դընեմք , և կենսական ուժին աւելնալը
քիչնալը գիտնալով՝ արթնցընող դեղեր
որ տամք նէ՝ հիւանդութն վտանգը
կը շատցընեմք։

Ե՛րբոր սառը կամ սառը պէս ջղային
տենդերէն բռնըվողներուն տկարութիը
շատնայ նէ , ան ատենը շուտով պէտք է
ըսկըսիլ տալ հին գինիով եփած մաքուր
հաց՝ խառն շաքարով , և թառչինով սը-
նուցանել հիւանդը • բայց մեծ զգու-
շութի ընել պէտք է , որ չըլլայ թէ սաստց-
մով հիւանդին կենսական ուժը չափէ
դուրս ելլայ , ու տաքութիը նորոգի։

Ու եթէ տաքութիը կամ ուրիշ նը-
շանները նորոգելու ըլլան նէ՝ ան ատենը

կըրնաս ամէն չորս ժամ միջոց տալով ոտքերուն տակը հաստատ լաթասը դարնել, եթէ ասով օգնութ մը չըլլայ նէ՝ ան ատենը խարանադեղ դարնելու է պատըրներուն վրայ:

Բայց խիստ զգուշանալու է խարանադեղէն (Թէհլիքէլի եաքըսը), որ չըլլայ թէ՝ արունին ապականութէն կամ փտախտութէն քաղցկեղ ըլլայ:

Եթէ ասանկ ձախորդ նշաններ երեւնալու ըլլանէ. ոտքին են խոցէն արուն վազելը, և նոյն խոցին կապուտնալը. ան ատենը պէ՛տք է շուտ շուտ թրջել խոցը գինիով, կամ քնաքինայով եփած գինիով:

—

Քնա քնա:

Քնաքինան (8) շատ շահաւոր դե՛ղ է կըսեին մեր նախնիքները ջղային տենդերուն դէմ. ինչպէս որ՝ հիմա ալ ըսկըսեցին ա՛լ աւելի գործել սուլֆա՛թօ տի քինինօն:

Բայց անկարելի՛ է որ՝ ասոնք ամէն տեսակ ջղային տենդերու դէմ յարմար

ըլլան։ Իրաւ որ՝ օգտակար դեղ կըլլան ատոնք ան ատենը․ Երբոր միջոց տըվօղ տենդ մը աղէկ չի նայվելէն կամ երկըննալէն կը դառնայ կըլլայ ջըրային տենդ․ Երբոր նոյն տենդին հետ թմրութիւն, փըտտութիւն, և թուլութիւն կը գտնըվի, մանաւանդ՝ եթէ ատոր հետ՝ քիչ մըն ալ՝ սերբենդարիա վիրճինիանա խառնելու ըլլանք նէ (ՐԷՉԷԲԲա, ԲԻ․ 20․)։

Կան բժիշկներ, մանաւանդ գաղղիացիները, որոնք ատոնց տեղը՝ կալթին չինաւկը (ՔԻՆԱ-ԲԻԿԱՆ), գինին, ու մանանեխը (ՀԱՌՆԱՓԱՆ)՝ կը գործ ածեն (ՐԷՉԷԲԲա, ԲԻ․ 17․) և կարծեմ թէ շատ աղէկ կընեն։

Մենք կընենք նաև ան օգնութիւնները՝ որ թոյնէն պատճառված ներսի խառնակութիւն ու ջղացնցութիւնը կը պառկեցընեն, և մանաւանդ՝ քանֆօրա և մուսկ ըսված դեղերով, նաև լիգուօռ եթէրէօվ․ որով կենսական ոգիներուն թուլութիւնը պնդանայ՝ ուժ առնէ, և թմրութիւնը (ՓԱՇՇԸՆ-ԼԻԿԸ) անցընէ։

Նամըլին կարկամութենը պնդութենը և անհաւասարութենը դէմ մուսկ գործ

ածելով, Նամըլին դողդողուքը անհաւա-
տարութիւնը ու միջահատութիւնը կը ղըս-
պէմք (ղաղր չընէ՞ս)՝ աւքա՛լի վօլաթի՛ւէ
գործ ածելով։

Այս միջոցի մէջերին ալ տենդին բնու-
թեանը կեօրէ վարվելու է, ե՛րբոր չա-
փազանց տկարութի ըլլալուն համար խա-
ղաւարտները մարմինին վրան հաղիւ թէ
կը մընան, և անոր ներքին կը թաղվին.
պէտք է ան ատենը քնա.քնա տալ, որուն
հետը խառնէ նաև սէրբէնթարիա վիր-
ճինիանա, և քեափիրի։

Նոյն ալըշմիշ եղողին՝ աղնիւ գինի ալ
տալու է, բայց խիստ քիչէն ըսկըսելով։

Այս ատենս թէ որ չափազանց տաքու-
թի վրայ գայ նէ՝ պէտք է տալ քիպրիթ
սուլիւ (սպի՛րթօ սօլֆօրի՛քօ)՝ կամ խըմցընե-
լով, կամ քնա.քնայի հետ խառնելով։

Իսկ որ կենդանական ուժը շատ տըկա-
րանալով՝ ախկայ յարմար չի գա՛յնէ,
պէտք է տալ քնա քնա քեաֆիրիով,
կամ արնիքայով. որ աս վերջինս ոմանք
ալ աղէկ կը սեպեն։

Այս տենդիս համար ալ ֆիօ՛րանի ցին-
քօն շատ կը գովեն. բայց ես փորձած չե՛մ.

ի

Ալ աֆիոնին օգուտը ամէնէն շա՛տ է՝ եթէ տենդը տիաթէզի ասթէնիա՛յ է նէ. ինչպէս որ ամէն կերպ փորձերը միապէս կը հաստատեն. և աֆիոնը ու քնա քնան խոհեմութ՟ տալով, ջղերուն գըրգըռմունքէն առաջ եկած գէշ նշաններըն ալ շուտով անյայտ կըլնեն։

Դուրսէն քսաֆիլիով օծելուն օգուտը շա՛տ փորձով տեսնըված է. բայց շատ անգամ ընելու է. որուն կըսեն՝ լինիմէ՛ն թօ քանֆօրա՛թօ. և չինելու կերպը տե՛ս երրորդ հատորին մէջը (ըէհէ ՐԲա՛, ՐԽ. 40.)

Բայց թէ որ հիւանդին կեցած տեղին օդը շատ մաքուր չըլլայ, և հիւանդը ինքն ալ խիստ մաքուր չի կենայ նէ, աս դեղերուս հիչ մէկը օգուտ մը չընէ՛ր։

Անոր համար պէ՛տք է յաճախ հիւանդին շապիկը, և անկողինին չարշաֆը, և եօռղանը՝ փոխել. և սենեակին օդն ալ օրը քանի՛ մը անգամ նորոգել՝ պատուհանները բաց պահելով։

Աս թէպէտ հոլը և պաղը հիւանդին շատ անգամ վնաս կուտայ. բայց հա՛րկ է որ՝ հիւանդը չափէ դուրս տաք չի մընայ և անկողինին մէջը նստած կամ պառկած

ըլլայ. բայց զով (սէրին) ըլլայ։

Բացախի գոլորշիք (պուղու) ալ օդո-վի սենեակին մէջ, և ուրիշ ինչ բաներ որ օդին ապականութիւնը կը վերցընեն, անոնք ամէնն ալ հիւանդին աղէկ են։

Ե՛րբոր տենդոտին թմրութիւնը երկըննայ, և ցնորմունքն ալ չափէ դուրս ըլլայ, նաև խելքն ալ թռչելու պէս ըլլայ նէ. ինչպէս որ ժամանահարներուն ալ շատ կը պատահի. ան ատենը՝ փորձով տեսած ենք որ՝ սառուցով պաղեցուցած խըմելիքները շա՛տ օգուտ կընեն, մանաւանդ ան ատենը՝ երբոր կաշիին տաքութիւը ու ցամքութիւը չափէ շատ դուրս կըլլան։

Խըմելիքին հետը քիչ մը ասիտօ վէթրիօլիքօ, կամ էլիխսիր ասիտօ տ՝ Հալլեռ խառնելով, քիչ մըն ալ Փունէնկ լիւղիւմի շիրուպ, կամ լիմոնով կամ նուռով շինած շիրուպներ խառնել խոհեմութեամբ։

Բայց թեթև գրեխներն ալ ձեռքէ ձգելու չէ. ամէն իրիկուն ընելու է։

Մ՛ենք ինչպէս որ յառաջ ալ զուրցեցինք. աս դիպուածիս շատ մեծ օգուտ կընեն թթուաշաղ խըմելիքները, որ քիչ քիչ՝ բայց յաճախ խըմցընելու է,

Խէ որ ատոնցմով և ատոնց նման համացուցիչ դեղերով ալ օգուտ մը չըլլայ նէ . ան ատենը պէտք է ժամանակ չի կորսընցընելով հիւանդին բոլոր մարմինը ծխնով կամ սառուցով շփել . և թէ որ հարկ ըլլայ նէ՝ կըրկնել ալ, նըշաններուն մանաւանդ տաքութե՛ն սաստկութենը նայելով:

—

### Փուտ ժանտախտին դէմ դեղ:

* . 93 . Ա՛ն դեղերը՝ որ ինչվան հիմա գրեցինք, աս կարգին մէջըն է . կըրնաս անտարակոյս գործածել ամէն տեսակ անընդհատ ջղային տենդերուն կամ փուտ ժանտախտի դէմ ալ:

Անոնց որ՝ հիմա մէկ քանի յատուկ դեղեր ալ կան բուն փուտ ժանտախտի դէմ առած փորձառու բժիշկներէն . անոնք որ գործածես անանկ նեղ ատեն նէ, կարելի է որ փտութէ ազատելով ժանտախտէն ու վար ցաւէն ալ ազատած կըլլաս:

Ասոնք են՝ զամձ ուհին, լիմոնին աթան, սիրքէնձէպին , սիրուլթկան , էլիսիրու

աչիտօ տ՚ հալլեուն, Թամր հինտինո, աչիտօ մինեռալէ տօլչի Փիւքմ՚Թօն , և քրըմըր Թարթարին, ևն. որոց ոմանք ջուրի տեղ, և ոմանք ալ հասարակ ջուրի հետ խառնելով գործ ածելէն ՚ի զատ՝ երբեմն ալ գրէխի ( հոգնայի ) մէջ կը խառնենք. մանաւանդ ան ատենը՝ երբոր տաքութիւնը չափէ շատ դուրս կըլլայ. երբոր աչքերը կարմիր ու փայլուն կըլլան. երբոր լեզուն չոր՝ սև՝ ու դողդողուն կըլլայ. երբոր շունչ առնել տալը դըժվար կըլլայ:

Մահացուցիչ կըլլայ ժանտախտը. երբոր՝ ելունդաւոր և խաղաւարտաւոր ժանտահարներուն երկու օրէն ետև փոր քըշուք ու չափէ շատ դուրս անուժութիւն կամ Թուլութի կուգայ:

Ասոնք անանկ եղածին պէս՝ վերը պատմած դեղերը վերջ ընելու է, և անոնց տեղը գործ ածելու է՝ այնի սերէԹանը (ճէքէ օթէ չա՛նքասօ), կէյիկ պուլնուղին, Թէրրասինձի լա՛Թօն , քիլ երմենին. մանաւանդ՝ եԹէ խառնես ջրախառն կիպրոսի գինիով:

Նոյնպէս՝ օգտակար է նաև եԹէ երեք տրամ սարմուսաք մաձունին հետը

խառնես՝ կէս տրամ քիլ էրմէնի , և 50 տրամ հասարակ ջուր , կամ 40 տրամ ջրախառն աղնիւ գինի · և քիչ քիչ պէ՛տք է խմցընել փոքրըշուք ունօղ ժանտահարին ։

---

## Բորբոքաւոր ջղային տենդերուն՝ կամ ժանտախտին դէմ դեղեր ։

* · 94 · Բորբոքաւոր ջղային տենդին նոր բռնած ատենը՝ թէ որ բռնըվողը երիտասարդ ուժեղ արիւնոտ մարդ է նէ , քիչ մը արիւն առնելով կը կըտրի փըսխելը , որ մաղձէն առաջ չի՛ գար · հապա՝ տենդ շինօղ թոյնը ըստամոքսը գրգռելէն կըլլայ ։

Իսկ թէ որ արիւն առնելը յարմար չի՛ տեսնըվի , պէ՛տք է տալ թարթա՛րօ էմէթի՛քօյով շինած ջուրը ( ԲԷՀԷՐՈՒ , ԲԷ · 1 · ) , կակըղցընող գրէխներ , ու ֆօմէնթիներ · որ դարմնելու է մակորովայնին կամ ըստամոքսին վերի դիերուն վրայ ։

Նաբզին բարձրութիւնը՝ ուժովութիւնը՝ ու լեցունութիւնը կիջնայ , մանաւանդ փորին սուր ու սաստիկ ցաւը , կակըղցը-

նօղ լափայ զարնելով՝ կամ տըզրուկ փակցընելով, կամ թէ որ տաքութիւնը սաստիկ է նէ՝ արուն առնելով, և ուրիշ դեղերով՝ որ ապըսպըրենք պիտի փողացուի համար յերկրորդ հատորին մէջը։

Աս տենդին, կամ ժամանախտին պատճառներուն ու բնութենը նայելով՝ ուրիշ նշաններուն ալ դէմ դընել պէտք է։

Երբեմն ալ՝ ան տենդը՝ որ առաջ պարզ բորբոքողական կըսեպվէր, կը փոխվի՝ ուրիշ խառն տենդ մը կըլլայ, կամ ջղային բորբոքողական կըլլայ. և ան ատենը՝ տահա կենսական գրգռութիւնը չի կըտրած ըլլէն՝ պէտք է տալ հանքային թթուներ երրորդ հատորին մէջը (ԲՆՉԷԲ-Բա, ԲԻ. 39.) շատ ջրով նօսրացընելով, և շիրուպով անուշցընելով։

Թէ որ հիւանդը ջղային ըստամոքսական տենդի շատ յարմարութիւն ունի նէ՝ անոր վրայ ապըսպըրելու դեղերէն տալու է։

Ամենէն աղէկ կըսեպվի քինա քինան կամ սօլֆաթօ տի քինինօն. բայց աս ըրված ժամանակը՝ հիւանդը բորբոքում մը ունենալու չէ. քանզի թէ որ

բորբոքում ունենայ նէ՝ հիւանդին վը-նաս կուտայ աս դեղը։

—

Ջղային ստամոքսային ցաւերու դէմ դեղեր։

* ·95· Ան է որ ջղային ստամոքսա-կան տենդի հետ եղած նշանները՝ ստամո-քսային ըլլալու նշաններ ալ ունենանը (* ·99·), որ կը խմնամք տեղական հի-ւանդութեան բնութեան, և հիւանդին տենդէն չի բռնըված լըքէն կազմուէն, և հիւանդութենէ նոր ազատողներուն պատմութենէն. (քանզի աս ջերմ տենդին ուրիշ նշանները անորոշ են)․ ան ատենը պէտք է անանկ ճամբայ մը բռնել որ՝ աս տենդի դէմ ըլլայ՝ (* ·105·) մինչև հիւանդութիւնը պարզի։

Անոր համար հարկ է հիւանդութեան առաջին օրերը աղ սոլուցիոնէ էմէթի-քա (դեղագիր., թիւ ·1·)․ բայց զգու-շութեամբ, և քիչ քիչ։

Քանզի աղիքներուն մէջ ուրիշ խըլ-թիչ ու ապականեալ հիւթեր ալ կան, կամ թէ որ փորուն կամ ստամոքսին մէ-ջի նիւթերը թանձր ըլլալը երևնայ նէ՝

որուն դուրս ելլալը դժվար կըլլայ, առաջնուց թող տըրվի (ՐԷՉԷԲԲ՛, ԲԷ. 8.) մէջը գըրված քակող փոշին, և մըթպուխը (ՐԷՉԷԲԲ՛, ԲԷ. 12.), և փըսխողականը ուշացընելու է մինչև հիւանդութեան երրորդ օրը։

Եթէ ըստամոքսական տենդի նշանները շարունակելու ըլլան նէ, ան ատենը՝ պէ՛տք է տալ էմէթիքօ քաթարթիքօ (ՐԷՉԷԲԲ՛, ԲԷ. 11.)՝ որ լուծողի պէս ալ կըներգործէ, ուրիշ դեղերէն ամէնէն աղէկ կըսեպվի, և որչափ ժամանակ որ տաքութիւնը քըշէ նէ՝ կըրնայ տըրվիլ՝ հէ՛մ ատ դեղը, հէ՛մ թամր հինտի՝ ջրով նօսրացընելով, կամ սիրութկայ՝ թամր հինտիի թամրով։

Ասանկով շատ օգուտ տեսնըված է լուծող և փսխեցընողներէն. որ աս կերպ տենդին ինչ ժամանակ որ ըլլայ՝ կըրնայ կըրկնըվիլ, միայն թէ՝ պէ՛տք ըլլայ։

Նմանապէս օգտակար է նաև իփէքաքուանան խառն ռավէնտով. բայց աս ճամբան ալ բռնելու՝ ուրիշ զգուշութիւններ կան նայելու, առանց զգուշութե՛ կուրօրէն ալ չըլլար։

Քանզի փորը կամ ըստամոքսը շատ պարպելով ալ ուրիշ գէշ բաներ կը ծընանին․ քան թէ ըստամոքսային վիճակի մէջ որ մնար․ երբեմն տենդոտը վտանգի մէջ ալ կիյնայ, և իր անգին կեանքն ալ ձեռքէն կը հանէ․

Ասանկ է նէ՝ երբոր մաղձային խըմորը փըսխելով դուրս կելլայ, և աղիքները կը պարպըվին վերը գրուած դեղերով․ ա՛լ աղէկ օգուտ կընէ քըչիկ քըչիկ թարթառօ էմէթիքօյով միւրվէրի խաշուն, և գրէխնները․

Երբոր ըստամոքսային նշանները քիչնան, որով հիւանդութիւնը՝ կը նուազի, թէ պարզ ըլլայ տենդը և թէ խառնակ․ ան ատենը՝ կըրնայ երբեմն տըրվիլ հէմ քնաքնայի և ռավէնտի խաշույով, հէմ էմուլսիօնէ տի կօմմա արապիքա՝ (ՐԷՉԷԹ ԹԱ, ԹԷ․ 2․) ռատիքեայի շիռուպով․

Ասանկով խիստ շատ տեսնըված է, եթէ օրը՝ 4, կամ 5 անգամ տըրվի նէ հիւանդին․ բայց ինչպէս որ բժիշկը պատուէր կուտայ նէ․ քանզի անզգուշութիւն չափէ դուրս տալն ալ աղէկ չէ՛․

## Ընդհանուր ջղային տենդերուն և ժան-տախտին նշաններուն դէմ դեղեր։

* ·96· Աս փոխադրական ցաւե-րուն տեսակը ու պատճառները չըլլար անպակաս մէջ բերել. հապա՝ որչափ կը-լնայ և խառնուածք կրնայ ըլլալ նէ. այնչափ ալ տարափոխիկ հիւանդութիւն կայ. և ամէն մէկ ցաւերուն շատ կերպ նշանները կրնայ ըլլալ. և իւրաքանչիւր նշաններուն ալ՝ յատուկ դեղերը կան։

Ան դեղերն որ՝ ամէն մէկ յայտնի ու տարափոխիկ ցաւերուն դէմ գրեցինք նէ, անոնց նշաններուն ալ դեղն են։

Անոնց որ՝ հիմա մէկ քանի դեղեր ալ կան բուն անոնց նշաններուն դէմ առած՝ շատգէտ և փորձառու բժիշկներէն. անոնք որ՝ ատենով և զգուշութեամբ հիւան-դին խըմցընես նէ՝ նշաններէն ազատե-լով ցաւէն ալ խալըսած կըլլայ։

Օրինակի համար. եթէ հիւանդը ըռնըլուածին պէս՝ փըսխել ըսկըսէ նէ, ան ժամանակը աղէկ կը հասկըցվի որ՝ փոխադրական թոյնը աղիքներուն մէջը տարածվեր է. որուն դեղն է՝ 20 ցորե-

նաչափ սա՛լ ալքալի՛նօ վէճէթաբի՛լէ , որուն հետը խառնըված ըլլայ չորս տը-րամաչափ հիւթն կիտրոնի (սու՛-կօ տի չէ՛դ-րօ) . որ պէ՛տք է խըմցընել մաղձին կատա-ղած ատենը .

Թէ որ փորքըշուք գալու ըլլայ՝ որ շատ անգամ քրտինքը կըտրըվելէն կըլ-լայ , աղէկ կու գայ աֆիօնը , քնաքնայով եփած աղնիւ գինին , Թառչինը , քէհատ հինտին , շալը , սարմուսաք մաճունին , Թրիաքը , քօնթռաէռվաի կամ քալօ՛մ-պայի արմատները , որոնց չափը՝ ու գործ-ածելու կերպը տեղն 'ի տեղը կը գտնաս աս ըժշկարաններուս բառարանին մէջ։

Ասոնք երբեմն վերէն գործ կածվին՝ ու երբեմն ալ վարէն գրէխով։

Փորին կամ աղիքներուն մէջը եղած սուր ու սաստիկ ցաւերը կաղէկնան՝ քը-սելով լինիմէ՛նթօ վօլաթի՛լէ , կակըղցը-նօղ ֆօմէնթէյով , կամ տըրուկով , կամ Թէ որ բորբոքումը սաստիկ է նէ՝ արուն առնելով , կակըղցընօղ գրէխ գործա-ծելով , ցաւած տեղին վրայ խարանա-դեղ ( վէզիքա՛նթէ ) դընելով։

Ե՛րբոր ասոնցմով գրգռմունք գալու

ըլլայ նէ, ա՛ն ատենը գործ ածելու է կակուղ լուծօղ դեղեր, ինչպէս են՝ թամրը հինտիին խաշուն, և ռաւէնտը, կամ թինթուրա աքգուօզա տի.քինան:

Բայց թէ որ ցնորմունքը (տէլիրիօ), գլխի ցաւը, քնհատութիւնը, ու ջղայընցութիւնը սաստիկ ըլլա՛ն նէ՝ ճակատին ետևի ծայրերը, կամ ականջներուն ետևները տզրուկ փակցնելու օգտակար ըլլալը փորձով ալ գիտենք. մանաւանդ նստոյ տեղը:

Թէ որ թանչը կամ մայասիլը (էմօռօյտէ) կատղելու ըլլայ նէ, պէտք է քնա քնայի խաշուին հետ քիչ մը շապ խառնել՝ ու գործ ածել աւելի դըրսէն, քան թէ ներսէն:

Շատ աղէկ օգուտ կընէ քըչէք քըչէք աչիտօ մինէրալէյով սուկ ցուրտ ջուրը:

Ինչ օգնուի չէն ըներ նաև ձիւնախառն կամ սառուցախառն հին գինին շուտ շուտ զալնելը արուն վազած տեղը:

Թէ որ քրտինքը պակսի կամ փախչի նէ՝ օգուտ կընէ գինէխառն կամ օղխախառն աչիտօ մինէրալէն:

Թէ որ ցամաք ջրվաթը քիչնայ կամ

արգելլի նէ՝ (ՓԷՊՐՈՒԱՐԻ), օգուտ կընէ էմուլսիօնէ արապկէքան՝ (ՐԷՆԷՐԹԻ, ԹԷՍ. 2.) քանի մը կաթիլ աֆիօնի ռուհով խառն։

Նշանկ ծանր հիւանդութե. առէնը՝ ախտաւոր նիւթերը մէկ տեղէն մէկալ տեղը կը փոխվլին՝ որ բժշկական ոճով մեթասթասի կըսվի, որուն դեղն է՝ տաք ջրով թրջած խավլուները, բայց շատ անգամ ընելու է. որուն կըսեն փօմենթացիօնի։

Օգտակար է նաև ձերմակ սոխով ու հացի փորով շինված լափաները, մանաւանդ անոնց՝ որոնց ցամաք ջրվաթը արգելված է։

Եթէ որ քաղցկեղի նշաններ երևնան մարմնոյ վրան՝ նոյն քնա քնան դրսէն, ու սօլֆաթօ տիքինինօն ներսէն դեմ կը դընեն։

Եթէ որ նոյն քաղցկեղը դուրս զարնելու ըլլայ նէ՝ շատ անգամ խիստ ցուրտ ջրով լըվալու է, որուն հետը երբեմն ձիւն ալ կըրնայ խառնըվիլ։

Դուրսէն մէկ հավկիթի դեղնուցով կես լիմոնի ջրով քիչ մը ալ սըխութօ

տի վինօյով, և նոյնքան ալ չէռօթա տի սաթուռնօյով օծելուն օգուտը շատ փոր ձերով տեսնըված է • բայց առատու իրի-կուն քսելու ատենը՝ պէտք է լըվալ քնա քնայի խաշուիւ, որուն հետը 40 կաթիլ աֆիօնի ռուհ ալ կըրնայ խառնըվիլ:

Երբոր մէթէօրիզմ գայնէ՝ շու-տով պէտք է ըսկըսիլ արուն հանել, տըղուկ փակցընել, կակըղցընօղ խոտե-րով ֆօմէնթացիօնէ ընել, և փէհլիվան եախըսի ղարընել:

Ուրիշ օգուտ չէն ըներ • նաև երբեմն խիստ ցուրտ ջուրը, և ձիւնը, և սա-ռուց դընելը փորին վըրայ:

Ներսին մէջը աֆթէ ըսված խոցերը սաստիկ ցաւ ունենան նէ՝ քըսէ շուտ շուտ մեղըր հավի փետուրով, որուն հետը ըլլայ 20 ցորենաչափ պօռաճէ կամ վէթրիօլօ պլանքօ:

Թէ որ թմրութիւն և խըլութիւն գալու ըլլայ նէ • պէտք է որ դէմ դընենք երբեմն թեթև լուծօղ դեղերով, և երբեմն ալ ուժ տըվօղ դեղերով (* • 85 •):

Թէ որ հեծկըտանք (սինկիօզզօ) գա-լու ըլլայ նէ, որ վախնալու նշան է,

կուտանք հիւանդին՝ ութ տրամ հիւթն կիտրոնի (բօ՛ւբա դի չէ՛դրօ), երկու ցորենաչափ միսկով խառն, և 24 տրամ վարդի ջրով։

Մ՝իսկը միայն բորբոքումեղած ժամանակը աղէկ չէ․ այլ ջղացնցութե (բոբա՛ւլօ) ին վախտը աղէ՛կ է, որ ջղերուն տակն ու վրայ ըլլալը կաղէկցընէ։

Եւ է որ աս միջոցիս մէջը ականջները վազել ըսկըսեն, կամ խըլանանը նէ, որ շատ անգամ կը պատահի․ ան ատենը՝ երբեմն ականջներուն ետևները փէհլիվան եախըսի դնելու է, երբեմն առատ իրիկուն փափաթեայի շորիին վրայ բըռնելու է ականջները, և երբեմն ալ սըխտորի եղէն օրը քանի մը կաթիլ ականջներուն մէջը կաթեցընելու է։

Ա՝սոնց օգուտ կընեն քիչ քիչ՝ խըմելը սըխուիթօ վէթուխօլօիւ խառնած քնաքնայի թրջոցն, բայց յաճախ։

—

## Նախապահպանութիւն․

Բ՝ժիշկին կիյնայ՝ որ ժամանակին պըլըշկողուեր առաջը առնէ՝ իմաստուն

ի

խրատներ տալով հասարակութենը ։

Անանկ են՝ ասոր նախապահօղ դեղ ամենէն աղէկ՝ ժանտամահին պատճառներէն զգուշանալն է , ըստամոքսը շատ չըբեռնավորելով ․ խըեար՝ բաթլինճան՝ շատ խուղալի կերակուրներ՝ աղի ձուկեր՝ խակ պտուղներ՝ կըրակ տըվօղ ուտելիքներ՝ չի կերցընելով , բարկութի՝ մըտմըտուք՝ վախ՝ նեղութի՝ և սրտադող բերօղ բաներէն հեռու կենալով , թեթև ու դիւրամարս կերակուրներ կերցընելով , հովացուցիչ խըմելիքներ խըմցընելով ․ ինչպէս են՝ լեմոնաթան , ջրախառն սիրքէնճէպին , փըւէնկ խուղխամիւլին՝ մէնեկշէին՝ ազոխին՝ սերկևիլին՝ շիրուպները ։

Տեօրտ հըռսըղլար սիրքէսի , քեաֆիրի՝ խըթիթ ( չէյրան պօտու )՝ կիրխատուլատէն՝ սըխտոր հոտվըտալով , և բոլոր մարմինը՝ և շապիկը՝ ու շապքընկերը՝ և եղած տեղին օդը մաքուր պահելով ։

Ցուէնկխատան բոլոր ժողովըրդոց մէջ , և ուրեք ուրեք մեր մէջն ալ սովորութի կայ , որ վար ցաւը՝ կամ ուրիշ տեսակ տարափոխիկ հիւանդութինները՝

իա

մանաւանդ ժանտախտը կատղած տենը՝ գարւոյ կլենլիւք, խունկ, շաքար, քացախ, անասուններուն քակորը, յարթ՝ թիւթիւ կուտան՝ օդը մաքրելու համար. բայց արտըճը՝ քէհրիպարը՝ չամ սախըզին՝ խաթրանը՝ եգիպտական շիխը՝ ա՛լ աւելի զօրաւոր են։

Բայց աշխարքիս մէջը կրակէն աւելի աղէկ բան մը չի կա՛յ օդը մաքրելու համար. ինչպէս որ հիպոքրատէս ալ կը վըկայէ, ու փորձն ալ մեզի կը ցուցունէ. վասն զի եւրոպիոյ մէջ ե՛րբոր պատահմամբ մահ ելնալու ըլլայ նէ՝ կրակով կը յաղթեն։

Երկու տրամ քէաֆիրիի իւղին հետ՝ երկու տրամ ու կէս կիտրոնի իւղ խառնէ, և ասկից տո՛ւր օրը 5 կաթիլէն՝ ինչվան 7, և քիչ մը նալ շիրուպ խառնէ՛ որ՝ հե՛շտ խըմվի։

Երկու տրամ խըլթիթը՝ 60 հատ հապ շինէ շիրուպով մը, և ամէ՛ն օր 3 կամ 4 հատ տո՛ւր կըլլէ՝ նախապահպանութեան համար։

Օրը 6 կաթիլէն ինչվան 12 կաթիլ՝ տէօրտ հըրսըզլար սիրքէսին խըմելը

քիչ մը շիրուպով խառնած՝ շատ զօրութիւն ունենալը լըսւած ու տեսնըւած է։

Մարդ աս դեղովս ամէն օր օծվի նէ՝ շատ աղէկ օգուտ կընէ․ ինչպէս որ զէթին եաղին համար ալ կըսեն խելացիները՝ եաղձիներուն ու մասվաձառներուն նայելով։

# ՍԵՌ ԵՐԿՐՈՐԴ

Անընդհատ ըստամըքական տենդի վրայ. որուն տաճկերէն սաֆռաւլի հըմ միտէ հիւմմասի կըսուի ։

## Յօդուած . Է.

### Ստամոքսական տենդի տեսակը.

* ・97・ Միջոց չի տըվօղ ըստամըքական տենդը, որ և կըսուի մաղձային տենդ. իտալերէն՝ ֆէպպրէ քօնթինուա կասթռիքա, կամ պիլիօզա. արապերէն՝ նուշայիլ սաֆռավիեէ ։

Հիւանդութեանց մէկ մեծ մասն է, որ սովորաբար կը ծագի ըստամըքսի ու աղեաց մէջ ժողվըված ապականեալ նիւթերէն, որոնցմէ կավըրվին իրենց ամաններուն կարգադրութիւնները, և կը գրգռին ջղերը, և կը պատճառին աղգի աղգի անհանգստութիւններ ։

## Գուղաճալըր:

*·98· Ոչ տենդը՝ թէ պարզ ըլլայ, և թէ խառնակ · առաջ կրկնուէ պարբերական տենդի պէս (*·49·) ետքէն միջոց չի տըվօղ տենդերուն կարգը կը մնայ :

Ասիկայ մեր ձեռքէն եկածին չափ հասկըցընելու համար կըսենք թէ՝ մէկ ըստամոքսական հիւանդութիւն մըն է, որուն հետը կըլլան շատ տեսակ տենդի նշաններ, որոնք կը յառաջանան կերպ կերպ պատճառներէն :

Երբեմն կըլլայ ըստամոքսական տենդի նշաններով (*·97·), որ կըսուի՝ մաղձային · երբեմն կըլլայ մաղասատուոր տենդի նշաններով (*·100·), որ կըսուի՝ բորբոքային (Ֆէպրէ-էրօիճէ) · երբեմն կըլլայ ճճիաւոր տենդի նշաններով (*·101·), որ կըսուի՝ տաճկերէն սողուճանը հիւմմայ (Ֆէպպրէ վէրմինօզա) :

Որոնց ոմանք կըլլան սփօրատիքա (ՅԸԸՐ ՎԷՇԸ), և ոմանք ալ էքսանթէմիքա (ԾԱՂ-ՂԸՐՏԱՉԱՆ :)

## Ստամոքսական տենդէ նշանները։

* ·99· Այս տենդը՝ որ սովորաբար ամռուան խիստ տաք ատենը շատ կըլլայ, շատ անգամ՝ առաջ կուգայ մէկ փոքրիկ տաքութիւն մը, անկից ետքը պաղութիւն և տաքութիւն մէկ զմէկու ետևէ, նոյնպէս քիչ և թեթև՝ գլխոյ, մէջքի, թիկանց՝ ծանրութիւն, և յօդուածացաւի նման ցաւ մը։

Բերանները ու աչքերը կը դեղնին, ըստամոքսը չափէ դուրս կը թուլնայ, փորը քիչ մը կուռենայ՝ կը սըխմըվի՝ և կը նեղվի. յորմէ կը հետևի անհանգստութիւն՝ իշտահսըզութիւն, գեսկըրտանքը (—·—ՐԲԷ)։

Կերակուրներէն կը կանի, սիրտ խառնուք կունենայ, և կը փըսխէ, փըսխունքը կըլլայ երբեմն թթու՝ և կծու, երբեմն ալ տախպ՝ և հոտած, բերնին համը կըլլայ լեղի, և անհամ. փոքրափորը կը սըխմըվի, լեզվին վրայօք դեղնախառն ճերմակ մար մը կը կապէ. հիւանդը մէկ լեցունութիւն մը կխմանայ, մէկ սըխմըլիկ մը, փորը սըխնդ ըլլալէն 'ի վեր՝ աղիքներուն մէջն ալ քամի՝ խոստուկ՝ կամ ցաւ անպակաս կըլլան։

Աընտրուութիւնին հետը փրփրոտ մաղձեր, ու ուրիշ հոտած նիւթեր դուրս կելլան։

Հիւանդը յանկողինը չի մտնալէն շատ օր առաջ՝ աս նշաններս կիմանայ. ինչպէս որ՝ շատ տեսնըված է՝ 5 . 7 . 9 օրերը, և երբեմն տահա ուշ։

Աս առջի նշաններէն ետքը՝ կուգայ սաստիկ տաքութիւն, ծարաւութիւն, սաստիկ գլխացաւ, և պըտըտուք։

Զարկը շատինը կը նետէ միջոց տալով, ու շուտ շուտ. քիչ հեղ ալ հաւասար։

Անկից ետքը՝ փորին ու աղիքներուն նշանները սաստկանալնուն համար, փորխելն ալ կը կապուի։

Երեսները երբեմն կը կարմըրին, ու երբեմն ալ կը դեղնին, անկից 'ի զատ՝ քթին բոլորները ալ կանաչ գոյն կը բռնէ։

Աչքերը կը փայլին ու արցունքով լենալէն 'ի զատ՝ վարի պըռկունքն ալ կը դողդողայ։

Անկից ետքը վրայ կուգայ քնհատութիւն, թմրութիւն, դժվարաշնչութիւն, ու ցնորմունք։

Հազը կըլլայ երբեմն թաց, ու երբեմն

ալ չոր․ կուրծքը կը տըկարանայ, և յօդուածացաւի պէս ալ ցաւ մը կուգայ․

Երբեմն իրեք ու երբեմն ալ խել մը օրէն ետև՝ ճակատին և կուրծքին վրայ թեթև քրտինք մը կուգայ․ որ է՛ ցուցակ թուլութեան նշանաց․

Ան միջոցի ատենները լեզուին վրայ դեղին և մածուցիկ մար մը կը կապէ, որ անոր մէկ կողմն ալ՝ կըլլայ չոր և սև;

Յամնաք ջրվաթը շատ դեղին և երբելով ելլելէն ՚ի զատ՝ տաքն ալ աղտոտ և կարմրագոյն թեփի նման նիւթեր ալ անպակաս կըլլան:

Վերի գրած նշանները շատը կէվընան գիշերները, և անոնց հետը կըլլայ մէկ թեթև ցրտութիւն մը․ և առտըվան դէմ թեթև քրտինք մը գալով՝ ան քրտինքովը քանի մը ժամ կը թուլնան սա նշաններուն ամէնն ալ․

Անկից ետքը նորէն կուգայ տենդը, կը շատնայ կաշիին չորութիւնը՝ ու պընդութիւնը, աչքերուն դեղնութիւնը, քընհատութիւնը, ցնորմունքը, և անհանգըստութիւնը․ մանաւանդ գլխին ցաւը, ու ծարաւութիւնը:

Շատ անգամ ալ քիթէն շիճուկի նման արուն մը կիջնայ, պօղազը՝ մանաւանդ լեզուն չափէ շա՛տ դուրս չոր ու պինդ ըլլալէն 'ի զատ՝ վրայի կապած մարն ալ՝ ա՛լ աւելի կը սեւնայ. յորմէ կը հետեւի դժուարախօսութիւն:

Ականջները ծանրընալէն 'ի զատ՝ անոր քունքերն ([illegible]) ալ շատ յաճախ ու ուժով կը ըսկըսեն զարնել:

Աս միջոցի ատէնները զարկը թէպէտ շատ լեցուն կըլլայ. բայց քաշուելով ու չափէ դուրս փոփոխմամբ կը նետէ:

Յամոք ջրվաթը կը ըսկըսէ պակսիլ ու հոտիլ, որուն հետը կիջնայ մ թին կանաչ և շատ հոտած մրուրներ ([illegible]). յորմէ կուռենայ փորը՝ ու առաջիններէն շատ աւելի կը բարձրանայ:

Ու զի՝ թէպէտ հիւանդին բոլոր մարմինը կը ցամքի և կը պընդանայ, բայց կաշիին վրայօքը շատ քրտինք կերեւայ. որ է նշան ըսկզընաւորութեան էզանթէմաներու:

Աս տենդը՝ երբեմն աղէկ հոգ չի տանելէն, երբեմն եղած կլիմային դէշութենէն, և երբեմն ալ հիւանդին խառ-

նուաճքներէն ջղային տենդի նշանները ալ երևան կելլեն • որոնցմով կերնայ հիւանդը ա՛լ աւելի փորձանքներու մէջ։

Ա՛ս տենդին եաքը կը տեսնըվի նաև ուրիշ կերպ ախտեր, որ կըսվին տենդնուրը՝ (ՖԷՊՐԷ ԼԷՆԹԷ) և հիւծական ախտ՝ (ԷԹԻՔԱ), եթէ աղէկ դարման չի տարվի նէ։

Բայց անոնք՝ որ ասանկ ծանր հիւանդութէ պիտի աղէկնան նէ, հիւանդութե տաջի օրը՝ կամ քանի մը օրէն ետև՝ ըստամոքսի մէջի եղած ախտաւոր նիւթերը՝ կամ վերէն, կամ վարէն, և կամ շոգխաւոր քրտինքով դուրս կը նետվին։

Ասանկ ատենը տենդը կը քիչնայ, լեզվին վրայի մարն ալ՝ որ է՛ չոր և մածուցիկ, քիչ քիչ կը կակըղնայ, և կը մաքրըվի • քունը՝ և ախորժակը տեղը կուգան։

Բանդի տեղափոխութի (ՊՈՒՀՐԱ՛Ն) կընէ, և միջահաստական տենդ կը փոխվի հիւանդութին • որ աս տեսակէն բժշկըվօղներուն շատին կը պատահի։

Ընդհանրապէս կըրնանք ըսել որ՝ աս

հիւանդութիւնէն աղէկցողները ուժեր-նին ուշ կառնեն, և կատարեալ առող-ջութի՛ւ շուտով չե՛ն կրնար հասնիլ։

—

## Պըլղամային տենդի վրայ.

* . 100. Ապատական տենդը՝ չէ թէ մինակ սուր ու կծու մաղձէն, և ապականեալ նիւթերէն առաջ կուգայ. հապա՝ թանձր ու մածուցիկ պըլղամէ-ալ կը ծագի։

Բանզի պըլղամը՝ որ և կըսուի խուխ, կամ մաղաս, կը տարածուի ըստամոքսի և աղիքներուն մէջերը. որով կը խափանուի տուրևառութիւնը, և կը պատճառէ պըլ-ղամային տենդ։

Այս հիւանդութիւնը՝ որ շատ կըլլայ աշնան ժամանակը, աւելի կը բռնուին վատառողջ տղայքը, և անոնց մէջէն՝ ա-ւելի աղջիկ տղայքը քան մանչերը. և մեծ-մարդոց մէջէն՝ տխտադնեալ կամ տկա-րակազմ մարդիկը. ասոնցմէ աւելի քըն-քուշ կընիկ մարդիկը. բայց շա՛տ ան-գամ ալ ո՛չ հասակի կը նայի, ո՛չ տեսա-կի, և ո՛չ խառնուածքի։

Աս տենդը՝ թէպէտ մաղձային տենդի չափ ուժով չըլլար, բայց երկան ատեն կը քշէ:

Առաջ կիմանայ բռնըվօղ մարդը մէկ թուլութիւն մը, քնափութիւն, թիթիղութիւն, նեղութիւն, սիրտ խառնութիւն, իշտահըղութիւն, տրտմութիւն, դժվարամարսութիւն:

Աս առաջին նշաններէն ետքը՝ կուգայ թեթև ծարաւութիւն, փորէն մէկ անախորժ բան մը կիմանայ, կանել մը կուգայ, և սիրտ խառնըվել, խուչափողին մէջէն մաղասը կամ պըլղամը անպակաս կըլլայ, շատ կը գեսկըտայ, և փուք կարտաքսէ. բայց անհոտ կըլլայ:

Նամզը կը զարնէ երբեմն բարակ ու տկար, երբեմն ալ լեցուն և խիստ պինդ. փորին խըցանքները անպակաս ըլլալէն 'ի զատ՝ ցամաք ջրվաթն ալ մոխրի ջուրի նման կըլլայ, գիշերվան դէմ տաքութիւնը էվէլնալով՝ անհանգստութիւն ալ կէվէլնայ. կուգայ գլխի ծանրութիւն, ականջներուն խժըլտուք, քրտինքի պակասութիւն, և մորթոյն ցամաքութիւն:

Ան միջոցները՝ թմրութիւնը և գլխի ծանրութիւնը կըշատնան, նմանապէս փորին

մէջն ալ թանձր ու մածուցիկ պըլղամը ․ անանկ որ՝ ինչվան մաղձային խողովակներուն ճամբաները կը գոցէ ․ որով կը արգելվի մաղձին ազատօրէն անցնիլը՝ սա տուէ տէնում ըսված աղեաց մէջ թափվիլը ․ որոնցմէ կը պատճառի դալուկըն (սարըլըգ) , և փորի սաստիկ ուռեցք մը՝ որ ձեռքով կոխես կամ դըպչիս նէ՝ կը ցաւի:

Անկից ետքը՝ հիւանդը կը ըսկըսէ գորտի սերմի նման նիւթ մը փսխել , որուն համը երբեմն կըլլայ թթու , և երբեմն ալ լեղի ․ բայց անհոտ:

Ասոնք ըլլալէն ետքը՝ քիչ մը ժամանակ անցնելով՝ երևան կելլեն բերնին մէջը աֆթէ ըսված խոցերը՝ հանդերձ հեծկլտանքով , և դժվարաշնչութե̃:

Աս խոցերէն ՚ի զատ՝ բերնին խորունկ տեղերն ալ ուրիշ տեսակ խոցեր երևան կելլեն ․ որոնցմէ պօղազը կը կարմրի , և կը ցաւի ․ մանաւանդ բան մը կուլ ըրված ատենը:

Հազը առաջ չոր կըլլայ , ու ետքէն կը ըսկըսէ խըժոռ պըլղամ քակել ․ որ շատ անգամ հետը կըլլան հարբուխի նշաններ ալ:

Յօդուածներուն ցաւը՝ կաշիին գաղտուկ տաքութիւնը՝ քրտինքը՝ գլխի պտըտուքը՝ քնհատութիւնը՝ ու Թմրութիւնը կը շատնան․ մանաւանդ գիշերը ատեն հիւանդը էվելօք կը չարչարեն։

Այս նշաններուն ամէնը՝ օր մը կուգան, և օր մըն ալ միջոց կուտան․ կամ գան ալ նէ՝ խիստ Թեթևութը կանցնին․ փէ՛պպութ ռեմիթթէնթի ըսված տենդին պէս։

Երբեմն կերևին նաև ջղային տենդի նշանները (* ․ 85 ․ 86 ․)․ երբեմն ալ երևան կելլեն մաղձային տենդի նշանները (* ․ 99 ․)․ որոնցմով՛ալ աւելի կը տըկարանայ հիւանդին կենսական ուժը և ամէնէն ետքը՝ փոքըրշուք, ու շուտ շուտ մարելիք, որ մեռնելու նշա՛ն են։

—

## Ճ՛ճխաւոր տենդի վրայ։

* ․ 101 Ճ՛ճխաւոր տենդը՝ որ կըսվի տաճկերէն՝ սօլուճան հիւմմասը, և խտալերէն՝ փէ՛պպութ վէռմինօզա, անանկ հիւանդութիւն մընէ՝ որ երևան կելլէ երբեմն ըստամոքսական տենդի՝ և

երբեմն ալ մաղասային տենդի նշաններով (✻ · 99 · 100)։

Այս տենդը աղէկ կը ճանչցուի ճըճիներէն (ոչըր-ծան)՝ որ երբեմն դուրս կելլեն վերէն, և երբեմն ալ վարէն․ որոնց ոմանք կըլլան կենդանի, ոմանք սատկած, և ոմանք ալ փտտած՝ ու հոտած։

Ասկից բռնըվողին քիթը միշտ կը քերվի, շողինքները բերնէն կը վազեն, յօդուածները սաստիկ կը ցաւին, փորը քիչ մը՝ կուռենայ, սիրտը կը հեւայ, կը փըսխէ, նստոց տեղը թեթև ցաւ մը կըլլայ, ջղերը կը ցնցին, մկանունքները ակամայ կը շարժին, ցնորմունք ու մարելք կուգայ, մածուցիկ ու փտտած նիւթեր վարէն դուրս կելլեն։

—

## Ստամոքսային տենդէն հետ ջղային տենդն ալ ի՞նչ տեղ ըլլալուն վրայ։

✻ · 102 · Երբոր ստամոքսական տենդին հետ ըլլայ դէշ ջղային (նէվրօ՛զ) տենդ՝ որուն նշանները հասարակին հետն ալ կը գտնըվին, երբեմն պըլղամայիններին հետըն ալ։

Ա՛ն ատենը՝ շուտ մը կերևի չափէ շա՛տ դուրս ուժէ կորիլ, մարմնոյ ծանրութիւն, քնհատութիւն, սաստիկ դողդողալ, բերնի մածուցիկութիւն՝ և լեղխութիւն, ստամոքսի սըխմըվիլ, իշտահսըզութիւն, սիրտ խառնըվիլ, գէշ գէշ գեւկըռտալ, շատ լեղի և կանաչ մաղձ փըսխել, գլխին պըտըտուք՝ և սաստիկ ցաւ, ոտք և մէջքին:

Մ՛էկ մարդ մը ասկէ բռնըվածինա՝ թէ որ ինքիրմէն է նէ՝ ուշկէկ, թէ որ պըռըշկելէն է նէ շուտով ան տենդերուն նշանները (* · 85 · 86 ·) երևան կելլեն. թէ որ աս նշանները ասոր հետ մէկ տեղ ըլլան նէ, ան ատենը մէնք կրսենք ըստամոքսական փուտ տենդ. տաձկերէն՝ սաֆրավլը չիւրիւք հիւմմայ, իտալերէն կասթռիքա բուդրիտա. բայց ամէնևին մէկ որոշեալ ժամանակ մը չունենալով՝ առաջ կուգայ մէկ մըրսել մը, դժնէութիւն, անհանգստութիւն, և անկից ետքը՝ տաքութիւն, սաստիկ գլխացաւութիւն՝ ու ծանրութիւն, քնհատութիւն, ցնորմունք, ու կատղութիւն. գիշերվան դէմ տաքութիւնը էվէլնալով՝ անհանգստութեն ալ-

իա

կեվենայ · կուգայ վախ , թմրութի՛ ,
կոկորդի չորութիւն։

Ճնշերակը կամ՝ նամզը սրխ և կակուղ կը զարնէ , բայց բնութիւններին լեցուն եղողինը՝ կըլլայ լեցուն և սրխ։

Առըվան դէմ քիչ մը կը հանդարտին աս նշանները · բայց շուտ մը տաքութի՛ը վրայ կուգայ՝ հանդերձ մէկ ալ նշաններովը · մանաւանդ՝ թէ որ հիւանդին գտնըված տեղին օդը շատ տաք ու ծանըր ըլլայ նէ։

Աչքերը կըլլան դեղին՝ և շառագոյն , և երբեմն արցունք կը թափեն · փորք կուռենայ , անանկ որ՝ ձեռքով կոխես նէ կը ցաւի։

Յամուք ջրվաթը կըլլայ պըղտոր , և խիստ հոտած · մանաւանդ՝ տաքութի՛ը շատցած ատենը։

Փորը քիչ մը լոյծ կըլլայ , և չափէ շատ դուրս հոտած։

Քրտինքը թէպէտ իբրև առատ կըլլայ , բայց խժոռ և ծանրահոտ · պըռկունքները կը դողդողան ու ատամները մէկ զմէկ կը զարնեն , նոյնպէս և լեզուն ալ կը դողդողայ , և անոր վրայըք ալ սև մոր մը

իբ

կը կապէ , անանկ որ՝ շատ նեղութիւնով դուրս կըրնայ հանել։

Րըթին մէջերը շատ ցամաք կըլլան, շունչը հոտած ըլլալէն 'ի զատ՝ շատ դժվարաւ ալ կառնէ կուտայ՝ հանդերձ հեւքով։

Րըթէն արիւն գալով՝ երբեմն գըլխուն սաստիկ ցաւը կը քիչնայ , կամ՛ թէ որ չափահաս աղջիկ կամ՛ կին մարդ է նէ՝ ժամանակէն առաջ կուգայ դաշտանը։

Ա՛յս միջոցիս՝ փըրխունքը սև ու մածուցիկ կըլլայ , ամերիքայի տենդէն (Փէպպրէ ճիալլա) բռնըվօղներուն փըրխունքին պէս։

Սովորաբար ասոր հետ մէկ տեղ կըլլան սև մաղձ փըռխելը , նաև դալուկը (իթթէրօ), ու կապուած միզատըլը։

Փորը լոյծ ու սաստիկ հոտած ըլլալէն 'ի զատ՝ փուրփուրոտ ու մըթին կանաչ նիւթերն ալ անպակաս կըլլան։

Աֆինթէ'ուի ըսված մկանունքները շատ թուլնալնուն՝ թէ ցամաք և թէ մեծ ջըվաթներուն բռնելը անհընար կըլլայ։

Բայց այն է զարմանալին , որ հիւանդըրաս վինձակի մէջն իքէն , յանկարծօրէն

անանկ առողջութիւն մը կը ըստանայ որ՝ ինչվան իր բարեկամները երթալ գտնալ կուզէ • բայց սաանկ առողջութիւնը անհաստատ ըլլալը անկից յայտնի է որ՝ քիչ մը ատեն անցնելէն ետքը՝ հիւանդը կը ըսկըսէ քիթին տակէն խօսելով՝ և խենթի պէս ցնորելով՝ օդին մէջը ձանձ բըռնելու, կամ բռնել կուզէ։

Լամը թէպէտ ինչվան հիմա մէջակօրէն կը զարնէր • բայց ըսած նշաններուս ամէնն ալ երևան ելլելնուն ետև՝ կը ըսկըսէ շուտ շուտ, ու մանր զարնել • վերայ կուգայ նաև մէթէօոիզմ, բորբոքում, թուլութիւն, ջղացնցութիւն, ձըգանքներուն ակամայ շարժողութիւն, ցնորմունք, անհաստատ քուն, թմրուկ, քաղցկեղ՝ կամ կերցաւ, և դժվարաշնչութիւն։

Ընկեց ետքը՝ շուտով մը ձայնը կը մարի, ու դողդողալով կը խօսի, որկորը կը ցամքի, ձեռքերը կը դողան, ուղեղին մէջը տեղաւորված քառօթիւտէ ըսված շնչերակը զարնել կը ըսկըսէ, բերնին խորունկ տեղերը՝ աֆթէ՛ ըսված խոցերը դուրս կուտան, բան կուլ տալը կը

դժվարանայ . երեսները կը այլայլուին , կը կապուտնայ , և մեռելատիպ կըլլայ ։

Աս միջոցիս մէջերը բոլոր մարմինը խաղաւարտներով ու կորեկաձեւ բիծերով կը զարդարուի . որոց ոմանք կըլլան ճերմակ , ոմանք կարմիր , ոմանք կապոյտ , և ոմանք ալ սեւ . հիւանդութե խառնուածքին կեօրէ . երբեմն ասոնք մէկզմէկու ալ կը խառնուին ։

Ան ետքը կը շատնայ մէթէօրիզմոն . յորմէ կը հետեւին մաշօղ ու հալօղ փորքըշուքը , հեծկլտանքը , վերջին ցրտութիւնը , պաղ ու խժոռ քրտինքը , մկանունքներուն ակամայ շարժմունքը , թմբրաբեր քունը , մարելքը , նամըերուն շուտ շուտ և միջահատական զարնելը , որոնք նշանք են մօտալուտ մահուան ։

Աս տենդին պատճառը ուրիշ բան մը չէ . միայն կծու մաղձը , թանձր ու խըժոռ ալըղամը , և սատկած ճճիները՝ բատամըքսի մէջին աւըրուած նիւթերուն հետ մէկ տեղ խառնուիլէն է ։

Ասոնց շատութենը՝ կամ քիչութեանը՝ կամ բռնըվողին խառնուածքին կեօրէ կըլլայ տենդն ալ , կամ թեթեւ՝

կամ միջակ, և կամ ծանր։

Այս կարծիքը՝ կամ ըստամոքսին մէջը ժողվըված ապականեալ նիւթերէն է, կամ ուրիշ հիւանդէ մը պըլըշկվելէն է. պարապ կարծիք չէ՛. երբոր կը տեսնամք, որ երբեմն նոյն նիւթերը դեղով լուծել տանքնէ՝ հիւանդը կը թեթեւնայ, մանաւանդ՝ փըսխողականաւ։

Շատ անգամ տեսնըված ու լըսված ա՛լ է, որ աս տենդը պա՛ղի երկիրներ հասարակաց հիւանդունի (էբիտէմի) կըլլայ։

Երբեմն օձիկն ալ ասոր հետ մէկ տեղ կըլլայ. երբեմն ալ օդին մէկ մասնաւոր ուժովը՝ կամ չի ճանչցըված պատճառով մը ամառ ձմեռ կը գտնըվի, և կըլլայ՝ ոչ թէ տեղական հիւանդութի։

Երբեմն ուրիշ տենդերուն հետն ալ կըլլայ, ինչպէս են ֆէ՛պրուէ քաւչէրա՛լէն ու նօսօքօմիա՛լէն, ևն։

Այս տենդը սովորաբար ուժով ու շա՛տ կըլլայ աշնան ու ձմեռուան ատենները. անոր համար անմիջոցներուն ատենները պէ՛տք է առաւել զգուշանալ պաղէն ու առատ և ափէղցփեղ կեր խումերէն։

## Սպառնօտային տենդին հետ բորբոքային տենդն ալ մէկ տեղ ըլլալուն վրայ։

* · 103 · Ինչպէս հիմա գրածս ան տենդերուն (* · 99 · 100 · 101 · 102 ·) վրայօք էր, որոնք որ կըլլան երբեմն ջլական, և երբեմն ալ ըստամոքսական։

Հիմա՝ պէտք է խօսիլ նաև ան բորբոքաւոր ըստամոքսական տենդի վրայ՝ որ խառներէն կըսվի ֆէպպրէ կասթրիքա ինֆլամմաթօրիա · որուն ընթացքը ուրիշ կերպ կըլլայ, թէ որ՝ կամ բորբոքաւոր անընդհատ ջլական տենդին (* · 88 ·) հետևելով, կամ ուրիշ պատճառով մը սուր հետը պարբերական տենդի նշաններ (* · 27 · 43 · 48 ·) ըլլան, որ շատ անգամ անընդհատ տենդի հետ կըլլան։

Բայց փորձով տեսած եմք, որ օձիկն ալ երբեմն սուր հետ մէկ տեղ կըլլայ · որ մէկ զմէկ խառնըվելով՝ ալ աւելի բորբոքում կըլլայ։

Ըս հիւանդութեան մէջը գլխաւորապէս կը տեսնեն (* · 65 · 66 · 88 ·) սա տենդերուն նշանները։ Բայց բորբոքոլա-

կան տենդի երևոյթներ կամ նշաններ ալ կերևնան · որ կարծեմ թէ աս նշաններէն առնըված է՝ ըստամոքսային բորբոքողական տենդի անունը ։

Ան զի հաստատապէս կը տեսնըվի · որ մէկը բռնըվի նէ՝ առաջ մէկ սաստիկ ցըր տութ̃ի մը իմանալով գլխուն ցաւը ու պըռըտուքն ալ ուժով կըլլայ · անկէց ետքը՝ նամզը կը զարնէ լեցուն՝ ուժով և շուտ շուտ ։

Երեսներուն մանաւանդ աչքերուն կարմրութ̃ը ու փայլունութ̃ը , սաստիկ ծարաւութ̃ը , ու ցնորմունքը , ոմանց մէկ կալուածք կամ փոքր պլնդուն մը , որ անկից ետքը շուտով մը կուգայ աղէքի կերկինութ̃ի և ցաւ սաստիկ , որ դըպած տեղը խիստ կը ցաւի · հիւանդը դժուարաւ շունչ կառնէ կուտայ · ցամաք ջրվաթը կարմիր ըլլալէն 'ի զատ՝ կըրակի պէս ալ կերէ · երակէն ելած արունին վրայօքը մոր կը կապէ , որ է́ նըշան բորբոքման ։

Ստամոքսային տենդի պատճառները։

※ · 104 · Ստամոքսական տենդին պէս պէս տեսակները հասկըցընելէն ետքը, հիմա պէ՛տք է խօսիլ աս հիւանդութիւնը պատճառներուն վրայ, որ երբեմն մահաբե՛ր է։

Բայց եթէ ինչ որ զրուցեցինք միջոց տըլօղ ըստամոքսական տենդին պատճառին համար (※ · 56 ·), երբեմն ալ բէռնիչիօզա ըսուած տենդին պատճառը ինչ է նէ՝ աս պատճառն ալ ան կըլլայ։

Անեպէտ և աս ախտները շատ են, բայց գլխաւոր ախտներուն մէկն ալ մաղձն է՝ որուն բնութիւնը տաք ու չոր է, և համն ալ լեղի ու կծու։

Մաղձը ժողվելու, և զատելու համար՝ յատուկ կարգեալ են լեարդը (գարա ճիէր), լեղուոյ պարկը (էօթ), ու սննդարար խողովակները · որոնք խառնելու, կամ այլայլելու շատ յաջողակ ըլլալնուն համար՝ իրենց մէջը գտնուած անյարմար նիւթերը շուտով մը կապականեն, կամ կը փտեցընեն · որոնցմով կը գրգռուին մաղձը ու ջղերը, և կըլլան աս տենդերը։

Անկէց ալ յայտնի է որ՝ տենդահար-ներուն շատը՝ առատօրէն կանաչ մաղձ կարտաքսեն կամ վերէն՝ և կամ վարէն․ ինչպէս որ՝ ալ կը պատահի նոր ակռայ հանող տըղոցը, ու քօլէ՛րա ըսուած ախ-տէն բռնըւողներուն։

Յայտնի կիմանամք, որ ստամոքսա-կան տենդն ալ կը պատճառի մէկ յատուկ պըլըշկելով մը, և հիւանդին վրայէն ա-ռողջ մարդու կանցնի․ երբոր օդը օգ-նութիւն կընէ, և բռնըւելու մարդն ալ յարմարութիւն ունի ընդունելու։

Ու թէպէտ աս տենդի գլխաւոր պատ-ճառները յայտնի են առաջկուց զրուցը-ւած խօսքերէն․ բայց աս տեղս ալ հարկ է կարճ խօսքով նորէն իմացընել աս հի-ւանդութեան գլխաւոր պատճառները։

Ան կծու՝ թթու ու սուր մաղձը, ան թանձր ու խժոռ պըլղամը, ան սատ-կած ու փտտած ճճիները, ան պարարտ մսեղէն ու ձկնեղէն կերակուրները, ան դժուարամարս ուտելիքները և խակ ու դիւրանեխ միրգերը՝ որ ստամոքսին ու աղեաց մէջ կը ժողվըւին, ու մէկ զմէկ խառնըւելով կը թթւին՝ ու կը հոտին,

անմիջապէս կը շինեն աս տենդերը․ Թէ որ ամենևին չի նայվի, կամ դէշ ճամբով նայվի նէ՝ շա՛տ հեղ հետերնին ջղային տենդի նշաններ ալ երևան կելլան։

Բայց որովհետև աս չորս տեսակ տենդերը մէկ մէկէ շատ տարբերութիւն չունին․ երկուքը՝ երբեմն ալ իրէքը մէկ տեղ կըլլան․ անոր համար չորսին ալ պատճառը մէ՛կ է ըսելը՝ շատ հեռու բան չէ՛։

—

## Տարափոխութիւն։

* · 105 · Մասնաւոր ուշադրութիւն ընել պէ՛տք է տարափոխութեան (ՊԸՐԸԼԻՈ-ԶՈՒԹԷ) վրայ՝ որ շա՛տ անգամ թէ՛ ջղային ըստամոքսական, թէ՛ մաղասային, և թէ՛ ճճիաւոր տենդերուն հետը կը գտնըվի, և մկանանց մանրաթելներուն վրայ՝ անօթներուն՝ և ջղերուն վրայ ներգործելովը շուտ մը կը ապականէ հիւթերուն բնութիւնը ու որպիսութիւնը։

Բորբոքողական ախտակըրութե պատճառ կըլլան՝ մարդուն կազմուածքը, եղանակին որպիսութիւնը, և նախընթաց պատճառներուն բնութիւնը, նա՛և ան պատ-

ճառներուն միաւորութիւնը՝ որ հակառակ կերպով կը ներգործեն՝ թէ՛ առաջին ճամ-բաներուն մէջը , և թէ՛ սրտի և շընչե-րակաց ներգործութենը վրայ ։

—

## Գուշակութիւն ելից ախտից ։

* · 106 · Ստամըքսային տենդը՝ թէ որ պըլըշտըկողութի և աղիքներուն ու հիւթերուն մէջ գտնուած ախտ մը չըլ-լայ նէ , ընկիզըը բժիշկը աղէկ հոգ տա-նի նէ , շատ փորձանքաւոր չէ՛ · թէպէտ երբեմն կը վախցընէ , բայց շատ ատեն՝ վարպետ բժիշկի ձեռքով եթէ հիւանդը աղէկ նայվի նէ՝ վերջը բարի կըլլայ ։

Աս տեսակ հիւանդութենց մէջը քը-ռնիղի ըլլալ ձիգն ընութենէ՝ բժիշկին կողմանէ կըլլայ առաւել , քան թէ բը-նութենը ըսպասելով · ըսպասելու պարզ կերպը շատ հիւանդներ մեռցընելու պատճառ եղաւ ։

Աս տենդը կամ փըրխելով կը յաղթը-վի , կամ փորը քըշելով · և հիւանդութեն վերջերը շատ քըրտնցընելու հոգ տանե-լով , ցամաք ջըրվաթը ան ժամանակը խօ-

բաստանի գունով կըլլայ, կամ սրճ-գոյն դեղին։

Մաղասային տենդին ընթացքը խիստ կամաց է, բայց բժշկելիը դժուար է. ըն-կիղը ինքիրմէն փոխել մը պատահի, և ետքը բոլոր մարմինը շոգիաւոր քրտինք մը քրտընի նէ՝ շուտ աղէկնալու յոյս կայ. քիչ կըլլայ որ՝ մէկ քրտինքէն աս տենդին վերջանալուն նշան ըլլայ։

Երբեմն օգուտ կընեն՝ թէ կորեկա-ձև ճերմակ էղանթէմաները, թէ պըռ-կունքներուն վրայ խոցեր դուրս տա-լը, և թէ շատ շողիք վազելը. բայց երբոր փոխելէն կամ փորը քըշելէն ետքը պատահին նէ։

Չափաւոր փորքըշուքը օգտակար է. բայց չափէ դուրս փորքըշուքը վնաս է աս տենդին մէջը։

Խիստ մեծ են ըստամոքսական ջղային տենդին և պըլըշտըկողութէ պատճառ-ված տենդին շրջանները։

Ասոնք երբեմն շուտ կը վերջանան մահուամբ. երբեմն երեք կամ չորս շա-բաթ, կամ ալ աւելի երկննալէն ետքը մահ կը պատճառեն։

Բուխլիներուն ատեն մը չի՛ ղատեց ընութիւնը այս տենդերուն մէջը , ինչ որ ջղային տենդին գուշակութենը համար մանաւորապէս ըսինք նէ՝ անոնց ալ կը յարմարին :

Պարզ մաղձային տենդ ունեցողնե-րէն աւելի մեծ փորձանքի մէջ են ըս-տամոքսային բորբոքողական տենդ ունե-ցողները · որովհետեւ աղիքներուն գաղ-տուկ բորբոքում մը կըլլայ այս տենդե-րուն մէջը՝ որ վերջը կամ սաստիկ ջրգո-ղութի մը կը պատճառէ , կամ քաղցկեղ :

Բժշկելու շատ հեշտ ճամբաները՝ տեղափոխութիւնը՝ (Դէտաստաշէնները) , կամ տենդի ըռնելը պատահելուն պէս հող տանելն է · բայց անանկով ալ գէշ վախճան մը պատահիլը անկարելի չէ · ո-րովհետեւ ասանկներուն ալ օրինակը տե-սած ենք բժիշկները :

—

### Ստամոքսային կամ մաղձային տենդի դէմ դեղեր :

* · 107 · Միջոց չի՛ տրվօղ ըստա-մոքսային տենդին հող տանելու կերպը՝

գո՛նէ հիւանդութեան ըսկիզբը՝ միջոց տըվօղ տենդին խնամարկութիւնը բոլորովին նման է․ որովհետեւ աս ալ ան տեսակէ՛ն է․ բայց խիստ շուտ հասնելու է օգնութեան։

Ամենէն առաջ մտածելով քննել պէտք է՝ թէ արդեօք բորբոքում ունի՞ հետը․ որովհետեւ շատ դէշ հետեւութիւններ ունեցաւ միշտ արեան պակասութեան փորձանքաւոր համարումը՝ որ կարծիքական առագաստով (ԲԷՐՈՒԷՈՆ) բժիշկներուն աչքը գոցեց, որով արեան առնելու հարկաւորութիւնը չէ՛ն կրնար տեսնալ։

Արդարեւ՝ արեան առնելը վնասակա՛ր է զի՛նչ եւ իցէ մաղձային տենդի մէջը․ թէ որ հարկաւորութեան երեւոյթ մը չի կա՛յ նէ։

Բայց եւրոպայի այս կողմը՝ ուր որ մենք կը գրե՛նք կոր, խիստ շատ կը պատահի, որ մաղձային տենդը բորբոքողական տրամադրութիւնը հետ մէկ կըլլան․ ուստի փորձով խելքերնիս կը հասնի՝ թէ հիւանդութեան ըսկիզբը արեան չառնելէ՛ն մեծ մեծ փորձանքներ կը պատաճառի հիւանդներուն։

Բայց թէ որ աս երկու կերպ տենդը

մէկ տեղ չե՛ն նէ՝ (որովհետեւ ամէն կերպ նամղի լեցունութիւնը , եւ կուրծքի նեղութիւնը՝ կամ սաստիկ ցաւը միշտ աս բանին նշանը չե՛ն ․ ) ա՛ն ատենը շուտ մը մաղձը կ՚ըստամոքային մնասակար նիւթերը պարպել պէ՛տք է կա՛մ վերեն , կա՛մ վարեն , ո՛ր ճամբէն որ նշանները կիմացունեն՝ թէ նիւթը հեշտ դուրս կելլայ մարմինեն ։

Մ՝ինչեւ փսխողականով եւ լուծողականով՝ որ պէ՛տք եղած ատենը կըրկնելու է , կը հասկընանք՝ որ մաղձային տըրամադրութեն գլխաւոր պատճառը վերցաւ ․ պէ՛տք է՝ որ հալեցունող դեղերով լուծանենք թանձր եւ մածուցիկ նիւթը , եւ բարակցընենք բարկ (+է•կէն) խմելիքով մը ։

Իրաւ է կան անանկ պարագաներ՝ որ փսխողականներուն գործածութիւնը կարգիլեն ․ բայց ո՛րչափ աւելի շիտակ է տխաթէզլին , եւ ո՛րչափ փորձանքաւոր է հիւանդութիւնը , ա՛յնչափ քիչ եւ տկար կըլլան հակառակ նշանները ․ պըզտիկ փորձանքներուն պատճառովը՝ որ կըրնան պատահիլ , պէ՛տք չէ կենալ յուը կըտ-

րել. որ շատ անգամ մինակ փըլխողականներուն վրայ հաստատուած է։

Երբոր հիւանդութիւնը ծանր է, ոչ փոշտանկութիւնը՝ որ կարելի է կապով զսպել, ոչ էմօդդիղին, ոչ դժուարաշընչութիւնը՝ կամ փորին աւելի դիւրազգացութիւնը, ոչ ծոցվորութիւնը, ոչ մատղաշ հասակը՝ կամ ծերութիւնը կարգելու փըլխողական դեղ տալը։

Բայց թէ որ հիւանդութիւնը թեթեւ է, և ըսած պարագաները կաննէ՝ կարելի է կասկածել, և փըլխողականին տեղը լուծողական տալ։

Բայց յայտնի եղած ատենը՝ փըլխողականին տեղը լուծողական գործածել պէտք չէ. որովհետև մեծ տկարութիւն կը պատճառի անկէց՝ հիւանդին, ինչպէս որ կը պատճառի դանդաղ և լուծ փորքըշուքէն ալ՝ որ մաղձային տենդերուն մէջը կը պատահի՝ հիւանդութեան ըսկիզբը փըլխողական չի տըրվելուն պատճառովը։

Մանաւանդ՝ աս դեղը գործածել պէտք է, երբոր տահա ուշ կերևան ըստամոքսին և առաջին աղիքներուն մէջի

իբ

ավրած և ապականած նիւթերուն նը-
շանները:

Բայց թէ որ անոր գործածութիւնը արգելք չի՛ տայ մէկ գաղտուկ բորբո-քումմը՝ աղիքներուն մէջը կամ կուրծ-քը, կամ թէ որ հիւանդը խիստ ինկած չըլլայ նէ զօրութէն կամ կարողութէն:

Երբեմն փոխելով ըստամոքսէն դուրս ելած նիւթերը քիչ կըլլան, բայց որով-հետև ան պատճառով շատ կը քիչնան ա-մէն նշանները, ուստի կրնանք կարծել թէ՝ կա՛մ փոքրիկ սկզբունքներէն մեծ մեծ փոփոխութիւններ կրնան պատ-ճառել, կա՛մ թէ փըսխողականները ա-ւելի կը ներգործեն ստորին որովայնի ջիղերուն վրայ՝ քան թէ դուրս ելլելու նիւթին վրայ:

Աչքոմնիս տեսանք մենք, որ խի՛ստ չոր և գրեթէ բերնին մէջը երած լեղուն՝ իրեն բնական փափկութիւը ունեցաւ փըս-խողականէն ետքը, ուրիշներն ալ տեսան նոյն բանը. սականկով աս նշանն ալ փըս-խողականին հակառակ բան մը չէ:

Երբեմն թէ որ մաղձային տենդի նոր նշաններ երևան ելլան նէ՝ ատեն ատեն

ինչխանթի դեղերը տալով • խծայլին պըլըւամը լուծանելու և պատրաստելու համը՝ պէտք է վերոգրեալ կերպով ( *·57·58· ) շուտ մը հոգ տանիլ նիւթերը պարպելու՝ կամ բերնէն կամ վարէն , մինչև որ ըստամոքսին մէջի ապականած նիւթերուն նշանները ալ չերևան • կամ ախորութիւնը հասկընանք՝ թէ ամէնը հատած են • բայց նայելու է՝ որ ան ախկարութիւնը նոյն ապականեալ նիւթերուն ներգործութենէն առաջ եկած չըլլայ :

Ան ատենը՝ պէտք է գործ ածել անթիմօնեալէ դեղերը՝ չափը քիչ քիչ աւելցունելով , որ խառնելու է աղի խըմելիքի՝ կամ կաթի շիճուկի հետ :

Ան խմելիքները քիչ քիչ աւելցընելով՝ ոչ միայն ամէն օր փորը ելլելուն օգուտ կընեն • այլև մորթոյն ալ արտաշընչութիւնը կը գրգռեն :

Հասարակ խմելիքի տեղ պէտք է տալ ջուր՝ որուն հետ կարելի է խառնել սիրքէն ձէպին ( օքսիմէլէ սքիլլիթիքէն ) , կամ սիրութկան , կամ սերը հանած կաթը , կամ հասուն պտուղներուն նոր քամած հիւթը՝ ցուրտ ջուրի հետ խառնած :

Խմելիքներուն նման բաներով գը-րեխներ ալ ընել պէ՛տք է , մանաւանդ-երբոր փորը չելլա՛րնէ ։

Եթէ աս լուծմունքներէն , և փըս-խելէն ետքը տաքութիւնը շատնայ նէ , զաճու ոգին (ԱՉԻ՛ՏՕ ՎԷՏՐԻՕԼԻ՛ՔՕՆ) շատ-կեկ ջուրի հետ խառնած՝ ոչ միայն տա-քութիւնը , այլև մաղձին ապականու-թիւնն ալ կանցունէ ։

Ե՛րբոր հիւանդութիւը քիչ մը թե-թևնայ , և պէ՛տք եղածին չափ լուծելէն և փըսխելէն ետքը՝ օգտակա՛ր են նաև ան դեղերը՝ որ չափաւոր կերպով արտա-շընչութե կօգնեն , և կըրնան բաց պա-հել արտաշնչութե ճամբաները ։

Օգտակա՛ր է նաև թարթա՛րօ էմէթի՛-քօն՝ յարմար չափով տրված . մինչ զի՝ դատարկիչ դեղերուն նշանները գաղա-րածինպէս՝ երբեմն մինակ թարթա՛րօ է-մէթի՛քօն հիւանդութեան խնամատա-րութիւնը կը լըմնցունէ ։

Եթէ հարկաւոր եղածին չափ լու-ծելէն և փըսխելէն ետքը՝ տենդին թող-տալը յայտնի կերևնայ նէ , կարելի՛ է գործածել սքօ՛ռձա բէռուվիա՛նայ ,

կամ՝ սօլֆա՛թօ տի.քինի՛նօ · բայց՝ թէ որ բորբոքողական տիաթեզին զօրացուցիչ դեղերուն գործածութիւնը դէմ՝ չի գա՛յ նէ։

Այս դեղը շատ լաւ օգուտ կընէ տենդին թող տալը նոր իմացված տենն ալ· բայց թէ որ միջոց չի տըվող տենդը միջոց տըվող տենդին բառօքսիզմները մէկ տեղ չըլլա՛ն նէ ։

—

## Պըլղամային տենդի դէմ դեղեր։

* ·108· Ան պըլղամային տենդը՝ որ բորբոքողականի նշաններ չունի՛ , հողտանելու համար պէ՛տք է առաջ հալեցունող դեղերով առաջին ճամբաներուն մէջի մածուցիկ ու խըժոռ ( ԿԱԹԸԼԸ ) պըլղամները քակել· և երբոր քակվի՛ն նէ՝ կարելի՛ եղածին չափ ջա՛նք ( ԿԱՅՐԷԹ ) ընել , որ հիւանդը շուտով փըսխէ։

Երբեմն աս գործողութիւնը կրկնել պէ՛տք կըլլայ՝ որ զանց ընելու չէ՛ , բայց տաեն ինչխտէ՛նթէ դեղերուն գործածութին ալ մոռնալու չէ՛ · ինչպէս է այրըլխի , ռատիքեայի , թառասապօ՛ի , Փիօ՛ռա՝ առնի՛քիւայ արգանակները ( ՔԸՆԱՔԸՆԱ ),

ուրիշ հալեցընող դեղերու հետ . ինչպես են՝ նշատըրը, յարմար չափով Թարթա՛ռօ էմէթի՛քօն:

Բայց նոյն իսկ փըսխողականները իրենց փըսխեցնելու զօրութիւնը հեշտ կը կորսընցունեն՝ փորին ներսի դին վերի կողմը փակած խէժին պատճառովը, կամ ջիղերուն քիչ դիւրագրգիռ ըլլալովը:

Կուցէ՛ այս է պատճառը՝ որ աս դիպուածներուն (ղօ-հօ-բան) մէջը՝ իբէքաքուանայէն աւելի ուժո՛վ է Թարթա՛րօ էմէթի՛քօն:

Պէ՛տք է նաև հոգ տանիլ աղէքները պըլղամէն խալըսելու . բայց շատ զգուշանալու է լուծողական գործ ածելու ատենը . ինչո՛ւ որ՝ շա՛տ անգամ փորքըշուք կը պատճառի:

Աւրեմն ուրիշներէն աւելի ընտրելի է ռավէ՛նտը՝ իբէքաքուանայի հետ, կամ աղ ամմօնիաքօի, կամ սօ՛լֆօ տօռա՛թօ տ՛ անդի մօնիօի, կամ մակնեզի՛ա քառուս դէ՛քայի հետ . և ամէն օր փորը ելլելուն հոգ տանելու է, կամ աս դեղերով՝ կամ Թէնքըըյէներով:

Փորձըվեցաւ, որ Թըլթուներուն

(աշէրօ՛նէր) գործածութիւնը աս հիւանդութեանը մէջ աւելի վնաս է՝ քան թէ օգտակար։

Թէ որ աս տենդին հետ պըլըշտըկողութի, և ջղային տենդին ծանր ծանր նշանները գըտնըվին նէ՝ ան ատենը գըլխաւորապէս փախողականներով իր պարզ որպիսութեցը մէջ խօթելով հիւանդութիւնը՝ քառտիաչի և էչչիթանթի դեղերով դարմանելու է՝ վերը խօսված կերպովը (* · 92 ·)։

Հոս ալ օգտակար են ան մտածութիւնները՝ որ վերը ըրինք քնա քնային գործածութեը համար, որ պըլղամային տենդին մէջը շատ հեղ անհանգստութիւններ պատճառեց՝ երբոր փոշի եղած տըրվեցաւ առանց էչչիթանդէներու։

Աղիքներուն մէջէն պըլղամը ելլելով՝ շատ դիւրադրգիռ կըլլան, և անզգուշ չափով լուծողականը՝ փորձանքաւոր փորքըշուքի մը պատճառ կըրնայ ըլլալ․ եթէ աս փորքըշուքն ալ հիւանդութեը վրան գայ նէ՝ վերոգրըեալ դեղերով դադարեցընելու է (* · 95 ·)։

Աս տեսակ տենդի մէջը անխըլտար

համարձակ կրկնելու չէ՛ փոխողականները՝ ինչպես որ առջի տեսակին մէջը (* · 107 ·) · որովհետեւ ուժը տկարացած ըլլալով՝ շատ փոխելը մանաւանդ լուծելը բոլորովին կործանումն կերեւայ պատճառել։

—

Դ. Ջղային ըստամոքսական տենդի դեղերը։

* · 109 · Բաւական խօսեցանք առաջուց, Ջղային ըստամոքսական տենդի մէջը գործածելու դեղերը, որոնք են (* · 92 · 95 · 96 ·) ·

Բայց հոս տեղը շատ հարկաւոր է որոշել, թէ հիւանդութիւնը պա՞րզ է՝ թէ քանի մը հիւանդութիւն մէկ զմէկու հետ խառնըված է · ինչո՞ւ որ՝ բորբոքողական տրամադրութենէն միշտ ազատ չէ՛ աս հիւանդութիւնը, շա՛տ հեղ ալ պըլըը շարկողութի կունենայ հետը՝ որ խիստ կը վերցունէ հիւանդութեն վնասակարութիւնը։

Երբեմն այնքան է նիւթին ապականութիւնը՝ որ ըստորին որովայնին մէջը ժողված՝ թոյնի պէս կ՚միայն ջիղերուն դըպչելով, կամ արունին մէջ խառնըվե-

լով, կը վնասէ ջղային մասը՝ կամ դիրքը ինչպէս որ պըլըշտըկողութիւնները կը-նեն՝ ու կը պատճառեն ջղային տենդին գլխաւոր նշանները · որոնց մէջը մեծ-կըլլան արհեստին օգնութիւնները, թէ որ պըլըշտըկողութի՟ չի կայնի · և իրաւի կը տեսնանք, որ ա՛ն ատենը՝ շատ օգտա-կար են լուծողական դեղերը։

